3-6 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄՈԴԵԼՆԵՐՈՎ

ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Կազմի լուսանկարը՝ նախադպրոցական ծառայության բացման արարողություն Ահնիձոր գյուղում: Երեխաները խաղում են նորաբաց խաղասենյակում: ՅՈՒՆԻՍԵՖ-ը աջակցում է ՀՀ կառավարությանը՝ փոքր և խոցելի համայնքներում հիմնել այլընտրանքային նախադպրոցական ծառայություններ:

©UNICEF Armenia/2017/Qalashyan

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

unicef

3-6 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄՈԴԵԼՆԵՐՈՎ

ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Երևան 2018

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ Է
ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՀԱՄԱԿԱՐԳՈՂ՝ Ռ. ԾԱՌՈՒԿՅԱՆ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԽՈՒՄԲ՝
Ռ. ԾԱՌՈՒԿՅԱՆ, Լ. ՍՄԲԱՏՅԱՆ,
Ս. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ, Ա. ԳՅՈՒՐՋՅԱՆ, Մ. ՄԿՐՏՉՅԱՆ
ԽՄԲԱԳԻՐ՝ Գ. ԹԵՐՉՅԱՆ

Սույն ձեռնարկը ստեղծվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ արտահայտեն ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները և քաղաքականությունը:

ՅՈՒՆԻՍԵՖ-ը երեխայի իրավունքների գծով համաշխարհային առաջատարն է, որի գործունեության նպատակն է՝ յուրաքանչյուր երեխայի համար ամենուրեք ապահովել հավասար հնարավորություններ՝ հատուկ ուշադրություն դարձնելով ամենակարիքավոր և խոցելի երեխաներին:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի և կազմակերպության գործունեության մասին ավելին իմանալու համար կարող եք այցելել www.unicef.am և www.unicef.org կայքերը կամ հետևել մեզ հետևյալ սոցիալական հարթակներում՝

Facebook.com/UNICEFArmenia
Instagram.com/UNICEF_Armenia

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. 5

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ 7

1. 3-6 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԽԱՌԸ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲՈՒՄ 8

1.1. Օրվա օրինակելի ռեժիմի տարբերակ 3-6 տարեկանների կարճօրյա խմբի համար 10

1.2. Խառը տարիքային խմբի շաբաթական պարապմունքների տեղաբաշխման օրինակելի տարբերակ 13

2. 3-6 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐՃՕՐՅԱ ԾՐԱԳԻՐ 15

Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչները 16

3. ԶԱՐԳԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ 18

3.1. Կարճօրյա նախադպրոցական ծառայության ֆիզիկական միջավայրի չափանիշները 19

3.2. Կարճօրյա նախադպրոցական ծառայության ֆիզիկական միջավայրը 22

3.3. Կարճօրյա նախադպրոցական ծառայության սանիտարահիգիենիկ պայմանները 22

3.4. Խմբասենյակի ֆիզիկական միջավայրը 23

3.5. Աշխատանքային կենտրոններ 23

3.6. Ուսումնախաղային նյութեր 25

4. ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԿԱՐՃՕՐՅԱ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՍՏ ԾՐԱԳՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ 36

4.1. Խոսքի զարգացում 37

4.2. Վաղ գրաճանաչություն (ավագ խումբ). 51

4.3. Ծանոթացում շրջակա միջավայրին և էկոլոգիա 52

4.4. Տարրական մաթեմատիկական պատկերացումներ 68

4.5. Կերպարվեստ (նկարչություն, ծեփ, ապլիկացիա) և կառուցողական աշխատանք 75

4.6. Ֆիզիկական դաստիարակություն 102

4.7. Երաժշտություն 105

4.8. Տոներ, զվարճություններ 106

5. ԵՐԵԽԱՅԱԿԵՆՏՐՈՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ 109

5.1. Մանկավարժական մոտեցումներ 110

5.2. 3-6 տարեկան երեխաների զարգացման առանձնահատկությունները 112

5.3. Ուսուցումը բազմահամակազմ խմբերում 112

5.4. Ուսուցման կազմակերպման եղանակները տարատարիք խմբերում 115
5.5. Խորհուրդներ տարատարիք խմբերում արդյունավետ դասավանդման համար 118
5.6. Ուսուցման մեթոդներ. 120
5.7. Խաղի դերն ու նշանակությունը 122
5.8. Աշխատանք զույգերով, ենթախմբերով 123
5.9. Հարցեր ու հարցադրումներ 124

6. ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄ 126
6.1. Ի՞նչ է թեմատիկ ուսուցումը 128
6.2. Գրավոր պլանավորման կարևորությունը 129
6.3. Դաստիարակին ներկայացվող պահանջներ 129

7. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ 132

8. ԵՐԵԽԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ 140
8.1. Ընդհանուր դրույթներ 141
8.2. Գնահատման հիմնական նպատակը 142
8.3. Գնահատման գործընթացի կարևորությունը մանկավարժի մասնագիտական զարգացման տեսանկյունից 143
8.4. Թղթապանակի գնահատում 143
8.5. Դիտարկում 144

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 147
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 194

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դաստիարակի սույն ուղեցույցը կազմվել է Հայաստանի Հանրապետության փոքր և բազմաբնակավայր խոշորացված համայնքներում 3-6 տարեկան երեխաների համար նախադպրոցական որակյալ կրթական ծառայությունների արդյունավետ կազմակերպման և իրականացման նպատակով:

Ուղեցույցը հիմնված է «Հանրակրթության պետական կրթակարգի» պահանջների և «Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչների» վրա: Այն հաշվի է առել նաև ՀՀ նախադպրոցական հաստատությունների՝ գործող կրթական համալիր պետական ծրագրերը, ինչպես նաև այլընտրանքային մոդելներով 5-6 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության կազմակերպման ծրագիրը:

Ուղեցույցում տրված ծրագրում ներկայացվող մանկավարժական գործընթացի հիմքում դրված են երեխայի համակողմանի զարգացմանը նպաստող ժամանակակից մոտեցումներ՝ համագործակցային, փոխգործուն մեթոդների լայն կիրառությամբ: Ուսուցման բովանդակությունը, նպատակներն ու խնդիրներն իրականացվում են ամբողջ տարվա ընթացքում՝ շեշտը դնելով կրթադաստիարակչական բաղադրիչի վրա, ի տարբերություն ավանդական մանկապարտեզի մոդելի, որտեղ կան նաև խնամքի և սնուցման բաղադրիչներ:

Նկատի առնելով այն հանգամանքը, որ փոքր և բազմաբնակավայր խոշորացված համայնքների համար առաջարկվող այլընտրանքային մոդելներով նախադպրոցական կրթական ծառայություններում ընգրկվելու են 3-6 տարեկան երեխաներ, որոնց հետ կրթադաստիարակչական աշխատանքն իրականացվելու է խառը տարիքային խմբերով, ծրագրի կառուցվածքի հարցում դրսևորվել է տարբերակված մոտեցում. պահպանելով հենքային բովանդակության միջուկը՝պարզեցվել են ենթաբաղադրիչների ծրագրային խնդիրները, ներառվել է բաժին՝ բազմահամակազմ խմբերում ուսուցման կազմակերպման վերաբերյալ, տրվել են 3-6 տարեկան երեխաների համար նախատեսված պարապմունքների և գործնական աշխատանքների օրինակներ՝ համապատասխան մեթոդական ցուցումներով, ինչպես նաև այլ օգտակար նյութեր դաստիարակների համար:

Ուղեցույցը կօգնի դաստիարակներին իրականացնել չափորոշչահեն ուսուցում 3-6 տարեկան երեխաների խառը տարիքային խմբերում՝ ուսուցումը համապատասխանեցնելով միևնույն խմբում ներառված երեխաների տարիքային և անհատական առանձնահատկություններին ու կարո-

ղություններին, պլանավորելով տարբերակված աշխատանքներ բոլոր երեխաների զարգացման և կրթական կարիքները բավարարելու նպատակով:

Տարատարիք խմբերում ուսուցման օգտակարության աստիճանը կախված է նրանից, թե որքանով են դաստիարակները տիրապետում իրականացվող ուսումնական ծրագրին, մեթոդներին ու ռազմավարություններին, որոնց օգնությամբ կարելի է երեխաների ուսուցման արդյունավետությունն առավելագույնի հասցնել:

Հուսով ենք, որ այս փաստաթուղթը կնպաստի փոքր և բազմաբնակավայր խոշորացված համայնքներում 3-6 տարեկան երեխաների համար ստեղծվող ծառայությունների որակի ապահովմանը, ուսուցման արդյունավետ իրականացմանը և երեխաների բնականոն համակողմանի զարգացմանը, ինչն էլ իր հերթին կօգնի, որ երեխաները հաճույքով սովորեն և նրանց մոտ դրական վերաբերմունք ձևավորվի ուսումնառության նկատմամբ:

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանուր դրույթներ

Երեքից վեց տարեկան երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքների հենքային (բազային) բովանդակությունն իրականացվում է ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական պետական չափորոշիչներին համապատասխան՝ ներառելով զարգացման հետևյալ ոլորտները. ֆիզիկական (շարժողական), խոսքի, իմացական (ճանաչողական), հուզական, անձնային և սոցիալական զարգացում, ինքնասպասարկում և անվտանգություն, վերաբերմունք ուսման նկատմամբ: Ելնելով երեխաների զարգացման հիմնական ոլորտներից՝ կրթության բովանդակությունն ապահովում է 3-6 տարեկան երեխաների գիտելիքների, կարողությունների, հմտությունների և հիմնական արժեքային համակարգի ձևավորումը:

1 3-6 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԽԱՌԸ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲՈՒՄ

Խառը խմբերի օրվա ռեժիմն իր ներգործության հնարավորություններով պետք է նպաստի և ապահովի բոլոր երեխաների ներդաշնակ, համակողմանի զարգացումը:

Տարատարիք (խառը) խմբավորումները նպաստավոր են երեխաների սոցիալական և ճանաչողական զարգացման տեսանկյունից: Այդ փորձին օժանդակելու նպատակով հիմնվել ենք Վիգոտսկու՝ «զարգացման մերձավոր գոտու» տեսության վրա, ըստ որի մեծահասակները և ավելի իրազեկ հասակակիցները կարող են օժանդակել, որ երեխան իր իմացածից ու կարողացածից մի քիչ ավելին կարողանա անել, և որ ճանաչողական զարգացման լավագույն խթանը երեխաներին այնպիսի առաջադրանք տալն է, որը մի փոքր գերազանցում է նրանց զարգացման ներկա մակարդակը:

Պարզ է, որ երեխաներն առավել օգուտ են քաղում հասակակիցների հետ համագործակցությունից, երբ նրանց ընկերը մի քիչ ավելի տարիքով է կամ մի քիչ ավելի իրազեկ, քան իրենք: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ նախադպրոցական տարիքի երեխաների խաղերը տարատարիք խմբերում ավելի բարդ են, քան նույն տարիքային խմբերում: Սա ենթադրում է, որ տարատարիք միջավայրում ավագ երեխաները հաճախ այնպիսի գործունեություն են ապահովում կրտսեր երեխաների ՄԶԳ-ների շրջանակներում, որոնք դրդում են վերջիններիս նոր հմտություններ յուրացնել: Բացի այդ, նույն տարիքային խմբերում սեռային խտրականություն ավելի հաճախ է հանդիպում, քան տարատարիք խմբերում, որտեղ երեխաների խաղերի զարգացման մակարդակների տարիքային տարբերությունները նվազագույնի են հասցված:

Վիգոտսկու տեսության տեսանկյունից տարատարիք միջավայրերը, խաղերի տեսակների և երեխաների խաղընկերների տարիքի ու սեռի առումով, ավելի բազմազան և սոցիալապես համակցված խաղային փորձառություն են ապահովում: Այլ վկայություններ ցույց են տալիս, որ տարատարիք խմբերում ավագ երեխաները հաճախ աջակցում և առաջնորդում են կրտսեր երեխաներին՝ դրական, սոցիալամետ եղանակով: Օժանդակության այս եղանակը նման է սատար լինելուն: Այն, կարծես, դրական ազդեցություն է ունենում նաև նվազ հասուն երեխայի ներքին խոսքի վրա:

Տարատարիք խմբերն առավելություններ ունեն նաև ավելի փորձառու երեխաների համար: Դրանք բարելավում են ավագ երեխաների ինքնակարգավորման հմտությունները: Ապահովելով խմբային կանոնների կիրառումը և օգնելով կրտսերներին՝ ավագ երեխաներն ավելի լավ են դատում սեփական վարքի մասին և ավելի լավ են կարգավորում այն:

Վաղ մանկական տարիքի ծրագրերում տարատարիք փոխազդեցության օգուտները կախված են նաև խմբային միջավայրից և դաստիարակի ապահոված կառույցների քանակից: Օրինակ, հասակակիցների կողմից զգալի սատարում և սոցիալամետ վարք էր արձանագրվել, երբ դաստիարակը նպատակաուղղված առաջադրանքներով գործունեության մի քանի միջավայր էր ապահովել՝ թույլ տալով երեխաներին ինքնուրույն որոշել, թե ու՞մ հետ աշխատեն և ինչպե՞ս հասնեն առաջադրված նպատակներին:

Ընդհանուր առմամբ, տարատարիք խմբերը կարող են խիստ հարուստ սոցիալական փորձառություն ապահովել նախադպրոցական տարիքի երեխաների համար: Սակայն տարատարիք փոխազդեցության օգտակարության աստիճանը կախված է նրանից, թե որքան լավ են դաստիարակները կազմակերպում երեխաների խմբային գործունեությունը և օժանդակում դրանց:

Օրվա ռեժիմը

Օրվա ռեժիմը երեխաների կյանքի կազմակերպման, համակողմանի զարգացման, առողջության ամրապնդման և դաստիարակության կարևոր պայման է: Այն անհրաժեշտ միջոց է երեխաների կրթադաստիարակչական աշխատանքների ու գործունեության ազատ ձևերի պլանավորման, ֆիզիկական և մտավոր աշխատանքների ճիշտ կազմակերպման, ծանրաբեռնվածության համաչափ բաշխման համար:

Օրվա ռեժիմը բաժանվում է այնպիսի ժամանակահատվածների, որոնք երեխաներին հնարավորություն են տալիս ներգրավվելու ինտեգրված, ակտիվ, մասնակցային գործունեության մեջ: Օրը պետք է բնական ձևով կազմակերպել՝ ժամանակ ապահովելով մեծ ու փոքր խմբերով աշխատանքի, անհատական և բացօթյա աշխատանքների, ակտիվ (ֆիզիկապես շարժվելու) և հանգիստ պահերի, զրույցի և վերլուծական փուլերի համար: Ռեժիմը պետք է արտացոլի խառը տարիքային խմբի երեխաների զարգացման առանձնահատկությունները:

1.1 ՕՐՎԱ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՌԵԺԻՄԻ ՏԱՐԲԵՐԱԿ 3-6 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ԿԱՐՃՕՐՅԱ ԽՄԲԻ ՀԱՄԱՐ

3.5 - 4 ժամյա աշխատանքային օրվա դեպքում ուսուցման մեկամյա տևողությամբ

	Կանոնակարգային պահեր	ժամերը տարվա ցուրտ եղանակին	ժամերը տարվա տաք եղանակին
1.	Երեխաների ընդունելություն, խաղեր	9^{00} – 9^{30}	9^{00} – 9^{30}
2.	Առավոտյան մարմնամարզություն	9^{30} – 9^{40}	9^{30} – 9^{40}
3.	Նախապատրաստում. առավոտյան հանդիպում	9^{40} – 9^{50} 9^{50} – 10^{15}	9^{40} – 9^{50} 9^{50} – 10^{15}
4.	Պարապմունքի նախապատրաստում. պարապմունք առաջին	10^{15} – 10^{25} 10^{25} – 10^{50}	10^{15} – 10^{25} 10^{25} – 10^{50}
5.	Պարապմունքի նախապատրաստում. պարապմունք երկրորդ	10^{50} – 11^{00} 11^{00} – 11^{25}	10^{50} – 11^{00} 11^{00} – 11^{25}
6.	Նախաճաշի նախապատրաստում, նախաճաշ	11^{25} – 11^{40}	11^{25} – 11^{40}
7.	Պարապմունքի նախապատրաստում. պարապմունք երրորդ կամ ազատ խաղային գործունեություն	11^{40} – 11^{50} 11^{50} – 12^{15}	11^{40} – 11^{50} 11^{50} – 12^{15}
8.	Զբոսանք, խաղեր, դիտումներ, այլ աշխատանք, տուն ճանապարհել	12^{15} – 12^{30}	12^{15} – 13^{00}

Ծանոթություն. ներկայացված կանոնակարգը նախատեսում է սննդի կազմակերպում չոր փաթեթավորված սննդամթերքի տեսքով: Եթե սննդի կազմակերպում չի նախատեսվում, կանոնակարգային պահերում կատարվում են փոփոխություններ:

Ելնելով իրենց տարածաշրջանի կլիմայական պայմաններից, այլընտրանքային նախադպրոցական կրթական ծառայությունները ռեժիմում կարող են կիրառել իրենց տարբերակը՝ 8:00-11:30 (12:00) կամ 10:00-13:30 (14:00):

Պարապմունքները

3-6 տարեկան երեխաների օրվա կանոնակարգում իրենց կարևոր տեղն ունեն պարապմունքները[1]:

Պարապմունքների ընթացքում երեխաները ձեռք են բերում որոշակի գիտելիքներ և հմտություններ, որոնք այնուհետև ավելի խորը յուրացվում և ամրապնդվում են տարբեր խաղերի, մեծերի և հասակակիցների հետ ամենօրյա հաղորդակցման և ինքնուրույն գործունեության ընթացքում:

Պարապմունքները իրենց բովանդակությամբ և կազմակերպման ձևով չպետք է առանձնացվեն և շատ տարբերվեն մյուս աշխատանքներից, որոնք իրականացվում են երեխաների հետ օրվա տարբեր ժամերին: Պարապմունքները պետք է ներառվեն օրվա աշխատանքներում այնպես, որ անցումը պարապմունքից երեխայի գործունեության մյուս ձևերին լինի բնականոն, տրամաբանական, սահուն և հիմնավորված: Անհրաժեշտ է հիշել, որ օրվա ընթացքում երեխաների հետ տարվող բոլոր աշխատանքները՝ անկախ դրանց բնույթից, հավասարաչափ կարևոր են և իրենց դերն ունեն երեխայի համակողմանի զարգացման գործում:

Ուսումնական հաստատությունում ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի մեկին, սակայն երեխաների հարմարունակության ապահովման նպատակով ուսումնական պարապմունքները կազմակերպվում են սեպտեմբերի 3-րդ շաբաթից և ավարտվում մայիսի վերջին:

Պարապմունքներն անցկացվում են շաբաթական տեղաբաշխման գրաֆիկի և ռեժիմի (կանոնակարգի) համաձայն: Օրվա կանոնակարգը փոփոխվում է տարվա ցուրտ և տաք եղանակներին համապատասխան: Նկատի առնելով օրվա ռեժիմի վերը նշված տարբերակները՝ յուրաքանչյուր հաստատություն կազմում է իր պայմաններին և յուրահատկություններին համապատասխան ռեժիմ՝ բնականաբար կատարելով կանոնակարգային առանձին պահերի փոփոխություն:

---

[1] Պարապմունքների միջև պետք է ապահովել 10-15 րոպեանոց ընդմիջումներ/դադարներ, որոնք անհրաժեշտ են երեխաների ֆիզիկական ակտիվացման և մի պարապմունքից մյուսին սահուն անցումն ապահովելու համար:

3-6 տարեկանների հետ աշխատանքն իրականացվում է խաղային գործունեության միջոցով: Պարապմունքները տարվում են երկու ձևով՝

ա) համընդհանուր (ֆրոնտալ) ուսուցման ձևով, որը հիմնականում կատարվում է նոր նյութի հաղորդման ժամանակ,

բ) մի քանի պարապմունքների ինտեգրման ճանապարհով, օրինակ՝ մայրենի լեզու-կերպարվեստ, մաթեմատիկա-երաժշտություն, մաթեմատիկա-կառուցողական աշխատանք և այլն:

Թեմաների զարգացումը, նյութի ամրապնդումը, ամփոփումը կարելի է կատարել՝ կիրառելով ուսուցման փոխգործուն մեթոդները, օգտագործելով աշխատանքային կենտրոնները և կազմակերպելով փոքր խմբերով աշխատանք:

Պարապմունքները երեխայի համար հնարավորություն են ստեղծում ճանաչողական գործընթացը դարձնել իրական փորձառություն, որն օգնում է յուրաքանչյուր երեխայի լիարժեք բացահայտել իր ստեղծագործական կարողությունները, բավարարել հետաքրքրությունները: Պարապմունքների ժամանակ երեխաները հետազոտում են, ուսումնասիրում, պրպտում, լուծումներ գտնում, որոշումներ կայացնում: Նրանք սովորում են ոչ միայն դաստիարակին լսելով, այլ նաև սեփական փորձով, ընկերների հետ քննարկելով, պարապմունքին մասնակցող այլ մեծահասակների հետ շփվելով:

Պլանավորված պարապմունքներն իրականացվում են խմբով, ենթախմբերով, անհատական՝ կախված ուսուցանվող նյութի բովանդակությունից, թեմայի նպատակներից, երեխաների նախապատրաստվածության մակարդակից և հոգեբանական առանձնահատկություններից, ծնողների պահանջներից:

Խառը նախադպրոցական խմբերում ցանկալի է ամբողջ խմբի երեխաների հետ պարապմունքներն անցկացնել ծրագրի մեկ բաժնի մասով: Կախված պարապմունքի բնույթից՝ դրանց բովանդակության մեջ թույլատրելի միացումն ինքնին պիտի բխի երեխաների տարիքային տարբերություններից: Լավագույն տարբերակը ենթախմբերով աշխատանքն է: Դաստիարակը պարապմունքն սկսում է ամբողջ խմբի հետ: Խթանման փուլից հետո խումբը բաժանում է տարիքային ենթախմբերի և միևնույն թեմայի շրջանակներում յուրաքանչյուր խմբին հանձնարարում է իրենց տարիքային առանձնահատկություններին համապատասխան առաջադրանք: Փոքրիկները պարապմունքն ավարտում են մի փոքր շուտ: 3-4 տարեկան երեխաների պարապմունքը կարող է տևել 15-20 րոպե, 4-5 տարեկան երեխաներինը՝ 20-25 րոպե և 5-6 տարեկաններինը՝ 25-30 րոպե:

Պարապմունքների ընթացքում անցկացվում է թարմացնող վարժություն կամ աշխուժացնող խաղ՝ 2-3 րոպե տևողությամբ: Պարապմունքների միջև կազմակերպվում է ընդմիջում՝ 10-15 րոպե տևողությամբ: Ընդմիջումների ժամանակ անհրաժեշտ է կազմակերպել աշխուժացնող, թարմացնող կարճատև խաղեր, խուսափելով չափազանց ակտիվություն առաջացնող և երկարատև խաղեր:

Պարապմունքների ընթացքում երեխաների ակտիվ շարժունակության և բարձր աշխատունակության ապահովման համար կարևոր է, որ դաստիարակը նախապես ճիշտ պլանավորի գործունեության առանձին տեսակների և հանգստի հերթագայումը:

1.2 ԽԱՌԸ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՇԱԲԱԹԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՏԱՐԲԵՐԱԿ

1. Հնգօրյա աշխատանքային շաբաթով գործող նախադպրոցական ծառայությունների 3-6 տարեկանների խառը տարիքային խմբերում շաբաթական 12 պարապմունքը բաժանվում է շաբաթվա օրերի վրա, ուստի երկուշաբթի և հինգշաբթի կազմակերպվում է երեքական պարապմունք, իսկ երեքշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ՝ երկուական:

2. Քանի որ ծրագրով թույլատրվում է անցկացնել մեկ լրացուցիչ պարապմունք դաստիարակի հայեցողությամբ (հաշվի առնելով երեխաների նախասիրությունները և ծրագրային պահանջները), ապա այդ պարապմունքը ծրագրելիս պետք է հաշվի առնել դրա բնույթը (մտավոր լարում պահանջող կամ շարժուն պարապմունք): Ելնելով պարապմունքի բնույթից՝ այն կարելի է անցկացնել հիմնական պարապմունքի հետ զուգակցված՝ խաղային մեթոդների զուգորդմամբ: Նպատակահարմար կլինի 5-6 տարեկան երեխաների հետ առանձին անցկացնել գրաճանաչության պարապմունք կամ մաթեմատիկա բոլոր երեխաների հետ::

Շաբաթական ընդամենը 12 պարապմունք + 1պարապմունք դաստիարակի հայեցողությամբ

Շաբաթվա օրերը	Խոսքի զարգացում	Գեղարվեստական գրականություն	Ծանոթացում շրջակա միջավայրին և հասարակական կյանքի երևույթներին, էկոլոգիական դաստիարակություն	Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացում	Նկարչություն	Ծեփակերտում	Ապլիկացիա, կառուցողական աշխատանք	Երաժշտություն	Ֆիզկուլտուրա	Պարապմունք դաստիարակի հայեցողությամբ
Երկ.			1		1			1		
Երք.	1								1	
Չրք.		1		1			1			
Հնգ.					1			1		1
Ուրբ.						1			1	
Ընդ.	**1**	**1**	**1 հերթագայմամբ**	**1**	**2**	**1**	**1 հերթագայմամբ**	**2**	**2**	**1**

2 3-6 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐՃՕՐՅԱ ԾՐԱԳԻՐ

Ծրագիրը հենվում է կառուցողական տեսության վրա, որի կենտրոնում երեխայի բնական ու համակողմանի զարգացումն է: Այն միտված է խթանելու երեխայի զարգացման բոլոր ոլորտները:

3-6 տարեկան երեխաների գործունեության կազմակերպման կարճօրյա ծրագրի բովանդակությունը ներառում է այնպիսի բաղադրիչներ, որոնք բավարարում են այդ տարիքային խմբի զարգացման և կրթական պետական չափորոշիչների և նախադպրոցական կրթության պահանջները:

Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչները սահմանում են երեխաների կարողությունների և գիտելիքների վերաբերյալ ակնկալիքները՝ պայմանավորված տարիքային բնականոն զարգացման և ազգային-մշակութային առանձնահատկություններով:

Երեխաների զարգացման չափորոշիչներն ընդհանուր առմամբ նկարագրում են, թե ինչ պետք է իմանա և ինչ կարողանա անել երեխան տվյալ տարիքում: Այս փաստաթուղթը մանկավարժներին, ծնողներին և երեխաների հետ շփվող այլ մեծահասակներին կարևոր տեղեկություններ է տալիս զարգացման տարբեր ոլորտներում տվյալ տարիքի երեխաների զարգացմանը և ուսումնառությանն առնչվող ակնկալիքների վերաբերյալ:

ԾՆՆԴԻՑ ՄԻՆՉԵՎ ՎԵՑ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Որոշ երեխաներ կարող են շատ ավելի բարձր ցուցանիշներ դրսևորել, քան սահմանում են չափորոշիչները, ոմանք՝ մի քիչ ավելի ցածր: Երեխաների տվյալ տարիքին համապատասխան զարգացման և ուսումնառության հետ կապված ակնակալիքների մասին մտածելիս կարևոր է ուշադրություն դարձնել նրանց անհատական առանձնահատկություններին: Երեխաները տարբեր են՝ կախված իրենց բնածին ունակություններից, փորձից, առողջական վիճակից և սովորելու նկատմամբ ունեցած վերաբերմունքից: Երեխաների միջև այսպիսի տարբերությունները բնական են: Անհրաժեշտ է հարգանք դրսևորել բոլոր երեխաների նկատմամբ, նրանց վերաբերվել որպես ունակ անհատների, որոնք կարող են տարբեր տեմպերով զարգանալ ու սովորել, հասկանալ շրջապատող աշխարհը և արտահայտել իրենց սեփական աշխարհը:

Չափորոշչային պահանջների հիմքում ընկած է այն համոզմունքը, որ երեխաների ուսումնառությունը և զարգացումը բազմակողմանի է, քանի որ ֆիզիկական զարգացման հետ մեկտեղ զարգանում են նաև երեխայի խոսքն ու լեզուն, զգացմունքները, սոցիալական շփման և իմացական հմտությունները և այլն: Հետևաբար, երեխայի համակողմանի զարգացման համար կարևոր են բոլոր ոլորտները և պետք է հավասարապես արժևորվեն:

Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչները դասակարգված են ըստ հետևյալ ոլորտների.

- Շարժողական
- Ինքնասպասարկում և անվտանգություն
- Հուզական, անձնային և սոցիալական
- Իմացական
- Խոսք և լեզու
- Վերաբերմունք սովորելու նկատմամբ

Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչները ունեն հետևյալ կառուցվածքը.

- ✓ **Ոլորտները** ուսումնառության/զարգացման ուղղություններն են:
- ✓ **Ենթաոլորտները** տվյալ ոլորտի բաղկացուցիչ մասերն են:
- ✓ **Չափորոշիչները** տվյալ ենթաոլորտում երեխայից ակնկալվող վարքագիծն է:
- ✓ **Ցուցիչները** նշում են, թե երեխան ինչ գիտի կամ ինչ է անում, այսինքն՝ ինչպիսի դիտարկելի վարքագիծ է դրսևորում:
- ✓ **Օրինակները** բացատրում են յուրաքանչյուր ցուցիչի իմաստը:

Չափորոշիչներն այն ուղենիշներն են, որոնք մանկավարժները կարող են օգտագործել տարբեր ոլորտներում երեխաների զարգացմանը նպաստելու համար:

Այդ թվում՝

- ✓ սահմանելու համար զարգացման հետ կապված այն նպատակները, որոնց երեխաները պետք է հասնեն 0-6 տարեկան հասակում:
- ✓ նպաստելու, որպեսզի ծնողները, ինչպես նաև երեխաների խնամքի և ուսուցման հետ առնչվող այլ մարդիկ ունենան իրատեսական ակնկալիքներ ու գործնական չափորոշիչներ:
- ✓ բարելավելու համար ուսուցողական միջավայրը և ավելի արդյունավետորեն օգտագործելու ուսումնական ծրագրերը:
- ✓ սկիզբ դնելու ուսումնառության շարունակական գործընթացին, որը կապ է ստեղծում երեխայի վաղ մանկության զարգացման և ապագա կյանքի հաջողության միջև:

Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչները մանկավարժների համար այն հիմքն են, որի վրա կարող են պլանավորել ուսուցումը: Սա, իհարկե, ուսումնական ծրագիր չէ, սակայն այստեղ ներկայացվում են այն ոլորտները, որոնք պետք է հաշվի առնել երեխաների ուսումնական գործունեությունը պլանավորելիս:

Չափորոշիչները կարող են լինել նաև գործիք, միջոց՝ խոսելու համար այն ծնողների հետ, որոնք հաճախ անհանգստանում են, թե արդյոք իրենց երեխաները «ճիշտ» գիտելիքներ ու հմտություններ են ստանում դպրոցին նախապատրաստվելու համար: Չափորոշիչների օգնությամբ ծնողները կտեսնեն, որ առօրյա գործողությունների միջոցով երեխաներին կարելի է սովորեցնել այն ամենը, ինչ նրանց անհրաժեշտ է իմանալ՝ դպրոցում լավ սովորելու համար:

Միևնույն ժամանակ կարևոր ենք համարում ընդգծել, որ չափորոշիչները նախատեսված չեն

- որոշելու համար, թե արդյոք երեխան «պատրաստ է» դպրոց գնալու, թե՞ ոչ,
- մի երեխային մյուսի հետ համեմատելու համար,
- երեխայի զարգացման մակարդակը գնահատելու համար,
- որպես ուսումնական ծրագիր օգտագործելու համար (սակայն մանկավարժները կարող են օգտագործել այդ նյութերը ուսումնական պարապմունքներ պլանավորելիս):

Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչները համահունչ են վաղ մանկության բնագավառում կատարված ընթացիկ ուսումնասիրություններին, Հայաստանի Հանրապետության ընդունած փաստաթղթերին և կրթական ոլորտում կատարվող բարեփոխումներին:

3 ԶԱՐԳԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Երեխայի զարգացման համար անհրաժեշտ է անկաշկանդ միջավայր, որտեղ նա կկարողանա արձագանքել շրջապատին: Այն պիտի լինի բնության և սոցիալական միջավայրի համակցված մոդել, որպեսզի երեխային մղի սեփական գործողությունները համաձայնեցնելու այդ միջավայրի օրենքներին:

Ուսուցումը զարգացման բնականոն գործընթացն ամրապնդող և մշակութային գործոններ ձևավորող միջոց է: Ուսուցմանը մեծապես նպաստում է միջավայրը: Որպեսզի միջավայրը զարգացնող լինի, այն պետք է՝

- հնարավորություն տա երեխայի անհատական զարգացմանը,
- երեխային ինքնաբուխ, ստեղծագործական գործունեության մղի,
- համապատասխանի երեխայի կարիքներին և զարգացման մակարդակին:

3-6 տարեկանների համար ուսումնառությունը խաղ է, իսկ խաղը՝ ուսումնառություն, այս երկու գործընթացները չի կարելի միմյանցից զատել: Երեխաների համար խաղային միջավայրի ստեղծումը նրանց ուսումնառության արդյունավետության գրավականներից մեկն է, ուստի շատ կարևոր է 3-6 տարեկան երեխաների ուսուցումը կազմակեպելիս հաշվի առնել զարգացնող միջավայրին ներկայացվող հետևյալ պահանջները:

3.1. ԿԱՐՃՕՐՅԱ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ներքին և արտաքին ֆիզիկական միջավայրը նպաստում է երեխայի բնական աճին և զարգացմանը՝ հետազոտության և ուսումնառության համար հնարավորությունների ապահովման միջոցով:

Թե՛ երեխաների, թե՛ մեծահասակների վարքի և զարգացման վրա ազդում է այն ֆիզիկական միջավայրը, որտեղ նրանք ապրում և աշխատում են: Ֆիզիկական տարածքի և այնտեղ գտնվող նյութերի որակն իր ներգործությունն է ունենում երեխաների ներգրավման մակարդակի և մեծահասակների հետ նրանց շփման որակի վրա: Թե՛ ներքին, թե՛ արտաքին տարածքի մեծությունը, ձևավորումը, օգտագործումը պետք է շարունակաբար գնահատվեն:

3.1.1. Ներքին և արտաքին ֆիզիկական միջավայրը պետք է լինի ապահով, մաքուր, գրավիչ և ընդարձակ, ունենա տարածք՝ բացօթյա խաղահրապարակում: Աշխատակազմը պետք է մինչև երեխաների գալը միջավայրը նախապես պատրաստելու բավարար ժամանակ ունենա:

Դիտարկելով երեխաների հաղորդակցությունը միմյանց հետ, նրանց ներգրավվածությունը աշխատանքներում, հստակ կարելի է որոշել, թե արդյո՞ք տարածությունը բավարար է:

Միջավայրը պետք է լինի գրավիչ: Այնտեղ պետք է ցուցադրվեն երեխաների աշխատանքները, ուսումնական պաստառներ, այլ նկարներ, որոնք պետք է փակցված լինեն երեխայի աչքի մակարդակին համապատասխան բարձրության վրա:

3.1.2. Աշխատանքային կենտրոնները պետք է տարածական առումով հստակորեն սահմանված և տարաբաժանված լինեն: Տարածքը պետք է դասավորված լինի այնպես, որ երեխաները կարողանան աշխատել անհատապես, միասին, փոքր կամ մեծ խմբերով: Տարածքի դասավորությունը պետք է թույլ տա երեխաներին ազատ տեղաշարժվել մի կենտրոնից մյուսը՝ առանց մյուսների ուշադրությունը շեղելու:

Տարածքի դասավորությունը նույնքան կարևոր է, որքան դրա ընդարձակությունը: Երեխաները պետք է կարողանան մի աշխատանքից մյուսին անցնել՝ առանց ընկերներին խանգարելու: Աշխատանքային կենտրոնները պետք է բաժանված լինեն այնպես, որ կենտրոններում աշխատող երեխաները չխանգարեն միմյանց, չշեղվի երեխաների ուշադրությունը: Լավ կազմակերպված տարածքը նպաստում է ցանկալի վարքագծի ձևավորմանը, մարդկանց միջև դրական հաղորդակցությանը, ինչպես նաև նյութերի ակտիվ կիրառմանը:

3.1.3. Տարածքի դասավորությունը պետք է հնարավորություն ընձեռի, որպեսզի երեխաները կարողանան զբաղվել իրենց տարիքին համապատասխան բազմազան և տարբեր տևողություն պահանջող աշխատանքներով:

Այս չափանիշն ավելի շատ վերաբերում է աշխատանքներին, քան կենտրոններին: Օրինակ, բնագիտությունը և մաթեմատիկան պահանջում են աշխատանքներ, որոնք չեն սահմանափակվում խմբասենյակի մեկ կենտրոնով: Ուստի սենյակը պետք է դասավորված լինի այնպես, որ աշխատելիս հնարավոր լինի անցնել մի կենտրոնից մյուսը: Կամ՝ շինարարությունը, դերային խաղը, ընթերցանությունը պահանջում են առանձին տարածք: Արվեստի կամ խոհարարության կենտրոնները նպատակահարմար է տեղադրել ջրին մոտ, քանի որ այստեղ աշխատանքը մի փոքր ավելի թափթփվածություն է առաջացնում:

3-6 տարեկան երեխաներին անհրաժեշտ է հատկացնել հանգստի առանձին անկյուն: Միջավայրը պետք է ունենա նաև փափուկ պարագաներ. գորգ, փոքր բազմոց, բարձեր և այլն:

3.1.4. Բավարար քանակով, բազմատեսակ ու դիմացկուն նյութերն ու սարքավորումները պետք է լինեն երեխաների տարիքին համապատասխան և դրված լինեն նրանց համար մատչելի տեղում, այսինքն՝ ցածր և բաց դարակների վրա, որտեղից երեխան կարող է ազատ և ինքնուրույն օգտվել: Նյութերը փոփոխվում են և հարմարեցվում երեխաների հետաքրքրություններին:

Նյութերը և սարքավորումները գնահատվում են տարբեր տեսանկյուններից: Անհրաժեշտ է ունենալ ինչպես բազմազան, այնպես էլ համապատասխան տեսակի նյութեր ու սարքավորումներ, որոնք ապահովեն խաղերի ակտիվությունը, ինչպես նաև խթանեն երեխայի զարգացման բոլոր ոլորտները:

Օրինակ՝ կառուցողական նյութեր, մանիպուլյատիվներ, դերախաղի պարագաներ, նկարչական նյութեր, գրքեր, ձայներիզներ և այլն: Երեխաներն ավելի ստեղծագործաբար և իմաստալից են օգտագործում նյութերը, եթե դրանք հասանելի են իրենց (ինքնուրույն կարող են վերցնել) և ժամանակ առ ժամանակ փոփոխվում են՝ երեխաների հետաքրքրությունը պահպանելու և բազմազանություն ստեղծելու նպատակով:

3.1.5. Երեխաների համար պետք է ապահովել առանձին տեղ՝ իրենց հագուստը կախելու և անձնական իրերը պահելու համար:

Անձնական իրերի համար տեղ կարելի է հատկացնել տարբեր ձևերով: Սակայն թե՛ մեծերը, թե՛ երեխաները պետք է անպայման ունենան տեղ իրենց անձնական իրերը պահելու համար, որոնք հետո կարողանան հեշտությամբ գտնել: Երեխաների համար կարելի է նախատեսել դարակներ հանդերձապահարաններում, պաստառ՝ անհատական գրպանիկներով, մեծահասակները կարող են օգտվել առանձին պահարանից կամ պատից կախված դարակներից, որոնք անհասանելի կլինեն երեխաներին:

3.1.6. Երեխաների համար պետք է ապահովել տեղ, որտեղ կարելի է առանձնանալ:

Այն երեխաները, որոնք երկար ժամանակ են անցկացնում խմբում, երբեմն առանձնանալու և մենակ մնալու կարիք ունեն: Այսպիսի տեղ կարելի է ստեղծել՝ պլանավորելով միջավայրի դասավորությունը: Այդ տարածքը պետք է հեշտությամբ վերահսկելի լինի մեծահասակի կողմից: Նման տարածք կարելի է ստեղծել՝ օգտագործելով թունելները, խաղատնակները կամ սենյակում մի փոքր անկյուն առանձնացնել: Այդ տարածքում կարելի է ունենալ 2-3 բարձիկ կամ փոքր գորգ՝ հատակին հարմարավետ նստելու համար: Այստեղ երեխաները սովորաբար զբաղվում են հանգիստ խաղերով, զրուցում են կամ գրքեր են դիտում:

3.1.7. Արտաքին միջավայրը պետք է ներառի տարբեր տիպի մակերեսներ, ինչպիսիք են՝ հողը, ավազը, խոտը, հարթ ու խորդուբորդ հատվածները, կոշտ տարածքը և այլն: Արտաքին միջավայրը կարող է լինել ստվերոտ կամ արևոտ: Այն պետք է հնարավորություն տա երեխաներին փորել, որևէ բան քշել, մագլցել, ճոճվել, թռչկոտել, վազվզել, խաղալ և՛ առանձին, և՛ խմբով: Արտաքին միջավայրը պետք է առանձնանա ցանկապատով կամ որևէ բնական արգելամիջոցով, որը երեխաներին կպաշտպանի փողոցից, մեքենաներից և այլ վտանգներից:

Արտաքին տարածքը մեծապես կախված է նախադպրոցական ծառայության գտնվելու վայրից: Դրանով պայմանավորված է տարատեսակ մակերեսների և սարքավորումների անհրաժեշտությունը: Եթե տարածքը բնականից ստվերոտ ու թեք մակերեսներ չունի, կարելի է դրանք ստեղծել՝ տեղադրելով, ասենք՝ տաղավարներ, թեքահարթակներ, սահարաններ և այլն:

3.2. ԿԱՐՃՕՐՅԱ ՆԱԽԱԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Ուսումնական միջավայրը շրջապատող աշխարհը ճանաչելու և կատարվող երևույթներին ստեղծագործաբար արձագանքելու ժամանակ և հնարավորություններ է տալիս երեխաներին: Ուսումնական միջավայրն իր բնույթով սոցիալական է և բոլոր երեխաների համար խթանող ու ապահով մթնոլորտ է ստեղծում, ընձեռում է համարձակորեն գործելու, շրջապատող աշխարհին ուսումնասիրելու և հետազոտելու ժամանակ ու հնարավորություններ: Ընկերների և մեծահասակների հետ համատեղ գործունեության արդյունքում երեխաները ձեռք են բերում այնպիսի փորձառություն, որը խթանում է միջանձնային հմտությունների զարգացումը, մյուսների հետ շփվելու, համագործակցաբար աշխատելու և սովորելու կարողությունները:

Ուսումնական հաստատության ֆիզիկական միջավայրը ներգործում է երեխաների հետաքրքրությունների, վարքի և մշակույթի վրա: Այն ընդգրկում է ուսումնական հաստատության ողջ շրջակայքը: Գեղագիտական ճաշակով և հարմարավետությամբ աչքի ընկնող խմբասենյակները լավ են անդրադառնում թե՛ երեխաների, թե՛ դաստիարակների վրա: Կահույքի դասավորությունը պատկերացում է տալիս, թե ինչ նպատակով է օգտագործվում տվյալ տարածքը: Այն կարևոր է նաև կենտրոնից կենտրոն երեխաների անցուդարձի և նրանց անվտանգության ապահովման, աղմուկի նվազեցման և դաստիարակի կողմից երեխաների գործունեության դիտարկման տեսանկյունից: Ուսումնական հաստատության ներքին և արտաքին տարածքը պետք է նախագծել նպատակային և խելամիտ: Լավ նախագծված միջավայրը նպաստում է երեխաների խմբային խաղերի, շփման, անկախ տեղաշարժման և այլ խնդիրների լուծման համար: Ճիշտ և ճաշակով ձևավորված միջավայրը ոգևորում է երեխաներին, նրանց գրավում է սովորելու, նյութերը մանրազնին ուսումնասիրելու, նոր նյութեր հայտնաբերելու միտքը:

Ուսումնական հաստատության նյութական միջավայրը ներառում է հարմար կահավորված խմբասենյակը, սանհանգույցը, հանդերձարանը, այգում կամ բակում բացօթյա տարածքը կամ խաղահրապարակը:

3.3. ԿԱՐՃՕՐՅԱ ՆԱԽԱԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Նախադպրոցական ծառայություններ մատուցող հաստատությունը պետք է ապահովված լինի մաքրելու անհրաժեշտ միջոցներով և պարագաներով (ավել, գոգաթիակ, սրբիչներ, խոզանակներ, մաքրող-ախտահանող նյութեր և այլն), որպեսզի երեխաների համար ստեղծված միջավայրը լինի միշտ մաքուր, հիգիենիկ և առողջության համար ապահով: Խմբասենյակում փոշեկուլ ունենալը պարտադիր է:

Սանհանգույցը պետք է լինի մատչելի, երեխայի չափերին համապատասխան, մաքուր, հարմարավետ, հայելիով: Երեխան պետք է այնտեղ ազատ ելումուտ ունենա, կարողանա ինքնուրույն օգտվել դրանից: Զուգարանակոնքերը՝ ցածր, երեխայի հասակին համապատասխան, լվացարանները՝ հարմար լվացվելու համար: Յուրաքանչյուր երեխա պիտի ունենա իր անհատական սրբիչը և բաժակը: Եվ սանհանգույցում, և՛ խմբասենյակում փակ աղբամաններ պիտի լինեն:

Հանդերձարանը կարող է խմբասենյակի մաս կազմել կամ առանձին սենյակում/միջանցքում լինել: Կոշիկների տեղը կարող է անհատական պահարանում լինել: Երբեմն դա կարող է ընդհանուր լինել. պատի տակ կողքկողքի շարված:

3.4. ԽՄԲԱՍԵՆՅԱԿԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Խմբասենյակի միջավայրը պիտի լինի դինամիկ, փոփոխելի՝ երեխայի գործունեությանը համապատասխան: Փոխողը երեխան ու դաստիարակը պետք է լինեն. նրանք միջավայրը կփոփոխեն իրենց գործունեությանը համապատասխանեցնելու նպատակով կամ գործունեության արդյունքում: Խմբասենյակը երեխաներինն է, ուստի միջավայրն իր ազդեցությունն է ունենում նրանց հետաքրքրությունների, վարքի և մշակույթի ձևավորման վրա: Երեխաների ընթացիկ աշխատանքները պետք է ներկայացվեն խմբասենյակում: Յուրաքանչյուր այցելու կարող է հեշտությամբ նկատել նրանց արվեստի աշխատանքները, գիտական փորձարկումները, հետազոտությունները: Կիսատ կառույցները կարելի է թողնել նույն տեղում այնպես, որ հնարավոր լինի շարունակել և ավարտել հաջորդ օրը: Սարքավորումներն ու կահույքը խմբասենյակում տեղավորված պիտի լինեն այնպես, որ երեխան կարողանա առանց իրեն վնասելու խաղալ, վազել, գլորվել, աշխատել:

Պահարաններն անվտանգ, հարմարավետ, գործածական են, երեխայի չափերին և կազմվածքին համապատասխան, թեթև ու շարժական, որ հնարավոր լինի դրանք հեշտությամբ տեղափոխել, օգտագործել տարբեր նպատակներով: Կահավորանքը հարմար ձևափոխելու և դասավորելու դեպքում խմբասենյակը կարող է ծառայել տարբեր նպատակների՝ տիկնիկային թատրոն, բնագիտական լաբորատորիա, երաժշտական սրահ, մարզադահլիճ, խաղասրահ, արհեստանոց, արվեստանոց և այլն: Առանձին պարապմունքների համար հատուկ թեմատիկ պարագաների օգնությամբ խմբասենյակը կարելի է դարձնել «խանութ», «վարսավիրանոց», «այգի» և այլն:

3.5. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

Ֆիզիկական միջավայրը բաժանվում է աշխատանքային կենտրոնների: Կենտրոնները թույլ են տալիս երեխաներին ինքնուրույն կողմնորոշվել ուսումնախաղային նյութերի և սարքավորումների ընտրության հարցում և

զբաղվել իրենց համար կարևոր ու իմաստալից ուսումնական գործունեությամբ:

3-6 տարեկան երեխաների համար նախատեսված խմբասենյակներում սովորաբար պետք է լինեն հետևյալ աշխատանքային կենտրոնները.

- **գրաճանաչության,**
- **մաթեմատիկայի,**
- **արվեստի,**
- **երաժշտության,**
- **շինարարության,**
- **դերային խաղերի,**
- **խոհարարության,**
- **բնագիտության,**
- **ավազի և ջրի:**

Նշված կենտրոններից բացի խմբասենյակներն ունենում են նաև հանգստի գոտի և կենտրոնական բաց տարածք: Վերջինս հաճախ անվանում են նաև հանդիպման կամ հավաքի տարածք, որտեղ դաստիարակը հավաքում է երեխաներին՝ ընթերցելու, քննարկելու, ընդհանուր ցուցումներ տալու, պարապմունք, առավոտյան հանդիպում անցկացնելու համար:

3-6 տարեկան երեխաներն ավելի հակված են հմտություններ ձեռք բերել խաղի և որևէ նյութի բովանդակությունը հետազոտելու միջոցով: Նրանց ուսումնառությունը կատարվում է աշխատանքային կենտրոններում, ինչն օգնում է երեխաներին խորությամբ հետազոտել նյութը: Որպեսզի երեխաներն արդյունավետ օգտվեն աշխատանքային կենտրոններից, դարակները, որտեղ դրվում են ուսումնական միջոցները, նյութերը, տեսանելի և հասանելի պիտի լինեն նրանց: Երեխան ցանկացած պահի պիտի կարողանա այդ միջոցներով ինքնուրույն կազմակերպել իր գործունեությունը, նյութերն օգտագործել տարբեր նպատակներով: Հարկավոր է խրախուսել երեխաների ինքնուրույն աշխատանքն այդ նյութերով: Սակայն այն նյութերը, որոնք վտանգ են ներկայացնում (մկրատ, սոսինձ, մանր բնական նյութեր և խաղալիքներ), տարվա սկզբին պետք է դրվեն փոքրերի համար անհասանելի տեղում և ազատ տրվեն երեխաներին միայն նյութից օգտվելու հմտությունները ձևավորելուց հետո: Քանի որ կենտրոններում երեխաներն ինքնուրույն են աշխատում, դաստիարակները կարող են ստեղծել յուրաքանչյուր կենտրոնում աշխատելու և եղած նյութերն օգտագործելու համար կառավարման համակարգ, որը սահմանում է կենտրոններում աշխատելու հստակ կանոնները և հնարավորություն է տալիս դաստիարակին վերահսկելու երեխաների թիվը յուրաքանչյուր կենտրոնում:

Կանոնները խրախուսում են երեխաներին հոգատար վերաբերվել ուսումնական պարագաներին, խաղալիքներին, ինչպես նաև կարգ ու կանոն պահպանել սենյակում. աշխատանքն ավարտելուց հետո ամեն ինչ իր տեղը դնել: Կենտրոնները պիտակավորված են, դարակների և ուսումնական պարագաների վրա կան պարզ գրառումներ:

Երեխան պետք է սովորի անհատական ակտիվ գործունեության միջոցով: Ստեղծագործական մոտեցումն առաջին տեղում պիտի լինի՝ անկախ նրա գործունեության ձևերից. նկարչություն, երաժշտություն, պար, թատրոն, վարվեցողության նորմեր, խաղ, մարզանք, ուսուցում, աշխատանք:

Խաղը երեխայի դաստիարակության գլխավոր, միջոցներից մեկն է: Խաղի շնորհիվ երեխան մշտապես առաջ է գնում իր զարգացման մեջ, այն խթանում է նրա սովորական վարքագիծը: Խաղի ժամանակ երեխան, կարծես, ինքն իրեն ավելի մեծ է զգում: Քանի որ խաղը երեխայի առաջատար գործունեությունն է, ուստի աշխատանքային կենտրոններն օգնում են դաստիարակին՝ օգտագործելով տարբեր գրավիչ նյութեր՝ ծրագրել տվյալ տարիքին համապատասխան գործունեություն, պլանավորման գործում ներգրավել նաև երեխաներին: Աշխատանքային կենտրոններում երեխաները սովորում են միմյանցից, բնականոն շփման միջոցով հաղորդակցվում իրար հետ, խնդիրներ լուծում, որոշումներ կայացնում, վերարտադրում իրենց մտքերն ու գիտելիքները, ձեռք բերում համատեղ աշխատելու հմտություններ:

Կենտրոնները պետք է հագեցած լինեն տարբեր և բավարար քանակի նյութերով, որպեսզի մի քանի երեխա միաժամանակ կարողանան օգտագործել դրանք: Մանկավարժական կազմը պետք է հետևի նյութերի թարմացմանը և դրանց համապատասխանեցմանը երեխաների ուսումնական պահանջներին: Կենտրոնները պետք է լինեն դինամիկ և փոփոխական՝ ելնելով ծրագրային խնդիրներից, ուսումնական թեմայից, երեխաների հետքրքրություններից, անհատական կարիքներից:

3.6. ՈՒՍՈՒՄՆԱԽԱՂԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

Խմբասենյակը պետք է հագեցած լինի բազմատեսակ խաղալիքներով ու խաղերով, որպեսզի երեխան կարողանա խաղեր կազմակերպել, ազատ խաղալ ընկերների հետ, ինքնաբուխ գործունեության հնարավորություն ունենա: Խաղալիքները բազմազան պիտի լինեն՝ տունտունիկ խաղալու ամանների և խոհանոցային այլ իրերի հավաքածուներ, խաղալիք-կահույք, տիկնիկներ, խաղալիք-մեքենաներ, սեղանի խաղեր, լեգոներ, տրամաբանական խաղեր, տարբեր չափերի և գույնի գնդակներ, տարբեր գործիքներ: Խաղալիք կարող են դառնալ նաև աթոռները, սեղանները, պահարանները, արկղերը: Օրինակ՝ աթոռները կարող են գնացքի վագոններ կամ ավտոբուսներ դառնալ, պահարանը՝ բույն, տուն…:

Խմբասենյակում պետք է լինեն երեխաների տարիքին համապատասխանող հարմար սեղաններ և աթոռներ: Բոլոր գրենական պիտույքները և ուսումնախաղային նյութերը, որոնք նախատեսված են երեխաների օգտագործման համար, պետք է դասավորած լինեն նրանց համար մատչելի տեղերում, դարակներում և հասանելի բարձրության վրա: Աշխատանքային կենտրոններում եղած բազմաթիվ նյութերը երեխաներն օգտագործում են ստեղծագործաբար: Դաստիարակները պետք է մեծ ուշադրությամբ ընտրեն նյութերը, որպեսզի դրանք գրավեն երեխաներին և օգնեն նրանց՝ բավարարելու իրենց հետաքրքրությունները: Յուրաքանչյուր կենտրոն պետք է հագեցած լինի իր նշանակությանը համապատասխան ուսումնախաղային պարագաներով:

Գրաճանաչության կենտրոն

Գրաճանաչության կենտրոնում պետք է պահվեն գրքեր և նյութեր՝ երեխաների բանավոր խոսքի և վաղ գրաճանաչության զարգացման համար: Սա պետք է լինի խաղաղ, անաղմուկ տարածք, որտեղ երեխաները կարող են գրքեր նայել, մեկը մյուսի համար «կարդալ»: Նրանց համար կարող է կարդալ դաստիարակը կամ էլ որևէ կամավոր ծնող: Գրականությունն օրվա ընթացքում տարբեր ուսումնական նպատակներով է օգտագործվում: Երեխաներին առաջարկվում է ինքնուրույն գրքեր ստեղծել, հորինել, դերախաղին մասնակցել, լսել զանազան պատմություններ, քննարկել գրքերի կերպարները և այլն:

Գրաճանաչության կենտրոնում պետք է լինեն տարբեր ժանրերի նկարազարդ գրքեր՝ պատմածքներ, հեքիաթներ, բանաստեղծություններ, հանրագիտարաններ, որոնց տեսականին և բարդության մակարդակը պետք է համապատասխանեն երեխաների տարիքին, պայմանավորված լինեն ինչպես ծրագրային պահանջներով, այնպես էլ երեխաների հետաքրքրություններով:

Անհրաժեշտ է նաև ունենալ գրենական պիտույքներ՝ գունավոր և հասարակ մատիտներ, թղթեր, ստվարաթղթեր, դակիչներ, ամրակներ, քարտեր՝ տպատառ տառերով, տառադարան, տառերով և պատկերներով խորանարդիկներ, փոքր գրատախտակներ, խաղեր կամ քարտեր տարբեր պատկերներով (ընտանի և վայրի կենդանիներ, մրգեր, բանջարեղեն, փոխադրամիջոցներ, կահույք, սպասք, հագուստի պարագաներ և այլն), որոնց միջոցով հնարավոր կլինի զարգացնել երեխաների կապակցված խոսքը և ընդլայնել բառապաշարը:

Մաթեմատիկայի կենտրոն

Այս կենտրոնում անցկացվող աշխատանքներն օգնում են երեխաներին զարգացնելու մտավոր կարողությունները, տրամաբանությունը, մանր շար-

ժողական հմտությունները և աչք-ձեռք կոորդինացիան: Կենտրոնի աշխատանքները նպաստում են նաև սոցիալական հմտությունների զարգացմանը՝ համատեղ աշխատանքով, բանակցելու և պրոբլեմներ լուծելու միջոցով:

Մաթեմատիկայի կենտրոնը կարելի է համալրել տարբեր ինքնաշեն և բնական նյութերով, օրինակ՝ լոբիներ, մեծ չափսի գունավոր կոճակներ, շշերի գունավոր կափարիչներ, խեցիներ, մետաղադրամներ, թվային և տարբեր թեմատիկ քարտեր և այլն: Ինքնաշեն և բնական նյութերի հետ մեկտեղ մաթեմատիկայի կենտրոնում անհրաժեշտ է ունենալ խճանկարներ (մոզաիկա), լեգոներ, փոքր խաղադեկորներ, գլուխկոտրուկներ, լոտոներ, դոմինոներ, գունավոր մագնիսական մասնիկներ՝ երկրաչափական պատկերների ձևով, տարբեր տեսակի ժամացույցներ (սլաքներով, ավազի), կշեռք, հասակաչափ, քանոններ, չափիչ ժապավեններ, չափաբաժակներ/չափագդալներ և այլն:

Արվեստի կենտրոն

Արվեստի աշխատանքային կենտրոնը երեխաներին խրախուսում է հետազոտելու և զարգացնելու իրենց ստեղծագործական ունակությունները, ծանոթանալու նոր նյութերի, դրսևորելու իրենց զգացմունքները: Այս տարածքում օգտագործվող նյութեր կարող են լինել ներկերը, թուղթը, մկրատը, գունավոր մատիտները, մոմամատիտները, ծեփամածիկը, կավիճը, գործվածքը կամ նյութերի կտորտանքը՝ սոսնձելու և փակցնելու համար: Այստեղ կարող են ավելացվել նաև բնական նյութեր, օրինակ՝ փայտ, տերևներ, ավազ, եղևնու կոներ, կաղիններ և այլն:

Այս կենտրոնում զարգանում է ստեղծագործական ինքնուրույնությունը, խոսքային և ոչ խոսքային հաղորդակցումը, սեփական արժանապատվության գիտակցումը, մանր և մեծ շարժողական հմտությունները, մտավոր ունակությունները: Արվեստի կենտրոնը նպաստում է երեխաների գեղագիտական դաստիարակությանը և օգնում է երեխաների մեջ սեր արթնացնել արվեստի նկատմամբ:

Երաժշտության կենտրոն

Երաժշտությունը մշտապես օգտագործվել է երեխաներին հանգստացնելու, սփոփելու, զբաղեցնելու և կրթելու համար: Երեխաների կյանքում խոսքը, շարժումը, խաղը և երգը միասնական են: Համարվում է, որ երեխայի բնական խոսքն ու շարժումները պետք է դառնան երաժշտական փորձառության խթաններ, և որ երեխաները պետք է երաժշտության ստեղծման գործում մասնակիցներ լինեն:

Երաժշտության կենտրոնի աշխատանքը նպաստում է երեխաների համակողմանի զարգացմանը: Նրա առավել ակնհայտ նշանակությունը կապված է հուզական զարգացման հետ: Յուրաքանչյուր մշակույթ ունի սիրո,

փաղաքշանքի, ուրախության, խիզախության, տխրության երաժշտական դրսևորման իր ուրույն պարզունակ օրինակները, որոնք երեխաները հեշտորեն կարող են յուրացնել և դրանց միջոցով արտահայտել իրենց զգացմունքները:

Երաժշտությունը նաև զորեղ միջոց է սոցիալական զարգացումը խթանելու համար: Երեխաների խումբը կարող է համատեղ երգել կամ նվագակցել՝ մեծ հաճույք ստանալով այդ խմբային գործունեությունից: Հաճախ այն երեխաները, ովքեր դժկամությամբ են մասնակցում կամ ինքնարտահայտվում խմբային պարապմունքների ժամանակ, ավելի մեծ պատրաստակամությամբ են միանում երգին կամ պարին: Մանկական երգերից շատերը նախատեսում են զուգորդող շարժումների կատարում: Այս երգերը, որոնց ընթացքում երեխաները միաժամանակ կատարում են միևնույն շարժումները, հատկապես արդյունավետ են այլ հանգամանքներում պասիվություն դրսևորող երեխաներին աշխուժացնելու և ներգրավելու իմաստով:

Երաժշտությունը խթանում է նաև լեզվական ունակությունների զարգացումը: Մարդկային խոսքին հատուկ է թե՛ ռիթմիկ և թե՛ մեղեդային կառուցվածքը: Սովորաբար երեխաները խաղում են բառերի հետ ռիթմի և մեղեդու տարրերի կիրառմամբ: Այս բնական խաղը մանկավարժի կողմից կարող է օգտագործվել երեխաների ուշադրությունը լեզվի հնչողության վրա դարձնելու համար: Օրինակ՝ նա կարող է օգնել երեխաներին սովորել խմբի մյուս երեխաների անունները՝ ցուցադրելով յուրաքանչյուր երեխայի անվան ռիթմը ծափերի կամ դափերին հարվածելու միջոցով:

Երաժշտությունը կարող է նաև օգնել երեխաներին ընդլայնելու իրենց լեզվական կարողությունները: Մեղեդին հեղկում է հիշողությունը, հետևաբար երեխան կարող է հիշել երգի այն բառերը, որոնք իր բնական խոսքից մի փոքր բարդ են, այնուհետև օգտագործել դրանք նաև իր խոսքում: Երաժշտությունը զարգացնում է բառապաշարը: Մեծ է այնպիսի երգերի թիվը, որոնք պարունակում են թվարկումներ ու երևույթների անվանումներ, որոնց միջոցով երեխաների բառապաշարը կհամալրվի նոր բառերով: Երեխաները կարող են ծանոթ մեղեդիների օգտագործմամբ սեփական երգեր հորինել՝ պատմելով իրենց պատմություններն ու արտահայտելով անհատական զգացողությունները:

Երաժշտության միջոցով զարգանում են երեխաների շարժողական հմտությունները: Մատնախաղերը երեխային հնարավորություն են տալիս շարժելու մատներից յուրաքանչյուրն առանձին-առանձին՝ ի պատասխան որոշակի երգի, հետևաբար հեղկում են աչքերի ու ձեռքերի կոորդինացիան: Պարզունակ ինքնաշեն գործիքները զարգացնում են նուրբ շարժողա-

կան հմտությունները, ինչպես դրանց պատրաստման, այնպես էլ նվագելու ընթացքում: Ինքնաբուխ պարերն ու երաժշտությանը համահունչ շարժումները ևս խթանում են շարժողական կոորդինացիան: Թեև երեխաների հորինած պարային շարժումները մեծապես նպաստում են նրանց զարգացմանը, տեղին է նաև ժողովրդական պարերի մի քանի հասարակ շարժումներ սովորեցնել նրանց խմբային ներկայացումների համար:

Երաժշտության օգնությամբ կարելի է նաև երեխաներին ուսուցանել ինքնուրույնաբար կատարել որոշ գործողություններ: Առանձնապես արդյունավետ են լվացվելու մասին երգերը, սակայն կարող են լինել նաև երգեր հագնվելու, ուտելու, մաքրություն ապահովելու, զբոսանքի գնալու, կանոնները պահպանելու մասին:

Երաժշտության կենտրոնը կարելի է տեղավորել դերախաղերի կենտրոնի մոտ: Երաժշտության կենտրոնը համալրվում է անվտանգ, սուր ծայրեր և մանր մասեր չունեցող իրական, ինքնաշեն և խաղալիք երաժշտական գործիքներով: Դրանք կարող են լինել տարբեր տեսակի չրխկաններ, կսմիթավոր, հարվածային, լարային, փողային գործիքներ: Պարզ ինքնաշեն երաժշտական գործիքներ կարելի է պատրաստել բնագիտության կենտրոնում և ձևավորել արվեստի կենտրոնում:

Խմբասենյակում անհրաժեշտ է ունենալ դասական և ազգային մանկական երաժշտական ձայնագրությունների հավաքածու, ինչպես նաև բնության երևույթների և կենդանական աշխարհի ձայների ձայնագրություններ (ջրի, քամու աղմուկ, թռչունների ձայն և այլն):

Շինարարության կենտրոն

Շինարարության կենտրոնը հագեցած է լինում տարբեր չափերի ու ձևերի մեծ խաղադեկորներով՝ երևակայական կամ ճանաչելի շինություններ՝ շենքեր, աշտարակներ, ֆերմաներ, գազանանոցներ և այլն կառուցելու համար: Խաղադեկորներով աշխատելիս երեխաները շատ բան են սովորում: Զարգանում են մաթեմատիկական գիտելիքները, տրամաբանությունը, ընդլայնվում են մտածելու կարողությունները, աճում են սոցիալական հմտությունները: Աշխատանքի ժամանակ երեխաները դրսևորում են ստեղծագործական մոտեցում, զարգանում է կենտրոնանալու ունակությունը:

Այս կենտրոնում թե՛ դաստիարակները, թե՛ երեխաները կարող են բազմաթիվ առարկաներ ավելացնել. խաղալիք ավտոմեքենաներ, բեռնատարներ, նավակներ, կենդանիներ, մարդկային ֆիգուրներ, ինքնաթիռներ, կտորեղեն և այլն:

Շինարարության կենտրոնում աշխատանքը կատարվում է հատակին, ուստի նպատակահարմար է կենտրոնին հատկացված տարածքը պատել

գորգով՝ աղմուկը նվազեցնելու և ձմռանը տաքությունն ապահովելու համար: Երբեմն երեխաները մեծ ջանքեր են ներդնում այս կամ այն կառույցի շինարարության մեջ, սակայն չեն հասցնում այն ավարտել կամ ցանկություն են հայտնում օգտագործելու այն դերային խաղի մեջ: Նման դեպքերում կառույցը պետք է պահպանել մինչև հաջորդ օրը՝ հնարավորություն տալով երեխաներին շարունակել և ավարտին հասցնել իրենց խաղը:

<u>Դերային խաղերի կենտրոն</u>

Դերային խաղը գործունեության ինքնաբուխ ներքին ուղղվածություն ունեցող տեսակ է, որի միջոցով երեխաները փորձում են, բացահայտում և զարգացնում են սեփական անձի և աշխարհի մասին իրենց ընկալումները: Խաղի ընթացքում երեխաները ստեղծում են իրենց ծանոթ միջավայր և իրավիճակներ, նմանակում են ընտանիքի անդամներին, խաղում իրենց շրջապատում (համայնքում) ապրող տարբեր մարդկանց համապատասխան դերերը: Դեռ փոքր տարիքից երեխաները սկսում են նմանակել իրենց տեսած ու լսած գործողություններն ու ձայները: Իսկ երբ արժանանում են խրախուսանքի, խաղը ժամանակի ընթացքում այնքան է զարգանում, որ վերածվում է դերախաղի կամ թատերախաղի՝ գեղարվեստական գործունեության, սովորելու և մարդկաց հետ շփման մեջ մտնելու ևս մեկ զորեղ միջոցի:

Դերային խաղերի կենտրոնը սովորաբար գտնվում է սենյակի անկյունային մասում: Նման դիրքը հարմար է կենտրոնը աղմուկից և դերային խաղին չմասնակցող երեխաներով լեցուն տարածքներից առանձնացնելու առումով: Խաղադեկորներով աշխատանքը նույնպես նպաստավոր է դերային խաղի համար և հաճախ այս երկու կենտրոնների միջև դրական շփում է առաջանում: Ուստի օգտակար է, երբ երկու կենտրոններն իրար մոտ են տեղակայվում:

Դերախաղերի համար նախատեսված տարածքը պետք է պարզորոշ սահմանազատված լինի: Սահմանները պետք է խաղում չներգրավված երեխաներին թույլ չտան անարգել ներս ու դուրս անել և խանգարել մյուսներին: Դրանք պետք է կենտրոնի ներսում գտնվող երեխաների մեջ առանձնացած լինելու զգացում առաջացնեն: Միևնույն ժամանակ դրանք պետք է թույլ տան կենտրոնում խաղալ ցանկացող երեխաներին անարգել մուտք գործել կենտրոն և ներգրավվել խաղում: Սահմանները կարելի է ստեղծել սենյակի պատերի, կահույքի կամ դարակների, ինքնաշեն ստվարաթղթե տնակի միջոցով: Կահույքը կամ դարակները պետք է բավականին ցածր լինեն, որպեսզի դաստիարակին լիովին տեսանելի լինի երեխաների խաղը:

Նպատակահարմար է դերային խաղի կենտրոնում ունենալ հարմար, թեթև միջնորմ (շիրմա): Միջնորմը, որը հեշտությամբ բացվում և փակվում է,

կարող է օգտագործվել ոչ միայն տիկնիկային ներկայացումների, այլև տարբեր նպատակներով: Երեխաներն իրենք կորոշեն ինչ խաղալ և որպես ինչ օգտագործել միջնորմը: Մանր ավազով լցված ցածր կողերով (6-7 սմ բարձրությամբ) արկղը (100x100սմ) ևս տիկնիկային խաղի, տիկնիկային ներկայացման հարմար «բեմ» կարող է լինել: Ավազի մեջ երեխաները կարող են ճանապարհ բացել, «սարեր», «ձորեր» սարքել, ամրացնել ներկայացման համար իրենց պատրաստած դեկորները: Դա կզարգացնի նաև երեխաների տարածական մտածողությունը, կողմնորոշվելու ունակությունները: Կարելի է տիկնիկային թատրոն խաղալ նաև սեղանի վրա, առանց միջնորմի՝ օգտագործելով «մաշված» գրիչների, մատիտների, ձողիկների վրա ամրացված ինքնաշեն կերպարները:

Պատին փակցված հայելիները թատրոն-խաղի հետաքրքիր ձևի հնարավորություն են տալիս: Երեխան իրեն դիտարկելու, իր հետ զրուցելու, իր հետ խաղալու, իր շարժումներին, դիմախաղին հետևելու հնարավորություն է ունենում: Նա կարող է ներկայացում խաղալ, հայելու դիմաց հեքիաթ պատմել (հեքիաթասաց դառնալ), տարբեր խաղեր կազմակերպել: Նույն բանը կարող է ընկերոջ հետ անել՝ խաղալ, կատակել, ծամածռություններ անել. հայելու առջև նրանք ավելի ազատ ու անկաշկանդ են լինում:

Դերային խաղի կենտրոնում պետք է ունենալ հանդերձանք՝ գլխարկներ, թիկնոցներ, փողկապ, գոգնոց, տարբեր մասնագիտությունների (բժշկի, զինվորի, հրշեջի, շինարարի և այլն) վերնահագուստի տարրեր: Սյուժետա-դերային խաղեր կազմակերպելու համար երեխաներին պետք է ապահովել խաղալիք սպասքով, արհեստական մրգերով, բանջարեղենով (մուլյաժներ), խաղալիք մասնագիտական գործիքներով/պարագաներով, խաղալիք կամ չաշխատող հեռախոսներով ու ժամացույցով: Դերային խաղի կենտրոնում պետք է ունենալ մի քանի տիկնիկ (տարբեր սեռերի, տարբեր ռասաների), որոնցից մեկը մարմնավորի որևէ ֆիզիկական խնդիր ունեցող երեխայի: Անհրաժեշտ է ունենալ տիկնիկների հագուստ, փոքր մահճակալ իր պարագաներով: Տիկնիկային թատրոնի համար պետք են փոքր տիկնիկներ, որոնցից ամեն անգամ տարբեր կերպարներ կարելի է ստանալ, և խաղալիք կենդանիներ:

Դերային խաղի կենտրոնի նյութերի որոշ մասը նպատակահարմար է խմբավորել և պահել առանձին պիտակավորված արկղերում՝ երեխաների համար հասանելի պահարանի դարակներում:

Երեխաների համար դերային խաղի կենտրոնը սիրելի, զվարճալի, հետաքրքիր տեղ է, որտեղ զարգանում է նրանց խոսքը, ստեղծագործական ունակությունները, ինքնուրույնությունը, ինքնակազմակերպման, ստեղծագործելու, խմբով խաղալու, աշխատելու հմտությունները:

Խոհարարության կենտրոն

Երեխայի զարգացումը ներառում է նրա կյանքի բոլոր ոլորտները: Հաճախ նա իր գործունեությունը (խաղ, աշխատանք և այլն) կազմակերպում է մեծերին նմանակելով, նրանց փորձը կրկնելով՝ ձգտելով նմանվել նրանց: Երեխան դա շատ լավ է անում խոհարարության կենտրոնում:

Խոհարարությունը երեխաներին իրական կյանքի փորձառություն է տալիս և ուսուցանում է հիմնարար շատ հասկացություններ: Այս կենտրոնում աշխատելիս երեխաները համտեսում են նոր կերակրատեսակներ, ծանոթանում են ազգային և այլ մշակույթների խոհանոցին:

Վերծանելով բառերից և նկարներից կազմված բաղադրատոմսերը՝ երեխաները սովորում են ձախից աջ աչքի անցկացնել և մեկնաբանել կոնկրետ գործողություններ նշանակող խորհրդանիշները: Նրանց հաճույք է պատճառում բաղադրատոմս «կարդալը», ոմանց նույնիսկ կարող է դուր գալ իրենց առջև դրված բաղադրատոմսն «արտագրելը»: Խոհանոցում աշխատելիս երեխաները հասկանում են նաև գործողությունների հերթականությունը, սովորում են պահպանել այն, երբ քայլ առ քայլ հետևում են խոհարարական բաղադրատոմսին: Ավելի ուշ կարելի է նրանց խնդրել, որ նկարագրեն ուտելիքի պատրաստման գործընթացը, ինչն ավելի կամրապնդի հերթականության գաղափարը, կզարգացնի հիշողությունը և բանավոր խոսքը: Նրանք կկարողանան իրենց բառապաշարին նոր բառեր ավելացնել՝ «մաղել», «հունցել», «հարել», «հալեցնել» և այլն:

Խոհարարության կենտրոնում աշխատելը երեխաներին օգնում է նաև հասկանալ գույնի, ձևի, չափի, քանակի, ծավալի, քաշի հետ կապված մաթեմատիկական հասկացությունները: Մաղելու, կճպելու, հարելու, լցնելու միջոցով, երեխաները զարգացնում են իրենց շարժողական կոորդինացիան և ուժեղացնում են մանր մկանների կառավարումը: Օրինակ՝ երբ աղ են լցնում թեյի գդալի մեջ, որը հետո պետք է ավելացնեն խառնուրդին, պետք է համաձայնեցնեն աչքերի և ձեռքերի աշխատանքը: Խմոր հունցելու կամ տրորելու համար պահանջվում են ուժեղ ձեռքեր, ուսեր և մեջք, ուստի զարգանում են նաև նրանց խոշոր մկանները:

Խոհարարական աշխատանքներին մասնակցելիս օգտագործվում և զարգանում են համի, հոտառության, շոշափելիքի, տեսողության զգայարանները:

Երեխաները սովորում են աշխատել հերթով, համատեղ օգտվել իրենց պատրաստած ուտելիքից՝ համոզվելով, որ յուրաքանչյուրը ստացել է իր բաժինը: Հասկանում են, որ մարդիկ տարբեր են. հայտնաբերում են, որ իրենցից մեկը սիրում է դարչինի համը, մինչդեռ մյուսի համար այն հաճելի չէ: Երեխաները կարող են պատկերացում կազմել ընտանեկան տարբեր ուտեստներին և սննդին առնչվող մշակութային տարբերությունների մասին:

Բաղադրատոմսով կերակրատեսակ պատրաստելն ու ընկերների հետ կիսելը չափազանց հաճելի արարողություն կարող է դառնալ երեխայի համար՝ մեծացնելով նրա ինքնաբավարարվածությունն այն գիտակցումից, որ ինքն ինչ-որ իրական, շոշափելի, պիտանի բան է պատրաստել: Մյուս կողմից, երեխան կարող է ընկճվել, որ այդքան ժամանակ է ծախսվել հաց թխելու վրա, մինչդեռ այն չի բարձրանում: Նման դեպքերում երեխաները կարող են մեծ օգուտ քաղել՝ իրենց սխալներն ու անհաջողության պատճառները վերլուծելով:

Խոհարարության կենտրոնի աշխատանքների համար կարելի է օգտագործել սեղաններից մեկը: Սովորաբար այս աշխատանքները կազմակերպվում են երեխաների փոքր խմբի համար (մինչև 5 երեխա) մեծահասակի ուղղորդմամբ և աջակցությամբ: Այդ աշխատանքներում կարելի է ներգրավել նաև ընտանիքների անդամներին: Խոհարարության կենտրոնում աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ պարագաները նպատակահարմար է պահել մեկ կամ երկու փակվող արկղերում: Հիմնական խոհարարական պարագաները կարող են բազմաթիվ չլինել, քանի որ, ելնելով ծրագրավորված աշխատանքներից, անհրաժեշտ պարագաների մի մասը կտրամադրեն ծնողները: Խմբասենյակում պահվող պարագաների թվում կարող են լինել գոգնոցներ, կտրատելու տախտակներ, գրտնակ, մի քանի տարբեր չափսերի ամաններ, ոչ սուր փոքր դանակներ, բանջարեղենի մաքրիչներ, տարբեր չափսերի գդալներ, չափամաններ, չափագդալներ, կշեռք:

<u>Բնագիտության կենտրոն</u>

Երեխաները բնությունից օժտված են գիտնականներին հատուկ քննախույզ հետաքրքրասիրությամբ: Նրանք իրենց շրջապատող աշխարհի մասին տեղեկություններ են որոնում, փորձում են այդ աշխարհը հասկանալ հետազոտելու և փորձերի միջոցով: Երեխաների բնական հետաքրքրասիրությունն առաջնորդում է նրանց դեպի արդյունավետ ուսումնառություն:

Աշխատանքը բնագիտության կենտրոնում պետք է կազմակերպվի այնպես, որ երեխաները մասնակցեն բնագիտական դիտարկումներին ու փորձերին, քանի որ ուսումնառության այլ ոլորտներում և հետագա ողջ կյանքում չափազանց օգտակար են լինելու այս տարիքում գործնականում ձեռք բերված կարողություններն ու հմտությունները. դիտարկելու, համեմատելու, նկարագրելու, կանխագուշակելու, դասակարգելու, չափումներ կատարելու, գրանցելու և այլն:

Այս կենտրոնը հաճախակի կարող է փոփոխվել ըստ հետաքրքրությունների, եղանակային փոփոխությունների և թեմատիկ պարապմունքների: Փորձերի միջոցով երեխաներին կարող են ներկայացվել բնական տարբեր երևույթներ, օրինակ՝ ֆիզիկայի այնպիսի երևույթներ, ինչպիսիք են՝ մագնիսականությունը, ջրի հատկությունները, ձգողականությունը և այլն:

Պահարանում տարածք պետք է հատկացվի սարքավորումների, գործիքների, մուլյաժների (ընտանի և վայրի կենդանիների, մրգերի և բանջարեղենների) համար, որոնք կգրավեն երեխային, կշարժեն նրա հետաքրքրությունը, իսկ դաստիարակին կօգնեն արդյունետ կազմակերպելու երեխաների հետ տարվող աշխատանքները: Այստեղ կարող են պահվել մագնիսներ, կողմնացույց, ժամացույցներ (ավազի, արևի, սլաքով, էլեկտրոնային), հեռադիտակ, կշեռքներ (հորիզոնական, սլաքով), խոշորացույցներ, մանրադիտակ, ջերմաչափեր (օդի և ջրի) և այլն:

Օգտագործվող նյութերն ու պարագաները պետք է պահել խելամտորեն պիտակավորված տուփերում: Մանր նյութերը (օրինակ՝ ընդեղեն, ավազ, քարերի տեսակներ, մանր կոճակներ, ուլունքներ և այլն), որոնք կարող են վտանգ ներկայացնել տարիքով ավելի փոքր երեխաների համար, անհրաժեշտ է պահել փակվող տուփերում և 3-5 տարեկան երեխաների հետ աշխատանքները կազմակերպել մեծահասակի պարտադիր հսկողությամբ:

Բնագիտության կենտրոնում պետք է ունենալ փոքր չափի տարբեր սարքեր՝ քանդվող-հավաքվող, զանազան առարկաների մասեր, որոնք հավաքելով երեխան որևէ բան կարող է ստանալ: Կարևոր չէ, թե ինչ կստանա, կարևորը ընթացքն է, երբ նա մտածում է, ստեղծագործում, ստեղծում, փորձեր է կատարում, իրերի, առարկաների հետ աշխատելու փորձ է ձեռք բերում, վարժվում է գործիքներով անվտանգ աշխատելուն: Մեծահասակների հետ (դաստիարակ, վարպետ, ծնող) նորոգելով աթոռ, սեղան և այլ մանր իրեր՝ երեխան աստիճանաբար սովորում է գործածել սղոցն ու մուրճը, դուրն ու աքցանը:

Խումբը պիտի ունենա գյուղատնտեսական փոքրիկ գործիքներ՝ բահեր, փոցխեր, դույլեր, ցնցուղներ, աղբաման, որոնք տեսանելի և հասանելի տեղում պիտի դրված կամ կախված լինեն: Խմբասենյակի մի անկյունում երեխաները կարող են բույսեր աճեցնել, բնագիտական փորձեր կատարել:

Ցանկալի է, որ հաստատությունն ունենա փոքրիկ այգի/բակ, որտեղ երեխաները կկարողանան ծաղիկներ աճեցնել, ծառեր խնամել, տարբեր սերմեր ցանել: Բակում երեխաները կարող են ծնողների հետ ծառեր, այլ բույսեր տնկել, մշակել, շրջապատը մաքրել: Ծառ ու ծաղիկ տնկող, կենդանիներ խնամող երեխան շրջակա միջավայրը պահպանելու, այդ միջավայրում ապրելու մշակույթ ձեռք կբերի: Բնության հետ շփվելու, բնագիտական գործունեության ընթացքում և այդ գործողությունների արդյունքում կձևավորվեն նաև աշխատանքային հմտություններ:

<u>Ավազի և ջրի կենտրոն</u>

Երեխաները մեծ հաճույք են ստանում ավազի և ջրի հետ խաղալիս: Երեխաներին պետք է հնարավորություն տալ հետազոտելու ավազի և ջրի

հետ շփման իրենց զգացողությունները: Սկզբում նրանք դա կանեն առանց լրացուցիչ պարագաների: Խաղն աստիճանաբար կարելի է բարդացնել՝ օգտագործելով մի շարք առարկաներ (չափիչ բաժակ, բահ, կաղապարներ, 1-2 տիկնիկ, լվացքի շորեր ու մի կտոր օճառ): Տարիքով ավելի մեծ երեխաները, ովքեր արդեն ծանոթ են ավազի և ջրի հետ շփվելու զգացողություններին, կարող են օգտագործել ավելի բարդ պարագաներ, ինչպիսիք են տարբեր ծավալի/չափի տարաները, խցանները, սպունգները, օճառը, նավակները, քարերը: Ավազի հետ խաղալիս նրանք հաճույքով փորում են այն, մաղում ու առարկաներ հորում: Միաժամանակ ավազի և ջրի հետ խաղալիս երեխաները հնարավորություն ունեն կաղապարելու, կառույցներ, տեսարաններ պատրաստելու: Ավազի և ջրի հետ խաղը խթանում է երեխաների աճն ու առաջադիմությունը զարգացման բոլոր ոլորտներում՝ նպաստելով նաև մաթեմատիկական գիտելիքների ամրապնդմանը, գիտության նկատմամբ սիրո և հետաքրքրության ձևավորմանը, մանր մկանների, աչքաչափի և կոորդինացիայի զարգացմանը:

Ավազի և ջրի սեղանը կարելի է ստեղծել սեփական ուժերով: Դա կարող է լինել մեջտեղում հատուկ կտրված սեղան, որի մեջ կտեղադրվի ավազի կամ ջրի համար նախատեսված ամանը: Եթե խմբասենյակի տարածքը փոքր է, կարելի է ունենալ առանձին տարաներ ավազի և ջրի համար, որոնք խաղի ժամանակ կդրվեն սեղաններին: Ամանը պետք է լցված լինի ավազի կամ ջրի բավարար քանակությամբ, որպեսզի հնարավոր լինի ապահովել խաղային գործունեության բազմազանությունը: 3-4 տարեկան երեխաների համար ջրի մակարդակը պետք է բավականին ցածր լինի: 4-6 տարեկան երեխաների դեպքում ջրի խորությունը կարող է հասնել 8-10 սմ, որպեսզի նրանք կարողանան ավելի բարդ խաղերով զբաղվել: Ավազը պետք է ավելի խորը լինի, որպեսզի երեխաները կարողանան փոսեր փորել, կաղապարներ օգտագործել և այլն, սակայն ոչ այնքան, որ աշխատանքի ընթացքում այն թափթփվի: Ավազը պետք է լինի մաքուր և լավ մաղված:

3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպումն այլընտրանքային մոդելներով

4 ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԿԱՐՃՕՐՅԱ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՍՏ ԾՐԱԳՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ

Ուսուցումը կարճօրյա նախադպրոցական ծառայությունում կազմակերպվում է ըստ հետևյալ ծրագրային բաժինների՝

1. *Խոսքի զարգացում*
2. *Վաղ գրաճանաչություն (ավագ խումբ)*
3. *Ծանոթացում շրջակա միջավայրին և էկոլոգիա*
4. *Տարրական մաթեմատիկական պատկերացումներ*
5. *Կերպարվեստ (նկարչություն, ծեփ, ապլիկացիա) և կառուցողական աշխատանք*
6. *Ֆիզիկական դաստիարակություն*
7. *Երաժշտություն*
8. *Տոներ, զվարճություններ*

4.1. ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Խոսքի զարգացման հիմնական խնդիրներն են՝

- խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիարակումը,
- բառապաշարի ձևավորումը,
- խոսքի քերականական կառուցվածքի յուրացումը,
- կապակցված խոսքի զարգացումը,
- ծանոթացումը գեղարվեստական գրականությանը:

Խոսքի զարգացման ուսուցման համար կազմակերպվում են բազմատեսակ և բազմաբովանդակ պարապմունքներ, սակայն բոլորի հիմքում ընկած է մեկ նպատակ՝ մշակել և զարգացնել երեխայի բանավոր խոսքը:

Ուսուցման կազմակերպման հիմնական ձևը պարապմունքն է: Դրա տեսակներն են՝

1. ***Զրույց***
2. ***Բանաստեղծության ուսուցում***
3. ***Դիդակտիկ խաղ***
4. ***Գեղարվեստական ընթերցանություն***
5. ***Վերապատմում***
6. ***Պատմում (նկարով, խաղալիքների նկարագրություն, դաստիարակի ցուցումով, կիսատ թողած պատմության շարունակություն, հիշողությամբ, ստեղծագործական...)***

Զրույցը նպաստում է երեխաների տրամաբանական մտածողության զարգացմանը, ճանաչողական հետաքրքրությունների ընդլայնմանը, երկխոսության զարգացմանը: Այն իրականացվում է հարց ու պատասխանի ձևով՝ տարբեր թեմատիկ ուղղություններով. կենցաղային, հասարակական, բարոյագիտական:

Բանաստեղծությունների ուսուցումը երեխայի մեջ սեր է արթնացնում գեղարվեստական գրականության տվյալ ժանրի հանդեպ, զարգացնում է գեղարվեստական ճաշակը, մայրենի լեզվի գեղեցկությունը, ստեղծագործության մեղեդայնությունը զգալու և գնահատելու կարողությունը:

Դիդակտիկ խաղերի միջոցով երեխաները ծանոթանում են առարկաների կառուցվածքին, հատկանիշներին, բնության երեևույթներին, մարդկանց կյանքին, նրանց փոխհարաբերություններին, որոնց շնորհիվ հարստանում, ակտիվանում է երեխայի բառապաշարը, զարգանում է կապակցված խոսքը, կանոնավորվում արտասանությունը: Դիդակտիկ

խաղերն ուղղված են երեխայի իմացական կարողությունների ձևավորմանը («Ի՞նչ է սա», «Ինչպիսի՞ն է այն», «Լրացրու՛ նախադասությունը», «Ասա՛ Լ հնչյունով սկսվող բառեր» և այլն):

Գեղարվեստական ընթերցանության ժամանակ դաստիարակը երեխաների համար ընթերցում է իրենց տարիքին համապատասխան հետաքրքիր պատմվածքներ, հեքիաթներ և այլ ստեղծագործություններ:

Վերապատմելու համար պետք է ընտրել փոքրիկ հետաքրքիր ստեղծագործություններ, որոնք ծավալով մեծ չեն և գրված են արտահայտիչ ու գեղեցիկ լեզվով: Երեխաները վերապատմելու ընթացքում հաղորդում են ստեղծագործության բովանդակությունն առանց բացթողումների: Կարելի է սովորեցնել երեխաներին վերապատմելիս նաև խաղարկել կամ բեմականացնել պատմվածքների, ծանոթ ժողովրդական հեքիաթների որոշ հատվածներ և դրանք ներառել պամության մեջ: Շատ ավելի կարևոր է պատմության ընկալումը. երեխաներին պետք է սովորեցնել տարբերել գլխավորը երկրորդականից, գնահատել հերոսների արարքները, դրանց դրական և բացասական կողմերը, հնարավորության դեպքում կապակցել դրանք սեփական կենսափորձին:

Պատմում նկարով պարապմունքի ընթացքում երեխաները սովորում են դիտել, հասկանալ և վերարտադրել նկարի բովանդակությունը: Անհրաժեշտ է խրախուսել, որ պատմելուց բացի երեխաները որոշակի վերաբերմունք դրսևորեն նկարչի կողմից պատկերվածի նկատմամբ:

Խաղալիքների նկարագրության միջոցով պատմելու մեթոդն իր ուրույն տեղն ունի հատկապես կրտսեր տարիքի երեխաների խոսքի զարգացման պարապմունքների ցանկում:

Խաղալիքն օգնում է հարստացնել և ակտիվացնել փոքրիկի բառապաշարը, առաջացնում դրական հույզեր, արտահայտվելու ցանկություն: Խաղալիքների նկարագրությունը կարելի է իրականացնել դիդակտիկ խաղերի միջոցով: Նկարագրության համար պետք է ընտրել այնպիսի խաղալիքներ, որոնք կգրավեն երեխայի ուշադրությունը: Երեխաներին պետք է սովորեցնել նախ կենտրոնանալ խաղալիքի կամ առարկայի ուսումնասիրության վրա. զննել տարբերություններն ու նմանությունը, մանրամասները, հետո սովորեցնել պատասխանել դրանց նկարագրությանը վերաբերող հարցերին:

Դաստիարակի ցուցումով պատմում պարապմունքի ընթացքում դաստիարակը երեխաներին առաջադրում է մի քանի հարց՝ կապված իրենց հետ տեղի ունեցած որևէ իրադարձության հետ: Թեմաների ընտրության մեջ կարևորվում է դրանց դաստիարակչական և ճանաչողական նշանակությունը:

Երեխաների ստեղծագործական երևակայության զարգացման լավագույն միջոց է՝ ***կիսատ թողած պատմության շարունակությունը:*** Դրա սկիզբը հաղորդում է դաստիարակը: Նա կանգ է առնում պատմության հանգուցային կետում և երեխաներին առաջարկում ինքնուրույն շարունակել այն:

Ստեղծագործական պատմումների համար դաստիարակը երեխաներին հանձնարարում է տպավորությունների հիման վրա որևէ կոնկրետ թեմա, նրանց մասնակից դարձնում սյուժեին, և երեխաներն իրենց երևակայությամբ հորինում են պատմություններ:

Ծանոթացում շրջակա միջավայրին, ***էկոլոգիա և վաղ գրաճանաչություն.*** այս պարապմունքները նույնպես խոսքի զարգացման լավ հնարավորություններ են, սակայն դրանք կներկայացվեն առանձին:

Կրտսեր 2-րդ խումբ (3-4 տարեկան)

Այս տարիքը խոսքի առավել արագընթաց զարգացման փուլն է, սակայն դեռևս անկայուն է երեխայի ձայնային ապարատը: Որոշ երեխաներ խոսում են շատ ցածր, ոմանք՝ բարձր, ճչոցով, ուրիշները՝ շշուկով:

3-4 տարեկան երեխաների խոսքի զարգացման ծրագրի նպատակն է շարունակել երեխաներին օգնել.

- հաղորդակցվել ծանոթ մեծահասակների և հասակակիցների հետ՝ որևէ հանձնարարության միջոցով (խնդրել ինչ-որ բան (իր կամ օգնություն), օգնություն առաջարկել, շնորհակալություն հայտնել և այլն),
- կարողանալ բանավոր արտահայտել սեփական մտքերը, զգացողություններն ու զգացմունքները,
- հարստացնել և կոնկրետացնել շրջապատող առարկաների մասին պատկերացումները,
- ընդլայնել և ակտիվացնել բառապաշարը,
- հասկանալ որոշակի իմաստային խմբեր արտահայտող, ընդհանրացնող բառերի իմաստը (հագուստ, սպասք, կահույք, բանջարեղեն, միրգ, թռչուն…),
- անվանել ընտանի կենդանիներին և նրանց ձագերին, մրգերը և բանջարեղենը,
- խոսքում կիրառել գոյական անուններ՝ եզակի և հոգնակի թվով, փաղաքշական մասնիկների միջոցով անվանել կենդանիների ձագերին (հավ-հավիկ, բադ-բադիկ, շուն-շնիկ և այլն):

Տարիքային այս խմբում խոսքի զարգացման ուսուցման համար կազմակերպվում են հիմնականում խաղ-պարապմունքներ: Նպատակը մեկն է՝ մշակել և զարգացնել երեխայի բանավոր խոսքը: Խոսքի զարգացման պարապմունքների կարևոր տեսակներից են նաև դիդակտիկ խաղերը:

Խոսքի զարգազման ծրագրային պահանջները, թեմատիկ բաշխումն ըստ եռամսյակների և առաջարկվող աշխատանքները

1-ին եռամսյակ (սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր)

Սովորեցնել երեխաներին.

1. 1-2 նախադասությամբ խոսել սյուժետային նկարների մասին (նախադասություններ կազմել): Կարողանալ 2-3 բառից կազմված նախադասություններ կազմել,
2. որոշել և անվանել առարկայի գտնվելու տեղը տարածության մեջ (աջ, ձախ, կողքին, վերևում և այլն):

2-րդ եռամսյակ (դեկտեմբեր, հունվար, փետրվար)

Սովորեցնել երեխաներին.

1. 1-2 նախադասությամբ խոսել սյուժետային նկարների մասին (շարունակել նախադասություններ կազմել),
2. նախադասության մեջ բառերը համաձայնեցնել դեմքով, թվով, ժամանակով,
3. ճիշտ օգտագործել խոսքի մասերը, որոշել և անվանել առարկաների գտնվելու տեղը տարածության մեջ (աջ, ձախ, վերևում, ներքևում և այլն),
4. մտքեր արտահայտել (կազմել նախադասություններ) անցած տոնի վերաբերյալ:

3-րդ եռամսյակ (մարտ, ապրիլ, մայիս)

Սովորեցնել երեխաներին.

1. խոսքի մեջ համաձայնեցնել բառերը դեմքով, թվով, ժամանակով և հոլովով,
2. ճիշտ օգտագործել խոսքի մասերը, որոշել և անվանել առարկաների գտնվելու տեղը տարածության մեջ (աջ, ձախ, վերևում, ներքևում և այլն),

3. նկարագրել առարկան, խոսքում կիրառել եզակի և հոգնակի թվով գոյականներ:

Խոսքի զարգացմանը նպաստող գործունեության տեսակները և բաշխումը ըստ եռամսյակների

1-ին եռամսյակ (սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր)

Դիդակտիկ խաղ՝ «Ծանոթություն»

Նկարի պատմում՝ «Առաջին անգամ մանկապարտեզում»

Զրույց՝ «Մենք գալիս ենք մանկապարտեզ»

Խաղալիքի նկարագրություն՝ «Սագիկ»

Դիդակտիկ խաղ՝ «Ընտանի կենդանիներ»

Ինտեգրված պարապմունք՝ Հովհ. Թումանյան, «Երկինքը փուլ է գալիս»

Զրույց՝ «Աշուն»

Ստեղծագործական պատմում՝ «Աշունը մեր բակում»

Ինտեգրված պարապմունք՝ «Աշնան գույներ»

Գեղարվեստական ընթերցանություն՝ Լ. Տոլստոյ, «Առյուծն ու շնիկը»

Ոտանավորի ուսուցում՝ Ռ. Ղարիբյան, «Լուսիկի կատուն»

Ինտեգրված պարապմունք՝ «Ընդհանրացնող բառեր»

Նկարի պատմում՝ «Կատուն և իր ձագերը»

Զրույց՝ «Բանջարեղեն»

Ինտեգրված պարապմունք՝ «Բանջարեղեն, ես քեզ ճանաչում եմ»

Վերապատմում՝ «Թե ինչու կատուն միայն նախաճաշից հետո է լվացվում» (լիտվական ժողովրդական հեքիաթ)

Զրույց՝ «Մրգեր»

Բանաստեղծության ուսուցում՝ Ա. Խնկոյան, «Բկլիկ ձկնիկ»

Զրույց՝ «Կահույք»

Ստեղծագործական պատմում թեմատիկ նկարներով՝

«Սովորենք պատմել»

Գեղարվեստական ընթերցանություն՝ Ա. Բարտո, «Խաղալիքները»

Ինտեգրված խաղ-պարապմունք՝ «Ինքնանկար»

Դիդակտիկ խաղ՝ «Սպասք»

2-րդ եռամսյակ (դեկտեմբեր, հունվար, փետրվար)

Դիդակտիկ խաղ՝ «Խաղալիքների խանութում»

Պատմում դաստիարակի օրինակով՝ «Նոր տարվա ցանկություն»

Բանաստեղծության ուսուցում՝ Լ. Վարդունի, «Ձմեռ»

Զրույց՝ «Ձմեռային տեսարան»

Նկարի պատմում՝ «Ձմեռային հագուստ»

Ստեղծագործական պատմում՝«Ամանորյա ցանկություն»

Գեղարվեստական ընթերցանություն՝ «Նապաստակը, որը չէր ուզում փոխել մուշտակը»

Պատմում հարցերի միջոցով՝ «Տնային գործեր»

Դիդակտիկ խաղ՝ «Ձմեռային խաղեր»

Բանաստեղծության ուսուցում՝ Հ. Բաբաջանյան, «Տոնածառ»

Գեղարվեստական ընթերցանություն՝ «Ձմեռող թռչուններ»

Զրույց՝ «Ինչո՞վ են մարդիկ երթևեկում»

Դիդակտիկ խաղ՝ «Ինչո՞վ են մարդիկ տեղաշարժվում»

Դիդակտիկ խաղ՝ «Ինչպե՞ս անցնել փողոցը»

Ինտեգրված պարապմունք՝ «Ընտանիք»

Գեղարվեստական ընթերցանություն՝ «Գրքին հյուր»

Դիդակտիկ խաղ՝ «Օգնի՛ր բժիշկ Այբոլիտին»

Վերապատմում՝ Ս. Մուրադյան, «Թե ինչպես Ձմեռ պապիկը հալվեց»

Ինտեգրված պարապմունք՝ «Հույզեր»

Զրույց սեղանային թատրոնի միջոցով՝ «Առողջ սնունդ»

3-րդ եռամսյակ (մարտ, ապրիլ, մայիս)

Զրույց՝ «Գարուն»

Պատմում առարկայական նկարներով՝ «Գարնան գույները»

Բանաստեղծության ուսուցում՝ Վ. Վարդանյան, «Գարուն»

Գեղարվեստական ընթերցանություն՝ «Աղջիկն ու ծաղիկները»

Նկարի պատմում՝ «Գարուն»

Նկարներով ընթերցանություն՝ «Բնության երևույթներ»

Զրույց՝ «Ծաղիկներ»

Դիդակտիկ խաղ՝ «Ի՞նչն է լավ, ի՞նչը՝ վատ»

Բանաստեղծության ուսուցում՝ Ա. Մարաշյան, «Մայրիկիս տոնը»

Ստեղծագործական պատմում՝ «Մայրիկների տոնը»

Գեղարվեստական ընթերցանություն՝ Ռ. Ղարիբյան, «Փիսիկի գանգատը»

Նկարի պատմում՝ «Տարվա եղանակներ»

Խաղ-պարապմունք՝ «Միջատներ»

Զրույց խաղային իրավիճակներով՝ «Հեքիաթների աշխարհում»

Հեքիաթի վերապատմում՝ Հ. Հայրապետյան «Ծիվծիվն ու ճիվճիվը»

Թեմատիկ զրույց՝ «Ձգայարաններ»

Զրույց՝ «Ամառ»

Դաստիարակի տված հարցերով պատմում՝ «Ամառային հանգիստ»

Վերապատմում՝ Էդ. Ավագյան, «Բարև՛, արջուկ»

Պատմում հիշողությամբ՝ «Ընտանեկան տոներ»

Ինտեգրված պարապմունք՝ «Արև՛-արև՛, եկ, եկ»

<u>Միջին խումբ (4-5 տարեկան)</u>

Այս տարիքում բարելավվում է հնչյունների արտաբերումը և առոգանությունը, ակտիվանում է խոսքը: Երեխաները հաջողությամբ նմանակում են կենդանիների ձայները, տարբերակում կերպարների խոսքն ըստ առոգանության:

4-5 տարեկան երեխաների խոսքի զարգացման ծրագրի նպատակն է. շարունակել օգնել երեխաներին և սովորեցնել.

- զարգացնել խոսքը, կատարելագործել խոսքի հնչյունային կուլտուրան,
- կարողանալ ընկալել իրեն ուղղված ուրիշի բանավոր խոսքը,
- հասնել բառերի ու հնչյունների մաքուր արտաբերմանը,
- ընդարձակել ակտիվ բառապաշարը,
- խոսքը կառուցել քերականորեն ճիշտ, պատասխանել և՛ կարճ, և՛ ծավալուն նախադասություններով,
- զարգացնել կապակցված ինքնուրույն խոսքը, տիրապետել երկխոսելու և մենախոսելու ունակությանը,
- 3-4 նկարների միջոցով կազմել փոքրիկ պատմվածք,
- ձևավորել ոտանավոր արտասանելու, հեքիաթ պատմելու, դրանք հուզականորեն վերարտադրելու ունակություններ,

- ակտիվ մասնակցել առաջադրված թեմայով զրույցներին, կազմել փոքրիկ պատմություններ սեփական փորձի, խաղալիքի, թեմատիկ նկարի վերաբերյալ:

Խոսքի զարգազման ծրագրային պահանջները, թեմատիկ բաշխումն ըստ եռամսյակների և առաջարկվող աշխատանքները

1-ին եռամսյակ (սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր)

Սովորեցնել երեխաներին.

1. նախադասություններ կազմել (պատմել) սյուժետային նկարներով: Կարողանալ նախադասության մեջ բառերը համաձայնեցնել դեմքով, թվով, ժամանակով,
2. որոշել և անվանել առարկայի գտնվելու տեղը տարածության մեջ (աջ, ձախ, կողքին, վերևում և այլն):

2-րդ եռամսյակ (դեկտեմբեր, հունվար, փետրվար)

Սովորեցնել երեխաներին.

1. կազմել նախադասություններ (պատմել)՝ ըստ սյուժետային պատկերի,
2. նախադասության մեջ բառերը համաձայնեցնել դեմքով, թվով ժամանակով և հոլովով,
3. ճիշտ օգտագործել խոսքի մասերը, որոշել և անվանել առարկաների գտնվելու տեղը տարածության մեջ (աջ, ձախ, վերևում, ներքևում և այլն),
4. կազմել փոքրիկ պատմություններ,
5. կարողանալ խոսքում կիրառել եզակի և հոգնակի թվով գոյականներ (կատու-կատուներ, տուն-տներ):

3-րդ եռամսյակ (մարտ, ապրիլ, մայիս)

Սովորեցնել երեխաներին.

1. կազմել նախադասություններ (պատմել)՝ ըստ սյուժետային պատկերի,
2. նախադասության մեջ համաձայնեցնել բառերը դեմքով թվով ժամանակով և հոլովով, նախադասությունները բարդացնել՝ լրացումներ, շաղկապներ, մակբայներ կիրառելով,
3. ճիշտ օգտագործել խոսքի մասերը, որոշել և անվանել առարկաների գտնվելու տեղը տարածության մեջ (աջ, ձախ, վերևում, ներքևում և այլն),

4. նկարագրել առարկան՝ ըստ դաստիարակի կազմած ծրագրի. խոսքում կիրառել եզակի և հոգնակի թվով գոյականներ:

Խոսքի զարգացմանը նպաստող գործունեության տեսակները և բաշխումը ըստ եռամսյակների

1-ին եռամսյակ (սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր)

Զրույց՝ «Մենք գալիս ենք մանկապարտեզ»

Առարկայի նկարագրություն՝ «Մեր սիրած խաղալիքները կամ կարևոր առարկաներ»

Դիդակտիկ խաղ՝ «Ի՞նչ է պատմում խաղալիքն իր մասին»

Ինտեգրված պարապմունք՝ Հովհ. Թումանյան, «Երկինքը փուլ է գալիս»

Ինտեգրված պարապմունք՝ ռուսական ժողովրդական հեքիաթ «Պապն ու շաղգամը»

Զրույց՝ «Աշուն»

Ոտանավորի ուսուցում՝ Հ. Հայրապետյան, «Աշուն»

Ինտեգրված պարապմունք՝ «Ոսկե աշուն»

Նկարի պատմում՝ «Աշուն»

Բանաստեղծության ուսուցում՝ Ա. Շահինյան, «Աշուն»

Զրույց՝ «Իմ քաղաքամայր Երևանը»

Զրույց՝ «Ինչո՞վ են մարդիկ ճանապարհորդում»

Ինտեգրված պարապմունք՝ «Բանջարեղե՛ն, ես քեզ ճանաչում եմ»

Վերապատմում՝ Դ. Դեմիրճյան, «Պույ-պույ մուկիկը»

Զրույց մասնագիտությունների մասին

Զրույց՝ «Իմ ընտանիքը»

Նկարի պատմում՝ «Ընտանիքն ընթրում է»

Բանաստեղծության ուսուցում՝ Ս.Մուրադյան, «Իմ գնդակը»

Վերապատմում՝ Հ. Թումանյան, «Ուլիկը»

Զրույց՝ «Ապակու աշխարհում»

Ինտեգրված պարապմունք՝ «Ճանապարհորդություն դեպի անցյալ. թուղթ»

Ինտեգրված խաղ-պարապմունք՝ «Քարեր»

Խաղ-պարապմունք՝ «Սպասք»

2-րդ եռամսյակ (դեկտեմբեր, հունվար, փետրվար)

Բանաստեղծության ուսուցում՝ «Ձմեռ»

Զրույց՝ «Հրաշագործ ձմեռը»
Նկարի պատմում՝ «Ձմեռային զվարճալիքներ»
Ստեղծագործական պատմում՝ «Նոր տարի»
Գեղարվեստական ընթերցանություն՝
Կ. Ուշինսկի, «Եղանակ քույրերը»
Բանաստեղծության ուսուցում՝ Հ. Հայրապետյան, «Ձյունը»
Պատմում հարցերի միջոցով՝
«Հայրիկներն ու պապիկները զինվորներ են»
Պատմում՝ նկարների միջոցով՝ «Հայաստանն իմ տունն է»
Ստեղծագործական պատմում նկարի օգնությամբ՝ «Մեր տունը»
Ինտեգրված խաղ-պարապմունք՝ «Բանջարեղեն»
Զրույց՝ «Վիտամիններ»
Վերապատմում՝ Լ. Պողոսյան, «Խաղալիքների ժողովը»
Զրույց՝ «Բարեկիրթ վարք»
Զրույց՝ «Հաց»
Ոտանավորի ուսուցում՝ Ս. Մուրադյան, «Հացթուխը»
Դաստիարակի օրինակով պատմում՝
«Իմ տատիկի վրայից հացի հոտ է գալիս»
Գեղարվեստական ընթերցանություն՝ Լ. Տոլստոյ,
«Աղջիկն ու սունկերը»
Ինտեգրված պարապմունք՝ «Մենք և մեր արտաքինը»
Խաղային շարժառիթով բեմականացում՝ «Հիգիենա»
Զրույց՝ «Թռչուններ»
Ոտանավորի ուսուցում՝ Ռ.Պատկանյան, «Բադիկ»
Նկարի պատմում՝ «Թռչնանոց»
Վերապատմում՝ «Ծաղիկներ»

<u>3-րդ եռամսյակ (մարտ, ապրիլ, մայիս)</u>

Զրույց՝ «Գարուն»
Ոտանավորի ուսուցում՝ Ռ.Պատկանյան, «Բադիկ»
Նկարի պատմում՝ «Թռչնանոց»
Գեղարվեստական ընթերցանություն՝ «Ծաղիկներ»
Ինտեգրված պարապմունք՝ «Իմ մայրիկն ամենալավն է»
Ոտանավորի ուսուցում՝ Ս. Մուրադյան, «Նվեր մայրիկիս»
Խաղ-պարապմունք՝ «Ի՞նչն է երկնքից բարձր»

Գեղարվեստական ընթերցանություն՝
Լև Տոլստոյ, «Երեք արջի հեքիաթը»

Զրույց՝ «Վայրի կենդանիներ»

Ստեղծագործական պատմում՝ «Կենդանաբանական այգում»

Զրույց՝ «Ընտանի կենդանիներ»

Ոտանավորի ուսուցում՝ Ս. Կապուտիկյան, «Պարտեզ»

Զրույց՝ «Մարդու մարմինը» (ճանաչողական զարգացում)

Զրույց՝ «Մեզ հյուր է եկել բժիշկը»

Դաստիարակի տված հարցերով պատմում՝ «Իմ առօրյան»

Հեքիաթի վերապատմում՝ Կ. Ուշինսկի, «Ոսկե ձվիկը»

Զրույց՝ «Մենք սիրում ենք ամառը»

Նկարի պատմում՝ «Ագարակ»

Վերապատմում՝ «Ով աշխատի, նա կուտի»
(ռուսական ժողովրդական հեքիաթ)

Զրույց՝ «Անտառի գաղտնիքները»

Պատմում հիշողությամբ՝ «Ի՞նչ եմ ես տեսել»

Զրույց՝ «Ով ինչով է սնվում»

Կիսատ թողած պատմության շարունակում՝ «Ընկերություն»

Ինտեգրված պարապմունք՝ «Նկարենք բանաստեղծություն»

<u>Ավագ խումբ (5-6 տարեկան)</u>

5-6 տարեկան երեխաների խոսքի զարգացման ծրագրի նպատակն է իրականացնել երեխաների լեզվական ուսուցումը պարապմունքների, խաղերի, ազատ գործունեության միջոցով՝ նրանց ծանոթացնելով շրջապատին, առօրյա կյանքին, հեքիաթներին, մանկական գրականությանը, ժողովրդական տոներին և այլն:

Ծրագիրը նախատեսում է երեխաներին ծանոթացնել՝

1. խոսքի հիմնական միավորներին (հնչյուն, բառ, նախադասություն),
2. խոսքային շփման ձևերին՝ երկխոսություն, մենախոսություն:

Խոսքի զարգազման ծրագրային պահանջները, թեմատիկ բաշխումն ըստ եռամսյակների և առաջարկվող աշխատանքները

<u>1-ին եռամսյակ (սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր)</u>

Սովորեցնել երեխաներին.

1. պատկերացում կազմել պատմվածքի և նախադասության մասին,

2. վերարտադրել փոքրիկ տեքստեր. պատմվածք, հեքիաթ, բանաստեղծություն, նկար,
3. նախաձեռնել խոսակցություն հասակակիցների և մեծահասակների հետ:,
4. հարցեր տալ անծանոթ բառերի իմաստը հասկանալու համար:

2-րդ եռամսյակ (դեկտեմբեր, հունվար, փետրվար)

Սովորեցնել երեխաներին և ամրապնդել.

1. 4-5 հնչյուններից բաղկացած, հնչյունային տարբեր կառուցվածք ունեցող բառերի հնչյունային վերլուծություն կատարել,

2. անվանել բառեր որոշակի հնչյուններով, ճանաչել բառի առաջին և վերջին հնչյունները, որոշել և բառի մեջ գտնել կոնկրետ հնչյունը,

3. ճիշտ օգտագործել «տառ», «հնչյուն» եզրույթները (տերմին):

3-րդ եռամսյակ (մարտ, ապրիլ, մայիս)

Սովորեցնել երեխաներին և ամրապնդել.

1. թվարկել բառեր, որոնք սկսվում են միևնույն հնչյունով,
2. պատմել պատմություններ, որոնք ունեն սկիզբ, զարգացում և ավարտ,
3. գրքում եղած նկարների օգնությամբ պատկերացում կազմել, թե ինչի մասին է գիրքը,
4. ավարտին հասցնել կիսատ պատմվածքը կամ հեքիաթը,
5. հասկանալ հականիշները և հոմանիշները:

Խոսքի զարգացմանը նպաստող գործունեության տեսակները և բաշխումը ըստ եռամսյակների

1-ին եռամսյակ (սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր)

Զրույց՝ «Մեր խաղերը և խաղալիքները»

Գեղարվեստական ընթերցանություն՝ Ե. Պերմյակ,

«Ինչի՞ համար են մեր ձեռքերը»

Դիդակտիկ խաղ՝ «Մանկական գրախանութ»

Վերապատմում՝ Հ. Թումանյան, «Ծիտը»

Զրույց՝ «Բնությունը վատ եղանակ չունի»

Ոտանավորի ուսուցում՝ Հ. Թումանյան, «Տերևաթափ»

Ինտեգրված պարապմունք՝ «Աշնան բարիքները»

Նկարի պատմում՝ «Բերքառատ աշուն»

Բանաստեղծության ուսուցում՝ Ն. Միքայելյան, «Աշնան նկար»

Վերապատմում՝ Կ. Ուշինսկի, «Չորս ցանկություն»
Թեմատիկ զրույց՝ «Իմ հայրենիքը Հայաստանն է»
Ինտեգրված պարապմունք՝ «Հայկական հզոր բանակ»
Զրույց՝ «Ինչ ենք մենք սիրում»
Ստեղծագործական պատմում՝ «Իմ սիրելի խաղալիքը»
Գեղարվեստական ընթերցանություն՝ Է. Ավագյան, «Մեկ օր տանը»
Նկարներով ընթերցանություն՝ «Արջուկի ծննդյան օրը»
Զրույց վարքի նորմերի շուրջ՝ «Սովորություններ և արարքներ»
Գեղարվեստական ընթերցանություն՝ Գ. Մովսիսյան, «Ո՞վ է մեզանից գեղեցիկ»
Զրույց՝ «Ոզնի»
Նկարի պատմում՝ «Ոզնիները»
Վերապատմում բեմականացման տարրերով՝ «Մոլորված ճուտիկը»

<u>2-րդ եռամսյակ (դեկտեմբեր, հունվար, փետրվար)</u>

Զրույց՝ «Բարի գալուս՛ստ, ձմեռ»
Բանաստեղծության ուսուցում՝ Ս. Կապուտիկյան, «Իմ սահնակը»
Նկարի պատմում՝ «Ձմեռային զվարճալիքներ»
Ստեղծագործական պատմում՝ «Նոր տարվա հրաշքները»
Գեղարվեստական ընթերցանություն՝ Գ. Եղիկյան, «Տոնածառի հանդեսում»
Պատմում հարցերի միջոցով՝ «Ձմեռ պապիկի նվերները»
Զրույց՝ «Ինչպե՞ս են ձմեռում կենդանիները»
Խաղային շարժառիթով բեմականացում՝ «Անտառի բնակիչները»
Վերապատմում՝ Գ. Մովսիսյան, «Ձվեր՝ զատիկի համար»
Ինտեգրված պարապմունք՝ «Մեր տնային օգնականները»
Գեղարվեստական ընթերցանություն՝ Ս. Զորյան, «Ճանապարհորդ Ջեկոն»
Թեմատիկ պարապմունք՝ «Ջուր»
Բանաստեղծության ուսուցում՝ Ս. Կապուտիկյան, «Երգ հայրենիքիս մասին»
Պատմում նկարների միջոցով՝ «Երևան, սիրելի մայրաքաղաք»
Վերապատմում բեմականացման տարրերով՝ Կ. Ուշինսկի, «Աղվեսն ու գայլը»

Գեղարվեստական ընթերցանություն՝ Վ. Սարոյան ,
«Թե ինչպես նապաստակը մռնչաց»

Ինտեգրված պարապմունք՝ «Երթևեկության կանոններ»

Զրույց՝ «Մեր բարեկամ լուսակիրը»

Վերապատմում՝ Գ. Մովսիսյան,
«Ի՞նչ պատահեց, երբ Սիմաֆորը քնեց»

Բանաստեղծության ուսուցում՝ Ն. Միքայելյան, «Խաչմերուկում»

Ինտեգրված պարապմունք՝ «Անվտանգ վարքագիծ»

Գեղարվեստական ընթերցանություն՝ Վ. Վարդանյան, «Ծիտը»

Խաղային շարժառիթով բեմականացում՝ «Ծաղրածուների անհավանական արկածները»

<u>3-րդ եռամսյակ (մարտ, ապրիլ, մայիս)</u>

Զրույց՝ «Գարուն»

Բանաստեղծության ուսուցում՝ Հ. Հայրապետյան, «Ձնծաղիկ»

Նկարի պատմում՝ «Ձնհալ»

Գեղարվեստական ընթերցանություն՝ Ս. Օրբելյան, «Մայր ծիծեռնակը»

Ինտեգրված պարապմունք՝ «Գարնանային ծաղիկներ»

Բանաստեղծության ուսուցում՝ Ս. Մուրադյան, «Իմ մայրիկը»

Խաղ-պարապմունք՝ «Տիեզերք»

Զրույց՝ «Այդ ե՞րբ է լինում»

Ստեղծագործական պատմում՝ «Ինչպե՞ս են կենդանիները դիմավորում գարունը»

Վերապատմում՝ Ղ. Աղայան, «Կենդանիների վեճը»

Զրույց՝ «Թռչունները մեր բարեկամներն են»

Նկարի պատմում՝ «Այգում»

Ինտեգրված պարապմունք՝ «Ընտանիք»

Գեղարվեստական ընթերցանություն՝ Պ. Խաչատրյան, «Ծառի խնդրանքը»

Դաստիարակի տված հարցերով պատմում՝ «Մեր սիրելի հեքիաթները»

Վերապատմում՝ Դ.Դեմիրճյան, «Պույպույ մուկիկը»

Թեմատիկ պարապմունք՝ «Բոլոր մասնագիտություններն էլ անհրաժեշտ են»

Զրույց՝ «Բժշկին՝ հյուր»

Կիսատ թողած պատմության շարունակում՝ «Մի անգամ անտառում»

Ինտեգրված պարապմունք՝ «Միջատներ»

Վերապատմում բեմականացման տարրերով՝ Շ. Պեռռո «Կարմիր գլխարկը»

Բանաստեղծության ուսուցում՝ Մ. Կորյուն, «Վարդաբույր մայիս»

Գեղարվեստական ընթերցանություն՝ Ս. Կապուտիկյան, «Ավոյի ծիլը»

Զրույց՝ «Շուտով դպրոց կգնամ»

Վերապատմում՝ Լ. Պողոսյան, «Տառերի զրույցը»

Հանելուկներ, շուտասելուկներ, ասացվածքներ

4.2. ՎԱՂ ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅՈՒՆ (ԱՎԱԳ ԽՈՒՄԲ)

Հաշվի առնելով 5-6 տարեկան երեխաների տարիքային առանձնահատկությունները՝ վաղ գրաճանաչության ծրագրային խնդիրների լուծումն իրականացվում է բազմազան խաղերով, դիդակտիկ վարժություններով, հանելուկ-խնդիրներով, խաղ-վարժություններով, շուտասելուկներով և ընդհանուր զարգացմանը նպաստող այլ վարժություններով հագեցված պարապմունքներում:

Գրաճանաչության ուսուցումն ունի 2 շրջան՝ նախապատրաստական և բուն գրուսուցման: Մանկապարտեզի խնդիրն առաջին շրջանը վարելն է: Այդ շրջանում երեխաների խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներում գլխավորը նրանց բառապաշարի ճշտման, հղկման ու հարստացման, ինչպես նաև կապակցված խոսք կառուցելու ունակության մշակումն ու զարգացումն է: Այս շրջանում հատուկ աշխատանք է տարվում նկարի, տեսածի, լսածի մասին կապակցված և ամբողջական ձևով պատմելու, խոսքից կամ պատմությունից նախադասությունն առանձնացնելու, նախադասությունը բառերի վերլուծելու, պահանջված բառն անջատելու, բառը վանկերի բաժանելու, վանկերը հնչյունների վերածելու և

այդ հնչյունների շարքից անհրաժեշտ հնչյունն առանձնացնելու կարողությունները մշակելու ուղղությամբ:

Երեխաներին գաղափար է տրվում նաև հնչյունի և տառի մասին (հնչյունը լսում ենք, արտասանում, տառը տեսնում ենք, կարդում ու գրում):

Թեմատիկ բաշխումն ըստ եռամսյակների և առաջարկվող աշխատանքները

1- ին եռամսյակ (սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր)

1. Ձևավորել պատկերացում պատմվածքի և նախադասության մասին:
2. Սովորեցնել նախադասությունը տրոհել բառերի:
3. Ծանոթացնել «վանկ» հասկացությանը, սովորեցնել բառերը բաժանել վանկերի:

2-րդ եռամսյակ (դեկտեմբեր, հունվար, փետրվար)

1. Գաղափար տալ հնչյունի մասին, սովորեցնել հնչերանգով առանձնացնել հնչյունը բառի մեջ:
2. Սովորեցնել կատարել երեք և չորս հնչյուն ունեցող բառերի հնչյունային վերլուծություն, այսինքն՝ որոշել հնչյունների հաջորդականությունը և անվանել առանձնացված հնչյունները՝ բառի մեջ դրանց հնչեղությանը համապատասխան:
3. Անվանել որոշակի հնչյուններով սկսվող կամ ավարտվող բառեր:

3-րդ եռամսյակ (մարտ, ապրիլ, մայիս)

1. Ամրապնդել հնչյունային տարբեր կառուցվածք ունեցող բառերի հնչյունային վերլուծություն կատարելու հմտությունը: Անվանել բառեր տրված հնչյուններով:
2. Տարբերել ձայնավոր և բաղաձայն հնչյուններն ըստ արտասանության:
3. Սովորեցնել ճիշտ օգտագործել «տառ», «հնչյուն» եզրույթները (տերմին):

4.3. ԾԱՆՈԹԱՑՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ԵՎ ԷԿՈԼՈԳԻԱ

Երեխան և շրջակա աշխարհը

Մանկապարտեզում երեխաների ճանաչողական զարգացման ուղղությամբ աշխատանք է տարվում ինչպես պարապմունքների ընթացքում, այնպես էլ ազատ գործունեության ժամանակ:

Ընդհանուր պարամունքները տարվա ընթացքում 36-ն են, որից 18-ը տրվում է «Առարկայական միջավայր» և «Հասարակական կյանքի

երևույթներ», իսկ 18-ը՝ «Ծանոթացում բնությանը և էկոլոգիական դաստիարակություն» բաժիններին:

Պարապմունքներն անցկացվում են շաբաթը մեկ անգամ:

<u>Կրտսեր 2-րդ խումբ (3-4 տարեկան)</u>

Առարկայական միջավայր

- Շարունակել ծանոթացնել երեխային շրջապատող առարկաներին և դրանց նշանակությանը: Սովորեցնել որոշել առարկայի գույնը, մեծությունը, ձևը, կշիռը (թեթև, ծանր), դրանց դասավորությունը՝ երեխայի համեմատությամբ (մոտ, հեռու, բարձր):
- Ծանոթացնել նյութերին (փայտե, թղթե, կտորից, կավից), դրանց հատկություններին (դիմացկուն, ամուր, փափուկ):
- Սովորեցնել առարկաները հետազոտելու ձևերը՝ ներառելով պարզագույն փորձը (սուզվում է, չի սուզվում, պատռվում է, չի պատռվում):
- Սովորեցնել խմբավորել (թեյի, ճաշի, խոհանոցային ամանեղեն) և դասակարգել լավ ծանոթ առարկաները (ամանեղեն, հագուստ):

Հասարակական կյանքի երևույթներ

Ընտանիք

- Զրուցել երեխայի հետ նրա ընտանիքի անդամների մասին:

Մանկապարտեզ

- Հիշեցնել մանկապարտեզի աշխատողների (դաստիարակ, երաժշտության դաստիարակ, բուժքույր, վարիչ) անունները:
- Սովորեցնել բարևել և հրաժեշտ տալ դաստիարակին ու ընկերներին:
- Խմբում խթանել կարգուկանոն պահպանելու ցանկությունը, հոգատար վերաբերմունք ձևավորել խաղալիքների, գրքերի, անձնական իրերի հանդեպ:
- Ծանոթացնել երթևեկության կանոններին:
- Սովորեցնել տարբերել փողոցի երթևեկելի մասը, մայթը, հասկանալ լուսակրի կանաչ և կարմիր լույսերի նշանակությունը:

Հայրենի երկիր

- Սովորեցնել հարազատ բնակավայրի (քաղաք, գյուղ, ավան) ան-

վանումը, երեխային պատմել, թե որտեղ են զբոսնում հանգստյան օրերին (զբոսայգի, տեսարժան վայր, մանկական այգի և այլն):

Մեծերի աշխատանքը

- Շարունակել ծանոթացնել մտերիմ մեծերի աշխատանքին: Ծանոթացնել մանկապարտեզի աշխատակիցների գործունեությանը (բուժքույր, պահակ, դաստիարակ, խոհարար):

<u>Միջին խումբ (4-5 տարեկան)</u>

Առարկայական միջավայր

- Ծանոթացնել շրջապատող առարկաներին ու երևույթներին՝ գործունեության տարբեր ձևերի ժամանակ. խաղ, աշխատանք, ուսուցում:
- Երեխաներին սովորեցնել ճիշտ անվանել շրջապատի առարկաները:
- Երեխաներին պատմել շրջապատում տեղի ունեցող երևույթների մասին: Հետաքրքրություն առաջացնել նկարների, գրքերի նկարազարդումների նկատմամբ:
- Շարունակել ծանոթացնել առարկաների առանձնահատկություններին և որակին, կարողանալ տարբերակել դրանք:
- Ընդլայնել հասարակական տրանսպորտի մասին ունեցած երեխաների պատկերացումները՝ ավտոմեքենա, ավտոբուս, ինքնաթիռ, նավ, գնացք:
- Ծանոթացնել ճանապարհային երթևեկության մի քանի կանոնների՝ փողոցը կարելի է անցնել միայն մեծերի հետ հատուկ տեղերում (վերգետնյա, ստորգետնյա անցումներով), կարելի է անցնել միայն կանաչ լույսի ժամանակ:

Հասարակական կյանքի երևույթներ

Ընտանիք

- Ձևավորել պատկերացում, թե ինչ է ընտանիքը (նրանք, ովքեր ապրում են միասին, երեխաների հետ): Հետաքրքրվել, թե ինչ պարտականություններ ունի երեխան տանը (հավաքում է խաղալիքները, օգնում է մայրիկին սպասքադրելու սեղանը, զբաղեցնում է փոքրիկ քույրիկին …):
- Սովորեցնել երեխաներին ճանաչել և անվանել ամենամոտ հարազատներին:

Մանկապարտեզ

- Շարունակել ծանոթացնել մանկապարտեզին և նրա աշխատակիցներին: Ընդարձակել պատկերացումները նրանց գործունեության մասին:
- Կատարելագործել մանկապարտեզի տարածքում ճիշտ կողմնորոշվելու կարողությունը:

Հայրենի երկիր

- Շարունակել դաստիարակել սեր և հոգատար վերաբերմունք հայրենի երկրի, հարազատ վայրերի (փողոց, տուն, մանկապարտեզ) նկատմամբ:
- Տեղեկություններ տալ հայրենի քաղաքի (գյուղի, ավանի), մայրաքաղաք Երևանի ամենագեղեցիկ և տեսարժան վայրերի մասին:
- Պատմել հայոց բանակի, զինվորների մասին, ովքեր պաշտպանում են մեր երկիրը:

Մեծերի աշխատանքը

- Շարունակել ծանոթացնել մեծերի աշխատանքին՝ բժիշկ, վարորդ, խոհարար, վաճառող, դերձակ…: Ձևավորել հետաքրքրություն տարբեր մասնագիտությունների նկատմամբ:
- Տեղեկացնել ծնողների աշխատանքի մասին. նրանք պետք է իմանան՝ որտեղ են աշխատում իրենց հայրերն ու մայրերը:

<u>Ավագ խումբ (5-6 տարեկան)</u>

Առարկայական միջավայր

- Շարունակել սովորեցնել ճիշտ անվանել շրջապատի առարկաները:
- Երեխաներին պատմել շրջապատում տեղի ունեցող երևույթների մասին: Հետաքրքրություն առաջացնել նկարների, գրքերի նկարազարդումների նկատմամբ:
- Շարունակել ծանոթացնել առարկաների առանձնահատկություններին և որակին, որ երեխաները կարողանան տարբերակել դրանք:
- Ընդլայնել հասարակական տրանսպորտի մասին երեխաների պատկերացումները՝ ավտոմեքենա, ավտոբուս, ինքնաթիռ, նավ, գնացք:
- Տալ պատկերացում տրանսպորտում ճիշտ պահվածքի մասին:
- Ամրապնդել ճանապարհային երթևեկության կանոնների մասին

երեխաների գիտելիքները՝ փողոցը կարելի է անցնել միայն մեծերի հետ հատուկ տեղերում (վերգետնյա, ստորգետնյա անցումներով), կարելի է անցնել միայն կանաչ լույսի ժամանակ:

Հասարակական կյանքի երևույթներ

Ընտանիք

- Ամրապնդել պատկերացում այն մասին, թե ինչէ ընտանիքը (նրանք, ովքեր ապրում են միասին, երեխաների հետ): Հետաքրքրվել, թե ինչ պարտականություններ ունի երեխան տանը (հավաքում է խաղալիքները, օգնում է մայրիկին սպասքադրելու սեղանը, զբաղեցնում է փոքրիկ քույրիկին …):
- Սովորեցնել, որ երեխան կարողանա ներկայացնել, թե որտեղ են աշխատում հայրիկը, մայրիկը, պատմել ծնողների զբաղվածության, նրանց մասնագիտությունների մասին:
- Սովորեցնել, որ երեխան կարողանա շրջապատին տեղեկություններ հաղորդել ամենամոտ հարազատների մասին:

Մանկապարտեզ

- Շարունակել երեխաներին ծանոթացնել մանկապարտեզին և նրա աշխատակիցներին: Ընդարձակել պատկերացումները նրանց գործունեության մասին:
- Կատարելագործել մանկապարտեզի տարածքում, բակում ճիշտ կողմնորոշվելու կարողությունը:
- Սովորեցնել, որ երեխան կարողանա ճիշտ ասել մանկապարտեզի հասցեն:
- Հայրենի երկիր
- Շարունակել դաստիարակել սեր և հոգատար վերաբերմունք հայրենի երկրի, հարազատ վայրերի (փողոց, տուն, մանկապարտեզ) նկատմամբ:
- Ամրապնդել տեղեկությունները հայրենի քաղաքի (գյուղի, ավանի), մայրաքաղաք Երևանի ամենագեղեցիկ և տեսարժան վայրերի մասին:
- Բացատրել «քաղաքացի» (գյուղացի) բառերի իմաստը:
- Պատմել հայոց բանակի, զինվորների մասին, ովքեր պաշտպանում են մեր երկիրը:

Մեծերի աշխատանքը

- Շարունակել ծանոթացնել մեծերի աշխատանքին՝ բժիշկ, վարորդ,

խոհարար, վաճառող, դերձակ…: Ձևավորել հետաքրքրություն տարբեր մասնագիտությունների նկատմամբ:

- Տեղեկացնել ծնողների աշխատանքին. նրանք պետք է իմանան՝ որտեղ են աշխատում իրենց հայրերն ու մայրերը:
- Ձևավորել հետաքրքրություն, սեր և հարգանք տարբեր մասնագիտությունների նկատմամբ:

Թեմատիկ բաշխումն ըստ եռամսյակների և առաջարկվող աշխատանքները

Կրտսեր 2-րդ, միջին և ավագ խմբերում անցկացվող պարապմունքների թեմաները կրկնվում են՝ տարեցտարի աստիճանական բարդացմամբ:

1- ին եռամսյակ (սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր)

Մանկապարտեզ

- Երեխաներին ծանոթացնել մանկապարտեզին և նրա աշխատակիցներին:
- Կատարելագործել մանկապարտեզի տարածքում և խմբասենյակում ազատ կողմնորոշվելու կարողությունը:
- Խաղ՝ «Խանութ». անհրաժեշտ ապրանքներ՝ տան համար: Երեխաներին ծանոթացնել կենցաղում կիրառվող տարբեր առարկաներին, դրանց նշանակությանը, առանձնահատկություններին և որակին:

Իմ հայրենի քաղաքը

- Երեխաներին սովորեցնել պատմել հայրենի քաղաքի (գյուղի, ավանի) ամենագեղեցիկ և տեսարժան վայրերի մասին: Սովորեցնել ճիշտ անվանել այն փողոցը, որտեղ գտնվում է մանկապարտեզը:

Ապակու աշխարհում

- Երեխաներին տալ գիտելիքներ ապակու մասին (հարթ է, թափանցիկ, կոտրվող):
- Ձևավորել խնամքով վերաբերմունք ապակյա իրերի նկատմամբ:

Մեծերի աշխատանքը

- Շարունակել ծանոթացնել մեծերի աշխատանքին:
- Զրուցել խոհարարի աշխատանքի մասին:

Ճանապարհորդություն դեպի անցյալ՝ թուղթ

- Ծանոթացնել երեխաներին թղթի ստեղծման պատմությանը, ըստ որակի կարողանալ տարբերել դրանք:
- Խրախուսել երեխաների փորձերը՝ գուշակելու, թե ինչ կարելի է պատրաստել թղթից:

<u>2-րդ եռամսյակ (դեկտեմբեր, հունվար, փետրվար)</u>

Մեզ հյուր է եկել բժիշկ Այբոլիտը

- Շարունակել ծանոթացումը մեծերի աշխատանքին, ճշտել և ամրապնդել երեխաների գիտելիքները բժշկի աշխատանքի մասին:

Կախարդական արկղիկ

- Ընդլայնել երեխաների մտահորիզոնը շրջապատող առարկաների վերաբերյալ:

Ընտանիք

- Տալ պատկերացում, թե ինչ բան է ընտանիքը:
- Կարողանալ ճանաչել և անվանել ամենամոտ հարազատներին:

Հայրիկներն ու պապիկները զինվորներ են

- Երեխաներին մատչելի ձևով ծանոթացնել պետական մի քանի տոների:
- Պատմել հայոց բանակի, զինվորների մասին, ովքեր պաշտպանում են մեր երկիրը:

Մեր սիրելի խաղալիքները

- Սովորեցնել երեխաներին՝ ինքնուրույն նկարագրել տարբեր նյութերից պատրաստված խաղալիքներ, նշել դրանց բնորոշ հատկանիշները՝ գույն, ձև, որակ:

Իմ բարեկամ լուսակիրը

- Ծանոթացնել լուսակրի աշխատանքին, հիշեցնել, որ փողոցը կարելի է անցնել միայն կանաչ լույսի ժամանակ:

<u>3-րդ եռամսյակ (մարտ, ապրիլ, մայիս)</u>

Իմ մայրիկն ամենալավն է

- Սովորեցնել պատմել մայրիկի մասնագիտության ու սիրած զբաղմունքի մասին:

Կահույք

- Ամրապնդել «կահույք» հասկացությունը: Խրախուսել երեխաների փորձերը՝ գուշակելու, թե ե՞րբ և որտե՞ղ է պատրաստվել այդ առարկան:

Տունը, որտեղ ես ապրում եմ

- Շարունակել ծանոթացումը հարազատ վայրերի (փողոց, տուն) հետ:
- Ամրապնդել, որ երեխան կարողանա ճիշտ անվանել այն փողոցը, որտեղ ապրում է:

Սպասք

- Ծանոթացնել «սպասք» ընդհանրական հասկացությանը, նշել սպասքի մի քանի տեսակ՝ (թեյի, ճաշի, խոհանոցի):

Օգնականները

- Շարունակել զրուցել ընտանիքի և ընտանիքի անդամների մասին, նշել, թե ի՞նչ զբաղվածություն ունի տանը ընտանիքի յուրաքանչյուր անդամ:

Ինչո՞վ ենք մենք ճանապարհորդում

- Ընդլայնել հասարակական տրանսպորտի մասին երեխաների պատկերացումները՝ ավտոմեքենա, ավտոբուս, ինքնաթիռ, ճոպանուղի, նավ, գնացք:

Ծանոթացում բնությանը

Էկոլոգիական դաստիարակություն

Ծրագրի «էկոլոգիա» բաժինը կոչված է իրականացնելու էկոլոգիական կրթության և դաստիարակության խնդիրներ: Էկոլոգիական կրթությունն իրականացվում է «Ճանաչի՛ր, սիրի՛ր, պահպանի՛ր» կարգախոսով: Դրա շնորհիվ կձևավորվեն բնության և ռեսուրսների նկատմամբ խնայողական վերաբերմունք և ճիշտ վարքագիծ:

Ծրագրի էկոլոգիական դաստիարակության բաժինը նպատակ ունի երեխայի մեջ ձևավորելու ճանաչողական, բնապահպանական գիտելիքներ, էկոլոգիական գիտակցություն, հուզական, հոգատար, մարդասիրական վերաբերմունք բնության, շրջակա միջավայրի նկատմամբ, բնության հետ հաղորդակցվելու ունակություն, էկոլոգիական կուլտուրա:

Ծրագրի էկոլոգիական դաստիարակության բաժնի խնդիրն է՝ մանկավարժական ներգործությամբ երեխաներին նախնական գիտելիքներ տալ բուսական և կենդանական աշխարհի, բնության եղանակային երևույթների, կենդանի և անկենդան բնության վերաբերյալ, պատկերացում

տալ դրանց փոխկապակցության մասին, մշակել շրջապատի նկատմամբ հոգատար և գիտակցական վերաբերմունք, ձևավորել բնության մեջ ճիշտ վարքագծի դրսևորման սովորություններ և հմտություններ:

<u>Կրտսեր 2-րդ խումբ (3-4 տարեկան)</u>

Խնդիրներն են՝

- Երեխաների մեջ ձևավորել ճանաչողական կարողություններ, իմացական հետաքրքրություններ, տարրական պատկերացում տալ բույսերի և կենդանիների մասին,
- ծանոթացնել ընտանի կենդանիներին և նրանց ձագերին (3-4), բնության անկյան բնակիչներից ակվարիումի ձկներին և դեկորատիվ թռչուններից թութակին,
- պատկերացում տալ վայրի կենդանիների մասին (արջ, աղվես, գայլ),
- տեղեկություններ տալ միջատների (թիթեռ, զատիկ, մրջյուն) մասին,
- սովորեցնել հետևել մանկապարտեզի բակում հանդիպող թռչունների (ագռավ, ճնճղուկ, աղավնի) վարքին, կերակրել նրանց ձմռանը,
- սովորեցնել արտաքին տեսքով տարբերել և անվանել բանջարեղենը (վարունգ, լոլիկ, գազար), մրգերը (խնձոր, տանձ, խաղող),
- ծանոթացնել շրջապատում հանդիպող ծառերին (կաղնի, բարդի, բալենի, խնձո-րենի),
- պատկերացում տալ ջրի (հոսում է, սառչում է, տաքանում է), ավազի (չոր, թափվող, թաց, խոնավ), ձյան (սառը, սպիտակ, տաքությունից հալչում է) հատկությունների մասին,
- ձևավորել բնության մեջ գործող տարրական կապերը հասկանալու կարողություն (եթե բույսը չջրվի, այն կարող է թոշնել և այլն),
- ծանոթացնել բնության մեջ վարքի կանոններին (զգուշությամբ շրջանցել թփերը, ծաղիկները չպոկել, խոտը չտրորել, ճյուղերը չկոտրել, կենդանիներին ձեռք չտալ և այլն), ձևավորել վարքագծային սովորույթներ և հմտություններ, բնության երևույթներով հիանալու (անձրև է գալիս, տերևաթափ է, ձյուն է գալիս և այլն) կարողություններ:

Եղանակային դիտումներ

Աշուն

- Սովորեցնել նկատել աշնանը բնության մեջ կատարվող փոփոխությունները. սկսում է ցրտել, անձրևներ են տեղում, մարդիկ անձրևանոցներ են հագնում, տերևները փոխում են իրենց գույնը և թափվում են, թռչունները չվում են տաք երկրներ,
- պատկերացում տալ այն մասին, որ աշնանը հավաքում են հասած բանջարեղենը և մրգերը,
- սովորեցնել տարբերակել առավել տարածված մրգերը և բանջարեղենը՝ ըստ գույնի, համի, ձևի և անվանել դրանք:

Ձմեռ

- Ճշտել երեխաների պատկերացումները ձմռան առանձնահատկությունների վերաբերյալ (ցուրտ է, ձյուն է գալիս, մարդիկ տաք հագուստ են հագնում),
- սովորեցնել նկատել ձմեռային բնության գեղեցկությունը. ծառերը պատված են ձյան շերտով, փափուկ ձյուն, թափանցիկ սառույց, պատուհաններին առաջացած նախշեր և այլն,
- կազմակերպել ձմեռային խաղեր. սահնակով սահել, ձնագնդի խաղալ կամ ձնեմարդ ծեփել:

Գարուն

- Ծանոթացնել գարնան առանձնահատկություններին և բնության մեջ կատարվող փոփոխություններին,
- ընդլայնել բնության մեջ գոյություն ունեցող պարզ կապերի մասին երեխաների պատկերացումները (արևը ջերմացնում է հողը, ձյունը հալչում է, հողի տակից դուրս է գալիս խոտը, ծառերը ծաղկում են, հայտնվում են մայիսյան բզեզները և թիթեռները, թռչունները հետ են վերադառնում տաք երկրներից):

Ամառ

- Ընդլայնել երեխաների պատկերացումները՝ ամռանը բնության մեջ կատարվող փոփոխությունների վերաբերյալ (շոգ է, արևը տաքացնում է, ծաղկում են ծաղիկները, մարդիկ լողում են գետերում, լճերում, ամենուր թռվռում են թիթեռները),
- երեխաներին տարրական պատկերացումներ տալ այգում և բան-

ջարանոցում աճող մրգերի, բույսերի ու բանջարեղենի մասին: Ամրապնդել գիտելիքներն այն մասին, որ շատ հատապտուղներ, մրգեր և բանջարեղեն հասունանում են ամռանը:

Էկոլոգիական դաստիարակություն

- Ձևավորել վարքագծի ճիշտ դրսևորում շրջակա միջավայրի նկատմամբ:

<u>Միջին խումբ (4-5 տարեկան)</u>

Խնդիրներն են՝

- շարունակել ձևավորել երեխաների պատկերացումները բուսական և կենդանական աշխարհի, բնության եղանակային երևույթների վերաբերյալ,
- ամրապնդել պատկերացումները ընտանի և վայրի կենդանիների մասին,
- ամրապնդել պատկերացումները միջատների մասին,
- շարունակել հետևել մանկապարտեզի բակում հանդիպող թռչունների (ագռավ, սարյակ, ճնճղուկ, աղավնի) վարքին, կերակրել նրանց ձմռանը,
- սովորեցնել արտաքին տեսքով տարբերել և անվանել բանջարեղենը (վարունգ, լոլիկ, գազար, ճակնդեղ), մրգերը (խնձոր, տանձ, դեղձ, խաղող), հատապտուղները (ազնվամորի, հաղարջ),
- շարունակել ծանոթացնել շրջապատում հանդիպող ծառերին (դեկորատիվ և պտղատու),
- ամրապնդել բնության մեջ գործող տարրական կապերը հասկանալու կարողությունը, ծանոթացնել շրջապատող աշխարհի և բնության երևույթների միասնականությանն ու փոխկապակցվածությանը:

Եղանակային դիտումներ

Աշուն

- Նոր տեղեկություններ տալ աշնանը բնության մեջ կատարվող փոփոխությունների մասին. սկսում է ցրտել, անձրևներ են տեղում, մարդիկ անձրևանոցներ են հագնում, տերևները փոխում են իրենց գույնը և թափվում են, թռչունները չվում են տաք երկրներ,
- ընդլայնել երեխայի պատկերացումներն այն մասին, որ աշնանը հավաքում են հասած բանջարեղենը և մրգերը,

- սովորեցնել տարբերակել առավել տարածված մրգերը և բանջարեղենը՝ ըստ գույնի, համի, ձևի և անվանել դրանք:

Ձմեռ

- Ճշտել և ամրապնդել երեխաների պատկերացումները ձմռան առանձնահատկությունների վերաբերյալ (ցուրտ է, ձյուն է գալիս, մարդիկ տաք հագուստ են հագնում),
- կազմակերպել ձմեռող թռչունների վարքի դիտում, կերակրել նրանց հացի փշրանքներով և ցորենի հատիկներով,
- ձևավորել պարզագույն գիտելիքներ արտաքին միջավայրի որոշակի պայմաններից բուսական և կենդանական աշխարհի կախվածության մասին,
- սովորեցնել նկատել ձմեռային բնության գեղեցկությունը. ծառերը պատված են ձյան շերտով, փափուկ ձյուն, թափանցիկ սառույց, պատուհաններին առաջացած նախշեր և այլն,
- կազմակերպել ձմեռային խաղեր. սահնակով սահել, ձնագնդի խաղալ կամ ձնեմարդ ծեփել, ձնե կառույցներ պատրաստել:

Գարուն

- Շարունակել ծանոթացնել գարնան առանձնահատկություններին և բնության մեջ կատարվող փոփոխություններին (արևը ջերմացնում է հողը, ձյունը հալչում է, հողի տակից դուրս է գալիս խոտը, ծառերը ծաղկում են, հայտնվում են մայիսյան բզեզները և թիթեռները, թռչունները հետ են վերադառնում տաք երկրներից),
- ընդլայնել բնության մեջ գոյություն ունեցող պարզ կապերի մասին երեխաների պատկերացումները (արևը սկսում է ջերմացնել, ծառերը ծաղկում են, թռչուններն ուրախ երգում են, մարդիկ տաք հագուստները փոխարինում են ավելի թեթև՝ գարնանային հագուստներով),
- ցույց տալ երեխաներին, թե ինչպես են հողամասում ցանում բույսերի և բանջարեղենի սերմերը:

Ամառ

- Ընդլայնել երեխաների պատկերացումներն ամռանը բնության մեջ կատարվող փոփոխությունների վերաբերյալ (շոգ է, արևն ուժեղ է տաքացնում, ծաղկում են ծաղիկները, մարդիկ լողում են գետերում, լճերում, ամենուր թռվռում են թիթեռները, երևում են զատիկները, բներում հայտնվում են թռչունների ճտերը),
- երեխաներին տարրական պատկերացումներ տալ այգում և բանջարանոցում աճող մրգերի, բույսերի ու բանջարեղենի մասին,

- ամրապնդել գիտելիքներն այն մասին, որ շատ մրգեր, հատապտուղներ և բանջարեղեն հասունանում են ամռանը:

Էկոլոգիական դաստիարակություն

- Ձևավորել վարքագծի ճիշտ դրսևորում շրջակա միջավայրի նկատմամբ:

<u>Ավագ խումբ (5-6 տարեկան)</u>

Խնդիրներն են՝

- ամրապնդել երեխաների պատկերացումները բուսական և կենդանական աշխարհի, բնության եղանակային երևույթների վերաբերյալ,
- ճանաչել և տարբերել ընտանի և վայրի կենդանիներին. ծանոթացնել դրանց արտաքինին և ապրելակերպին, բնորոշ առանձնահատկություններին,
- ամրապնդել պատկերացումները միջատների մասին,
- սովորեցնել տարբերել ձմեռող և չվող թռչուններին, շարունակել հետևել մանկապարտեզի բակում հանդիպող թռչունների (ագռավ, սարյակ, ճնճղուկ, աղավնի) վարքին, կերակրել նրանց ձմռանը,
- սովորեցնել ճանաչել բանջարեղենը և մրգերն ըստ արտաքին տեսքի, համի, ձևի, գույնի, իմանալ դրանց կարևորությունը, սննդի մեջ օգտագործման եղանակները (հում, եփած, չորացրած, աղ դրած), իմանալ որտեղ են աճում (բանջարեղենն աճում է բանջարանոցում, իսկ մրգերը՝ այգում),
- սովորեցնել ըստ արտաքին տեսքի ճանաչել, անվանել և տարբերել դեկորատիվ ու պտղատու ծառատեսակները,
- ծանոթացնել և սովորեցնել տարբերել պարտեզային և դաշտային ծաղիկները (վարդ, մեխակ, քրիզանթեմ, կակաչ, մանուշակ),
- ամրապնդել բնության մեջ գործող տարրական կապերը հասկանալու կարողությունը, ծանոթացնել շրջապատող աշխարհի և բնության երևույթների միասնականությանն ու փոխկապակցվածությանը,
- սովորեցնել տարբերել և անվանել օրը և գիշերը,
- ծանոթացնել, տեղեկություններ տալ բնության երևույթների՝ արևի, քամու և անձրևի մասին,
- ծանոթացնել ջրի, ավազի հատկություններին (ջրում որոշ առարկաներ սուզվում են, որոշ առարկաներ մնում են ջրի երեսին, ավազը սորուն է, խոնավ վիճակում՝ կպչուն),

- ձևավորել բնության գեղեցկությունը նկատելու ունակություն, հոգատար և խնամքով վերաբերմունք,
- արթնացնել հետաքրքրություն, սեր և հոգատար վերաբերմունք բույսերի, կենդանիների, շրջակա միջավայրի նկատմամբ,
- ձևավորել բնության մեջ ճիշտ վարքագծի դրսևորման սովորություններ ու հմտություններ:

Եղանակային դիտումներ

Աշուն

- Ամրապնդել տեղեկություններն աշնանը բնության մեջ կատարվող փոփոխությունների մասին. եղանակները ցրտում են, հաճախակի անձրև է տեղում, ծառերի տերևները դեղնում են և թափվում,
- ընդլայնել երեխայի պատկերացումներն այն մասին, որ այգիներում և բանջարանոցներում հասունանում են մրգերն ու բանջարեղենը, դաշտերում կատարում են բերքահավաք,
- ընդլայնել երեխայի պատկերացումները աշնանը կենդանական աշխարհի եղանակային վարքի և փոփոխությունների մասին. թիթեռները, բզեզները, մոծակներն անհետանում են, թռչունները չվում են տաք երկրներ:

Ձմեռ

- Շարունակել ձևավորել կոնկրետ գիտելիքներ՝ բնության եղանակային երևույթների վերաբերյալ (ցերեկը կարճանում է, գիշերը՝ երկարում, եղանակները ցրտում են, ձյուն է տեղում),
- կազմակերպել ձմեռող թռչունների վարքի դիտում, կերակրել նրանց հացի փշրանքներով և ցորենի հատիկներով,
- կարողանալ տեսնել ձմեռային բնության փոփոխությունը. բնությունը ծածկվում է ճերմակ սավանով, ջրավազաններում սառնամանիքից ջրերը սառչում են՝ վերածվելով սառույցի, սառույցը կոշտ է, նրա վրա սահում են, ծառերն ու թփերն առանց տերևների են,
- ձևավորել պատկերացումներ կենդանիների ապրելակերպի որոշակի պայմանների և դրանց եղանակային փոփոխությունների վերաբերյալ,
- սովորեցնել նկատել բնության գեղեցկությունը ձմռանը, բնության երևույթների փոխկապակցվածությունը,
- ճանաչողական ունակություններ ձևավորել ձյան, սառույցի մասին,

- սահմանել կապեր բնության երևույթների միջև. երբ եղանակը ցրտում է՝ անձրևը փոխվում է ձյան, ցրտի հետևանքով և սառեցնելիս ջուրը վերածվում է սառույցի, սառույցը տաքացնելիս վերածվում է ջրի,
- կազմակերպել ձմեռային խաղեր. սահնակով սահել, ձնագնդի խաղալ կամ ձնեմարդ ծեփել, ձնե կառույցներ պատրաստել:

Գարուն

- Ձևավորել պարզագույն գիտելիքներ՝ գարնանը բուսական աշխարհում տեղի ունեցող փոփոխությունների, զարթոնքի վերաբերյալ (արևը ջերմացնում է հողը, ձյունը հալչում է, եղանակները տաքանում են, օրերը՝ երկարում, հողի տակից դուրս է գալիս խոտը, գարնան առաջին ծաղիկները ձյան միջից բարձրացնում են իրենց գլխիկները, ծառերը բողբոջում են, ծաղկում են, հայտնվում են մայիսյան բզեզները և թիթեռները, թռչունները հետ են վերադառնում տաք երկրներից),
- ընդլայնել բնության մեջ գոյություն ունեցող պարզ կապերի մասին երեխաների պատկերացումները (արևը սկսում է ջերմացնել, ծառերը ծաղկում են, թռչուններն ուրախ երգում են, մարդիկ տաք հագուստները փոխարինում են ավելի թեթև՝ գարնանային հագուստներով, դաշտերում սկսվում է գարնանացանը, բանջարանոցներում տնկում են բանջարեղեն, պարտեզներում՝ ծաղիկներ,
- ճշտել և ամրապնդել պատկերացումները ծառերի, բույսերի կառուցվածքի մասին (ծառն ունի բուն, ճյուղեր, տերևներ, թփերն ունեն մի քանի բարակ բներ, ճյուղեր, տերևներ, դրանք ծառից ցածր են, բույսերն ունեն արմատներ, որոնց միջոցով հողից ներծծում են խոնավություն, սննդարար նյութեր),
- սովորեցնել դասակարգել պտղատու և դեկորատիվ ծառերը,
- ծանոթացնել գարնանային 2-3 ծաղկատեսակների (մանուշակ, կակաչ, նարգիզ), նրանց կառուցվածքին (գլխիկ, տերևներ ցողուն, արմատ),
- Ճանաչողական գիտելիքներ տալ անտառի վերաբերյալ, ներկայացնել անտառների, այգիների դերը օդի մաքրման խնդրում,
- ընդլայնել երեխաների գիտելիքները կենդանիների զարգացման մասին. թռչունները ձու են ածում, կենդանիները ծնում են ձագեր, որոշ կենդանիներ նրանց կերակրում են իրենց կաթով, պաշտպանում և խնամում են ,

- տեղեկություններ տալ ընտանի կենդանիների օգտակարության մասին,
- գիտելիքներ տալ բուսական և կենդանական աշխարհի փոխկապակցվածության մասին,
- պարզագույն գիտելիքներ տալ հայկական բնաշխարհին բնորոշ քարերի մասին, ներկայացնել դրանց կարևորությունն ու անհրաժեշտությունը,
- սովորեցնել տարբերել տարվա եղանակներն ըստ ամիսների:

Ամառ

- Ընդլայնել երեխաների պատկերացումներն ամռանը բնության մեջ կատարվող փոփոխությունների վերաբերյալ (շոգ է, արևն ուժեղ է տաքացնում, ծաղկում են ծաղիկները, մարդիկ լողում են գետերում, լճերում, ամենուր թռվռում են թիթեռները, երևում են զատիկները և այլ միջատներ, ուրախ երգում են թռչունները, բներում հայտնվում են նրանց ճտերը…),
- երեխաներին տարրական պատկերացումներ տալ այգում և բանջարանոցում աճող մրգերի, բույսերի ու բանջարեղենի մասին, արապնդել գիտելիքներն այն մասին, որ շատ մրգեր, հատապտուղներ և բանջարեղեն հասունանում են ամռանը:

Էկոլոգիական դաստիարակություն.

Երեխաներին սովորեցնել

- իրենց զգալ բնության մի մասնիկը,
- հուզական, հոգատար վերաբերմունք դրսևորել բնության օբյեկտների նկատմամբ,
- ձևավորել և զարգացնել ճանաչողական և բնապահպանական կարողությունները:

4.4. ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐ

Մաթեմատիկայի ուսուցումը երեխաների մտավոր զարգացմանը նպաստող իմացական ընդունակությունների համակարգված ու հետևողական գործընթաց է:

Տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման և զարգացման միջոցներն են՝ մաթեմատիկայի պարապմունքները, դիդակտիկ, զարգացնող, մրցակցային, ինտելեկտուալ խաղերը, զբոսանքները, էքսկուրսիաները, պարապմունքների զանազան տեսակների կապերը: Ձևավորվում են քանակական պատկերացումները, երկրաչափական պատկերների և մարմինների վերաբերյալ պատկերացումները, տարածության, ժամանակի ընկալման առանձնահատկությունները:

Մաթեմատիկական բովանդակությամբ յուրաքանչյուր խաղ ունի իր խնդիրը՝ զարգացնել բանավոր համրանքը, ծանոթացնել թվերի բնական շարքին, թվերի կազմությանը, թվանշաններին, երկրաչափական պատկերներին, մարմիններին:

Խաղերի ընթացքում երեխաները դիտում են, համեմատում, վերլուծում:

Այս կարողություններն ու հմտությունները չափազանց կարևոր են 3-6 տարեկան երեխաների համար, որպեսզի նրանք կարողանան հեշտությամբ կողմնորոշվել մաթեմատիկական այն իրավիճակներում, որոնց հետ առնչվում են առօրյա կյանքում: 3-6 տարեկան երեխաներն ունեն կոնկրետ մտածողություն, ուստի նրանք սկսում են ըմբռնել մաթեմատիկական հիմնական հասկացությունները, երբ ուղղակիորեն շփման մեջ են մտնում իրենց շրջապատող իրական առարկաների հետ:

Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը նախադպրոցական տարիքում

Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը նախադպրոցական տարիքում ունի հիմնական հետևյալ նպատակը. նա-

խադպրոցականին նախապատրաստել դպրոցին՝ սովորեցնելով հաշվել, չափել, համեմատել, տարրական մաթեմատիկական գործողություններ կատարել, բացահայտել շրջապատող առարկաների մեծության հատկանիշները, երկրաչափական պատկերները, նպաստել հոգեկան գործընթացների և հատկապես մտածողության (համեմատություն, վերլուծություն, ընդհանրացում) զարգացմանը:

Նախադպրոցական տարիքում տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորումը ներառում է ծրագրային երկու հիմնական խնդիր. նախաթվային կամ մինչթվային և թվային կամ քանակական.

<u>Նախաթվային հասկացություններ</u>

1. Մեծություն

- Համեմատել առարկաները մեծության հատկանիշով, խմբավորել՝ ըստ
  - երկարության. երկար - կարճ, հավասար-անհավասար (հավասար են երկարությամբ),
  - բարձրության. բարձր - ցածր, հավասար-անհավասար (հավասար են բարձրությամբ),
  - լայնության. լայն - նեղ, հավասար-անհավասար (հավասար են լայնությամբ)
  - հաստություն. հասատ - բարակ, հավասար-անհավասար (հավասար են հաստությամբ),
  - չափի. մեծ - փոքր, հավասար-անհավասար (հավասար են մեծությամբ):
- Առարկաները դասավորել ըստ մեծության որևէ հատկանիշի աճման և նվազման կարգով:
- Առդրման և վերդրման օգնությամբ չափումներ անել:
- Առարկաները դասակարգել ըստ 1,2 հատկանիշի:

2. Ձև

- Ճանաչել երկրաչափական պատկերները, նրանց բնորոշ հատկանիշները (շրջան, քառակուսի, եռանկյուն, ուղղանկյուն):
- Ճանաչել երկրաչափական մարմինները, նրանց բնորոշ հատկանիշները (խորանարդ, գունդ):
- Ծալման և կիսման ճանապարհով նոր պատկերներ ստանալ՝ յուրացնելով ամբողջ և մաս հարաբերութունները:
- Շրջապատում տեսնել երկրաչափական պատկերների նման

առարկաներ:

- Խմբավորել երկրաչափական պատկերներն ըստ նշված հատկանիշների, գտնել ավելորդը և լրացնել պատկերը:

3. Տարածական և ժամանակային կողմնորոշում

- Տարբերակել տարածական ուղղությունները՝ աջ, ձախ, դուրս, ներս, տակ, վրա, վերև, ներքև, առաջ, հետ, հեռու, մոտիկ:
- Շարժվել նշված ուղղությամբ:
- Կողմորոշվել թղթի և նկարների վրա:
- Տարբերել օրերը (այսօր, վաղը, երեկ), օրվա մասերը (առավոտ, կեսօր, երեկո), շաբաթվա օրերի, ամիսների հաջորդականությունը:

<u>Թվային հասկացություններ</u>

- Կատարել ուղիղ և հետընթաց համրանք 10-ի սահմանում:
- Պատասխանել քանի՞, որքա՞ն, ինչքա՞ն հարցերին:
- Տարբերել 1-10 սահամանում յուրաքանչյուր թվին նախորդ և հաջորդ թվերը:
- Հասկանալ թվի անկախությունն առարկաների ձևից, գույնից, տեսակից: մեծությունից, գրաված դիրքից, տարածությունից և հաշվելու ուղղություններից:
- Ճանաչել 1-10 տպագիր և ձեռագիր թվանշանները:
- Տարբերակել թվի կազմության տեսակները:
- Լուծել տարբեր բնույթի պարզ, թվաբանական, տրամաբանական խնդիրներ:
- Հասկանալ և պատկերել օրինաչափությունները, գտնել և շարունակել այն:

Տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորմանն ու զարգացմանն ուղղված աշխատանքների կազմակերպման հիմնական ձևը պարապմունքն է, բայց գործընթացը շարունակվում է նաև աշխատանքային կենտրոններում, ազատ ժամանցի, զբոսանքի, խաղերի, ինքնուրույն գործունեության ժամանակ:

Ուսուցման կազմակերպման ձևերից առանձնացվում են նաև մաթեմատիկական բնույթի դիդակտիկ խաղերը, խաղ-մրցույթները, խաղ-առաջադրանքները:

Տարրական մաթեմատիկական պատկերացումների ուղղությամբ տարվող աշխատանքների թեմատիկ բաշխումը ըստ եռամսյակների

Կրտսեր երկրորդ խումբ (3-4 տարեկան)

1- ին եռամսյակ (սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր)

- Ծանոթացնել հատկացված տարածքին:
- Սովորեցնել մեծահասակի ցուցադրումից հետո շրջապատում, խմբասենյակում, զբոսանքի ժամանակ գտնել առարկան:
- Զարգացնել երեխայի՝ առարկայի հետ գործողություններ կատարելու հմտությունները. գլորել, բացել-փակել, դնել-հանել, դասավորել:

2-րդ եռամսյակ (դեկտեմբեր, հունվար, փետրվար)

Սովորեցնել՝

- առարկայի քանակը բնութագրող «մեկ», «շատ» բառերի իմաստը,
- միատեսակ և միագույն առարկաներից մեկական ավելացնելու ճանապարհով ստեղծել խմբեր՝ սկզբից ընդօրինակելով, ապա բառային ցուցումով,
- ըստ գույնի առարկաների խմբեր կազմել,
- հետազոտել, համեմատել, խմբավորել առարկաները,
- ծանոթացնել խորանարդին,
- զարգացնել տարածության մեջ (վերև, ներքև, առջև, հետև) կողմնորոշվելու հմտությունը,
- որոշել առարկաների դիրքը տարածության մեջ՝ օգտագործելով տակ, վրա, վերև, ներքև տարածական հասկացությունները, բառերը:

3-րդ եռամսյակ (մարտ, ապրիլ, մայիս)

- Սովորեցնել համեմատել նմանատիպ առարկաները ըստ մեծության (մեծ –փոքր),
- ծանոթացնել գնդին, համեմատել գունդն ու խորանարդը (գունդը գլորվում է, խորանարդը՝ ոչ),
- զարգացնել շրջապատող միջավայրում, գրքերում, նկարներում «մեկ», «շատ» առարկաներ տեսնելու և առանձնացնելու կարողությունը,
- զարգացնել առարկան ըստ բանավոր խոսքի՝ տարածության մեջ որոնելու և գտնելու հմտությունը:

Միջին խումբ (4-5 տարեկան)

1- ին եռամսյակ (սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր)

Սովորեցնել՝

- համեմատել՝ գույներով տարբեր առարկաների 2 խմբեր՝ վերադրմամբ, առդրմամբ,
- նշել քանակական հարաբերությունների արդյունքը՝ «շատ են», «քիչ են», «հավասար են» արտահայտություններով, հասկանալ «որքա՞ն է» հարցի իմաստը,
- տարբերել բարձր-ցածր առարկաները, առանձնացնել միմյանցից տարբեր և հավասար բարձրության զույգ առարկաներ,
- համեմատել հավասար և տարբեր երկարության 2 առարկաներ՝ «երկար», «կարճ», «երկարությամբ հավասար»,
- տարբերել, անվանել և օգտագործել երկրաչափական պատկերները՝ շրջան, քառակուսի, եռանկյունի,
- երկրաչափական պատկերները խմբավորել ըստ տարբեր հատկանիշների՝ գլորվող, չգլորվող...
- անվանել սեփական մարմնի մասերը (աջ և ձախ ձեռքեր, ոտքեր), որոշել տարածական ուղղությունը՝ ձախ, աջ, ըստ հրահանգի տեղաշարժվել նշված ուղղությամբ,
- տարբերել օրվա տարբեր հատվածները՝ ցերեկ-գիշեր, առավոտ-երեկո,
- մեկ, երկու թվի ստացումը և երկու թվանշանը, ուղիղ և հետընթաց հաշվել 2-ի սահմանում,
- թիվն անվանել հերթականությամբ, վերջին թիվը վերագրել առարկաների անվանը:
- հասկանալ թվի անկախությունը մեծությունից, գույնից, ձևից, գրված դիրքից,
- վերականգնել քանակական հավասարությունը՝ ավելացնելով 1 առարկա՝ արդյունքում նշել«շատ են», «քիչ են», «հավասար են»:

2-րդ եռամսյակ (դեկտեմբեր, հունվար, փետրվար)

Սովորեցնել՝

- գտնել ըստ նշված թվանշանի առարկաների խմբեր,
- համեմատել առարկաները ըստ բարձրության, երկարության և չափսի, արդյունքը նշել «երկար», «կարճ», «ավելի երկար», «ավելի կարճ»,

«բարձր», «ցածր», «ավելի բարձր», «ավելի ցածր», բառակապակցություններով,

- աչքաչափով որոշել առարկաների չափերը,
- անվանել և շոշափելով ցույց տալ քառակուսու և ուղղանկյան բնորոշ հատկանիշները `«4 կողմ, 4 գագաթ»,
- ըստ հրահանգի որոշել տարածական ուղղությունները. աջ, ձախ, վերև, ներքև, տակ, վրա:
- կողմնորոշվել և ինչ-որ բան գծել, նկարել թղթի տարբեր կողմերում. վերև, աջ, ձախ, մեջտեղում….
- կիրառել երեկ-այսօր-վաղը հասկացությունները,
- ստանալ 3 և 4 թվերը և ճանաչել 3, 4 թվանշանները, ստանակ մեկական միավորներից 4 թվի կազմությունը, ուղիղ և հետընթաց հաշվել՝ 4-ի սահմանում, համեմատել 3 և 4 թվերը, անվանել 4 թվի նախորդող և հաջորդող թվերը, հարևան թվերը:
- առարկաները խմբավորել ըստ ձևի, գույնի, մեծության՝ 3-ի սահմանում, արդյունքում նշել 3-ական արտահայտությունը:

<u>3-րդ եռամսյակ (մարտ, ապրիլ, մայիս)</u>

Սովորեցնել՝

- 5 թվի ստացում, 5 թվանշանը, համապատասխան քանակի առանձնացումը 5 թվից, ուղիղ, հետընթաց հաշվել 5-ի սահմանում, հասկանալ 5 թվի կազմությունը ` առանձին տարրերից,
- համեմատել լայնությամբ 2-3 առարկա, արդյունքը նշել «լայն», «նեղ», «ավելի լայն», «ավելի նեղ» բառակապակցությունների միջոցով:
  - կիրառել «երեկ», «այսօր» , «վաղը» հասկացությունները,
  - գուշակել հանելուկներ և տրամաբանական խնդիրներ:

<u>Ավագ խումբ (5-6 տարեկան)</u>

<u>1- ին եռամսյակ (սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր)</u>

Սովորեցնել՝

- որոշել առարկայի մեծությունը (երկարություն, լայնություն, բարձրություն) համեմատել առարկաները ըստ մեծության (մեծ-փոքր, լայն-նեղ, հաստ-բարակ, բարձր-ցածր),
- կազմել բազմություններ և անվանել՝ շատ և մեկ, շատ և քիչ,
- հեղուկ և սորուն մարմինների ծավալը,

- տարբերել և անվանել երկրաչափական պատկերները՝ քառակուսի, շրջան, եռանկյուն, ուղղանկյուն,
- տարբերել և անվանել երկրաչափական մարմինները՝ խորանարդ, կոն, գլան,
- անվանել սեփական դիրքը տարածության մեջ, ինչպես նաև առարկաների տեղը՝ տակ-վրա,
- հասկանալ և կիրառել տարածական հետևյալ հասկացությունները՝ ձախ-աջ, հեռու-մոտ, առաջ-հետ, վերև-ներքև,
- կողմնորոշվել ժամանակի մեջ և անվանել՝ շուտ-ուշ, գիշեր-ցերեկ, առավոտ-կեսօր-երեկո, այսօր, վաղը
- հաշվել մինչև յոթը, տարբերել զրոյից մինչև յոթ թվանշանները, ստանալ վեց, յոթ թվերը և ճանաչել թվանշանները, ուղիղ և հետընթաց հաշվել յոթի սահմանում, համեմատել 6 և 7 թվերը, անվանել 6 և 7 թվերին նախորդող և հաջորդող թվերը, հարևան թվերը:

<u>2-րդ եռամսյակ (դեկտեմբեր, հունվար, փետրվար)</u>

Սովորեցնել՝

- չափել առարկաները, առանձնացնել առարկայի մի մասը, որը հավասար է պայմանական չափին, որոշել քանի անգամ է պայմանական չափը տեղավորվում չափվող առարկայի մեջ, կիառել պայմանական չափի տարբեր միավորներ,
- ճանաչել քառանկյունը և նրա հատկանիշները՝չորս անկյուն, չորս կողմ,
- տարածության մեջ շարժվել առաջարկված ուղղությամբ՝ առաջ, աջ, ձախ, կողմնորոշվել տարածության մեջ ըստ տրված հրահանգի,
- անվանել հաջորդաբար շաբաթվա օրերը, տարվա ամիսները,
- հաշվել մինչև ութը, տարբերել զրոյից մինչև ութ թվանշանները, ստանալ 8 թիվը և ճանաչել թվանշանը, ուղիղ և հետընթաց հաշվել՝ ութի սահմանում, համեմատել 7 և 8 թվերը: Անվանել 8 թվին նախորդող և հաջորդող թվերը, հարևան թվերը:

3-րդ եռամսյակ (մարտ, ապրիլ, մայիս)

Սովորեցնել՝

- շրջապատում ճանաչել և բառերով նշել երկրաչափական պատկերներին նման առարկաները,
- տեսնել պարզ օրինաչափություններ, տեսակավորել, խմբավորել, ընդհանրացնել,
- դասավորել, խմբավորել առարկաները աճող և նվազող կարգով՝ ըստ երակրության, լայնության, հաստության,
- տարածության մեջ կողմնորոշվել քայլքի, վազքի ժամանակ, կարողանալ փոփոխել շարժման ուղղությունը,
- որոշել, թե երեկ շաբաթվա որ օրն էր, թե ինչ օր է այօր, ինչ կլինի վաղը,
- խորացնել ժամանակի պատկերացումները՝ որպե, ժամ, շաբաթ, ամիս, տարի հասկացությունների վերաբերյալ,
- գուշակել հանելուկներ և տրամաբանական խնդիրներ,
- հաշվել մինչև տասը, տարբերել զրոյից մինչև տասը, ստանալ 9 և 10 թվերը և ճանաչել թվանշանները, ուղիղ և հետընթաց հաշվել՝ տասի սահմանում, համեմատել 8, 9, 10 թվերը, անվանել 9 թվին նախորդող և հաջորդող թվերը, հարևան թվերը:

4.5. ԿԵՐՊԱՐՎԵՍՏ (ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ, ԾԵՓ, ԱՊԼԻԿԱՑԻԱ) ԵՎ ԿԱՌՈՒՅՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Գեղագիտական դաստիարակությունը հատուկ կազմակերպված մանկավարժական գործընթաց է՝ ուղղված երեխայի գեղագիտական ընկալումների, կյանքում և արվեստում գեղեցիկի վերաբերյալ պատկերացումների ձևավորմանը:

Ծրագրի նպատակն է՝ ամրապնդել և կատարելագործել երեխաների կերպարվեստային գործունեությունը՝ գծանկարի, գունանկարի, ծեփա-

կերտման, ապլիկացիայի, կառուցողական գործունեության միջոցով:

Կերպարվեստի ծրագրային խնդիրների հաջող լուծումը պայմանավորված է ամենից առաջ այն մթնոլորտով և զարգացնող միջավայրով, որոնք ստեղծում է դաստիարակը՝ հաշվի առնելով իր խմբի երեխաների անհատական, հոգեբանական առանձնահատկությունները, նախասիրություններն ու կարիքները:

Մանկապարտեզում անցկացվում են կերպարվեստի հետևյալ պարապմունքները՝ նկարչություն, ծեփ, ապլիկացիա և կառուցողական աշխատանք:

Նախադպրոցականի համար նկարչությունը նույնքան բնական պահանջմունք է, որքան խաղը: Նկարչությունը ոչ միայն փոքրիկի զգացմունքի արտահայտումն է, այլև միջոց՝ ճանաչելու շրջապատը: Միաժամանակ նկարչությունը կատարում է նաև զարգացնող դեր՝ հարստացնելով և ճշգրտելով երեխաների աշխարհընկալումը:

Երեխան սկսում է նկարել դեռ վաղ մանկությունից: Սկզբում խզբզելով նա մեծ բավականություն է ստանում իր ձեռքի շրջանաձև շարժումներից, ստեղծած պատկերներից և դրանց անուններն է տալիս: Հետո նկատում է այլոց նկարածը, երկուսի միջև զուգահեռներ է անցկացնում, ձգտում իր նկարածը նույնպես ճանաչելի ու հասկանալի դարձնել ուրիշներին, հաղորդել իր զգացմունքները և վերաբերմունքն իրականության նկատմամբ՝ գույնի, գծի և նախշի միջոցով: Դաստիարակի խնդիրն է՝ երեխային սովորեցնել ոչ թե կրկնել ուրիշների պատկերացումները, այլ ունենալ սեփական գունային ընկալում և դրանով արտահայտել միտք կամ տրամադրություն:

Այս տարիքում իրականացվում են նկարչության հետևյալ տեսակները՝ առակայական (բնօրինակից), դեկորատիվ, թեմատիկ և ստեղծագործական (մտահղացմամբ):

Առարկայական (բնօրինակից) նկարչության կարևոր առանձնահատկություններից է առարկայի պատկերումը մոտավոր ճշտությամբ: Այն հիմնվում է նախնական դիտումների վրա: Նպատակն է՝ երեխաների մեջ ձևավորել ճիշտ պատկերացում՝ առարկայի ձևի, կառուցվածքի, չափի, գույնի և այլ հատկանիշների վերաբերյալ: Այսինքն՝ բնօրինակից նկարելը համարվում է դիտողական ուսուցման ձև, որի ժամանակ երեխայի գիտակցության մեջ մտապահվում են առարկայի ձևը, կառուցվածքը և գույնը:

Բնօրինակից նկարչությունը նկարելու ամենաբարդ տեսակն է: Այն հիմնվում է բավարար զարգացած աչքաչափի վրա: Որպես բնօրինակ օգտագործվող նմուշը պետք է տեղադրվի որքան հնարավոր է մոտ երեխա-

ներին և բնօրինակի վերլուծությունն անցկացվի պարապմունքից առաջ: Խիստ կարևոր է, որ երեխաներն աշխատելուց հետո կարողանան համեմատել իրենց աշխատանքը բնօրինակի հետ, գտնեն դրական կողմերն ու թերությունները:

Դեկորատիվ նկարչության միջոցով իրականացվում են մի շարք խնդիրներ.

- երեխաները յուրացնում են դեկորատիվ նախշի պատկերման տարբեր եղանակների պարզագույն տարրեր,
- սովորում են դրանք ճիշտ ձևով տեղադրել թղթի վրա (պահպանել ռիթմը, հաջորդականությունը, գունային ներդաշնակությունը),
- հետաքրքրություն է ձևավորվում կիրառական արվեստի նմուշների նկատմամբ,
- զարգանում է երեխաների ճաշակը:

Անհրաժեշտ է երեխաներին բացատրել, որ նախշը չի սիրում ոչ շատ խտություն, ոչ էլ բաց տարածություն: Հատկապես կարևոր է ռիթմի պահպանումը. ռիթմը նախշի հիմքն է:

Երեխաները սովորում են, որ վրձնահպումներով, կետիկներով, շրջանակներով, ուղիղ և ալիքաձև գծերով կարելի է պատկերել տարբեր նախշեր:

Թեմատիկ նկարչությունը երեխաներին սովորեցնում է նկարել ոչ թե առարկա, այլ սյուժետային թեմա (մի քանի առարկաներ, պատկերներ)՝ վրձնի և ներկի օգնությամբ: Դրա շնորհիվ երեխաները ձեռք են բերում նոր ունակություններ ու հմտություններ՝ կողմնորոշվել թղթի վրա, պատկերել մի քանի կերպար և դուրս չգալ թղթի սահմաններից, միաժամանակ օգտվել տարբեր գույներից և այլն: Բնականաբար, այս տարիքում ընտրված թեմաները պետք է լինեն շատ պարզ և անհրաժեշտության դեպքում ունենան նմուշօինակներ, որոնք, սակայն, նկարելու ընթացքում չպետք է լինեն երեխաների տեսադաշտում: Նկարչության այս տեսակի ժամանակ երեխաներն աստիճանաբար սովորում են, որ մոտ կանգնած տնակն ու ծառերն ավելի մեծ և բարձր են երևում, իսկ հեռվում կանգնածները՝ փոքր:

Սյուժետային նկարչության ժամանակ թեմաները պետք է բխեն երեխաների՝ նախկինում ձեռք բերած գիտելիքներից, տեղեկություններից, ծանոթ հեքիաթներից և մուլտֆիլմերից:

Նույն նպատակը դրվում է նաև ստեղծագործական նկարչության դեպքում, միայն այս պարագայում ավելանում է նաև երեխայի երևակայությունը, ստեղծագործական միտքը:

Նախադպրոցական տարիքում երեխան իր տպավորությունները սի-

րով և հեշտությամբ արտահայտում է ծեփի միջոցով: Նա առարկաները կերպարանավորում է ծեփոնի՝ պլաստիլինի, աղի խմորի, կավի և բնական նյութերի օգնությամբ: Այդ նյութերը մշտապես պետք է հասանելի լինեն երեխային: Բայց այդքանը բավարար չէ. պետք է զարգացնել փոքրիկի երևակայությունը, ստեղծագործական կարողությունները, սովորեցնել և ցույց տալ ծեփելու ձևերը, տեխնիկան, զարգացնել ձևի, մեծության, գույնի, ռիթմի ընկալումները:

3-4 տարեկանները կերպարվեստի պարապմունքներին ծեփում են փոքր կտորներով՝ կիրառելով ծեփելու հետևյալ եղանակները.

- ծեփոնը տրորել և թուլացնել ձեռքերի ափերով, մատներով,
- ձեռքերի շրջանաձև գործողություններով գնդերի պատրաստում,
- ձեռքերի ափերը վերև-ներքև շփելու գործողություններով գլանների, սյուների, կարկանդակների ծեփում,
- փոքրիկ գնդիկները մատների սեղմումով տափակեցնելու գործողություններ,
- հարթ մակերերսին ծեփոնի գլանիկները մատներով սեղմելով տարածելու գործողություններ (օրինակ՝ արևի ճառագայթները),
- մատների սեղմումով ծեփոնի ծայրերը իրար միացնելու գործողություններ (օրինակ՝ օղաբլիթ ստանալիս գլանաձև ծեփոնի երկու ծայրերի միացումը),
- ցուցամատի և բութ մատի սեղմումով ստանալ լրացուցիչ մասնիկներ (օրինակ՝ կտուց, պոչ, ականջ),
- սեղմումով երկու մասեր իրար միացնել (օրինակ՝ ձնեմարդու երկու գունդ- հատվածների միացումը),
- ափերի և մատների սեղմումով ծեփոնը տախտակի վրա տափակեցնել և տարածել (օրինակ՝ մարգագետին կամ խոտ ծեփելը),
- մատների հպումներով հարթացնել ծեփոնը,
- սեղմումով ծեփոնն ինչ-որ ձևի մեջ տեղավորել և լցնել,
- ծեփոնի ամբողջական կտորից քաշելով, ձգելով, սեղմելով, նոր մաս ստանալ (օրինակ՝ ամբողջից գլուխ ստանալը),
- մատների սեղմումով ծեփոնի մակերեսին փոսեր ստանալ (օրինակ՝ ափսե, բաժակ պատրաստելիս):

Պարապմունքի համար բացի ծեփոնից (պլաստիլին, կավ, աղի խմոր) անհրաժեշտ են նաև այլ պարագաներ. փայտիկներ՝ աչքեր, բերան, կետեր և այլն փորելու համար և բնական նյութեր՝ ոսպի, բրնձի, լոբու հատիկներ, տերևներ, ճյուղեր, կաղին, կոն և այլն:

Ծեփոնի հետ մաքուր աշխատելու համար երեխաները պետք է ունենան խոնավ կտորե անձեռոցիկ (լաթ)՝ ձեռքերը մաքրելու, տախտակ՝ վրան աշխատելու, պատվանդան՝ պատրաստի աշխատանքները վրան տեղադրելու համար:

Ապլիկացիայի պարապմունքները նպաստում են երեխայի՝ շրջակա միջավայրի հետ շփման, երևակայության, ինքնուրույնության, կոկիկության, աշխատասիրության, աշխատանքն ավարտին հասցնելու կարողության զարգացմանը: Ցանկալի է ապլիկացիայի պարապմունքներն անցկացնել ծեփի պարապմունքներից հետո, որպեսզի երեխան ապլիկացիայի ժամանակ կատարի այն, ինչը պատրաստել է ծեփի պարապմունքին: Ապլիկացիայի պարապմունքները ներառում են հետևյալ քայլերը.

- խաղային շարժառիթի ստեղծում՝ երեխաների մեջ հետաքրքրություն առաջացնելու և զգացմունքային դրական մթնոլորտ ապահովելու համար (հանելուկ, բանաստեղծություն, երգ, խաղային իրավիճակ, հեքիաթային հերոսի, խաղալիքի, խաղի կամ տոնի համար նախատեսված ինչ-որ մի բան և այլն),
- ապլիկացիայի համար նախատեսված առարկայի դիտում, սոսնձելու քայլերի հերթականության և տեխնիկայի ճշտում, սոսնձելու համար նախատեսված մասերի դասավորում թղթի վրա և սոսնձում,
- սոսնձված պատկերին լրացուցիչ աշխատանքի միջոցով (գունավորել, լրացուցիչ մասնիկներ նկարել կամ սոսնձել) վերջնական տեսք տալ,
- ավարտուն աշխատանքների դիտում (վերջիններիս միայն դրական գնահատական է տրվում, երեխաները պետք է հիանան արդյունքով և սովորեն գնահատել իրենց աշխատանքները):

Կա ապլիկացիայի երեք տեսակ՝ առարկայական, սյուժետային և դեկորատիվ.

Ապլիկացիայի պարապմունքների համար անհրաժեշտ են գունավոր թղթեր, նկարչական ալբոմի թուղթ կամ գունավոր ստվարաթուղթ, սոսինձ, վրձին, կտորե անձեռոցիկ (լաթ), գունավոր մատիտներ, ջրաներկ, չորացած տերևներ:

Շինարարական նյութերով կառուցողական աշխատանքները լիովին համապատասխանում են երեխաների հետաքրքրություններին, ունակություններին ու հնարավորություններին, քանի որ համարվում են բացառապես մանկական գործունեություն: Դրա շնորհիվ երեխաները կարողանում են ծավալել մտավոր և գեղագիտական-ստեղծագործական գործու-

նեություն: Եթե երեխաները լավ են կարողանում կառուցել, ուրեմն լավ են զարգացած նրանց մանր մկանային շարժումները (մանր մոտորիկա), ինչի արդյունքում լավ է զարգանում նաև նրանց խոսքը, քանզի ձեռքի մատների մանր (նուրբ) շարժումների կարողությունն անմիջականորեն կապված է գլխուղեղի խոսքի կենտրոնի հետ: Նման երեխաները հետագայում շատ լավ են տիրապետում նաև գրելու տեխնիկային:

Դաստիարակը մեծ ուշադրություն պետք է դարձնի երեխաների կառուցողական աշխատանքներին ոչ միայն պարապմունքների, այլև խաղային գործունեության ընթացքում: Հարկավոր է՝

- Երեխաներին մասնակից դարձնել իրենց շինությունների պարզագույն վերլուծությանը: Կատարելագործել կառուցողական հմտությունները, սովորեցնել տարբերել, անվանել և օգտագործել հիմնական շինարարական դետալները (խորանարդներ, աղյուսներ, թիթեղներ, գլան, եռանիստ, բուրգ), կառուցել նոր շինություններ՝ օգտվելով նախկինում ձեռք բերած հմտություններից, շինության մեջ օգտագործել տարբեր գույնի դետալներ: Հաջող աշխատանքի դեպքում խրախուսել դրսևորելու ուրախությունը, ձևավորել գեղագիտական ճաշակ և ստեղծել արտահայտվելու հնարավորություն:
- Բացատրել և ցուցադրել շինարարական նյութերով պարզ կառույցների կառուցման տեխնիկան: Սովորեցնել տեղադրել այդ նյութերը հորիզոնական և ուղղահայաց, խիտ, միմյանց կողքի և որոշակի տարածությամբ՝ կառուցել պարզ կառուցումներ՝ ըստ դաստիարակի ցուցումների, և դրանք կիրառել խաղերում: Նպաստել տարածական հասկացությունների (մեծ-փոքր, երկար-կարճ, բարձր-ցածր, առաջ-հետ, աջ-ձախ, վերև-ներքև) ընկալմանը, հասկանալ և ճիշտ կիրառել դրանք:
- Դաստիարակել հետաքրքրություն կառուցողական նյութերի և գործունեության նկատմամբ, սկսած կառուցումն ավարտելու ձգտում և համբերատարություն: Շարունակել սովորեցնել կառույցը հավաքել (քանդել) և մասերը դնել համապատասխան տեղում:

Կառուցողական պարպմունքները շատ լավ ինտեգրվում են մաթեմատիկայի պարապմունքների, ինչպես նաև համապատասխան դիդակտիկ խաղերի հետ:

Կրտսեր 2-րդ խումբ (3-4 տարեկան)

Կրտսեր նախադպրոցական տարիքում նկարչությունը կարելի է դիտել որպես ինքնատիպ խաղ: Դա է պատճառը, որ սովորեցնելով երեխային նկարել՝ չպետք է նրան զրկել ինքնուրույնությունից, այլ նպաստել ազատ ու ստեղծագործ աշխարհընկալմանը:

3-4 տարեկան երեխաների կերպարվեստի պարապմունքների նպատակն է՝

- Հետաքրքրություն հարուցել նկարչության, ծեփի, ապլիկացիայի, կառուցողական աշխատանքների նկատմամբ:
- Ձևավորել՝ առարկայի ձևը, գույնը տեսնելու, զգալու և վերարտադրելու կարողություն:
- Երեխաների մեջ զարգացնել գեղեցիկի ընկալումներ, գեղագիտական զգացմունքներ, պատկերացումներ:

Կերպարվեստի պարապմունքների խնդիրը

Նկարչություն

- ճիշտ բռնել մատիտը և տանել հորիզոնական, ուղղահայաց, ալիքաձև, թեք գծեր,
- մատիտի օգնությամբ մեկ գծով կամ կետ-գծերով նկարել կծիկ, շղթաներ, քառակուսի, խոտ, ցողուն և այլն՝ առանց մատիտը թղթից պոկելու,
- կարողանալ ճիշտ բռնել վրձինը,
- վրձնով տանել հորիզոնական, ուղղահայաց, ալիքաձև, թեք գծեր, անել վրձնահպումներ,
- ճիշտ օգտվել գույներից,
- տարբերակել երեք հիմնական գույները՝ կարմիր, դեղին, կապույտ (միաժամանակ սկսել աշխատել նաև այլ գույներով):

Ծեփ

- սիրով աշխատել ծեփանյութով,
- հետաքրքրություն դրսևորել պլաստիլինի, աղի խմորի և կավի հետ աշխատելիս,
- կիրառել ծեփելու տարբեր եղանակներ՝ ծեփանյութի տրորում, բացում, հարթեցում, սեղմում,
- կարողանալ ստանալ ցանկալի մեծություն,

- սեղմումով միացնել առարկայի ծայրերը, մասերը,
- ափերի սեղմումով կլոր ձևեր ստանալ,
- կարողանալ զարդարել, գունավորել իր պատրաստած առարկաները,
- կարողանալ ծեփոնից փոքրիկ մասնիկներ պատրաստել և ամրացնել առարկայի մակերեսին,
- կոկիկ օգտվել ծեփանյութից. ծեփել տախտակին, չկեղտոտել շորերը, հատակը, մաքրել ձեռքերը,
- ուրախանալ անհատական և ընդհանուր աշխատանքի արդյունքից:

Ապլիկացիա

- ընտրել սոսնձվող առարկային համապատասխանող գույնը,
- գտնել սոսնձելու հերթականությունը (սկզբում տրված բոլոր մասերը դասավորել թղթի վրա և ստանալ առարկայի ամբողջական պատկերը, հետո հերթով սոսնձել դրանք թղթին),
- սոսնձել պարզ առարկաներ՝ տերև, երկրաչափական պատկեր, միրգ և այլն,
- սոսնձել 2-3 մասերից բաղկացած պատկերներ՝ լուսամփոփ, տնակ և այլն,
- գունավոր մատիտներով զարդարել սոսնձված պատկերը,
- առաջադրանքը հասցնել ավարտին,
- ուրախանալ արդյունքով և սիրով իր աշխատանքը ներկայացնել մյուսներին:

Կառուցողական աշխատանք

- կատարել պարզ գործողություններ՝ փոքր, մանր առարկաներով,
- հավաքել 3-4 խոշոր մասերից բաղկացած պատկեր,
- տեսակավորել առարկաներն ըստ ձևի,
- դասավորել առարկաներն ըստ մեծության,
- կարողանալ ճանաչել, անվանել և օգտագործել շինարարական նյութերը,
- դասավորել շինանյութը տարբեր դիրքերով (ուղղայահաց, հորիզոնական),
- ձևափոխել կառույցը երկու ծանոթ եղանակով,

- խորանարդիկները դասավորել միմյանց վրա, տարածության սահմանները փակելով, պատրաստել ոչ բարդ ծածկեր (տանիք):

Տարիքային այս խմբում կազմակերպվում են հիմնականում խաղ-պարապմունքներ:

Կերպարվեստային պարապմունքների թեմատիկ բաշխումն ըստ եռամսյակների և առաջարկվող աշխատանքները

1-ին եռամսյակ (սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր)

Նկարչություն

- **Ծանոթացում թղթին և մատիտին**
- **թեմատիկ նկարչություն՝** «Անձրև է գալիս»
- **առարկայական նկարչություն՝** «Ամրացնենք փուչիկներին գույնզգույն թելիկներ»
- **թեմատիկ նկարչություն՝** «Ծաղիկները՝ մարգագետնում»
- **առարկայական նկարչություն՝** «Գունավոր թելի կծիկներ»
- **թեմատիկ նկարչություն՝** «Աշնանային գորգ»
- **ստեղծագործական նկարչություն՝** «Մտահղացմամբ»
- **դեկորատիվ նկարչություն՝** «Տիկնիկի զգեստի նախշազարդում»
- **առարկայական նկարչություն՝** «Կարմիր և դեղին խնձորներ»
- **թեմատիկ նկարչություն՝ «**Գնդիկ բոքոնիկ»
- **թեմատիկ նկարչություն՝** «Աստղալից երկինք»
- **թեմատիկ նկարչություն՝** «Արեգակը երկնքում»

Ծեփ

- **Ծանոթացում կավին, պլաստիլինին, աղի խմորին**
- «Ձողիկներ»

- «Ցանկապատ՝ տնակի համար»
- **ինտեգրված պարապմունք (թատերականացված խաղ + ծեփ)՝** «Գունավոր օղակներ ծաղրածուի համար»
- **ինտեգրված պարապմունք (դիդակտիկ խաղ + ծեփ)՝** «Աշտարակ»
- «Թխվածքաբլիթ»
- «Սունկ»
- «Մտահղացմամբ»
- «Գնդիկ բոքոնիկ»
- **ինտեգրված պարապմունք (խաղ բեմականացում + ծեփ)՝** «Հեքիաթին հյուր՝ Հովհ. Թումանյան, «Ծիտը»
- «Մեծ և փոքր գնդակներ»
- «Խնձորներ»

Ապլիկացիա

- **Ինտեգրված պարապմունք (խոսքի զարգացում + ապլիկացիա)՝** «Պապն ու շաղգամը»
- **դեկորատիվ ապլիկացիա՝** «Զոլակի վրա փակցնել երկրաչափական պարզ ձևեր՝ քառակուսի և շրջան»
- **թեմատիկ ապլիկացիա՝** «Տերևաթափ»
- **առարկայական ապլիկացիա՝** «Սունկ՝ աշնանային տերևներով»
- «Մեծ և փոքր գնդակներ»
- «Մեծ և փոքր խնձորները ափսեի մեջ»

Կառուցողական աշխատանք

- **Ազատ խաղեր և կառուցումներ՝** խոշոր կառուցողական նյութերով
- «Ցանկապատ»
- «Աշտարակ»
- «Ճանապարհ՝ Գնդիկ բոքոնիկի համար»
- «Կահույք՝ տիկնիկի համար»
- **ինտեգրված պարապմունք (խոսքի զարգացում + կառուցողական աշխատանք)՝** «Բազմոցներ՝ արջուկների համար»

<u>2-րդ եռամսյակ (դեկտեմբեր, հունվար, փետրվար)</u>

Նկարչություն

- **դեկորատիվ նկարչություն՝** «Թաթմանի նախշազարդում»

- **առարկայական նկարչություն՝** «Իմ ուրախ, հնչուն գնդակ»
- **թեմատիկ նկարչություն՝** «Զարդարենք եղևնին»
- **ինտեգրված պարապմունք (սեղանային թատրոն + նկարչություն)՝** «Ամանորյա հեքիաթ»
- **ստեղծագործական աշխատանք՝** «Աշխատենք մտահղացմամբ»
- **թեմատիկ աշխատանք՝** «Զբոսանքի ժամանակ պատրաստել ենք ձնեմարդ»
- **թեմատիկ աշխատանք՝ «**Արևը փայլում է ձմեռային երկնքում»
- **թեմատիկ աշխատանք՝** «Ճնճղուկները և փիսիկը»
- **թեմատիկ աշխատանք՝** «Ինքնաթիռները սավառնում են»
- **թեմատիկ աշխատանք՝** «Ծառերը ձմռանը»
- **ստեղծագործական աշխատանք՝** «Մտահղացմամբ»:

Ծեփ

- «Մեծ և փոքր ձնագնդիներ»
- «Ձնեմարդ»
- «Ամանորյա եղևնի»
- «Նոր տարվա կոնֆետներ»
- «Տիկնիկները զբոսնում են ձմեռային բացատում»
- «Ծեփիր քո սիրելի խաղալիքը»
- «Ինքնաթիռները կանգնած են օդանավակայանում»
- «Մտահղացմամբ»
- «Մեծ և փոքրթռչունները կուտ են ուտում»
- «Տիկնիկ»

Ապլիկացիա

- «Ձնեմարդ»
- «Ամանորյա եղևնի»
- «Ձյան փաթիլներ»
- «Նախշեր՝ շրջանի վրա»
- «Տնակ»
- «Գեղեցիկ անձեռոցիկ»

Կառուցողական աշխատանք

- **Բնական նյութերով՝** «Նավակ»

- «Մտահղացմամբ»
- «Դարպասներ»
- «Կահույք՝ տիկնիկի համար»
- «Ավտոտնակ»

<u>3-րդ եռամսյակ (մարտ, ապրիլ, մայիս)</u>

Նկարչություն

- **Առարկայական նկարչություն՝** «Դրոշակներ»
- **առարկայական նկարչություն՝** «Նկարիր որևէ ուղղանկյունաձև առարկա»
- **առարկայական նկարչություն՝** «Փոքրիկ գրքույկներ»
- **թեմատիկ նկարչություն՝** «Գունավոր թաշկինակները չորանում են»
- **թեմատիկ նկարչություն՝** «Ծնիկի բույն»
- **դեկորատիվ նկարչություն՝** «Գեղեցիկ գորգ»
- **թեմատիկ նկարչություն՝** «Ուրախ գնացք»
- **ստեղծագործական նկարչություն՝** «Մտահղացմամբ»
- **թեմատիկ նկարչություն՝** «Տոնական տպավորություններ»
- **թեմատիկ նկարչություն՝** «Խատուտիկը խոտերի մեջ»
- «Վանդակավոր զգեստ՝ տիկնիկի համար»

Ծեփ

- «Կոստան-նստան»,«Հյուրասիրություն»
- «Նապաստակ»
- «Պնակներ՝ երեք արջուկների համար»
- «Ճուտիկները զբոսնում են»
- «Հյուրասիրություն՝ տիկնիկի համար»
- «Բադիկ»
- «Ծեփիր ինչ կենդանի ուզում ես»
- «Մտահղացմամբ»
- «Արև»

Ապլիկացիա

- «Դրոշակներ»
- «Թռչնի բույն»

- «Ծաղիկներ մայրիկի և տատիկի համար»
- «Շուտով տոն է»
- «Ճուտիկները մարգագետնում»

Կառուցողական աշխատանք

- «Ախոռ՝ ձիերի համար»
- «Տնակ»
- «Ավազե շինություններ»
- «Պարսպապատ տնակ»
- «Գնացք»

<u>Միջին խումբ (4-5 տարեկան)</u>

Կերպարվեստի պարապմունքների բովանդակությունը միջին խմբում կրտսեր 2-րդ խմբի համեմատությամբ փոքր-ինչ բարդանում է: Այն է՝ գծերի տեսակների, գույնի, ձևի, ռիթմի միջոցով թղթի վրա ավելի լիարժեք պատկերներ ստանալ, նպաստել ձեռքի վարժ շարժումների զարգացմանը: Ձևավորել ու ամրապնդել պատկերացումներն առարկայի ձևի (շրջան, ձվածիր, քառակուսի, եռանկյուն, ուղղանկյուն) մեծության, դիրքի, կառուցվածքի վերաբերյալ:

4-5 տարեկան երեխաների կերպարվեստի պարապմունքների նպատակն է՝

- Շարունակել զարգացնել երեխաների հետաքրքրությունը կերպարվեստային գործունեության տեսակների նկատմամբ, տարբեր արտահայտամիջոցներով միևնույն ձևը կամ կերպարը վերարտադրելու ունակությունները:
- Երեխաների ուշադրությունը հրավիրել տարբեր առարկաներին բնորոշ հատկությունների՝ դրանց ձևերի, ուրվագծի, առանձին մասերի, գույների, նախշերի և գեղարվեստական արտահայտչականության վրա:

Կերպարվեստի պարապմունքների խնդիրը

Նկարչություն

- Շարունակել ծանոթացնել մատիտի հնարավորություններին (սովորեցնել ճիշտ բռնել մատիտը և տանել հորիզոնական, ուղղահայաց, ալիքաձև, թեք գծեր),

- մատիտով կատարել վարժություններ՝գծելով ուղիղ, զիգզագ, կոր, աղեղիկներ, կետեր,
- մատիտի օգնությամբ մեկ գծով կամ կետագծով նկարել կծիկ, շղթաներ, քառակուսի, խոտ, ցողուն և այլն՝ առանց մատիտը թղթից պոկելու,
- կարողանալ ճիշտ բռնել վրձինը,
- վրձնով տանել հորիզոնական, ուղղահայաց, ալիքաձև, թեք գծեր, անել վրձնահպումներ,
- թղթի վրա կատարել ազատ և վստահ վրձնահարվածներ,
- աշխատանքի վերջում վրձինը լվանալ, չորացնել և սրբել չոր լաթով,
- ճիշտ օգտվել գույներից,
- տարբերակել երեք հիմնական գույները՝ կարմիր, դեղին, կապույտ (միաժամանակ սկսել աշխատել նաև այլ գույներով),
- հավասարաչափ ներկել պահանջվող մակերեսը, ստանալ երանգավորված գունային մակերես:

Ծեփ

- Սիրով աշխատել ծեփանյութով,
- հետաքրքրություն դրսևորել պլաստիլինի, աղի խմորի և կավի հետ աշխատելիս,
- ծանոթ լինել պլաստիլինի և կավի հատկություններին,
- կիրառել ծեփելու տարբեր եղանակներ՝ ծեփանյութի տրորում, բացում, հարթեցում, սեղմում, ձեռքերի ափերով շրջանաձև և ուղիղ շարժումներով գլանաձև և գնդաձև առարկաների պատրաստում,
- կարողանալ ստանալ ցանկալի մեծություն,
- սեղմումով միացնել առարկայի ծայրերը, մասերը,
- ափերի սեղմումով կլոր ձևեր ստանալ,
- կարողանալ զարդարել, գունավորել իր պատրաստած առարկաները,
- աշխատելիս համատեղել ծեփոնը և բնական նյութերը՝ ցանկալի արդյունք ստանալու համար,
- կարողանալ ծեփել 2-3 մասից բաղկացած առարկաներ,
- կարողանալ ծեփոնից փոքրիկ մասնիկներ պատրաստել և ամրացնել առարկայի մակերեսին,
- կոկիկ օգտվել ծեփանյութից. ծեփել տախտակին, չկեղտոտել շո-

ները, հատակը, մաքրել ձեռքերը,

- ուրախանալ անհատական և ընդհանուր աշխատանքի արդյունքից:

Ապլիկացիա

- Ընտրել սոսնձվող առարկային համապատասխանող գույնը,
- գտնել սոսնձելու հերթականությունը (սկզբում տրված բոլոր մասերը դասավորել թղթի վրա և ստանալ առարկայի ամբողջական պատկերը, հետո հերթով սոսնձել դրանք թղթին),
- կոկիկ, առանց լղոզելու սոսնձել (սկզբում պատկերը շրջված դնել թղթի վրա, վրձինը սոսնձոտել և սոսինձը բարակ շերտով պատկերի կենտրոնից տարածել դեպի ծայրերը, հետո պատկերի ծայրից զգույշ բռնելով շրջել այն և դնել՝ փակցնելու համար նախատեսված մասում, վերջում սեղմել, որ ամրանա),
- սոսնձել պարզ առարկաներ՝ տերև, երկրաչափական պատկեր, միրգ և այլն,
- սոսնձել 2-3 մասերից բաղկացած պատկերներ՝ լուսամփոփ, տնակ և այլն,
- պատրաստի երկրաչափական պատկերներից ստեղծել զարդանախշեր,
- գունավոր մատիտներով զարդարել սոսնձված պատկերը,
- առաջադրանքը հասցնել ավարտին,
- ուրախանալ արդյունքով և սիրով իր աշխատանքը ներկայացնել մյուսներին,
- իմանալ սոնձելու և սոսնձից օգտվելու ձևերը:

Կառուցողական աշխատանք

- Ցուցաբերել ձեռքերի և մատների շարժումների կառավարման հմտություններ (կատարել պարզ գործողություններ՝ փոքր, մանր առարկաներով),
- տարբերել և անվանել կառուցողական հիմնական նյութերը (խորանարդ, աղյուսիկ, սալիկ…),
- հավաքել 3-4 խոշոր մասերից բաղկացած պատկեր,
- տեսակավորել առարկաներն ըստ ձևի,
- դասավորել առարկաներն ըստ մեծության,

- գնահատել չափերը,
- ճանաչել, անվանել և օգտագործել շինարարական նյութերը,
- դասավորել շինանյութը տարբեր դիրքերով (ուղղայահաց, հորիզոնական),
- ձևափոխել կառույցը երկու ծանոթ եղանակով,
- խորանարդիկները դասավորել միմյանց վրա, տարածության սահմանները փակելով, պատրաստել ոչ բարդ ծածկեր (տանիք),
- 3-4 խորանարդիկներից պատրաստել կամրջակ, պատ, դարպաս…:

Կերպարվեստային պարապմունքների թեմատիկ բաշխումն ըստ եռամսյակների և առաջարկվող աշխատանքները

1-ին եռամսյակ (սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր)

Նկարչություն

- **հիշողությամբ նկարչություն՝** «Ամառ»
- **թեմատիկ նկարչություն՝** «Խնձորենու վրա հասել են խնձորները»
- **թեմատիկ նկարչություն՝** «Գեղեցիկ ծաղիկներ»
- **թեմատիկ նկարչություն՝ «**Խնձորը՝ տերևով և որդով»
- **թեմատիկ նկարչություն՝** «Ոսկե աշուն»
- **թեմատիկ նկարչություն՝** «Տերևաթափ»
- **առարկայական նկարչություն՝** «Իմ ուրախ գնդակ»
- **բնօրինակից նկարչություն՝** «Ճաղկաման՝ ծաղիկներով»
- **ստեղծագործական նկարչություն՝** «Մտահղացմամբ»
- **դեկորատիվ նկարչություն՝** «Զարդարիր տիկնիկի գոգնոցը»
- **թեմատիկ նկարչություն՝** «Ձկները ակվարիումում»
- **նկարչություն ոչ ավանդական մեթոդներով՝** բամբակե փայտիկներով՝ «Կարկուտ»
- **դեկորատիվ նկարչություն՝** «Զարդարենք տիկնիկի զգեստը»

Ծեփ

- «Մրգեր և հատապտուղներ»
- «Խնձորներ»
- «Սունկերը կոճղի վրա»
- «Իմ սիրելի խաղալիքը»
- «Իմ ուրախ գնդակ»
- «Հատապտուղները ափսեի մեջ»

- «Ձկնիկ»
- **Ինտեգրված պարապմունք (ծեփ+դիդակտիկ խաղ)** «Մրգեր և բանջարեղեն»
- «Նվեր-խաղալիք՝ ընկերոջ համար»
- «Մտահղացմամբ»
- «Հյուրասիրություն՝ խաղալիքների համար»

Ապլիկացիա

- «Գունավոր դրոշակներ»
- **թեմատիկ ապլիկացիա (խմբային աշխատանք)՝** «Տերևաթափ»
- «Սունկ՝ աշնանային տերևներով»
- **ապլիկացիա նկարչության տարրերով՝** «Անձրև»
- «Մեծ տուն»
- «Մտահղացմամբ»

Կառուցողական աշխատանք

- **ազատ կառուցումներ՝** բնական նյութերով
- **ազատ խաղեր և կառուցումներ՝** խոշոր և մանր կառուցողական նյութերով
- **կառուցողական աշխատանք՝** թղթի ծալումներով (օրիգամի)՝ «Ձուկ»
- **ինտեգրված պարապմունք (կառուցողական+դիդակտիկ խաղ)** «Կահույք՝ տիկնիկի համար»
- «Տնակներ՝ մեր բարեկամ կենդանիների համար»

<u>2-րդ եռամսյակ (դեկտեմբեր, հունվար, փետրվար)</u>

Նկարչություն

- **թեմատիկ նկարչություն՝** «Բուքումրրիկ»
- **բնօրինակից նկարչություն՝** «Ձյունանուշ»
- **թեմատիկ նկարչություն՝** «Եղևնին անտառում»
- **բնօրինակից նկարչություն՝** «Տոնածառ կամ զարդարված եղևնի»
- **ոչ ավանդական նկարչություն՝** «Գալարուն ժապավեններ»
- **դեկորատիվ նկարչություն՝** «Շնորհավորական բացիկներ»
- **հիշողությամբ նկարչություն՝** «Տոնական տպավորություններ»
- «Զբոսանքի ժամանակ պատրաստել ենք ձնեմարդ»
- **առարկայական նկարչություն՝** «Պարող աղջիկ»

- **բնօրինակից նկարչություն՝** «Հայկական դրոշ»
- **ստեղծագործական նկարչություն՝** «Գեղեցիկ թռչնակ»

Ծեփ

- «Ձմեռային հագուստով աղջիկ»
- «Խաղալիք-կենդանիներ»
- «Տոնածառի խաղալիքներ»
- «Մտահղացմամբ»
- «Ձնեմարդ»
- «Երգչախումբ»
- **Ինտեգրված պարապմունք (ծեփ + սեղանային թատրոն)** «Մկնիկ»
- «Թռչուն»
- **Հարթաքանդակ՝** «Եռագույն դրոշ»
- «Թռչունները կերակրամանից հատիկներ են կտցահարում»

Ապլիկացիա

- **ապլիկացիա՝ նկարչության տարրերով՝ «**Ձյունիկներ կամ ձյան փաթիլներ»
- «Ուլունքներ՝ եղևնու համար»
- «Ձնեմարդ»
- «Ավտոբուս»
- «Թռչող ինքնաթիռներ»

Կառուցողական աշխատանք

- «Մտահղացմամբ»
- «Տոնածառի խաղալիք-կոնֆետներ»
- օրիգամի՝ «Շնիկ»
- **ազատ խաղեր և կառուցումներ՝** խոշոր կառուցողական նյութերով
- «Տարբեր չափի ավտոտնակներ»

<u>3-րդ եռամսյակ (մարտ, ապրիլ, մայիս)</u>

Նկարչություն

- **ստեղծագործական նկարչություն՝** «Մտահղացմամբ՝ ծանոթ հեքիաթների թեմաներով»
- **թեմատիկ նկարչություն՝** «Ճաղիկները ծաղկել են»
- **դեկորատիվ նկարչություն՝** «Ճաղիկներ՝ մայրիկի համար», (շնորհավորական բացիկներ)

- **առարկայական նկարչություն՝** «Նապաստակ»
- **ստեղծագործական նկարչություն՝** «Հեքիաթային տնակ»
- **թեմատիկ նկարչություն՝** «Արեգակը փայլում է երկնքում»
- **առարկայական նկարչություն՝ «**Ոզնի»
- **ստեղծագործական նկարչություն՝** «Մտահղացմամբ»
- **թեմատիկ նկարչություն՝** «Տունը, որտեղ դու ապրում ես»
- «Բաժակի նախշազարդում»
- **թեմատիկ նկարչություն՝** «Իմ սիրելի խաղալիքը»
- **թեմատիկ նկարչություն՝** «Գարուն»
- **թեմատիկ նկարչություն՝** «Բողբոջներ և տերևներ»
- **թեմատիկ նկարչություն՝** «Մեր մանկապարտեզը»
- **թեմատիկ նկարչություն՝** «Իմ ընտանիքը»
- **հիշողությամբ նկարչություն՝** «Բնանկար»

Ծեփ

- «Սառցալեզվակներ»
- «Մտահղացմամբ»
- «Թրթուր»
- «Ոզնի»
- «Բաժակի նախշազարդում»
- «Սպասք տիկնիկի համար»
- «Թռչուններնու ձագուկները»
- «Ծեփի՛ր ինչ ուզում ես»
- «Շաղգամ»
- «Ճուտիկնու խատուտիկը»
- «Ուրախ Կոստան-նստան»
- **ծեփ՝ կառուցողական տարրերով՝** «Կամրջակ»
- «Թռչունները բնում»

Ապլիկացիա

- «Ծաղիկներ»
- **ապլիկացիա՝ թղթի պատռման եղանակով՝** «Սպիտակ-դեղին խատուտիկներ»
- «Արեգակ»
- «Հանելուկներ»

- **Ինտեգրված պարապմունք (խոսքի զարգացում + ապլիկացիա)** «Պապն ու շաղգամը»
- **ապլիկացիա՝ նկարչության տարրերով՝** «Գետակ և նավակ»
- «Կարմիր գլխարկ»

Կառուցողական աշխատանք

- **կառուցողական աշխատանք (օրիգամի)՝** «Ճուտիկը մարգագետնում»
- «Ցանկապատ՝ նապաստակի համար»
- «Տարբեր չափի ավտոտնակներ»
- **օրիգամի՝** «Ծաղիկ»
- «Մտահղացմամբ»
- **թղթի ծալումներով՝** «Թիթեռ»

<u>Ավագ խումբ (5-6 տարեկան)</u>

5-6 տարեկան երեխաների կերպարվեստի պարապմունքների նպատակն է՝

- Երեխաների կերպարվեստային գործունեության զարգացումը նրանց տարիքային առանձնահատկություններին համապատասխանող և գեղարվեստական մեծ արժեք ներկայացնող նյութերի հիման վրա:
- Երեխաների գեղագիտական ընկալման, գեղագիտական ճաշակի, իրականության երևույթների և առարկաների նկատմամբ հուզական-զգայական վերաբերմունքի զարգացումն ու կատարելագործումը:
- Երեխաների մեջ կերպարվեստի նկատմամբ սիրո և հետաքրքրության ձևավորումը:

Կերպարվեստի պարապմունքների խնդիրը

Նկարչություն

- Շարունակել ծանոթացնել մատիտի, վրձնի հնարավորություններին (վրձնով տանել հորիզոնական, ուղղահայաց, ալիքաձև, թեք գծեր, անել վրձնահպումներ),
- ներկը վերցնել անհրաժեշտ չափով, ավելորդ մասը սեղմել պնակի եզրին,
- թղթի վրա կատարել ազատ և վստահ վրձնահարվածներ,
- աշխատանքի վերջում վրձինը լվանալ, չորացնել և սրբել չոր լաթով,

- ճիշտ օգտվել գույներից,
- սովորեցնել տարբերել հակադիր գույները,
- բացի հիմնական գույներից (կարմիր, դեղին, կապույտ) սկսել աշխատել նաև այլ գույներով,
- հավասարաչափ ներկել պահանջվող մակերեսը, ստանալ երանգավորված գունային մակերես,
- նկարելիս կարողանալ ընդունել աշխատանքային ճիշտ դիրք, աշխատել ինքնուրույն և որոշակի տեմպով:

Ծեփ

- Ծեփել ծանոթ առարկաներ և խաղալիքներ,
- կարողանալ օգտվել կերտաձողից,
- շարունակել կիրառել ծեփելու տարբեր եղանակներ՝ ծեփանյութի տրորում, բացում, հարթեցում, սեղմում, ձեռքերի ափերով շրջանաձև և ուղիղ շարժումներով գլանաձև և գնդաձև առարկաների պատրաստում,
- սեղմումով միացնել առարկայի ծայրերը, մասերը,
- ափերի սեղմումով կլոր ձևերից ստանալ տափակ առարկաներ,
- մատների սեղմումով խորություններ կամ արտահայտված մասնիկներ ստանալ,
- ծեփոնի ամբողջական կտորից քաշելով, ձգելով, սեղմելով նոր մաս ստանալ (օրինակ՝ ամբողջից գլուխ ստանալը),
- ծեփել 4-5 մասից բաղկացած առարկաներ,
- ստեղծել տարբեր առարկաներ և միավորել դրանք ընդհանուր կոմպոզիցիայի մեջ՝ օգտվելով արդեն ծանոթ ծեփակերտման եղանակներից և հնարներից,
- կոկիկ օգտվել ծեփանյութից. ծեփել տախտակին, չկեղտոտել շորերը, հատակը, մաքրել ձեռքերը,
- ուրախանալ անհատական և ընդհանուր աշխատանքի արդյունքից:

Ապլիկացիա

- Ընտրել սոսնձվող առարկային համապատասխանող գույնը,
- գտնել սոսնձելու հերթականությունը (սկզբում տրված բոլոր մասերը դասավորել թղթի վրա և ստանալ առարկայի ամբողջական պատկերը, հետո հերթով սոսնձել դրանք թղթին),

- կոկիկ, առանց լղոզելու սոսնձել (սկզբում պատկերը շրջված դնել թղթի վրա, վրձինը սոսնձոտել և սոսինձը բարակ շերտով պատկերի կենտրոնից տարածել դեպի ծայրերը, հետո պատկերի ծայրից զգույշ բռնելով շրջել այն և դնել՝ փակցնելու համար նախատեսված մասում, վերջում սեղմել, որ ամրանա),
- սոսնձել 4-5 մասերից բաղկացած պատկերներ,
- ստեղծել հետաքրքիր կոմպոզիցիաներ
- պատրաստի երկրաչափական պատկերներից ստեղծել զարդանախշեր,
- մկրատը ճիշտ բռնելով՝ թուղթը կտրել ուղիղ գծով և անկյունագծով (քառակուսի, ուղղանկյուն), առաջադրանքը հասցնել ավարտին,
- տարբեր արտահայտչամիջոցներով ընդգծել պատկերի բնորոշ հատկանիշները,
- սոսնձված պատկերին վերջնական տեսք տալ լրացուցիչ աշխատանքի միջոցով (գունավորել, լրացուցիչ մասնիկներ նկարել կամ սոսնձել):

Կառուցողական աշխատանք

- Ցուցաբերել ձեռքերի և մատների շարժումների կառավարման հմտություններ (փոքր, մանր առարկաներով կատարել պարզ գործողություններ՝)
- փոփոխության ենթարկել կառույցը՝ դաստիարակի հրահանգին համապատասխան,
- կառուցել միջին բարդության շինություններ,
- վերլուծել շինությունը, կառույցը,
- տեսակավորել առարկաներն ըստ ձևի,
- դասավորել առարկաներն ըստ մեծության և չափերի,
- անվանել և օգտագործել շինարարական նյութերը, կառույցները,
- դասավորել շինանյութը տարբեր դիրքերով (ուղղայահաց, հորիզոնական),
- ձևափոխել կառույցը և դրա շուրջ ստեղծել խաղային իրավիճակ,
- տարբերել շինության մասերն ըստ չափի (մեծ-փոքր, երկար-կարճ, բարձր-ցածր, նեղ-լայն):
- խորանարդիկները դասավորել միմյանց վրա, տարածության սահմանները փակելով՝ պատրաստել ոչ բարդ ծածկեր (տանիք):
- 4-5 խորանարդիկներից պատրաստել տարբեր կառույցներ:

Աշխատանք թղթով: Սովորեցնել թուղթը ծալելու միջոցով պատրաստել տարբեր ծանոթ առարկաներ: Օրինակ՝ էջանիշ, տուփ (կափարիչով, առանց կափարիչի), հովհար, զամբյուղ, նավակ, ծաղիկ, աղաման, գորգ, նետ, գլխարկ, գիրք և այլն: Սովորեցնել պատրաստված խաղալիքները նախշազարդել իրենց ցանկությամբ:

Կերպարվեստային պարապմունքների թեմատիկ բաշխումն ըստ եռամսյակների և առաջարկվող աշխատանքները

1-ին եռամսյակ (սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր)

Նկարչություն

- **հիշողությամբ նկարչություն՝** «Նկար՝ ամռան մասին»
- **աշխատանքներ ջրաներկով՝** «Մտահղացմամբ»
- **բնօրինակից նկարչություն՝ «**Քրիզանթեմ»
- **դեկորատիվ նկարչություն՝** «Զարդարիր թաշկինակը երիցուկներով»
- **ստեղծագործական նկարչություն** «Ոսկյա խնձորներով խնձորենին՝ կախարդական այգում»
- **առարկայական նկարչություն՝** «Չեբուրաշկա»
- **ստեղծագործական նկարչություն՝** «Ի՞նչ ես սիրում բոլորից շատ նկարել»
- **թեմատիկ նկարչություն՝** «Աշնանային անտառ»
- **թեմատիկ նկարչություն՝** «Անձրև է գալիս»
- **ստեղծագործական նկարչություն՝** «Ուրախ խաղալիքներ»
- **թեմատիկ նկարչություն՝** «Աշնանային ծառ»
- **դեկորատիվ նկարչություն՝** «Զարդարիր տիկնիկի զգեստը»
- **հիշողությամբ նկարչություն՝** «Ինչպե՞ս էինք խաղում բակում»
- **թեմատիկ նկարչություն՝** «Ուշ աշուն» թեմատիկ նկարչություն՝ «Ավտոբուսը զարդարի՛ր գեղեցիկ դրոշակներով»
- **հիշողությամբ նկարչություն՝** «Մեր փողոցի տները»
- **ստեղծագործական նկարչություն՝** «Հեքիաթային տնակներ»
- **թեմատիկ նկարչություն՝** «Մերկացած ծառեր»
- **հիշողությամբ նկարչություն՝** «Փողոցում շատ մեքենաներ կան»
- **ստեղծագործական նկարչություն՝** «Իմ սիրելի հեքիաթը»
- «Մտահղացմամբ»

Ծեփ

- «Սունկեր»
- «Ծեփի՛ր քո ցանկացած բանջարեղենն ու միրգը»
- «Հեքիաթային, գեղեցիկ թռչուն»
- «Արջուկ»
- «Այծիկ»
- «Ծեփի՛ր քո սիրելի խաղալիքը»
- **պլաստիլինով և բնական նյութերով՝** «Ոզնի»
- «Իմ սիրելի տիկնիկը»
- «Մտահղացմամբ»
- «Աշնանային մրգեր»
- «Տարբեր չափի գավաթներ»
- **հարթաքանդակ** «Ձկնիկ»
- «Թռչուն»
- «Նվեր ընկերոջս»

Ապլիկացիա

- «Անտառային բացատում սունկեր են աճում»
- «Վարունգն ու լոլիկը ափսեի մեջ»
- «Մրգերն ու հատապտուղները սկուտեղի մեջ»
- «Մեր սիրելի արջուկը»
- «Աշնանային տերևներով՝ ոզնի»
- «Ավտոբուս»
- «Մեր փողոցի տները»
- «Փողոցով երթևեկում են մեքենաները»
- **չորացրած տերևներով՝** «Աշնանային գորգ»

Կառուցողական աշխատանք

- **օրիգամի՝** «Ձկնիկ»
- **բնական նյութերով՝** «Տիկնիկ»
- **բնական նյութերով՝** «Հեքիաթային կերպարներ»
- **օրիգամի՝** «Օդապարուկ»
- **աղյուսիկներով և խորանարդիկներով կառուցումներ** «Երեխաների ցանկությամբ»
- **օրիգամի՝** «Գլխարկ»

2-րդ եռամսյակ (դեկտեմբեր, հունվար, փետրվար)

Նկարչություն

- **թեմատիկ նկարչություն՝** «Ձմեռ»
- **բնօրինակից նկարչություն՝** «Խաղալիք-ձնեմարդ»
- **թեմատիկ նկարչություն՝** «Մեծ և փոքր եղևնիներ»
- **դեկորատիվ նկարչություն՝** «Սփռոցի նախշազարդում»
- **առարկայական նկարչություն՝** «Խաղալիք-թռչուն»
- **ոչ ավանդական նկարչություն՝** «Տոնածառի խաղալիքներ»
- **դեկորատիվ նկարչություն՝** «Շնորհավորական բացիկներ»
- **ստեղծագործական նկարչություն՝** «Մտահղացմամբ»
- **թեմատիկ նկարչություն՝** «Ձյուն է գալիս»
- **հիշողությամբ նկարչություն՝** «Տոնական տպավորություններ»
- **դեկորատիվ նկարչություն՝** «Զարդարի՛ր տիկնիկի գոգնոցը»
- **հիշողությամբ նկարչություն՝** «Զբոսանքի ժամանակ խաղում ենք բակում»
- **թեմատիկ նկարչություն՝** «Ձյունածածկ ծառեր»
- **թեմատիկ նկարչություն՝** «Մեր զարդարված տոնածառը»
- **ստեղծագործական նկարչություն՝** «Հեքիաթային թռչուն»
- **առարկայական նկարչություն՝** «Սափոր»
- **թեմատիկ նկարչություն՝** «Ամանորյա նվերներ»
- **հիշողությամբ նկարչություն՝** «Ձմեռային ծառ»

Ծեփ

- «Ձնեմարդ»
- «Խաղալիք-փիսիկ»
- «Տոնածառի խաղալիքներ»
- «Մտահղացմամբ»
- «Ձմեռային հագուստով աղջիկ»
- «Ձյունանուշ»
- «Մեծ և փոքր արջուկներ»
- «Նապաստակ»
- «Իմ սիրելի խաղալիքը»
- «Շնիկ»

Ապլիկացիա

- «Մեծ և փոքր գավաթներ»
- «Ամանորյա շնորհավորական բացիկ»
- «Ձնեմարդ»
- «Խաղալիքներ՝ տոնածառի համար»
- «Զարդարված եղևնի»
- «Բնական նյութերով եղևնի»

Կառուցողական

- «Տնակներ՝ երեք խոզուկների համար»
- **օրիգամի՝** «Պայուսակ»
- **բնական նյութերով՝** «Եղևնի»
- **օրիգամի՝** «Փիսիկ»
- **ազատ խաղեր և կառուցումներ՝** խոշոր և մանր կառուցողական նյութերով»
- **օրիգամի՝** «Բաժակ»

<u>3-րդ եռամսյակ (մարտ, ապրիլ, մայիս)</u>

Նկարչություն

- **թեմատիկ նկարչություն՝** «Երեխաները մարզվում են»
- **դեկորատիվ նկարչություն՝** «Սփռոցի նախշազարդում՝ մայրիկի համար»
- **թեմատիկ նկարչություն՝** «Ծաղկած ծառեր»
- **նկարչություն՝** ապլիկացիայի տարրերով «Գեղեցիկ ծաղիկներ»
- **դեկորատիվ նկարչություն՝** «Գարնանային գորգ»
- **ստեղծագործական նկարչություն՝** «Հեքիաթի թեմայով»
- **թեմատիկ նկարչություն՝** «Գարնանային արևոտ օր»
- **բնօրինակից նկարչություն՝** «Մրգերը սկուտեղում»
- **ստեղծագործական նկարչություն՝** «Մտահղացմամբ»
- **թեմատիկ նկարչություն՝** «Թռչունները վերադարձել են մեզ մոտ»
- **դեկորատիվ նկարչություն՝** «Գավաթի նախշազարդում»
- **թեմատիկ նկարչություն՝** «Գույնզգույն թիթեռները թռվռում են ծաղկանոցում»
- **հիշողությամբ նկարչություն՝** «Տոնականորեն զարդարված քաղաք»
- **նկարչություն ոչ ավանդական մեթոդներով՝** «Երիցուկներ»

- **թեմատիկ նկարչություն՝ «**Մեր մանկապարտեզը»
- **թեմատիկ նկարչություն՝** «Իմ ընտանիքը»
- **հիշողությամբ նկարչություն՝** «Բնանկար»

Ծեփ

- «Սափոր»
- «Մտահղացմամբ»
- «Մրգեր»
- «Նախշազարդված ափսե»
- «Սկյուռիկը կաղին է ուտում»
- «Թռչունները կուտ են ուտում»
- «Ծեփի՛ր ինչ ուզում ես»
- «Աքաղաղ»
- «Աղջիկը պարում է»
- «Կարմիր գլխարկ»
- **խմբային աշխատանք՝** «Կենդանաբանական այգի»

Ապլիկացիա

- «Ձկնիկները ակվարիումում»
- **ապլիկացիա՝ թղթի պատռման եղանակով՝** «Երեք խոզուկների տնակները»
- «Ծաղիկներ՝ մայրիկի համար»
- «Հեքիաթային թռչուն»
- **ինտեգրված պարապմունք (խոսքի զարգացում + ապլիկացիա)՝** Հովհ. Թումանյան, «Ծիտը»
- «Նավակ»
- «Իմ սիրելի խաղալիքը»

Կառուցողական աշխատանք

- **օրիգամի՝** «Նավակ»
- **բնական նյութերով աշխատանք՝** «Հեքիաթի մոտիվներով»
- «Բարձր և ցածր շենքեր»
- **օրիգամի՝** «Գորտ»
- «Մտահղացմամբ»
- **օրիգամի՝** «Շնիկ»
- **խաղեր և կառուցումներ ավազով:**

4.6. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական հաստատություններում երեխաների ֆիզիկական դաստիարակությունը նպատակաուղղված է նրանց առողջության պահպանմանը և ամրապնդմանը, օրգան-համակարգերի գործունեության բարելավմանը, ֆիզիկական զարգացմանը, ինչպես նաև նրանց շարժողական կարողությունների ու հմտությունների ձևավորմանը: Երեխաները տիրապետում են տարբեր ֆիզիկական վարժությունների և շարժախաղերի, որոնք նպաստում են նրանց առողջության ամրապնդմանը, կեցվածքի ձևավորմանը, օրգանիզմի կոփմանը, ֆիզիկական համաչափ զարգացմանը, շարժողական ընդունակությունների (արագություն, ճկունություն, ճարպկություն, ուժ, դիմացկունություն) մշակմանը և կամային որակների դաստիարակմանը:

Ֆիզիկական դաստիարակության գործընթացում իրականացվում են հետևյալ դաստիարակչական խնդիրները.

- ամենօրյա ֆիզիկական վարժությունների պահանջ,
- հետաքրքրություն ակտիվ շարժողական գործունեության նկատմամբ,
- ինքնուրույնություն, նախաձեռնողականություն, ստեղծագործականություն,
- ինքնակազմակերպում, փոխօգնություն,

- ինքնուրույն շարժուն գործունեության մեջ ֆիզիկական վարժությունների արդյունավետ կիրառման կարողություն,
- կուլտուր-հիգիենիկ կարողությունների ձևավորում, ինքնասպասարկման սովորություն,
- շարժումների արտահայտչության, սահունության ձեռքբերում:

Ֆիզիկական դաստիարակության խնդիրների իրագործման համար օգտագործվում են մի շարք միջոցներ՝

1. հիգիենիկ գործոններ,
2. բնության բնական ուժեր,
3. ֆիզիկական վարժություններ:

Հիգիենիկ գործոնների մեջ են մտնում երեխայի գործունեության ա) ռեժիմը, բ) քունը, գ) սնունդը, դ) կուլտուրհիգիենիկ սովորություններն ու ունակությունները:

Բնության բնական ուժերը համարվում են օդը, արևը, ջուրը, որոնց համալիր ներգործության միջոցով կոփվում է մարդու օրգանիզմը:

Ֆիզիկական վարժությունները դասակարգվում են հետևյալ խմբերով՝

1. Մարմնամարզություն
2. Խաղեր
3. Սպորտ
4. Տուրիզմ

Մանկապարտեզում անցկացվում են հիմնական մարմնամարզությունը և սպորտային մարմնամարզության մեջ մտնող գեղարվեստական մարմնամարզության տարրեր: Հիմնական շարժումներ են համարվում քայլքը, վազքը, նետումը, մագլցումը, սողումը, ցատկումը, հավասարակշռության պահպանումը:

Ֆիզիկական դաստիարակության աշխատանքների կազմակերպման ձևերը

1. Ֆիզկուլտուրայի պարապմունքներ
2. Ֆիզկուլտ-առողջարարական աշխատանքներ օրվա ընթացքում՝

- առավոտյան մարմնամարզություն,
- ֆիզկուլտ-րոպե (դադար), ըստ անհրաժեշտության՝ պարապմունքների ընթացքում 1-3 րոպե,
- բացօթյա ֆիզիկական վարժություններ և շարժախաղեր,
- զբոսանքներ, արշավներ:

3. Ինքնուրույն շարժողական գործունեություն, որը կախված է երեխաների անհատական հնարավորություններից և նրանց պահանջներից: Անցկացվում է դաստիարակի հսկողությամբ:

4. Ակտիվ հանգիստ՝ ֆիզկուլտուրային ժամանցներ, ֆիզկուլտուրայի տոներ, առողջության օր:

<u>Կրտսեր երկրորդ խումբ (3-4տարեկան)</u>

Ֆիզդաստիարակության աշխատանքների նպատակը.

- նպաստել երեխաների առողջության պահպանմանն ու ամրապնդմանը, հոգեֆիզիկական զարգացմանը, օրգանիզմի կոփմանը,
- ձևավորել մարմնի կայուն դիրքը և ճիշտ կեցվածքը պահպանելու հմտություն,
- նպաստել կենսականորեն անհրաժեշտ հիմնական շարժումների (քայլք, վազք, ցատկեր և այլն) զարգացմանը,
- սովորեցնել քայլել և վազել միմյանց չհրելով, ձեռքերի, ոտքերի համաձայնեցված ու ազատ շարժումներով,
- սովորեցնել շարժվել խմբով, շարժման ժամանակ պահպանել որոշակի ուղղություն, ազդանշանով փոխել շարժման ուղղությունը,
- դաստիարակել տարածության մեջ կողմնորոշվելու հմտություններ,
- սովորեցնել սողալ, մագլցել, սողանցել ձգված պարանի տակով,
- սովորեցնել երկու ոտքով ցատկել տեղում և տեղից դեպի առաջ, հեռացատկել, ցատկելիս երկու ոտքով հրվել,
- սովորեցնել գնդակը գլորել, նետել, բռնել, տեղափոխել,
- սովորեցնել սեփական շարժումները համաձայնեցնել մյուս երեխաների շարժումներին:

<u>Միջին խումբ (4-5տարեկան)</u>

Ֆիզդաստիարակության աշխատանքների նպատակը.

- ձևավորել ճիշտ կեցվածք, համաչափ, ներդաշնակ մարմնի կառուցվածք,
- սովորեցնել վարժությունների կատարման ժամանակ ճիշտ շնչել և արտաշնչել՝ առանց շնչարգելումների,
- սովորեցնել քայլել ձեռքերի ազատ և բնական շարժումներով, կեցվածքը պահել ուղիղ, քայլքի ժամանակ ամրապնդել ձեռքերի և ոտքերի համաձայնեցված շարժումները,
- սովորեցնել վազել թեթև, ռիթմիկ՝ հրվելով թաթերով և ոտքերը լրիվ ուղղելով,
- սովորեցնել տեղից ցատկել ճիշտ ելման դրությունից, թափով առաջ մղվել՝զուգակցելով ձեռքերի շարժումները, և փափուկ վայրէջք կատարել,

- սովորեցնել նետումների ժամանակ ընդունել ճիշտ ելման դրություն (դիրք):
- ֆզիկական վարժությունների, հիմնական շարժումների, խաղերի, ընդհանուր զարգացնող վարժությունների յուրացման միջոցով ընդլայնել, հարստացնել երեխաների շարժողական փորձը,
- աստիճանաբար և զգուշորեն խթանել շարժողական ընդունակությունների (արագաշարժություն, ճարպկություն, ուժ, ճկունություն, դիմացկունություն) զարգացումը, կողմնորոշումը ժամանակի և տարածության մեջ, աչքաչափը, հավասարակշռության պահպանումը:

<u>Ավագ խումբ (5-6 տարեկան)</u>

Ֆիզդաստիարակության աշխատանքների նպատակը.

Սովորեցնել՝

- քալել դահլիճի, սենյակի ամբողջ տարածքով, շրջանցել հատակին դրված առարկաները, քայլել միաշար և զույգերով, կազմել շրջան,
- վազել միմյանց հետևից, ցրված, շրջանաձև, տարբեր ուղղություններով,
- կանգնել մեկ ոտքի վրա, կքանստել, քայլել մարզանստարանի, հատակին դրված պարանի վրայով,
- թռչկոտել տեղում, ցատկել մեկ ոտքի վրա, կատարել հեռացատկ և բարձրացատկ, ցատկել ցատկապարանով,
- գնդակը նետել միմյանց՝ շրջանաձև և զույգերով, գնդակը նետել վեր, բռնել զույգ ձեռքով, նետել գնդակը զամբյուղի մեջ,
- մագլցել մարզապատի վրայից, սողանցել պարանի տակից,
- տեղում կանգնած կատարել դարձումներ աջ, ձախ, հետ:

4.7. ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Երաժշտական դաստիարակության նպատակն է երեխաների մեջ Ձևավորել հետաքրքրություն երաժշտության տարբեր ժանրերի նկատմամբ, զարգացնել երաժշտության ընկալումը, ձևավորել կատարողական ունակություններ, նպաստել ռիթմի ընկալմանը և երաժշտության տակ կատարվող ռիթմիկ շարժումների դրսևորմանը պարերում, երաժշտական խաղերում և այլ իմպրովիզացիոն իրավիճակներում: Երաժշտական դաստիարակությունը նպատակ ունի երեխաներին հաղորդակից դարձնել ազգային (հայկական ժողովրդական և ազգագրական) և համամարդկային երաժշտական մշակույթին, ինչպես նաև ծանոթացնել ազգային (դուդուկ, զուռնա, թառ, քամանչա, դհոլ, քանոն և այլն) և դասական (դաշնամուր, ջութակ, թավջութակ, սրինգ և այլն) նվագարաններին:

Մանկապարտեզում երաժշտական դաստիարակության ուղղությամբ պետք է իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. Երաժշտության ունկնդրում: Դաստիարակել հետաքրքրություն և հուզական վերաբերմունք տարբեր ժանրերի երաժշտության նկատմամբ:
2. Երգեցողություն: Զարգացնել երաժշտության ընկալումը, ծանոթ ստեղծագործություններն ըստ նախանվագի կամ մեղեդու հիշելու և տարբերելու կարողությունը, ճիշտ ձայնակազմավորումը, ձայներանգի մաքրությունը: Երեխաները պետք է ձեռք բերեն որոշակի պատկերացում երաժշտական հնչյունի բարձրության, տեմբրի, հնչյունի ուժգնության մասին, երգերում և երաժշտական խաղերում ձգտեն կերպարի արտահայտիչ կատարմանը (վերարտադրմանը): Ձայնածավալը՝ դո$_1$ (ռե$_1$)-սի$_1$ դո$_2$:
3. Երաժշտառիթմիկ շարժում, պարեր, խաղեր: Ձևավորել երեխաների կատարողական ունակությունները, երաժշտության տակ կատարվող ռիթմիկ շարժումների արտահայտչականությունը, պարերում և երաժշտական խաղերում իմպրովիզացիոն շարժումներ կատարելու կարողությունը:

4.8. ՏՈՆԵՐ, ԶՎԱՐՃՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3-6 տարեկան երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքի ծրագրում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում գրավիչ ժամանցը, զանազան մարզական զվարճություններն ու տոնահանդեսները:

Աշխարհի ժողովուրդների նկատմամբ դրական վերաբերմունքի, բազմամշակութային դաստիարակության հիմքերը դրվում են ազգայինի մեջ համամարդկայինը ընդգծելու միջոցով: Երեխայի բարոյագեղագիտական դաստիարակությունը պետք է իրականացվի համընդհանուր, համամարդկային արժեքների հետ շփման միջոցով: Դրանք բացահայտվում են ազգային մշակույթին՝ գրականությանը, արվեստին, ճարտարապետությանը, քանդակագործությանը, ազգային ավանդույթներին, հերոսական պատմությանը, պարերին, երգերին, առածներին, ասացվածքներին երեխայի ծանոթացման ընթացքում: Արվեստի աշխարհն իր բազմազանությամբ և հարստությամբ պետք է կապվի երեխայի կյանքին:

3-6 տարեկան երեխաների բարոյական դաստիարակությունը հիմնականում իրականացվում է առօրյա կյանքում: Երեխայի ամենօրյա զբաղմունքը և նրա գործունեության ձևերը հնարավորություն են տալիս դրսևորել անմիջական վերաբերմունք նրան շրջապատող իրականության նկատմամբ, օգնում են դաստիարակել բարոյականային հատկանիշներ:

Մանկավարժության բազմաթիվ հարցադրումների շարքում առանձնանում է, երեխաների որոշակի տարիքային խմբի համար կազմակերպվող միջոցառումների հարցը: Եթե առաջնորդվենք այն սկզբունքով, որ կրթության մեջ կարևոր խնդիրներից մեկը երեխայի անհատականությունը պահ-

պանելն ու նրա ճաշակը զարգացնելն է, ապա միջոցառումների կազմակերպումը պահանջում է նոր մոտեցումներ.

- Միջոցառման կազմակերպման անհրաժեշտությունը պետք է հասունանա, այլ ոչ թե պարտադրանք ու հոգս դառնա երեխայի համար: Երեխան պետք է սպասի այդ տոնին:
- Միջոցառումը երեխայի համար պետք է լինի անակնկալներով լի, գրավիչ և հետաքրքիր:
- Միջոցառման նպատակը կարող է լինել երեխայի ձեռքբերումների նշումը, նրա տարբեր հմտությունների զարգացումը (ինքնավստահություն, ազատ շփվելու, ներկայանալու և ներկայացնելու, շրջապատը զգալու և գնահատելու կարողություն):
- Տոներին, զվարճանքներին ու ծեսերին պետք է մասնակցեն բոլորը: Երեխան անչափ ոգևորվում է, երբ իր կողքին տեսնում է երգող մեծահասակներին և ընկերներին: Երկարատև վարժանքների և փորձերի կարիք չկա: Կարևոր է, որ երեխաները պարզապես միասին նշեն, հաճույք ստանան, պատմեն միմյանց, թե ինչպես են այդ տոները նշում իրենց ընտանիքներում: Այդպիսով նրանք տնից ուսումնական հաստատություն և ուսումնական հաստատությունից տուն են փոխանցում տոնը/ծեսը: Երեխան դառնում է ոչ միայն տեղեկատվություն սպառող, այլ նաև տեղեկատվության աղբյուր:
- Շատ կարևոր է ապահովել երեխայի մասնակցությունը տոնական սեղանների, խորհրդանիշների, նվերների, բացիկների պատրաստմանը:

Երեխաների համար կազմակերպվող յուրաքանչյուր միջոցառում, տոնահանդես, ազգային, եկեղեցական, ժողովրդական տոներին նվիրված ցերեկույթ, մարզական խաղ ու զվարճություն նպաստում են երեխայի գիտելիքների, հիշողության, երևակայության, ստեղծագործ մտքի զարգացմանը և նրա անձի ձևավորմանը:

5-6 տարեկան երեխայի կյանքում հաճելի իրադարձություն է դպրոց ընդունվելը, որին նվիրվում է հատուկ ցերեկույթ (հանդես): Այդ հանդեսին (ցերեկույթին) երեխաները պատրաստում են իրենց ստեղծագործական աշխատանքների ցուցահանդեսները:

Ստորև ներկայացվող տոները, նշանավոր տարեթվերը, ավանդական միջոցառումները նպատակ ունեն հուշելու մանկավարժներին, թե ինչպես պետք է նախապատրաստվել առաջիկա տոնահանդեսին: Բացի նշված օրերից, յուրաքանչյուր ուսումնական հաստատություն կարող է ունենալ իր ավանդական տոնական օրը, ցուցահանդեսները, թեմատիկ և հաշվետու հանդեսները և այլն: Յուրաքանչյուր միջոցառում պետք է ունենա իր առանձնահատուկ նպատակը, ձևը և գրավչությունը: Ուստի դաստիարակ-

ները միջոցառմանը պետք է նախապատրաստվեն հանգամանորեն՝ հաշվի առնելով տեղական պայմանները, եղած հնարավորությունները:

Տոնացույց

- Երեխաների ծննդյան օրերը
- Հունվարի 28. Հայոց բանակի օր
- Փետրվարի 22. Վարդանանց օր
- Մարտի 8. Մայրիկների տոն, Գարնան տոն
- Տեառնընդառաջ
- Բարեկենդան
- Ծաղկազարդ կամ ծառազարդ (նվիրվում է գարնան զարթոնքին)
- Զատկի տոն
- Համբարձման տոն
- Հունիսի 1. Երեխաների պաշտպանության միջազգային օր
- Հունիսի 15-20. կարելի է անցկացնել միջոցառումներ՝ նվիրված սաներին դպրոց ճանապարհելուն
- Սեպտեմբերի 1. Դպրության և գիտության օր
- Հոկտեմբեր. «Ոսկե աշուն»
- Հոկտեմբեր. Ուսուցչի օր
- Սպորտլանդիա (գարնանային, աշնանային):

Բացի նշված օրերից, ավանդաբար անցկացվող միջոցառումներից են՝ «Ցտեսություն, ձմեռ», «Ողջույն, ամառ», «Բերքի տոն», «Թռչնի օր», որոնք պետք է կազմակերպել տարվա համապատասխան եղանակին: Կազմակերպել կարճատև արշավներ, զբոսանքներ ձմռանը, «Առողջության շաբաթներ», «Վազորդի օր»: Հնարավորության դեպքում կազմակերպել դահուկներով կամ սահնակներով մրցույթ և այլն: Նման միջոցառումները պետք է ուղեկցվեն երաժշտությամբ, համապատասխան կահավորմամբ և զարդարանքով:

Երեխաների կյանքում մեծ իրադարձություն են ինքնագործունեության համերգները, տիկնիկային և ստվերային թատրոնները, կինոֆիլմերի դիտումները՝ համառոտ և մատչելի բացատրություններով:

5 ԵՐԵԽԱՅԱԿԵՆՏՐՈՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Ուսուցման գործընթացը փոխներգործություն է, որի արդյունավետությունը պայմանավորված է մանկավարժական հաղորդակցման ոճով, երեխաների և մանկավարժների փոխհարաբերությունների որակով: Մանկավարժները երեխաների համար պետք է նախապատրաստեն միջավայր, որտեղ նրանք սովորեն ակտիվ հետազոտության միջոցով՝ փոխգործելով մեծահասակների, հասակակիցների և նյութերի հետ: Նյութերի և մարդկանց հետ փոխգործողության արդյունքը սովորելն է: Մանկավարժական սկզբունքները և մանկավարժի աշխատանքի ոճը պայմանավորված են հասարակության կողմից ներկայացվող պահանջներով, կրթական համակարգի ռազմավարությամբ և գերակա խնդիրներով: Ներկայումս՝ հասարակության զարգացման ժողովրդավարական սկզբունքների հաստատման ճանապարհին, անհրաժեշտություն է դարձել ուսուցման նոր մեթոդների ներդրումը: Այն դարձել է ժամանակի պահանջ: Ետ են մղվել մանկավարժական ինքնիշխան (ավտորիտար) և հարմարվողական (լիբերալ) ոճերը, որոնց համապատասխանում էին ուսուցման կարգապահական և հրահանգային մեթոդները: Ժողովրդավարական հասարակությունը, բնականաբար, պիտի նախընտրեր ժողովրդավարական մանկավարժական սկզբունքները և վերանայեր ուսուցման կազմակերպման ավանդական եղանակը:

Ուսումնական գործընթացի ժողովրդավարացմանը համապատասխանում է ուսուցման երեխայակենտրոն, անձնակենտրոն մոդելը: Նշված մոդելի նպատակն է ուսուցման ընթացքում յուրաքանչյուր սովորողի, երեխայի անկրկնելիության և անհատականության բացահայտումը, նրա անձի զարգացման խթանումը:

Երեխայի ակտիվ մասնակցությունը ուսումնառության գործընթացին ապահովելու համար կիրառվում են ուսուցման փոխգործուն մեթոդներ, որոնց միջոցով

- երեխաների հետ հաստատվում է երկխոսություն և համագործակցություն,
- ստեղծվում է փոխըմբռնման մթնոլորտ, որի արդյունքում ուսուցումը կառուցվում է ոչ թե ցուցադրումների և բացատրությունների, այլ ուսումնական գործունեության մեջ բոլոր երեխաների անմիջական ներգրավման միջոցով,
- աշխատանքային պլանը կառուցվում է երեխայի նախասիրությունների և հետաքրքրությունների հիման վրա,
- խրախուսվում է երեխաների ինքնուրույն փորձարարական գործունեությունը,
- ուսուցման ընթացքում շեշտը դրվում է երեխայի ինքնակառավարման կարողության զարգացման վրա (նախկինում ուսուցումը կառավարվում էր մանկավարժի կողմից),
- ուսուցումը կազմակերպվում է համագործակցային մթնոլորտում, որտեղ և՛ երեխան, և՛ դաստիարակը նույն հարթության վրա են և հանդես են գալիս գործունեության սուբյեկտների դերում: Դաստիարակը խորհրդատու է, ուղղորդող, օգնական և ավագ ընկեր:

5.1. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Վերջին տարիներին կատարված գիտական ուսումնասիրություններն ապացուցում են, որ ուսուցումը խաղային մեթոդներով կազմակերպելու դեպքում երեխան ավելի հեշտ է սովորում և լավ է հասկանում:

Յուրաքանչյուր երեխա անկրկնելի է զարգացման իր անհատական տեմպով, սովորելու իր ուրույն ոճով և ընտանեկան մշակույթով: Երեխաների անհատական առանձնահատկությունները պետք է հաշվի առնվեն ինչպես ուսումնական պլաններ կազմելիս, այնպես էլ նրանց հետ հաղորդակցվելիս: Ուսումնառությունը պետք է համապատասխանի երեխայի զարգացման հնարավորություններին և միաժամանակ խթանի նրա հետաքրքրասիրությունն ու մտածողությունը:

Երեխան սովորում է իրերին ձեռք տալով, դրանք գործածելով, փորձարկելով և մարդկանց հետ շփվելով: Նա սովորում է գործողության միջոցով: Երեխաները ֆիզիկական աշխարհի և սոցիալական հարաբերությունների մասին գիտելիքներ են ձեռք բերում առարկաների և մարդկանց հետ խաղային փոխգործունեության միջոցով:

Թվում է, թե սովորեցնել բառը ենթադրում է պատմել կամ տեղեկություններ հաղորդել: Սակայն 5-6 տարեկան երեխաներին սովորեցնելու ճիշտ ձևը բոլորովին էլ դասախոսելը կամ բանավոր հրահանգներ տալը չէ: Դաստիարակը պետք է ավելի շուտ օգնողի և ուղղորդողի դեր ստանձնի: Օրվա աշխատանքները պլանավորելիս դաստիարակները շեշտը պետք է դնեն խթանող, խրախուսող պարապմունքների և նյութերի վրա: Նրանք պետք է ուշադիր հետևեն երեխաներին, որպեսզի պարզեն, թե ինչն է նրանց հասկանալի, ինչը՝ ոչ: Հիմնվելով իրենց դիտարկումների վրա՝ դաստիարակները պետք է առաջարկեն երեխաների մտածողությունը խթանող հավելյալ առաջադրանքներ:

Երեխաներին կարելի է նույն բանն այնքան կրկնել տալ, մինչև նրանք անսխալ կրկնեն, արտասանեն ինֆորմացիայի որոշ հատվածներ, ասենք՝ բանաստեղծությունը, այբուբենը կամ մեկից քսան թվերը: Սակայն նման կրկնություններն ամենևին էլ չեն երաշխավորում, թե նրանք ինֆորմացիան հասկացել ու յուրացրել են: Մեխանիկական կրկնությունների միջոցով ակադեմիական գիտելիքներ ձեռք բերելիս երեխաները, որպես կանոն, հետագայում չեն կարողանում կիրառել դրանք և չեն դրսևորում մտածողության բարձր մակարդակի այնպիսի հմտություններ, ինչպիսիք են վերլուծելը, համեմատելը և պրոբլեմներ լուծելը:

Երեխայի զարգացման կարևորագույն նախապայմանը զարգացման բոլոր ոլորտների՝ ֆիզիկական, սոցիալական, հուզական և իմացական, փոխկապվածությունն է: Մի ոլորտում առաջընթացն ազդում է մյուս ոլորտների առաջընթացի վրա և իր հերթին ենթարկվում դրանց ազդեցությանը: Այս կարևորագույն նախապայմանը խախտվում է, երբ ուսումնական հաստատությունը շեշտը դնում է իմացական զարգացման վրա՝ նվազեցնելով երեխայի զարգացման մյուս ոլորտների նշանակությունը: Որպեսզի երեխաները յուրացնեն որոշակի տեղեկատվություն, անհրաժեշտ է, որ այն կապված լինի երեխայի կյանքի ու միջավայրի հետ և համապատասխանի նրա զարգացման մակարդակին: Երբ ուսումնասիրվող նյութը կապված է լինում երեխայի իրական կյանքի հետ, դա ոչ միայն նպաստում է նյութի և հասկացությունների ամբողջական ընկալմանը, այլ նաև խթանում է երեխայի հետաքրքրասիրությունը: Երբ երեխաները զգում են, որ սովորածն

առնչվում է իրենց կյանքի հետ, ավելի հաճույքով և հետևողականորեն են կատարում առաջադրանքը և պատրաստ են լինում սովորելու ավելին:

5.2. 3-6 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երեխաների հետ աշխատող դաստիարակները պետք է հիշեն հետևյալը.

- Երեխաներն ակտիվ սովորողներ են և ուզում են հասկանալ այն աշխարհը, որտեղ ապրում են:
- Երեխաների ուսումնառությունը տեղի է ունենում առարկաների, երևույթների հետ շփվելու և կոնկրետ գործողություններ կատարելու միջոցով:
- Երեխաներն ամենից լավ սովորում են խաղի միջոցով:
- Իրենց գիտելիքներն ու արժեքները երեխաները կառուցում են հասակակիցների, ծնողների և այլ մեծահասակների հետ փոխհարաբերությունների, ինչպես նաև ֆիզիկական և հասարակական միջավայրի ակտիվ ուսումնասիրության միջոցով:
- Երեխաների մտածողությունը զարգանում է կանխատեսելի փուլերով:
- Վաղ ուսումնառությունը և զարգացման ոլորտները սերտորեն փոխկապված են:
- Ընտանիքները (ծնողները) երեխայի առաջին և կարևոր ուսուցիչներն են:
- Յուրաքանչյուր երեխա եզակի է: Չկա միմյանց նման երկու երեխա:
- Երեխաների սեփական փորձը, վերաբերմունքը, հմտություններն ու սովորելու ոճն ազդում են նրանց ուսումնառության վրա:

5.3. ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԲԱԶՄԱՀԱՄԱԿԱԶՄ ԽՄԲԵՐՈՒՄ

Հետազոտությունները ցույց են տալիս, որ նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման ու կրթության տեսակետից բազմահամակազմ խմբերում ուսումնառությունն ընդհանուր առմամբ կարող է շատ խթանիչ լինել: Տարատարիք երեխաների համատեղ ուսուցումը հարուստ սոցիալական փորձառություն է ապահովում թե՛ կրտսեր, թե՛ ավագ նախադպրոցական տարիքի երեխաների համար: Սակայն, սա չի նշանակում, որ միայն տարբեր տարիքի երեխաներին մեկ խմբում միավորելն ինքնին երաշխիք է, որ բոլոր երեխաների ուսումնառությունն ավելի արդյունավետ կլինի: Տարատարիք փոխազդեցության օգտակարության աստիճանը կախված է նրանից, թե որքան լավ են դաստիարակները կազմակերպում երե-

խաների խմբային գործունեությունը և օժանդակում դրան: Խմբավորելուց առաջ, պետք է մտածել առկա տարիքային միջակայքի, ավագ և կրտսեր երեխաների համամասնության, յուրաքանչյուր աշխատանքին հատկացվող ժամանակի, ուսումնական ծրագրի, մեթոդների ու ռազմավարությունների մասին, որոնց օգնությամբ տարատարիք խմբերի երեխաների համար կարելի է ուսուցման արդյունավետությունը առավելագույնի հասցնել:

Տարատարիք նախադպրոցական խմբերում դաստիարակները պետք է աշխատեն ամբողջ խմբի երեխաների հետ, պարապմունքներն անցկացնեն ծրագրի մեկ բաժնի շրջանակներում և միևնույն թեմայի շուրջ՝ կիրառելով ուսուցման և ուսումնառության ԽԻԿ (խթանում, իմաստի ընկալում, կշռադատում) համակարգը:

Խթանման փուլում երեխաներն ակտիվորեն փորձում են վերհիշել թեմայի մասին իրենց ունեցած ամբողջ ինֆորմացիան և միևնույն ժամանակ սկսել խորհել բուն թեմայի մասին, որը շուտով պետք է մանրամասնորեն ուսումնասիրեն: Այդ պատճառով շատ կարևոր է խթանել, հետաքրքրել, ոգևորել, քաջալերել երեխաներին՝ վերհիշելու իրենց իմացածը: Երեխաներին օգնելով հստակեցնել ունեցած գիտելիքները և պատկերացումները, մենք օգնում ենք նրանց կայուն հիմք պատրաստել նոր ինֆորմացիան ընդունելու և հիմնավորապես յուրացնելու համար:

Խթանման փուլի երկրորդ նպատակը երեխային շահագրգռելն ու ակտիվացնելն է: Սովորելը պետք է ակտիվ գործընթաց լինի: Շատ հաճախ է պատահում, երբ երեխաները պասիվ վիճակում նստում են դասարանում ու լսում են դաստիարակին, որը նրանց փոխարեն անում է ամբողջ մտավոր աշխատանքը, մինչ իրենք առանց հասկանալու, երբեմն կիսաթմբիրի մեջ լուռ նայում են դաստիարակին:

Պարապմունքների խթանման փուլում շատ արդյունավետ է աշխատել բոլոր երեխաների հետ միաժամանակ՝ տարբեր ակտիվացնող միջոցներով (հարցերի, խաղերի, հանելուկների, ցուցադրումների, մտքերի փոխանակության և այլն): Այս դեպքում իմաստալից, հիմնավոր, քննադատաբար ընկալման համար ամենաակտիվ դերը վերապահվում է երեխաներին: Նրանք պարապմունքի ընթացքում սկսում են ակտիվ մտածել, գիտակցել, որ իրենք մտածում են, ընդ որում, դա անում են՝ օգտագործելով սեփական բառապաշարը:

Իմաստի ընկալման փուլում ամենակարևորը ներգրավման աստիճանը, հետքրքրությունը և եռանդը պահպանել կարողանալն է, որ ձեռք է բերվել խթանման ընթացքում: Երկրոդ կարևոր խնդիրը սովորողին օգնելն է վերահսկել սեփական ընկալումը, հատկապես, երբ նոր ինֆորմացիայի է

հանդիպում: Օրինակ, լավ ունկնդիրը պատմվածքը լսելու ընթացքում չընկալելու կամ ոչ լրիվ ընկալելու դեպքում հարցեր է տալիս կամ պարզաբանումներ է ուզում ստանալ: Իսկ պասիվ սովորողները պարզապես անցնում են ընկալման այս ձախողումների վրայով, անգամ չնկատելով իրենց իմացածի և նոր ինֆորմացիայի միջև եղած անհամապատասխանությունները, թերընկալումները: Իմաստի ընկալման փուլում աշխատանքները կարելի է շարունակել ենթախմբերով, որի դեպքում դաստիարակը միևնույն թեմայի շրջանակներում տարբեր բարդության առաջադրանքներ է տալիս՝ հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնատկությունները: Այս փուլում փոքրիկները կարող են աշխատանքներն ավարտել մի փոքր շուտ և անցնել նույն նպատակին ծառայող մեկ այլ աշխատանքի: Դա արվում է՝ հաշվի առնելով տարբեր տարիքի երեխաների ուշադրության կենտրոնացման տևողության, հետևողականության, համատեղ աշխատելու կարողությունների տարբերությունները:

Կշռադատման փուլի առաջին կարևոր նպատակը գիտելիքի հիմնավոր յուրացումն ու խորը ընկալումն է: Գոյություն ունեն մի քանի էապես կարևոր առաջադրանքներ, որ նպատակաուղղված են հատկապես կշռադատման փուլին: Դրանցից կարևորագույնն այն է, որ երեխաները սեփական բառերով արտահայտում են պարապմունքի ընթացքում հանդիպած նոր ինֆորմացիան և նոր հասկացությունները: Սա կարևոր է իմացական նոր կառույցի ձևավորման առումով: Ընկալածը սեփական բառերով ձևակերպելու ջանքերի շնորհիվ է, որ ընկալումը դառնում է խորը իմաստալից:

Կշռադատման փուլի երկրորդ նպատակը երեխաների միջև եռանդուն քննարկում ծավալելն է, որն անկասկած մեծապես նպաստում է երեխաներիի շփմանը և հնարավորություն է ընձեռում հաղորդակցվել միմյանց հետ՝ ստեղծելով այնպիսի մթնոլորտը, որտեղ խրախուսվում է կարծիքների բազմազանությունը, որն էլ իր հերթին նպաստում է քննադատական և ճկուն մտածողության զարգացմանը:

Կշռադատման փուլում դաստիարակը պետք է կազմակերպի տարաբնույթ աշխատանքներ (բեմականացում, կառուցում, հատվածի պատկերում, կարծիքների փոխանակում և քննարկում, դիդակտիկ խաղ և այլն), որոնցով հնարավոր է վեր հանել պարապմունքի ընթացքում երեխաների ձեռք բերած գիտելիքները, հմտությունները, ինչպես նաև նրանց վերաբերմունքը կատարված աշխատանքներին:

Խառը խմբերում ուսուցումը հիմնականում պետք կազմակերպվի համագործակցային մեթոդներով, որոնք տարատարիք խմբում հնարավորություն են տալիս բոլոր երեխաների համար նախատեսել դերեր՝ ելնելով

յուրաքանչյուրի կարողություններից և ուսումնական կարիքներից:

Եթե աշխատանքը տարվում է 3-6 տարեկան երեխաներից բաղկացած խմբերի հետ, ապա դաստիարակը պետք է պլանավորի պարապմունքներ՝ հիմնականում հենվելով 4-5 տարեկան երեխաների ծրագրային պահանջների վրա: Պարապմունքի ընթացքում կատարվող աշխատանքները պլանավորելիս դաստիարակը պետք է նախատեսի աշխատանքներ, որոնք պարզեցման և բարդացման միջոցով կարելի է ծառայեցնել նաև 3-4 և 5-6 տարեկանների ուսումնական պահանջներին:

Պլանավորվող բոլոր աշխատանքների համար պետք է հիմք հանդիսանան 3-6 տարեկան երեխաների զարգացման և կրթական պետական չափորոշչային պահանջները: Պլանավորման ժամանակ պետք է հաշվի առնել ոչ միայն երեխաների տարքային առանձնահատկությունները, այլև յուրաքանչյուր երեխայի անհատական կարիքները: Յուրաքանչյուր երեխա պետք է ստանա տվյալ պահին իր համար օպտիմալ ծավալի աշխատանք: Երեխաների կարողությունները հաշվի առնելով՝ դաստիարակը պետք է նախապես պատրաստի և ունենա տարբեր կարճ, իմաստալից առաջադրանքներ, որոնք կարող են օգտագործվել այն դեպքերում, երբ որոշ երեխաներ մյուսներից շուտ կամ ուշ են ավարտում իրենց աշխատանքը: Երեխաներին անգործության չմատնելու նպատակով շատ կարևոր է երեխայի ավելցուկ ժամանակը լրացնել իրենց ունակությունների զարգացմանն ուղղված հետաքրքիր աշխատանքով կամ օգնել երեխային մյուսներից հետ չմնալ:

Պարապմունքների ընթացքում երեխաների շարժունակության և բարձր աշխատունակության ապահովման համար կարևոր է, որ դաստիարակը նախապես ճիշտ պլանավորի գործունեության առանձին տեսակների և հանգստի հերթագայումը: Տարատարիք խմբերում ուսուցանելիս դաստիարակները պետք է կենտրոնանան ոչ թե ծրագրի ուսուցման, այլ երեխաների ուսուցման վրա:

5.4. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ՏԱՐԱՏԱՐԻՔ ԽՄԲԵՐՈՒՄ

Խմբային աշխատանք

<u>Խմբերում ընդգրկված երեխաների թվի նշանակությունը</u>

Ամենափոքր խմբում պետք է ընդգրկված լինի առնվազն 3 երեխա, քանի որ դրանից պակասի դեպքում աշխատանքը խմբում դառնում է զույգերով կամ անհատական: Լավագույն տարբերակն այն է, երբ խմբում

ընդգրկված է 4 երեխա. այս դեպքում յուրաքանչյուր մասնակից կարող է ունենալ իր ենթաառաջադրանքը, բացի այդ, անհրաժեշտության դեպքում խմբի անդամներին կարելի է հեշտությամբ բաժանել զույգերի: Վեցից ավելի երեխաներից բաղկացած խմբերը դժվար է կառավարել, քանի որ որոշ երեխաներ կարող են չմասնակցել խմբի աշխատանքներին և նույնիսկ խանգարել մյուսներին:

Միատարր և բազմատարր կառուցվածք ունեցող խմբերի ձևավորումը

Երեխաների բազմահամակազմ խմբերի հետ աշխատանքները կարելի է կազմակերպել միատարր և բազմատարր կառուցվածքի ենթախմբերով:

Միատարր կառուցվածքով խմբերի առանձնահատկությունները.

- տվյալ ոլորտում երեխաների ընդունակություններն ու հետաքրքրությունները գրեթե նույնն են,
- երեխաները նույն տարիքի են:

Բազմատարր կառուցվածք ունեցող խմբերի առանձնահատկությունները.

- տվյալ ոլորտում երեխաների ընդունակություններն ու հետաքրքրություններն ակնհայտ տարբեր են,
- երեխաները տարբեր տարիքի են:

Վերջինիս դեպքում կարող է օգտակար լինել դերերի բաշխումը՝ ապահովելու համար խմբի յուրաքանչյուր անդամի մասնակցությունն ու ներգրավումը աշխատանքներում՝ իր ընդունակությունների չափով: Նման խմբային աշխատանքն ապացուցում է այն տեսակետը, որ երեխաները կարող են շատ արդյունավետ կերպով սովորել միմյանցից:

Դերերի բաշխումը խմբում

Արդյունավետ համագործակցության հիմքում ընկած է աշխատանքի անհատականացված բաժանումը և փոխադարձ պատասխանատվությունը: Դրան կարելի է հասնել խմբի առանձին անդամներին որոշակի դեր/առաջադրանք տալով:

Խմբում առաջադրանքներ և պարտականություններ բաշխելը կարող է կրկնակի ազդեցություն ունենալ. մի կողմից այն ամրապնդում է երեխաների շփման հմտությունները, մյուս կողմից՝ ձևավորում և զարգացնում է նաև այլ հմտություններ:

Քանի որ սկզբնական շրջանում երեխաները չեն կարող ինքնուրույն կազմակերպել իրենց աշխատանքը, արդյունավետ կլինի, որ դաստիարակը բաշխի դերերը (ղեկավար, օգնական, նյութեր հայթայթող, զեկուցող): Այսպես մի կողմից կարելի է ժամանակ խնայել, մյուս կողմից՝ յուրաքանչյուր երեխա ստանում է իր ընդունակություններին առավել համապատասխան աշխատանք: Բայց երեխաներին պետք է հնարավորություն տրվի ուժերը փորձել նաև նոր դերերում: Օրինակ, այն երեխան, որը սովորաբար առաջնորդի դեր է ստանձնում, պետք է սովորի հարգել և համագործակցել առաջնորդի դեր ստանձնած այլ երեխաների հետ, իսկ ամաչկոտ երեխաները պետք է փորձեն հրապարակավ արտահայտվել:

<u>Խումբ ձևավորելու եղանակները</u>

Խումբը կարող է ձևավորվել պատահականության սկզբունքով, երեխաների ցանկությամբ կամ էլ դաստիարակի կողմից՝ նպատակային կերպով: Վերջին տարբերակը դաստիարակին հնարավորություն կտա հասնելու իր նպատակներին, քանի որ այս դեպքում խմբում հնարավոր է ապահովել արդյունավետ համագործակցության համար անհրաժեշտ բոլոր պայմանները, ինչպես օրինակ՝

- ընդունակությունների և գիտելիքի հաշվառումը,
- գենդերային հավասարակշռության ապահովումը,
- հատուկ կրթական կարիքներով երեխաների ներգրավումը,
- երեխաների անձնական համակրանքի և նախընտրության հաշվառումը,
- շփումների բազմազանության ապահովումը,
- և այլն:

<u>Խմբային համագործակցային աշխատանքի առավելությունները</u>

Լավ կազմակերպված խմբային աշխատանքը մեծապես ազդում է երեխաների անհատականության և արժեքային համակարգի ձևավորման վրա: Նրանց մոտ զարգանում են հետևյալ կարողությունները.

- միասին մտածելն ու քննարկելը,
- իրարից սովորելը,
- հարմարվելու ունակությունը,
- համագործակցությունը,
- փաստարկներ բերելու/համոզելու ունակությունը,
- մյուսների նկատմամբ հանդուրժողականությունը և հարգանքը,
- խմբի մաս դառնալու փորձը:

5.5. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՏԱՐԱՏԱՐԻՔ ԽՄԲԵՐՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԱՄԱՐ

Ստորև ներկայացված են մի քանի կարևոր խորհուրդ, որոնք տարատարիք խմբերում դասավանդող դաստիարակներին կօգնեն բարձրացնել ուսուցման արդյունավետությունը՝ աշխատանքներում ներգրավելով բոլոր երեխաներին:

5.5.1. Առաջարկեք աշխատանքներ՝ բազմաֆունկցիոնալ (բաց) նյութերի օգտագործմամբ:

Խմբասենյակում ունեցեք շինարարական խորանարդիկներ, մագնիսական սալիկներ, լեգոներ, խաղալու համար նախատեսված խմոր, տարբեր նյութերով լցված տարաներ և այլ նյութեր: Այս նյութերով բոլոր տարիքի երեխաների համար կարելի է առաջադրանքներ մշակել և տարբեր համագործակցային աշխատանքներ կազմակերպել: Բոլոր տարիքներում երեխաները սիրում են աշխատել այդ նյութերով, և երեք տարեկան երեխաները նույնքան շատ բան կարող են սովորել այդ նյութերի միջոցով, որքան որ սովորում են 4-6 տարեկանները:

Օրինակ, թասի մեջ լցված ջրի հետ խաղալիս կրտսեր տարիքի երեխաները կարող են հմտանալ, թե ինչպես ջուրը մի տարայից լցնեն կամ դատարկեն մյուսի մեջ, կհասկանան պատճառահետևանքային կապերը: Մինչդեռ ավելի ավագ տարիքի երեխաները, որոնք արդեն գիտեն և հասկանում են այդ բոլորը, սկսում են փորձեր կատարել՝ կապված քանակի, ծավալի, ծանրության, ձգողականության հետ:

5.5.2. Ցուցադրեք նյութեր, որոնք հետաքրքրում են երեխաներին և կարող են օգնել նրանց զարգացմանը ներկա փուլում և դրանից հետո:

Երբ միջավայրը դասավորում եք՝ ստեղծելով աշխատանքային կենտրոններ, հնարավոր է հեշտությամբ բավարարել երեխաների կարիքները՝ ունենալով տարբեր տարիքի և բարդության աստիճանի նյութեր: Գրաճանաչության կենտրոնում պետք է լինեն այբուբենի տառերի դրսևորումներ (կնիքներ, մագնիսով տառեր, քարտեր և այլն), նշագրիչներ (մարկերներ), գունավոր մոմամատիտներ, սովորական գունավոր մատիտներ, որոնք երեխաներին հնարավորություն են տալիս ուսումնասիրել գրաճանաչության տարբեր կողմերը: Թեև նախադպրոցական տարիքում երեխաների առջև գրելու պահանջ դրված չէ, սակայն նրանք պետք է լիարժեք ծանոթ լինեն նշված նյութերին, իմանան օգտագործման նպատակներն ու ձևերը, փորձարկեն տարբեր աշխատանքների ժամանակ:

Տարբեր թեմաներով դերային խաղերի համար անսահման հնարավո-

րություններ կարող են լինել: Օրինակ, եթե որոշել եք պարապմունք անցկացնել «Սրճարան» թեմայով, կարելի է ունենալ մրգերի, բանջարեղենի և այլ տիպի ուտելիքների խաղալիք տեսականի (մուլյաժներ), նկարներով ճաշացանկ, պատվերների նշման գրքույկ, սննդատեսակների քարտեր և նկարներ, դրամարկղ, կեղծ դրամներ և այլն: Սա կօգնի երեխաներին ոչ միայն համագործացել և զարգացնել սոցիալական և հուզական հմտությունները, այլև աշխատանքներին կավելացնի մաթեմատիկական գրաճանաչության տարրեր: Դրան զուգահեռ կաճի նաև երեխաների ինքնավստահությունը և հետաքրքրասիրությունը զարգացման համապատասխան ոլորտներում:

5.5.3. Խրախուսեք երեխաների միջև փոխադարձ ուսումնառությունը:

Գաղտնիք չէ, որ երեխաները միմյանց հետ շփվում են ոչ այնպես, ինչպես մեծահասակների հետ: Շատ հետաքրքիր է դիտել, թե ինչպես են երեխաներն օգնում և սովորեցնում միմյանց: Դա մեծ մասամբ տեղի է ունենում շատ բնական ձևով, քանի որ նույնիսկ միևնույն տարիքի երեխաները տարբեր կարողություններ և հմտություններ են ունենում:

Մանկավարժական կարևոր խորհուրդերից մեկն էլ հետևյալն է: Երբ երեխան որևէ փոքրիկ օգնության կարիք ունի (օրինակ՝ վերարկու հագնել, փափկացնել պլաստիլինը, կոճկել կոճակը), քաջալերեք, որ նա առաջին հերթին դիմի ընկերոջ օնությանը: Հետո, եթե ընկերը չի կարողանում օգնել, երեխան կարող է դիմել դաստիարակին: Նման մոտեցման դեպքում կարող եք տեսնել, թե երեխաներն ինչպես են օգնում միմյանց վերակուները կոճկելիս կամ շղթաները բարձրացնելիս, իրենց անվան տառերը նկարների տակ գրելիս: Հաճախ կարելի ականատես լինել, թե երեխաներն ինչպես են հանգստացնում միմյանց, եթե ինչ-որ մեկը վայր է ընկել կամ այլ պատճառով ցավեցրել է իրեն: Պարտադիր չէ, որ դաստիարակը վերահսկի այդ ամենը և սովորեցնի այդ հմտությունները: Աշխատանքի համագործակցային մեթոդներն ինքնստինքյան նպաստում են երեխաների ապրումակցման, կարեկցանքի, փոխօգնության հմտությունների խթանմանը, և երեխաները հաճույքով են օգնում միմյանց, սովորում իրարից:

Ժամանակի ընթացքում, ճկունության և համբերատար աշխատանքի, ուշադիր դիտարկումների միջոցով դաստիարակը, այս խորհուրդներից օգտվելով, կարող է հաջողությամբ աշխատանքներ կազմակերպել տարատարիք խմբերում: Դաստիարակի համար լրացուցիչ հաջողություն կլինի այն, որ հաջորդ ուսումնական տարում նա կունենա երեխաների գիտակ մի խումբ, որը նոր եկածներն կծանոթացնի միջավայրին և օրինակ կծառայի նրանց համար:

5.5.4. Ապահովեք բոլոր տարիքի երեխաների մասնակցության հավասարակշռությունը զույգերով կամ խմբային աշխատանքների ժամանակ:

Պարապմունքների ժամանակ կազմակերպվող աշխատանքներն ուսուցման ամենաժամանակատար մասն է խառը տարիքային խմբերում: Բոլոր մանկավարժների համար հայտնի փաստ է, որ 3-6 տարեկան երեխաները կոնկրետ մտածողներ են, և նրանց ուսուցումը հիմնականում պետք է տարվի կոնկրետ գործողությունների, հատկապես խաղի միջոցով: Որքան ավելի փոքր է երեխան, այնքան նրա համար ավելի դժվար է վերացական հասկացություններ ընկալելը: Սա նշանակում է, որ նրանց ուսումնառությունը իմաստալից, հաճելի և գրավիչ դարձնելու համար պետք է պլանավորել և իրականացնել այնպիսի գործնական աշխատանքներ, որոնք բոլոր երեխաներին հնարավորություն կտան շոշափել, կանխագուշակել, փորձարկել, ուսումնասիրել, պրպտել: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն երեխաները, որոնք ակտիվորեն ներգրավված են տարբեր աշխատանքներում, ավելի շատ բան են սովորում: Ուստի պետք է մեծ ուշադրություն հատկացնել երեխաների մասնակցությանը: Պետք է նկատի առնել, որ կարևոր է ոչ միայն աշխատանքների գործնական, գրավիչ և հետաքրքիր լինելը, այլև նրանց բարդության աստիճանը: Դրանք պետք է լինեն ո՛չ շատ բարդ և ո՛չ էլ շատ հեշտ երեխայի համար, որովհետև երկու դեպքում էլ նա կարող է հուսահատվել կամ հիասթափվել, որից քաոսային իրավիճակ կարող է ստեղծվել խմբասենյակում: Երեխաներին պետք է տրվի տարիքին և կարողություններին համապատասխան հանձնարարություն, որպեսզի նրանք չձանձրանան և չշեղվեն իրենց առաջադրանքից:

Շատ կարևոր է, որ տարբեր տարիքի երեխաների համագործակցային աշխատանքների ժամանակ կրտսեր տարիքի երեխաները հանդես գան ոչ միայն սովորողի, իսկ ավագները՝ ուսուցանողի դերում, այլ նրանց համագործակցությունն օգնի երեխաների գործընկերային հարաբերությունների զարգացմանը, փոխգործունեությանը և նպաստի բոլոր երեխաների առաջընթացին զարգացման տարբեր ոլորտներում:

5.6. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Ուսուցման գործընթացն իրականացվում է տարբեր մեթոդների օգնությամբ:

Մեթոդը նպատակին հասնելու միջոց է, ուղի: Այն գործիք է դաստիարակի համար իր կրթադաստիարակչական նպատակներին հասնելու ճանապարհին:

Ներկայումս նախադպրոցական կրթության դիդակտիկայում լայն տա-

ռածում են գտել ուսուցման ժամանակակից մեթոդները՝ խաղային, գործնական, ակտիվ ուսուցման: Վերջիններս հայտնի են որպես ինտերակտիվ կամ փոխգործուն մեթոդներ:

Խաղային մեթոդների առավելությունները պայմանավորված են խաղային մթնոլորտի բարձր հուզականությամբ, երեխայի համար խաղի բնական և հոգեհարազատ բնույթով:

Ուսուցանող են խաղի բոլոր տեսակները, որոնք կատարում են երկու կարևոր գործառույթ.

- նպաստում են գիտելիքների ամրապնդմանն ու խորացմանը,
- խթանում են նոր գիտելիքների արդյունավետ յուրացումը: Հետաքրքիր խաղային մեթոդ է, օրինակ, երևակայական իրադրությունների խաղարկումը, որի ընթացքում երեխան գիտելիքներ և կարողություններ է ձեռք բերում դերային գործողությունների միջոցով:

Ուսուցման գործնական մեթոդների խմբին են դասվում տարատեսակ վարժությունները, փորձերը, հետազոտությունները և մոդելավորումը:

Ակտիվ ուսուցման մեթոդները (փոխգործուն մեթոդները) նպաստում են երեխաների ազատ և ինքնուրույն մտածելու, սեփական կարծիք հայտնելու, պատասխանատու որոշումներ կայացնելու, ընտրություն կատարելու հմտությունների զարգացմանը, ճանաչողական գործընթացում ինքնուրույն կողմնորոշմանը:

Այդ մեթոդները զույգերով, խմբով մտավոր աշխատանքի եղանակներն են՝ ուղղված համատեղ որոնումներին ու մտորումներին, դրանց քննարկմանը, ընդհանուր որոշումների կայացմանն ու իրագործմանը:

Ուսուցման փոխգործուն մեթոդները համապատասխանում են երեխայակենտրոն ուսուցման սկզբունքներին և շատ արդյունավետ են:

Փոխգործուն մեթոդները բացառում են որևէ մեթոդի առաջնայնությունը, գերակայությունը, ինչպես նաև մեկ մեթոդի գերակշռությունը մյուսների նկատմամբ:

Փոխգործուն ուսուցման սկզբունքներն են.

- փոխազդեցությունը, փոխուսուցումը,
- երեխայի ակտիվությունը,
- համագործակցությունը,
- ինքնարտահայտման խրախուսումը,
- հետադարձ կապը:

Փոխգործուն մեթոդների առանձնահատկություններն են.

- երեխայի իմացական գործընթացների կազմակերպումը,
- հետաքրքրությունների բացահայտումը,
- համագործակցային կարողությունների զարգացումը,
- անհատական առանձնահատկությունների բացահայտումը,
- հաղորդակցական ունակությունների ձևավորումը,
- տրամաբանական մտածողության զարգացումը,
- ինքնուրույնության խրախուսումը,
- վերլուծական կարողությունների ձևավորումը:

Փոխգործուն մեթոդների արդյունավետ կիրառման ընդհանուր բանաձևեր չկան: Ցանկացած խումբ, պարապմունք եզակի է և անկրկնելի: Դաստիարակի խնդիրն է ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել կոնկրետ իրավիճակին, իր ունեցած մեթոդական զինանոցից ընտրել համապատասխան մեթոդը՝ ելնելով իրականացվող աշխատանքի նպատակներից:

5.7. ԽԱՂԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Խաղը երեխայի աշխատանքն է, որի ընթացքում նա ձեռք է բերում չափազանց կարևոր հմտություններ: Դաստիարակները պետք է երեխայի օրվա խաղային հատվածը դիտարկեն որպես ուսումնական ծրագրի շատ կարևոր մաս:

Ուսուցանող են խաղի բոլոր տեսակները: Երեխաները շատ բան են սովորում խաղի միջոցով: Խաղի ընթացքում երեխաները ձեռք են բերում հմտություններ, որոնք նրանց համար շատ օգտակար են լինում կյանքի ընթացքում ավելի բարդ հմտություններ յուրացնելիս: Շատ երեխաներ սովորում են, երբ իրենք են ղեկավարում իրենց խաղերը: Խաղի ընթացքում երեխան հաջողության զգացում է ունենում, երբ ներքաշվում է իր իսկ սահմանած առաջադրանքի մեջ, ինչպես օրինակ՝ ընկերոջ հետ միասին ճանապարհ հարթել արգելքների միջով կամ տարբեր ամաններ ջրով լցնել և դատարկել: Նման գործողությունները չպետք է սահմանափակվեն մեծահասակների կողմից՝ ճիշտ կամ սխալ, լավ կամ վատ գնահատականներով: Երեխաները պետք է խաղան իրական առարկաներով և բնական իրավիճակներում, մինչև ի վիճակի կլինեն հասկանալ տառերի, թվերի, այլ խորհրդանիշների նշանակությունը և իմաստը:

Խաղի միջոցով երեխաները սովորում են.

- մարդկանց, կենդանիներին և առարկաներին բնորոշ հատկանիշները,

- զարգացնել իրենց ստեղծագործական կարողությունները,
- զարգացնել պրոբլեմներ լուծելու իրենց հմտությունները,
- սոցիալական հմտություններ (հաղորդակցում, բանակցում, պրոբլեմների լուծում)
- հմտություններ զարգացման բոլոր ոլորտներում (իմացական, լեզվական, սոցիալ-հուզական, ֆիզիկական),
- հաճույք զգալ, ուրախանալ:

Նախադպրոցական տարիքում խաղի միջոցով զարգանում են նաև երեխաների սոցիալական շփման հմտությունները: Գործնական, կառուցողական և երևակայական խաղերը հնարավորություն են տալիս երեխաներին համատեղ խաղալ խաղալիքներով և առարկաներով, սովորել տեքստեր և համագործակցել դերային խաղերում, հերթ պահպանել ու հետևել խաղի կանոններին և այլն: Այս բոլորն ընդլայնում են սոցիալական գիտակցությունը և զարգացնում սոցիալական իմացությունը:

5.8. ԱՇԽԱՏԱՆՔ ԶՈՒՅԳԵՐՈՎ, ԵՆԹԱԽՄԲԵՐՈՎ

Երեխայակենտրոն ուսուցումն ապահովելու և ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով շատ կարևոր է զույգերով և ենթախմբերով համագործակցային աշխատանքների կազմակերպումը: Այն երեխաներին հնարավորություն է տալիս համագործակցել հասակակիցների հետ, իրենց գիտելիքներն ու փորձը փոխանակել, սովորել միմյանցից, ձգտել հասնելու ընդհանուր նպատակին: Երեխաները հասկանում են, որ իրենց հաջողությունը կախված է խմբի բոլոր անդամների ներդրումից: Նման խմբերին բնորոշ են թիմային աշխատանքի ոգին, ընդհանուր նպատակին հասնելու համար առավելագույնն անելու ցանկությունը, փոխկախվածությունն ու փոխկապվածությունը, սոցիալական փոխազդեցության հմտությունները, խմբի աշխատանքի ընթացքը և արդյունքը մշտապես գնահատելու ու վերանայելու կարողությունը:

Փոքր խմբերով ուսուցումն ունի հետևյալ առավելությունները.

- զարգացնում է խնդիրներ լուծելու կարողությունը,
- հաղորդակցման հմտություններ է ձևավորում,
- երեխաները սովորում են միմյանցից,
- զարգանում է երեխայի պատասխանատվության զգացումը,
- խթանում է թիմային աշխատանքը,
- ապահով և նպաստավոր միջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտությունները դրսևորելու համար,

- ընձեռում է ակտիվ մասնակցության և ինքնադրսևորման հնարավորություն:

5.9. ՀԱՐՑԵՐ ՈՒ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

Երեխաների մասնակցությունը և ակտիվ ներգրավումն ապահովելու, նրանց մտածողությունը խթանելու և սովորելու հմտությունները զարգացնելու համար չափազանց կարևոր դեր ունեն առաջադրվող հարցերն ու հարցադրումները: Հարցերը կամ հարցադրումները կարևոր գործոն են երեխաների մտածողությունը խթանելու, տեղեկատվության ընկալումը հիմնավոր դարձնելու, համակարգելու, ստեղծագործական և քննադատական մտածողությունը զարգացնելու համար: Նման արդյունքի հասնելու համար հարցերը պետք է լինեն՝

- հստակ,
- նպատակաուղղված,
- հակիրճ,
- տեղին,
- երեխաների մակարդակին համապատասխան,
- տրամաբանական հաջորդականությամբ,
- մտածելու տեղիք տվող:

Ուսուցման ընթացքում շատ կարևոր է կիրառել երեխայի մտածողությունը խթանող հարցեր, որոնց անվանում ենք բաց հարցեր: Ի տարբերություն փակ հարցերի, որոնք նպատակաուղղված են ստուգելու երեխայի հիշողությունը, մտապահման կարողությունը, կոնկրետ փաստային գիտելիքները կամ սահմանափակելու պատասխանի ընտրության հնարավորությունը, բաց հարցերը երեխային ազատ մտածելու, հարցերը սեփական տեսանկյունից դիտարկելու և իր կարծիքը հայտնելու հնարավորություն են տալիս:

Փակ հարցերը, որպես կանոն, ենթադրում են մեկ ճիշտ պատասխան, ուստի խորհուրդ չի տրվում այս տիպի հարցերը հաճախ օգտագործել քննարկումների, զրույցների ժամանակ, քանի որ դրանք սահմանափակում են երեխայի ինքնարտահայտման հնարավորությունները:

Երեխայի մտածողության ակտիվությունը խթանելու համար առավել արդյունավետ են բաց հարցերը, որոնք միանշանակ պատասխան չեն ենթադրում, այլ խթանում են երեխայի ինքնուրույն մտածողությունը: Օրինակ՝

- Ի՞նչ զգացիք երաժշտությունը լսելիս:

- Ի՞նչ է բերում գարունն իր հետ:
- Ինչպե՞ս կօգնեիր հիվանդ տիկնիկին:
- Ինչպիսի՞ ավարտ կառաջարկեիր այս պատմության համար:
- Ի՞նչ կանեիր հերոսի փոխարեն:
- Ինչպե՞ս կբնութագրեիր գլխավոր կերպարին և այլն:

Խորհուրդներ դաստիարակին.

- Համոզվե՛ք, որ երեխաները հասկացել են հարցը:
- Հարցը ձևակերպե՛ք հակիրճ:
- Հարցը ձևակերպե՛ք հստակ:
- Կշռադատե՛ք հարցի բարդությունը և երեխաներից պատասխաններ ստանալու հնարավորությունը:
- Մի՛տվեք անորոշ հարցեր:
- Մի՛ ուղղորդեք երեխաներին դեպի ձեր նախընտրած պատասխանը:
- Մի՛ պատասխանեք հարցերին ինքներդ:

6 ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Նախադպրոցական կրթության կարևոր նպատակներից է երեխաների մեջ սերմանել և մշակել այնպիսի որակներ ու հատկություններ, ինչպիսիք են՝ քննադատական մտածողությունը, հետաքրքրասիրությունը, անմիջականությունը, զարմանքը, երևակայությունը, աշխատանքից գեղագիտական հաճույք ստանալը: Բոլոր երեխաներն ունեն այս հատկությունները փոքր հասակում, բայց հաճախ կորցնում են դրանք կյանքի առաջին տասնամյակում: Մինչդեռ այս հատկությունները կարևոր դեր են խաղում սովորելու գործընթացում:

Մյուս կողմից՝ աշխարհը միասնական է և երեխան այն ընկալում է որպես ամբողջական միասնություն: Ուստի շրջապատող աշխարհին երեխային ծանոթացումը, հատկապես վաղ տարիքում, չի կարելի մասնատել այսպես կոչված «առարկաների» (մայրենի, մաթեմատիկա, բնագիտություն, երաժշտություն և այլն), դա կարող է աշխարհի մասին մասնատված պատկեր ստեղծել: Այս խնդրի լավագույն լուծումը ինտեգրված ուսուցումն է, երբ իրեն շրջապատող աշխարհի որևէ կոնկրետ երևույթ երեխան ուսումնասիրում է միաժամանակ մի քանի տեսանկյունից (ուսումնասիրում է, հասկանում, հաշվում այն, փորձում ու փորձարկում, նկարում, ծեփում, խոսում և երգում դրա մասին, խաղարկում դրա հետ կապված իրավիճակներ և այլն):

Նշված նպատակին հասնելու արդյունավետ ուղիներից մեկը ուսումնառությունը ինտեգրված թեմատիկ դասերի միջոցով կազմակերպելն է:

Թեմատիկ դասերը որևէ կոնկրետ թեմա, երևույթ ուսումնասիրելու ընթացքում կարևորում են գործունեության այն ձևերը, որոնք պահանջում են ինքնուրույն մտածողություն, նախաձեռնություն, համագործակցություն, հնարամտություն, անձնական կարգապահություն, շրջապատում կատարվող փոփոխությունների ճիշտ ընկալում:

Թեմատիկ ուսուցումն ապահովում է երեխայի զարգացման մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և գեղագիտական ոլորտների համակողմանի զարգացումը և չի սահմանափակվում մեկ առանձին ոլորտով:

Շատ կարևոր է նաև հոգատար, աջակցող միջավայր ստեղծելը, քանի որ միայն այսպիսի միջավայրում են մեծանում բազմակողմանի զարգացած, ուսման մեջ հաջողություններ դրսևորող երեխաները:

Թեմատիկ պարապմունքների ժամանակ դաստիարակը գիտակցաբար այնպես է անում, որ երեխաները զգան մեծահասակների հոգատարությունը, շահագրգռվածությունը երեխաների ուսման հարցում: Երեխաների սովորելու ընթացքում դաստիարակները և ծնողները զրուցում են նրանց հետ՝ ողջ ուշադրությունն ու էներգիան կենտրոնացնելով ուսման բովանդակության վրա: Աստիճանաբար ավելի ծավալուն և անկեղծ դարձող երկխոսությունների միջոցով նրանք զարգացնում են երեխաների մտածողությունը: Այսպիսի մթնոլորտը զարգացնում է երեխաների մտավոր և լեզվական ունակությունները և ինքնավստահություն է ներշնչում նոր ձեռք բերած գիտելիքները կիրառելու համար:

Թեմատիկ ուսուցումից բոլորն էլ շահում են: Ծնողները ներգրավվում են կատարվող տարբեր աշխատանքների մեջ և տեղյակ են, թե ինչ են անում իրենց երեխաները: Մանկավարժներին ոգևորում են պարապմունքների նոր բովանդակությունը և նոր մեթոդներ կիրառելու համար ստեղծված գրավիչ հնարավորությունները: Երեխաներն, իրենց հերթին, դառնում են գիտակ, ինքնատիպ մտածողներ, որոնց թույլ է տրվում նոր ձևերով դրսևորել իրենց գիտելիքները:

Երբ այսպիսի համալիր ուսուցումը մանրակրկիտ պլանավորվում և իրականացվում է, ապա արդյունքում երեխաները դրսևորվում են հետևյալ հատկանիշները.

- հոգատար են միմյանց նկատմամբ,
- հետաքրքիր կապեր են ստեղծում,
- կատարելագործում են շփման և երկխոսության հմտությունները,
- ձևավորվում են որպես համայնքի անդամներ:

6.1 ԻՆՉ Է ԹԵՄԱՏԻԿ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Թեմատիկ ուսուցումը ենթադրում է ուսումնական ծրագրի տարբեր բաժինների միջև կապերի ստեղծում, ինտեգրում՝ մեկ հետաքրքիր նյութ ուսումնասիրելու միջոցով, որի մեջ ամփոփված են բովանդակային միավորներ ծրագրի տարբեր բաժիններից: Ինտեգրված թեմատիկ ուսուցման ծրագիրն այնպես է կազմվում, որ երեխաները տեսնում և հասկանում են առարկայական ոլորտների միջև եղած կապերը և նրանց կապը կյանքի հետ:

Թեմատիկ ուսուցումը հնարավորություն է տալիս մանկավարժին ծրագիրը կազմակերպել երեխաներին հետաքրքրող թեմաների, խնդիրների կամ կենսական հարցերի շուրջ: Թեմատիկ ուսուցումը միջառարկայական է, ինչպիսին ինքը՝ կյանքն է: Այս փաստը երեխաների համար անմիջապես նշանակալի է դառնում, երբ լուծելու համար նրանց է ներկայացվում մի «իսկական» խնդիր կամ ուսումնասիրության ենթակա մի նոր գաղափար:

Ուսումնասիրվող թեմայի կամ ծրագրի մեջ երեխայի հետաքրքրություններին կենտրոնական տեղ հատկացնելով՝ ապահովվում է երեխաների շահագրգռվածությունն ու հետաքրքրասիրությունը թեմայի նկատմամբ: Թեմատիկ դասերի ծրագրման ժամանակ մանկավարժը պետք է հաշվի առնի հետևյալը.

- Արդյո՞ք թեման համապատասխանում է երեխաների հետաքրքրություններին:
- Ընտրված թեման նպաստո՞ւմ է երևակայության ու ստեղծագործական մտածողության խթանմանը:
- Հնարավո՞ր է ընտրած թեման անցնել այնպես, որ ապահովվի բազմամակարդակ մասնակցությունը, և միաժամանակ յուրաքանչյուր երեխայի գործադրած ջանքը պսակվի հաջողությամբ:
- Երեխաները հնարավորություն կունենա՞ն համագործակցելու և որոշակի պատասխանատվություն կրելու:
- Երեխաները հնարավորություն կունենա՞ն ավելացնելու իրենց գիտելիքները և փորձը առարկաների, մարդկանց և իրենց շրջապատում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ:

6.2 ԳՐԱՎՈՐ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Դաստիարակներն իրենց պլանները կազմելիս կարող են օգտագործել տարբեր եղանակներ: Ոմանք նախընտրում են օգտագործել օրացույցներ, որտեղ նշվում են շաբաթվա կամ ամսվա կարևոր աշխատանքներն ու իրադարձությունները: Մյուսներն օգտագործում են աղյուսակներ, որոնց վերին հորիզոնական տողում գրում են աշխատանքային կենտրոնի անվանումը, առաջին ուղղաձիգ տողում՝ ամսաթիվը, իսկ համապատասխան վանդակներում՝ գործունեության տեսակներն ու իրադարձությունները: Որոշ դաստիարակներ անհատական պլան են կազմում՝ հատուկ նպատակներ և նախասիրություններ ունեցող երեխաների զարգացումն ապահովելու համար: Պլանում կարող են լինել նաև միայն նշումներ շաբաթվա ընթացքում իրականացվելիք աշխատանքների, պահանջվող նյութերի և դաստիարակի պարտականությունների վերաբերյալ:

Գրավոր պլաններն օգնում են համակարգել աշխատանքը, նրանցում նշվում են աշխատանքային կենտրոններում կատարվելիք լրացուցիչ փոփոխությունները և գրանցվում իրականացրած բոլոր աշխատանքները: Գրավոր պլաններն օգտակար տեղեկություններ են տալիս նաև մանկավարժական կազմին օգնող այցելուներին:

Օգտագործվող մեկ այլ եղանակ է պլանավորման ցանցաձև գծապատկերումը: Այն մի տեսանելի սխեմա է, որում ներկայացվում է թեմաների և աշխատանքային կենտրոնների միջև եղած կապը: Ծրագրային ցանցում կարելի է ներառել նաև երեխաների գիտելիքներն ու նրանց գաղափարները:

6.3 ԴԱՍՏԻԱՐԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Ստորև թվարկվում են այն հիմնական տարրերը, որոնցով որոշվում է, թե ինչ պետք է իմանա և կարողանա անել նախադպրոցական տարիքի երեխաների հետ աշխատող յուրաքանչյուր դաստիարակ:

1. Երեխաների համար ստեղծում և պահպանում է ապահով, անվտանգ, առողջ և զարգացնող ֆիզիկական ու սոցիալական միջավայր, որտեղ երեխան կարող է բավարարել իր հետաքրքրությունները, պահանջմունքները: Անընդհատ հարստացնում և ավելի բազմազան է դարձնում այդ միջավայրը՝ օգտագործելով նաև գործունեության ընթացքում երեխաների ստեղծած նյութերը: Այդ գործում նրան օգնում են ծնողական համայնքը, մյուս աշխատողները:

2. Կազմում և իրականացնում է երեխաների զարգացումը խթանող ուսումնական պլան, որը ներառում է երեխաների ուսումնառության և զարգացման բոլոր ոլորտները:
3. Նպաստում է երեխայի համակողմանի զարգացմանը՝ նրա հետ հաստատելով համագործակցային հարաբերություններ և կիրառելով զարգացմանը նպաստող մեթոդներ ու մոտեցումներ:
4. Ընտանիքների հետ ստեղծում և պահպանում է դրական ու արդյունավետ հարաբերություններ:
5. Նպաստում է յուրաքանչյուր երեխայի զարգացմանը և ուսումնառությանը՝ հաշվի առնելով նրա ընտանեկան մշակույթը:
6. Դիտարկում, հետազոտում է երեխայի գործունեությունը և համապատասխան եզրահանգումներ անում, պարզում է երեխայի հետաքրքրությունների շրջանակը և դրան համապատասխան կազմակերպում, ուղղորդում է երեխայի գործունեությունը: Հավաքած տեղեկություններն օգտագործում է ուսումնական գործընթացի և ծրագրի պլանավորման ու անհատականացման ընթացքում: Ամեն օր նախապես ճշտում է հաջորդ օրվա խնդիրները, դրանց իրագործման միջոցներն ու մեթոդները:
7. Խրախուսում է երեխային, մղում ավելին անելու՝ նպաստելով նրա առաջընթացին, զարգացմանը, ինքնավստահությանը, հնարավորությունների լիարժեք բացահայտմանը:
8. Երեխայի գործունեության ակտիվ մասնակիցն է. խաղընկերը, օգնականը: Դաստիարակում է ոչ թե խոսքով ու քարոզներով, այլ երեխայի հետ խաղում է, շփվում, օրինակ է ծառայում, ապրում է նրա հետ՝ ստեղծելով ազատ գործելու միջավայր և զարգացման ու ինքնադաստիարակման հնարավորություն:
9. Հարգում է երեխայի ազատությունը, արժանապատվությունը, կարծիքը և ընձեռում է ընտրության տարբեր հնարավորություններ:
10. Իր գործողությունների միջոցով մոդելավորում և երեխաների մեջ զարգացնում է հմտություններ, որոնք նպաստում են երեխայի ինքնուրույնությանը, անկաշկանդ, անվտանգ գործողություններին, դիմացինին լսելու և նրա կարծիքը հարգելու ունակությունների ձևավորմանն ու զարգացմանը:
11. Նպաստում է երեխայի ստեղծագործական երևակայության զարգացմանը:

Դաստիարակին անհրաժեշտ մասնագիտական հմտությունները

Ցուցաբերում է վաղ մանկության զարգացման վերաբերյալ խորը գիտելիքներ և կիրառում է դրանք երեխաների հետ աշխատանքի ընթացքում:

12. Տիրապետում է մանկավարժական առաջադեմ տեխնոլոգիաներին, մեթոդներին:
13. Գրագետ է, ազատ տիրապետում է հայերեն գրավոր և բանավոր խոսքին:
14. Կարողանում է գրավոր և բանավոր հաղորդակցվել օտար լեզվով (օրինակ՝ ռուսերեն, անգլերեն):
15. Կարողանում է աշխատել համակարգչով, օգտվել համացանցից:
16. Կարողանում է հմտորեն օգտվել կենցաղային տեխնիկայից (հեռուստացույց, DVD, ֆոտոխցիկ և այլն):
17. Ճկուն է մտածում, հարգում է իր սաների ազատությունը:
18. Նախաձեռնող է, պրպտող, ստեղծող-ստեղծագործող:
19. Տիրապետում է նախակրթարանում ուսուցանվող ողջ գրական և բանահյուսական նյութին, երգերին:

Մասնագիտական զարգացումը

1. Դրսևորում է վաղ մանկության մանկավարժի մասնագիտության խոր ըմբռնում և շարունակաբար բարելավում է մասնագիտական որակավորումները:
2. Դիմում և մասնակցում է մասնագիտական որակավորման բարձրացման սեմինարներին, դասընթացներին:
3. Զբաղվում է հետազոտական աշխատանքով:
4. Զբաղվում է ինքնակրթությամբ:

7 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Երեխայի կրթադաստիարակչական գործում առաջնային դեր ունի ընտանիքը: Դրական համագործակցությունը երեխայի շուրջ ստեղծում է մի միջավայր, որտեղ ընտանիքները, ուսումնական հաստատությունը և համայնքը համատեղ աշխատում են երեխաների կրթությանն ու դաստիարակությանն ուղղված ընդհանուր նպատակներին հասնելու համար: Մանկավարժների և ընտանիքների միջև դրական հաղորդակցությունն արդյունավետ ուսումնական մթնոլորտ է ստեղծում երեխաների համար:

Երեխայի ընտանիքի անդամները նրա առաջին ուսուցիչներն են: Մինչև նախադպրոցական ծառայություն հաճախելը երեխաները շատ բան են սովորում ընտանիքում՝ սկսած բաժակով խմելուց մինչև ընթերցանություն: Ընտանիքի անդամներն են երեխաների համար կենսականորեն կարևոր որոշումներ ընդունում, շրջապատում նրանց սիրով, կրթում և դաստիարակում: Նրանք շատ լավ են ճանաչում իրենց երեխաներին և գործուն դեր ունեն նրանց դաստիարակության գործընթացում: Երեխաներն իրենց վրա կրում են ընտանիքի ազդեցությունը, ուստի դաստիարակները պետք է լրջորեն հաշվի առնեն այդ փաստը և երեխաների հետ աշխատելիս ամրապնդեն կապն ընտանիքների հետ՝ նկատի ունենալով դրանց առանձնահատկություններն ու տարբերությունները:

Ընտանիքի անդամներին ընձեռվում են ուսումնական հաստատությունում իրենց երեխայի կրթադաստիարակչական աշխատանքներին մասնակցելու տարբեր հնարավորություններ: Նրանք կրթական հաստատության ցանկալի հյուրերն են, և շատ խրախուսելի է նրանց գիտելիքների և փորձի կիրառումը տարբեր ուսումնական և կազմակերպչական նպատակներով: Օրինակ՝ փայտամշակման, կարի և խոհանոցային աշխատանքներում, ընթերցանության և արվեստի պարապմունքների, միջոցառումների և էքսկուրսիաների ժամանակ կարելի է օգտագործել ընտանիքի անդամների ներուժը:

Ծնողների տրամադրվածությունն ապահովելը սկսվում է մանկավարժական կազմի հետ առաջին իսկ հանդիպումից: Հարգալից վերաբերմունքը, աշխատանքի սկզբունքների, ընթացակարգի, նպատակների և գործողությունների վերաբերյալ քննարկումները մեծապես նպաստում են ընտանիքների ներգրավմանը երեխաների ուսումնադաստիարակչական գործընթացում:

Հարկ է բացատրել հենց սկզբից, որ նրանց մասնակցությունը պարապմունքներին շատ օգտակար է թե՛ դաստիարակների, թե՛ երեխաների համար: Ընտանիքի անդամների նպատակային ներգրավումը պահանջում է ժամանակ, պլանավորում և պատկերացում ընտանիքի անդամների հետաքրքրությունների ու հնարավորությունների մասին: Ծնողներին անհրաժեշտ է նախապես ծանոթացնել կատարվելիք աշխատանքներին, իմանալ նրանց նախասիրությունները, մասնագիտական հնարավորությունները, աշխատանքային ծանրաբեռնվածությունը և այլն: Մասնակցության ձևերը ներկայացնող ցուցակի կամ հարցաթերթիկի միջոցով կարելի է պարզել, թե ինչով և ինչպես է ընտանիքը ցանկանում օգնել դաստիարակին: Ծնողների հետ աշխատանքը պետք է իրականացվի կազմակերպված, նախնա-

կան պայմանավորվածությամբ, որպեսզի այն ձևական բնույթ չկրի և արդյունավետ լինի բոլոր կողմերի համար:

Անհրաժեշտ է հստակ պլանավորել, թե ինչպես պետք է ընտանիքները ներգրավվեն կրթական գործընթացում: Ուսումնական հաստատության աշխատակազմի և ընտանիքների միջև համագործակցային և փոխգործուն հարաբերություններ կառուցելու համար էական նշանակություն ունեն հարգանքը և վստահությունը երեխայի և նրա ընտանիքի անդամների հանդեպ: Շատ կարևոր է ընդունել ընտանիքների անդամների բացառիկ դերը:

Դրույթներ ծնողների հետ աշխատելու վերաբերյալ

- Ծնողներին պարապմունքների և կազմակերպչական աշխատանքների մեջ ներգրավելու համար օգտագործե՛ք բազմազան ձևեր: Եղե՛ք ստեղծագործ և ճկուն:
- Ժողովները և հանդիպումները կազմակերպե՛ք ծնողներին հարմար ժամերի:
- Թույլ տվեք, որ ընտանիքն ինքը որոշի, թե ինչպես կարող է լավագույն ձևով մասնակցել գործին:
- Եղե՛ք համբերատար:
- Հենվե՛ք երեխաների և ընտանիքի ուժեղ կողմերի վրա և արձագանքե՛ք դրականորեն:
- Պահպանե՛ք գաղտնիությունը:

Անհատականացված ուսուցում ապահովելու համար մանկավարժը պետք է մշտական կապի մեջ լինի երեխայի ընտանիքի հետ: Նրա պարտականությունն է ընտանիքի հետ ամուր կապեր հաստատել ու պահպանել: Ներկայացված հարցաթերթի օրինակներում նկարագրված են ծնողների ներգրավման և նրանց հետ համագործակցության տարբեր ուղիներ: Ծնողական ժողովների և ընտանիքի անդամների հետ այլ հանդիպումների ընթացքում դաստիարակն անպայման պետք է անդրադառնա երեխայի համակողմանի զարգացման կարևորությանը և առանձին ներկայացնի զարգացման յուրաքանչյուր ոլորտն ըստ տվյալ տարիքի երեխաների զարգացման չափորոշիչների: Երեխայի զարգացման առաջընթացի ու կարիքների վերաբերյալ քննարկումներն ու տեղեկությունների փոխանակումը օգտակար են և՛ ընտանիքի անդամների, և՛դաստիարակների համար:

Որքան ավելի սերտ և արդյունավետ լինի ուսումնական հաստատություն-ընտանիք կապը, այնքան ավելի մեծ աջակցություն կստանան երեխաները՝ ուսումնառության և դաստիարակության ընթացքն ավելի դրական և արդյունավետ կազմակերպելու առումով:

Ընտանիքի անդամներին պետք է առաջարկվեն ուսումնական հաստատության կյանքին մասնակցելու տարատեսակ հնարավորություններ: Ընտանիքին հարմար ժամանակ տնային այցելություններ կազմակերպելը հնարավորութուն է տալիս դաստիարակներին ծանոթանալու երեխաներին և ընտանքիներին նրանց հարազատ միջավայրում:

Հաղորդակցություն ընտանիքների հետ

- Ուսումնական հաստատությունը երկկողմանի, բաց և մատչելի հաղորդակցություն պետք է ապահովի, որտեղ ընտանիքները և համայնքի անդամները կարևորվում են որպես ներուժ և որոշում կայացնողներ:
- Ընտանիքի անդամներին տեղեկություններ են տրամադրվում երեխաների հետ իրականացվող աշխատանքների և երեխաներից ունեցած ակնկալիքների վերաբերյալ: Ծնողներին պետք է տեղյակ պահել, թե ինչպես կարող են նրանք շարունակել աշխատանքները տանը:
- Ծնողների համար պետք է կազմակերպել ծնողական կրթության դասընթացներ՝ հիմնված ընտանքիների կարիքների և հետաքրքրությունների վրա: Դասընթացներում ներառել տեղեկություններ երեխայի տարիքային զարգացման, կարգապահության և այլ հարցերի վերաբերյալ:
- Տեղեկություններ պետք է հավաքել երեխայի և ընտանիքի մասին մինչև երեխայի նախադպրոցական ծառայություն հաճախելը և տարվա ընթացքում պարբերաբար վերանայել դրանք տնային այցելությունների, հանդիպումների, ոչ պաշտոնական զրույցների և հեռախոսազրույցների միջոցով:
- Տարեկան երկու անգամ գրավոր ներկայացնել յուրաքանչյուր երեխայի առաջընթացը և ծնողներին տեղեկություններ հաղորդել:
- Երեխայի առաջընթացի վերաբերյալ համապատասխան տեղեկություններ (օրինակ՝ երեխայի թղթապանակը, դաստիարակի նշումները) պետք է տրամադրել այն դպրոցին, ուր հաճախելու է երեխան:

Աջակցություն ընտանիքներին

- Ռեսուրսներ տրամադրել ընտանիքի անդամներին երեխայի սոցիալական, հուզական, ֆիզիկական և իմացական զարգացումն ապահովելու համար (օրինակ՝ երեխաների համար կարդալու գրքերի ցանկ, խաղերի տեսակներ, քննարկումներ):
- Նպաստել ծնողների միջև համագործակցության զարգացմանը (օրինակ՝ ամենամսյա հանդիպումներ, խաղեր մեծահասակների

համար, ձեռքի աշխատանքերի ցուցադրումներ):

- Ընտանիքների համար տարբեր միջոցառումներ կազմակերպել օրվա տարբեր ժամերին, որպեսզի հնարավորինս շատ ընտանիքների անդամներ կարողանան մասնակցել:

Ընտանիքի հետ համագործակցության ձևեր

ա). Այցելություններ տուն

Մանկավարժական անձնակազմից որևէ մեկն այցելում է տուն՝ տեսնելու և ճանաչելու երեխային և նրա ընտանիքն իրենց միջավայրում:

բ). Երեխային հաստատություն բերելու և տուն տանելու ընթացքում ընկած ժամանակը

Ուսուցանող թիմը կարող է այնպես կազմել ժամատախտակը, որ երեխային հաստատություն բերելու և տուն տանելու ընթացքում եղած ժամանակը օգտագործվի ծնողների հետ ոչ պաշտոնական հաղորդակցություն ապահովելու համար:

գ). Հեռախոսային զանգեր

Կարելի է հատուկ նպատակով զանգահարել կամ ամիսը մեկ անգամ զանգահարել յուրաքանչյուր ընտանիքի՝ պարզապես կապը պահպանելու համար:

դ). Ծնողական և մանկավարժական ժողովներ

Ժողովներն այն պաշտոնական հանդիպումներն են, որոնք նպատակ ունեն քննարկելու երեխաների առաջադիմությունը, և ծնողներին հնարավորություն են տալիս կիսելու իրենց գաղափարներն ու մտահոգությունները: Ժողովները կարող են օգտակար լինել նաև երեխայի համար անհատական պլաններ կազմելու և քննարկելու համար:

Եթե ժամանակի պակասի պատճառով չի հաջողվում անմիջականորեն հաղորդակվել, կամ եթե չկա հեռախոս, ընտանիքների և մանկավարժների միջև կապը պահպանելու համար կարող են օգտագործվել գրավոր հաղորդակցման որոշ ձևեր: Գրավոր տեղեկատվություն հաղորդելիս պետք է վստահ լինեք, որ մյուս կողմը ստացել է տեղեկատվությունը: Ստորև բերված են գրավոր հաղորդակցման որոշ տեսակներ:

ե). Գրքույկներ (բրոշյուրներ)

Գրքույկները կարող են օգնել ծնողներին ծանոթանալ ծրագրին՝ ընդհանուր տեղեկատվություն տալով ծրագրի մասին, հակիրճ նկարագրելով դրա էությունն ու նպատակները:

զ). Շաբաթական գրություններ

Ամեն շաբաթ մի առանձին գրություն կարելի է ուղարկել յուրաքանչյուր ընտանիքի՝ տեղեկացնելու համար իրենց երեխայի նախընտրելի գործունեության տեսակի մասին, ինչպես նաև որևէ այլ տեղեկություն հաղորդելու համար:

է). Ոչ պաշտոնական գրություններ

Մանկավարժական կազմը կարող է երեխայի հետ տուն ուղարկել կարճ գրություններ, որպեսզի ընտանիքի անդամներին տեղեկացնի երեխայի հմտությունների ձեռքբերման կամ որևէ այլ իրականացված գործունեության մասին, ինչպես նաև շնորհակալություն հայտնի նրանց ուսումնական հաստատությանն աջակցելու համար: Ընտանիքի անդամները նույնպես կարող են մանկավարժներին գրություններ ուղարկել՝ իրենց երախտագիտությունը հայտնելու կամ որևէ խնդրանք հաղորդելու համար:

ը). Անհատական գրառումների գրքույկներ

Գրառումների գրքույկները կարող են ամեն օր տնից հաստատություն և հակառակ ուղղությամբ ուղարկվել՝ ընթացիկ տեղեկատվությունը միմյանց հաղորդելու նպատակով: Ընտանիքները կարող են նախազգուշացնել մանկավարժներին հատուկ իրադարձությունների, օրինակ՝ ծննդյան տոների, նոր աշխատանքի հնարավորության, ճանապարհորդությունների, այցելությունների մասին:

թ). Պատի տեղեկատվական թերթեր

Պատի տեղեկատվական թերթը կարող է օգտակար լինել ընտանիքներին՝ միշտ թարմ տեղեկատվություն հաղորդելով նրանց ժողովների ու հատուկ իրադարձությունների, ամենօրյա պարապմունքների բաշխման ցանկի, ընտանիքների համար նախատեսված միջոցառումների, ինչպես նաև ընդհանուր առմամբ ուսումնական հաստատության անցուդարձի մասին:

ժ). Առաջարկությունների տուփեր

Ծնողներին առաջարկվում է իրենց մտքերը, մտահոգությունները, առաջարկություններն ու հարցերը գրավոր ներկայացնել մանկավարժական կոլեկտիվի անդամներին՝ դնելով ժրանք հատուկ տուփի մեջ, որը տեղադրվում է նկատելի տեղում:

Ծնողները խմբասենյակում

Ծնողները խմբասենյակում կարող են տարբեր դերեր ունենալ: Նրանք կարող են կատարել բազմաթիվ պաշտոնական և ոչ պաշտոնական պարտականություններ: Ստորև ներկայացված են այդ պարտականություններից մի քանիսը, որոնք դաստիարակը կարող է ներկայացնել ծնողներին, որպեսզի նրանք ընտրելու հնարավորություն ունենան:

ա). Այցելություններ

Ծնողներին պետք է խրախուսել մտնել խմբասենյակ, որտեղ նրանք կարող են դիտել ու խաղալ իրենց երեխաների հետ:

բ). Կամավորներ

Ծնողների հմտություններն ու գիտելիքները կարելի է օգտագործել խմբասենյակում երեխաների հետ զբաղվելու ժամանակ: Նրանք կարող են օգնել մանկավարժներին որոշակի գործունեության ժամանակ, նրանց հետ միասին կատարել որոշ աշխատանքներ, օգնել խմբասենյակը դասավորելիս և ձևավորելիս: Որոշ ծնողներ կարող են օգնել՝ էքսկուրսիաների համար փոխադրամիջոցներ կամ խմբասենյակի համար նյութեր տրամադրելով:

Ուսումնական ծրագրով նախատեսված որոշակի գործունեության տեսակներ՝ ուղղված ծնողներին

ա). Ծնողների կողմից միմյանց աջակցելու փորձեր

Կարելի է փորձառու և սկսնակ ծնողների հանդիպումներ կազմակերպել՝ նպատակ ունենալով օգնել նրանց կողմնորոշմանը կամ պարզապես շփվելու հնարավորություն ստեղծել:

բ). Տեղեկատվություն ծնողների համար

Ծնողներին կարելի է տեղեկատվություն տրամադրել ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող թեմաների շուրջ, օրինակ՝ երեխայի զարգացման, ընթերցանության, կարգապահության վերաբերյալ: Այդպիսի գործունեությունը կարող է կազմակերպվել և՛ դաստիարակների, և՛ ծնողների կողմից:

գ). Միջոցառումներ ծնողների և դաստիարակների համար

Որոշ միջոցառումներ կարելի է պլանավորել բացառապես հասարակական նպատակներով, օրինակ՝ քաջալերել ծնողներին և դաստիարակներին ժամանակ տրամադրել հանգստի, միմյանց հետ ծանոթանալու և շփվելու համար:

դ). Գրադարաններ

Ծրագրի շրջանակներում կարող է կազմակերպվել հետաքրքիր գրքերի, հոդվածների, բրոշյուրների, տեսաժապավենների և ձայներիզների հավաքագրում, որոնք ծնողները կարող են որոշ ժամանակով վերցնել և օգտագործել:

Համոզվե՛ք, որ ընտանիքները գիտակցում են, որ իրենց մասնակցությունը խմբասենյակում և ներգրավումը տարբեր աշխատանքներում ողջունելի է և բարձր է գնահատվում: Հենց սկզբից քննարկեք, թե ինչպես պետք է պահպանեք կապը միմյանց հետ: Ծնողների ներգրավումը կարող է նորություն լինել ձեր մանկավարժական կոլեկտիվի և ընտանիքների համար, ուստի պետք է նկատի ունենալ, որ նոր հարաբերությունների հաստատումը ժամանակ է պահանջում: Ծնողների ներգրավումը կարող է կատարվել աստիճանաբար՝ որոշակի ժամանակի ընթացքում:

<u>Ընտանիքների ներգրավումը խրախուսելու համար</u>

- Պահպանե՛ք սերտ կապ:

Համոզվեք, որ մանկավարժական կոլեկտիվի անդամն առնվազն շաբաթը մեկ անգամ զրուցում է յուրաքանչյուր երեխայի ծնողների հետ:

- Փորձե՛ք ներգրավել ողջ ընտանիքին:

Երբեմն հայրերը դուրս են մնում երեխաների համար իրականացվող ծրագրերից: Ստեղծագործաբար տարբերակներ որոնեք հայրերին, եղբայրներին, քույրերին և ընտանիքի մյուս անդամներին ներգրավելու համար:

Բացի վերոհիշյալից, ընտանիքի հետ համագործակցությունը կարող է իրականացվել նաև այլ պաշտոնական ձևերով, ինչպիսիք են՝ կլոր սեղանները, տարբեր թեմատիկ քննարկումները, ծնողների համար բաց դիտումների կազմակերպումը, խորհրդատվական հանդիպումները, բաց դռների օրերը, ցուցահանդեսները, անհատական զրույցները, ծնողական կրթությունը և այլն:

8 ԵՐԵԽԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Անհատական և խմբային առաջադիմության նորմատիվային թեստերի օգտագործումը սովորաբար սխալ է ցածր տարիքի երեխաների զարգացումը գնահատելու համար: Այդպիսի գործիքները նպատակաուղղված չեն բացահայտելու, թե երեխաներն ինչպես են սովորում, ինչպես կարող են իրենց սովորածը կիրառել իրական կյանքում, կամ ինչպես են թեստերի արդյունքները կապվում դաստիարակի դասավանդման նպատակներին ու պարապմունքների պլանավորմանը: Սակայն, թեև ցածր տարիքի երեխաների անհատական առաջադիմությունը գնահատելու համար ստանդարտ նորմատիվային թեստեր չեն կիրառվում, չի նշանակում, որ նրանց առաջընթացը գնահատելու կարիք չկա: Երեխաների գնահատումը ուսումնառության բնական և շարունակական մասը պետք է լինի, իսկ գնահատման միջոցները պետք է բավարարեն երեխայի զարգացմանը համապատասխանող նույն չափորոշիչներին: 3-6 տարեկան երեխայի առաջադիմությունը գնահատելիս նրա առաջընթացը պետք է հիմնականում համեմատվի իր նախկին մակարդակի, ինչպես նաև քննադատական մտածողության զարգացմանն ուղղված չափորոշիչների հետ: Պետք չէ երեխային համեմատել այլ երեխաների հետ, հատկապես, երբ գնահատումը հիմնվում է նորմատիվային թեստերի արդյունքների վրա: Չափանիշների վրա հիմնված դասակարգումը կարելի է օգտագործել երեխայի անհատական առաջադիմությունը պետական չափորոշիչների հետ համեմատելու համար: Նման համեմատությունը նպաստում է երեխայի ընդհանուր առաջադիմությանը և զարգացման տարբեր մակարդակներում գտնվող երեխաների (կամ նրանց ծնողների) միջև մրցակցություն չի առաջացնում:

8.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Նախադպրոցական տարիքի երեխայի զարգացման անհատական գնահատման ամենաիմաստալից մոտեցումը նրա առաջադիմության շարունակական դիտարկումն է դաստիարակների և ծնողների կողմից: Այդ դիտարկումները կատարվում են երեխայի զարգացման բոլոր ոլորտներում՝ սոցիալական, հուզական, ֆիզիկական և իմացական: Առաջադիմության գրանցման գծապատկերները և երեխաների աշխատանքների թղթապանակները շատ ավելի լավ են արտացոլում երեխայի առաջընթացի բովանդակալից և բազմակողմանի պատկերը, քան որևէ ստանդատ թեստի արդյունքները: Երեխաների առաջադիմության վերաբերյալ մանկավարժների նկարագրական հաշվետվությունները նույնպես շատ ավելի օգտակար են, քան թվանշանները կամ այլ սիմվոլներով արտահայտված գնահատականները:

Նման դիտարկումներն ու գնահատումները հանրագումարային տեսքով նպատակահարմար է կատարել տարին երկու անգամ: Նկարագրական հաշվետվությունները ներկայացնում են տեղեկություններ, որոնք կարող են օգտագործվել ինչպես ծնողների կողմից՝ երեխաներին տանը օգնելու, այնպես էլ ուսումնական հաստատությունում ծրագրային խնդիրներ լուծելու նպատակով: Գնահատումը պետք օգնի բացահայտել, արձանագրել, հաշվառել, վերլուծել կրթադաստիարակչական աշխատանքների որակը, երեխաների ուսուցման, դաստիարակության գործում առաջընթացը, նրանց ձեռքբերումներն ու դժվարությունները, երեխաների զարգացման ոլորտների բովանդակային բաղադրիչների իրականացման մակարդակը, նրանց կողմից դրանց յուրացման աստիճանի փուլային գնահատումը:

Նախադպրոցական տարիքի երեխաների գնահատումը շարունակական գործընթաց է: Նախ որոշվում է, թե ինչ տեղեկություններ (փաստեր, ապացույցներ) են անհրաժեշտ երեխայի վաղ ուսումնառության մասին: Այնուհետև խմբասենյակում հավաքվում են այդ փաստերը, որոնք նկարագրվում, մեկնաբանվում և օգտագործվում են ուսուցման արդյունավետ պլանավորման նպատակով: Այդ փաստերը կարող են ներառել երեխաների կամ նրանց հետ զրույցների գրանցումները, երեխաների նկարած և կառուցած աշխատանքները, ինչպես նաև նրանց վարքագիծը նկարագրող լուսանկարներն ու թռուցիկ գրառումները: Փաստագրումը, որը գնահատման գործընթացի նախնական փուլն է, նպատակաուղղված է ուսումնառության վերաբերյալ փաստերի հավաքագրմանը և օբյեկտիվ, առանց մեկնաբանությունների նկարագրությանը:

Նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակները չպետք է շտապեն գնահատել երեխաներին: Նրանք պետք է սահմանեն ուսուցման նպատակները, հավաքեն երեխաների խոսքի գրանցումներն ու աշխատանքների նմուշները և միայն դրանից հետո նկարագրեն այդ փաստերն ու վերանայեն դրանք գործընկերների հետ: Այդ փաստերը կապելով ուսուցման նպատակների հետ և հենվելով կատարված բացահայտումների վրա՝ կարելի է մշակել նոր ծրագրային ռազմավարություններ և երեխայի ուսումնառության վերաբերյալ նոր հարցեր առաջադրել: Զգուշորեն կատարված փաստագրումը և գնահատումը կարող են խորացնել դաստիարակների պատկերացումները երեխաների կանոնավոր զարգացման, որոշակի խմբերում երեխաների կարիքների մասին և կիզորացնեն մանկավարժների կարողությունները (տես դիտարկման թերթիկները՝ հավելվածներ #1, #2, #3 և #4):

8.2. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Դիտարկումը, գնահատումը տեղեկատվություն հավաքելու, վերլուծելու և դրա հիման վրա երեխաների կրթության, զարգացման, խնամքի, գործունեության ձևերի իրականացման բովանդակային և կազմակերպչական արդյունքներն ընդհանրացնելու, վերահսկելու գործընթաց է:

Նախադպրոցական տարիքի երեխաների առաջխաղացման գնահատման գլխավոր նպատակն է՝ օգնել դաստիարկներին բարելավել ուսուցման և դաստիարակության գործընթացի որակն ու բարձրացնել արդյունավետությունը, պլանավորել համապատասխան աշխատանքներ անհատ երեխայի կամ երեխաների խմբերի համար:

Գնահատման գործընթացը պետք է՝

- հիմնվի երեխայի զարգացման վերաբերյալ փաստերի բազմազան ձևերի վրա,
- կատարվի որոշակի ժամանակահատվածում,
- արտացոլի դաստիարակի կողմից երեխաների խմբերի և առանձին երեխաների կարիքների ըմբռնումը,
- ապահովի նրբանկատություն յուրաքանչյուր երեխայի հատուկ կարիքների, մշակութային առանձնահատկությունների, սովորելու ոճի և զարգացման մակարդակի նկատմամբ:

Գնահատումից ստացված տեղեկատվությունը պետք է՝

- կապված լինի զարգացման մակարդակին համապատասխանող ուսուցման նպատակներին,

- խորացնի երեխայի զարգացման ըմբռնումը,
- ապահովի այնպիսի տեղեկատվություն, որն ուղղակիորեն կարելի է կիրառել ուսուցման և դաստիարակության պլանավորման համար,
- հնարավոր լինի քննարկել երեխայի ընտանիքի անդամների և որոշ չափով նաև երեխայի հետ:

8.3. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Օգտագործելով փաստագրումը և գնահատումը՝ դաստիարակները մեծացնում են իրենց հետևյալ մասնագիտական կարողությունները.

- իրականացնում են ավելի արդյունավետ ուսուցում՝ կիրառելով փոխգործուն մեթոդներ, որոնք խթանում են երեխայի զարգացումը,
- ավելի հեշտ ու արդյունավետ են պլանավորում և որոշումներ կայացնում (օրինակ՝ ինչպե՞ս դասավորել խմբասենյակը, ո՞րը պետք է լինի հաջորդ աշխատանքը, ի՞նչ հարցեր տալ, ի՞նչ նյութեր ապահովել, ինչպե՞ս խթանել յուրաքանչյուր երեխայի զարգացումը և այլն),
- բավարարում են խմբի որոշ երեխաների հատուկ կարիքներն ու հետաքրքրությունները,
- կարողանում են բազմազան ռազմավարություններ կիրառել,
- որոշում են, թե երեխաները ո՞ր մեթոդներով են ավելի լավ սովորում:

Գնահատման գործընթացը կարող է օգնել նաև փոքր երեխաներին՝ կարևորելու սեփական ուսումնառությունը, քանի որ տեսնում են, թե որքան ակտիվորեն է դաստիարակը փաստագրում իրենց ուսումնառության արդյունքները:

8.4. ԹՂԹԱՊԱՆԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Թղթապանակը երեխաների աշխատանքների կանոնավոր հավաքածուն է, որտեղ ներկայացված են նաև դաստիարակի մեկնաբանություններն այն մասին, թե ինչպես են աշխատանքների այդ օրինակները և խոսքի գրանցումներն արտացոլում երեխայի առաջխաղացումը դեպի նախատեսված ուսուցման նպատակներ:

Թղթապանակի բովանդակությունը պետք է հստակ արտահայտի ուսուցման նպատակները, լուսաբանի և փաստագրի երեխայի զարգացումը որոշակի ժամանակահատվածում:

Ռազմավարություններ թղթապանակի գնահատման համար

- Որոշե՛ք զարգացման այն ոլորտները, որոնք պետք է գնահատել (օրինակ՝ խոսք և լեզու, վաղ գրաճանաչություն, երևակայություն, հարաբերությունները հասակակիցների հետ և այլն):
- Որոշե՛ք այն փաստաթղթերը, որոնք լավագույնս կարտացոլեն երեխայի զարգացումը (օրինակ՝ նկարներ, ձեռքի աշխատանք, լուսանկարներ, թելադրված պատմվածքներ, ընտրված գրքեր, մանկավարժի գրառումներ, ձայնագրություններ, գծապատկերներ, ստուգաթերթեր և այլն):
- Երեխաների օգնությամբ ստեղծե՛ք աշխատանքների նմուշօրինակների կանոնավոր հավաքածու: Այդ նմուշօրինակները պետք է արտացոլեն զարգացման ոլորտների այն ամբողջական ծավալը, որը երեխաները կարող են կատարել:
- Մշակե՛ք երեխաների աշխատանքների նմուշօրինակները պահելու հարմար ձև:
- Քննարկե՛ք փաստաթղթերը գործընկերների հետ, որպեսզի լրացուցիչ կարծիք ստանաք երեխայի զարգացման մասին:
- Կապ ստեղծե՛ք երեխաների աշխատանքների և ուսուցման նպատակների միջև:
- Որոշե՛ք, թե ինչ բացթողումներ կան զարգացման ոլորտներում:
- Հավաքե՛ք այնպիսի տվյալներ, որոնք հստակ և հասկանալի կլինեն բոլորի համար:

8.5. ԴԻՏԱՐԿՈՒՄ

Նախադպրոցական տարիքի երեխաների դիտարկումը չափազանց կարևոր է ճիշտ փաստագրման և գնահատման համար: Դիտարկումն այնպիսի հմտություն է, որը պետք է դաստիարակի մեջ զարգացնել և կատարելագործել ժամանակի ընթացքում:

Երեխաներին դիտարկելիս մանկավարժները կարող են օգտվել հետևյալ միջոցներից՝ գնահատման թերթիկներ, լուսանկարներ, նկարագրական շարադրանքներ, թռուցիկ գրառումներ, տեսաերիզներ, գրառման մատյաններ, անհատ երեխաների հետ կամ խմբային զրույցներ: Դիտարկումը պետք է լինի նպատակադրված: Որպես խմբասենյակում կատարվող առօրյա աշխատանքների մաս՝ դիտարկումը համարվում է գնահատման ամենաարժանահավատ ձև: Յուրաքանչյուր երեխայի իրական բնութագիրը ստեղծելու համար պետք է դիտարկել, թե երեխաներն ամեն օր ինչ են անում:

Ի՞նչ դիտարկել

- Վարքագծային օրինաչափություններ, որոնք արտացոլում են որոշակի բան սովորելու, հետազոտելու կամ ուսումնասիրելու շարժառիթները:
- Պրոբլեմներ լուծելու ռազմավարությունները:
- Առանձնանալը և մեկուսանալը (օրինակ՝ պարզել երեխայի տեղը խմբում):
- Երեխայի հիմնական հակումները (օրինակ՝ պարզել և թվարկել երեխայի հետաքրքրությունների ոլորտները):

Ինչպե՞ս դիտարկել

- Դիտարկե՛ք կանոնավոր հաճախականությամբ և որոշակի նպատակով:
- Դիտարկե՛ք երեխաներին օրվա տարբեր ժամերին:
- Դիտարկե՛ք երեխաներին ուսումնական հաստատության տարբեր տեղերում:
- Դիտարկե՛ք երեխային, երբ նա գտնվում է սովորական վիճակում (ոչ անսովոր վարքագիծ դրսևորելիս կամ իր համար վատ օրերին):

Ծնողները

Երեխայի օբյեկտիվ և արժանահավատ գնահատման հարցում ծնողները պետք է լինեն դաստիարակի գործընկերը: Հետևյալ գործելակերպը կօգնի խրախուսել ծնողների մասնակցությունը երեխայի գնահատման գործընթացին.

- Երեխային գնահատելիս ընդգծեք դրականը:
- Կատարեք գնահատման հարցում/զրույց այն մասին, թե ինչպիսին է երեխայի առօրյա հաղորդակցությունը ծնողների հետ:
- Բացատրեք գնահատման մոտեցումները ծնողական ժողովի կամ սեմինարի ժամանակ:
- Հստակորեն ներկայացրեք ստանդարտացված թեստերի և արժանահավատ գնահատման միջև եղած տարբերությունները:
- Գնահատման մասին նամակ գրեք և ուղարկեք ընտանիքներին:
- Ցույց տվեք, որ հարգում և բարձր եք գնահատում ծնողների դերը երեխայի վարքի և առաջադիմության հարցում:

- Ձեր նկատառումները և մեկնաբանությունները հիմնավորե՛ք այնպիսի փաստաթղթերով, որոնք ցույց կտան, թե երեխան ինչ հաջողությունների է հասել որոշակի ժամանակահատվածում:

<u>Երեխաները</u>

Բոլորը՝ ներառյալ երեխան, ունեն իրենց տեսակետը երեխայի կարողությունների, նախասիրությունների, առաջադիմության մասին: Երեխաներին իրենց գնահատման գործընթացում արդյունավետ ընդգրկելու համար.

- Դիտարկե՛ք և փաստագրե՛ք այն, ինչ երեխան ասում և անում է: Հաճախ այնպիսի պատահական արտահայտությունները, ինչպես օրինակ՝ «Իմ հասակը անցյալ ծննդյանս օրը այնքան էր, իսկ հիմա՝ այսքան», վկայում են, որ երեխաները կարողանում են գնահատել, թե իրենք ինչ կարող են անել և ինչպես են փոխվում:,
- Հարցրե՛ք երեխաներին իրենց մասին: Նրանք Ձեզ կպատմեն, թե իրենք ինչ են անում և ինչ չեն սիրում անել: Որոշ երեխաներ կարող են նախընտրել զրուցել մի առանձնացված տեղում, որտեղ իրենք կարող են ամբողջովին լինել ձեր ուշադրության կենտրոնում, իսկ այլ երեխաներ կարող են պատասխանել և մասնակցել ոչ պաշտոնական քննարկումներին մյուսների ներկայությամբ:
- Խնդրե՛ք երեխաներին գնահատել իրենց աշխատանքները: Օրինակ՝ առաջարկեք օգնել որոշելու, թե որ աշխատանքը պետք է ներառվի թղթապանակում: Հարգե՛ք նրանց ընտրությունը և կարծիքը սեփական աշխատանքների մասին,
- Թույլ տվեք երեխաներին ժամանակ առ ժամանակ լուսանկարելու իրենց ամենասիրած աշխատանքը: Նրանք կարող են պաստառ պատրաստել՝ ցուցադրելու համար թղթապանակի համար իրենց կողմից հատուկ ընտրված նկարները:

ՀԱՎԵԼՎԱԾ # 1

3-4 տարեկան երեխայի ստուգաթերթ

Երեխայի անունը և ազգանունը _____

	ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ՈԼՈՐՏ	I դիտարկում ամսաթիվ _____			II դիտարկում ամսաթիվ _____			III դիտարկում ամսաթիվ _____		
	ՑՈՒՑԻՉ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ
1	Ոտքերը միասին պահելով՝ կանգնած տեղից ցատկում է առնվազն 20 սմ հեռավորության վրա:									
2	Ուղիղ գծով քայլելով՝ անցնում է առնվազն 1 մետր տարածություն:									
3	Վազում է առնվազն 8 մետր տարածություն:									
4	Ինքնուրույն բարձրանում է աստիճաններով՝ հերթագայելով ոտքերը:									
5	Վարում է եռանիվ հեծանիվ:									
6	Բռնում է մեծ գնդակը մոտավորապես 1,5 մետր հեռավորությունից:									
7	Ոտքը ետ տանելով հարվածում է գնդակին:									
8	Ծեփում է պարզ (կլոր, տափակ, պարանաձև) առարկաներ:									
9	Բռնում է մատիտը ձեռքի առաջին 3 մատներով՝ թուղթը մյուս ձեռքով պահելով:									
10	Կրկնագծում է (եզրակ է քաշում) նկարի ուրվագծով:									
11	Արձակում և կոճկում է մեծ կոճակները, հագուստի մեծ շղթաները, կապում և քանդում է քուղերը:									
12	Ինքնուրույն օգտվում է սպասքի որոշ տեսակներից:									

3-4 տարեկան երեխայի ստուգաթերթ

Երեխայի անունը և ազգանունը _____

	ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ	I դիտարկում ամսաթիվ _____			II դիտարկում ամսաթիվ _____			III դիտարկում ամսաթիվ _____		
	ՑՈՒՑԻՉ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ
1	Կատարում է մեծահասակների պարզ հրահանգները:									
2	Ուշադիր ունկնդրում է իր կամ խմբի համար ընթերցվող մանկական հեքիաթը:									
3	Խոսքի հնչերանգով տարբերակում է խոսակցի տրամադրությունը:									
4	Պատմում է սեփական փորձառության մասին:									
5	Երեք-չորս պարզ նախադասությամբ ասում է, թե ինչ են անում նկարում պատկերված մարդիկ կամ կենդանիները:									
6	Կրկնում է առաջարկված բառերը՝ ճիշտ արտաբերելով հնչյունները:									
7	Պատկերազարդ գրքեր դիտելիս հարցեր է տալիս:									
8	Ճիշտ (տեղին) ձևակերպում է «ինչ», «որտեղ», «երբ», «ինչու» բառերով հարցեր:									
9	Զրուցում է մեծահասակի հետ՝ պատասխանելով առնվազն 3-4 պարզ հարցերի:									
10	Պատկերազարդ գրքեր դիտելիս հարցեր է տալիս:									

3-4 տարեկան երեխայի ստուգաթերթ

Երեխայի անունը և ազգանունը _____

	ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ	I դիտարկում ամսաթիվ _____			II դիտարկում ամսաթիվ _____			III դիտարկում ամսաթիվ _____		
	ՑՈՒՑԻՉ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ
1	Փորձում է խաղալ նոր խաղերով:									
2	Հարցեր է տալիս տեղեկություններ ստանալու համար իր շրջապատում գտնվող նոր առարակների, երևույթների մասին:									
3	Մեծահասակի օգնությամբ ընտրություն է կատարում առաջարկվող 2-3 խաղերի, նյութերի միջև:									
4	Դժվարության հանդիպելիս ինքնուրույն հաղթահարում է արգելքները կամ դիմում է մեծահասակի օգնությանը:									
5	Առաջարկության դեպքում մասնակցում է խմբային խաղերի:									
6	Օգնում է առօրյա գործերում:									
7	Կազմում է 2 քայլից բաղկացած պլան և գործում է ըստ այդ պլանի:									

3-4 տարեկան երեխայի ստուգաթերթ

Երեխայի անունը և ազգանունը _____

	ԻՄԱՑԱԿԱՆ ՈԼՈՐՏ	I դիտարկում ամսաթիվ _____			II դիտարկում ամսաթիվ _____			III դիտարկում ամսաթիվ _____		
	ՑՈՒՑԻՉ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ
1	Բացատրում է առարկաների նշանակությունը, դերը:									
2	Գտնում է զույգ պատկերներ:									
3	Հավաքում է 3- 4 խոշոր մասերից բաղկացած պատկեր:									
4	Բացատրում է, թե ինչպիսի արդյունք կարող է ունենալ տվյալ պարզ գործողությունը:									
5	Տեսակավորում է առարկաները ըստ ձևի, մեծության կամ գույնի:									
6	Անվանում է հիմնական գույները:									
7	Գիտի 2 երկրաչափական պատկերներ՝ շրջան, եռանկյուն:									
8	Կիրառում է հաշիվը առօրյա կյանքում:									
9	Մեծահասակի ասելուց հետո կրկնում է բանաստեղծության 2 տող:									
10	Նկարում է լսած պատմության/հեքիաթի իրեն դուր եկած առարկան/պատկերը:									
11	Երաժշտության տակ կատարում է ռիթմիկ պարային շարժումներ:									
12	Երգում է հաճախ լսած երգերը:									

13	Տարբերում է ցերեկ և գիշեր հասկացությունները՝ կապելով դրանք այդ ժամին կատարվող գործողությունների հետ:									
14	Գիտի այն թաղամասը կամ փողոցը, որտեղ ապրում է:									
15	Ճանաչում և անվանում է բնության որոշ երևույթներ. քամի, անձրև, ձյուն:									
16	Երգում է ազգային երգեր:									

3-4 տարեկան երեխայի ստուգաթերթ

Երեխայի անունը և ազգանունը _____

	ՀՈՒԶԱԿԱՆ, ԱՆՁՆԱՅԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ	I դիտարկում ամսաթիվ _____			II դիտարկում ամսաթիվ _____			III դիտարկում ամսաթիվ _____		
	ՑՈՒՑԻՉ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ
1	Ազատ հաղորդակցվում է ծանոթ մեծահասակների հետ:									
2	Խնդրանքի դեպքում օգնում է մեծահասակին:									
3	Մյուս երեխաների հետ զուգահեռ նույն տարածքում խաղալիս՝ ժամանակ առ ժամանակ մեկնաբանություններ է կատարում:									
4	Շրուցում է իրեն ծանոթ հասակակիցների հետ:									
5	Ենթարկվում է հաստատված 3-4 կանոններին:									
6	Դիմում է մեծահասակի օգնությանը հասակակցի հետ վեճը լուծելու համար:									
7	Խաղում է տարբեր երեխաների հետ:									
8	Խաղալիս սկսում է բարեկիրթ բառեր գործածել մեծահասակի հիշեցումով:									
9	Անցում է կատարում մի գործողությունից մյուսը մեծահասակի օգնությամբ:									
10	Խոսում է իր մասին առաջին դեմքով:									
11	Միանում է մյուս երեխաներին տարբեր խաղերի, զբաղմունքների, աշխատանքների ժամանակ:									
12	Առաջարկվող/առկա երկու գործողություններից ընտրում է մեկը:									
13	Ապրումակցում է իր համար կարևոր անձանց (օբյեկտների) հույզերին:									
14	Արձագանքում է ուրիշների զգացմունքներին:									

3-4 տարեկան երեխայի ստուգաթերթ

Երեխայի անունը և ազգանունը _____

	ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ	I դիտարկում ամսաթիվ _____			II դիտարկում ամսաթիվ _____			III դիտարկում ամսաթիվ _____		
	ՑՈՒՑԻՉ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ
1	Ինքնուրույն հագնում և հանում է հագուստի որոշ մասը:									
2	Օգտվում է զուգարանից մասնակիորեն:									
3	Խաղալուց հետո հավաքում է խաղալիքները մեծահասակների հիշեցումով:									
4	Նեղ սափորից հեղուկը լցնում է առանց թափելու:									
5	Խոզանակով կատարում է ատամները մաքրելու գործողություններ:									
6	Կատարում է առողջության պահպանմանն ուղղված հիմնական գործողությունները (օճառով լվանում է ձեռքերը, երեսը, և սրբիչով չորացնում):									
7	Բառերով ներկայացնում է իրեն անհանգստացնող հիվանդության ախտանշանները:									
8	Խուսափում է վտանգ ներկայացնող տեղերում, իրերի, սարքավորումների հետ խաղալուց:									

ՀԱՎԵԼՎԱԾ # 2

4-5 տարեկան երեխայի ստուգաթերթ

Երեխայի անունը և ազգանունը _____

	ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ՈԼՈՐՏ	I դիտարկում ամսաթիվ _____			II դիտարկում ամսաթիվ _____			III դիտարկում ամսաթիվ _____		
	ՑՈՒՑԻՉ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ
1	Ցատկոտում է մեկ ոտքի վրա առնվազն 5 անգամ:									
2	Կանգնում է մեկ ոտքի վրա առնվազն 10 վայրկյան:									
3	Կարող է հաղթահարել 50-60 սմ բարձրության արգելքը:									
4	Ինքնուրույն բարձրանում և իջնում է աստիճաններով:									
5	Վարում է եռանիվ հեծանիվ վարժ կերպով:									
6	Գնդակը նետում է վեր և բռնում երկու ձեռքով:									
7	Կառուցում է 10 և ավելի կտորներից բաղկացած շինություններ կառուցողական առարկաներով:									
8	Նկարում է հասկանալի նկարներ (բավականին մանրամասնորեն) ըստ հրահանգի կամ ինքնուրույն:									
9	Ծեփում է ծանոթ առարկաներ:									
10	Կտրտում է (ոչ ճշգրիտ) մկրատով՝ նախօրոք գծված ուղիղ կամ կոր գծերով:									
11	Հագնվելիս և հանվելիս կոճկում և արձակում է կոճակները, հագուստի շղթաները:									
12	Ուտելիս օգտվում է սպասքից:									
13	Հագնվելիս և հանվելիս կոճկում և արձակում է կոճակները, հագուստի շղթաները:									

4-5 տարեկան երեխայի ստուգաթերթ

Երեխայի անունը և ազգանունը _____

	ԽՈՍՔԻ ՁԱՐԳԱՑՈՒՄ	Ի դիտարկում ամսաթիվ _____			Ii դիտարկում ամսաթիվ _____			Iii դիտարկում ամսաթիվ _____		
	ՑՈՒՑԻՉ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ
1	Կատարում է մեծահասակների 3-4 քայլից բաղկացած հրահանգները:									
2	Վերապատմում է (ընթերցված, ռադիոյով կամ ձայնագրությամբ լսած) պատմությունը/հեքիաթը:									
3	Հարցերին պատասխանելիս օգտագործում է ընդարձակ նախադասություններ:									
4	Երեք-չորս նկարների միջոցով կազմում է փոքրիկ պատմվածք:									
5	Կրկնում է առաջարկված բառերն ու բառակապակցությունները՝ ճիշտ արտաբերելով հնչյունները:									
6	Օգտագործում է բայի ճիշտ ժամանակային ձևերը:									
7	Մասնակցում է առօրյա խոսակցությանը՝ կապված անցյալում ինչ-որ տեղ կատարված դեպքերի և իրադարձությունների հետ:									
8	Հասակակիցների հետ խաղալիս տալիս է իրավիճակին համապատասխան հարցեր:									
9	Իրենից փոքր տարիքի երեխաների հետ խաղալիս փոխում է ձայնի հնչերանգը:									
10	Դերային խաղերի ժամանակ դերին համապատասխան փոխում է ձայնի հնչերանգը:									
11	Գիրքը բռնում է ճիշտ ուղղությամբ, էջերը թերթում է սկզբից վերջ:									
12	Պատկերազարդ գրքեր դիտելիս կամ հեքիաթ լսելիս մեկնաբանություններ է անում:									
13	Ճանաչում է շրջապատի գրվածքները (ցուցանակներ, լոգոներ (տարբերանշաններ) և այլն):									
14	Գիտի և Ճանաչում է շրջապատի գրաֆիկական սիմվոլները									

4-5 տարեկան երեխայի ստուգաթերթ

Երեխայի անունը և ազգանունը _____

	ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ	Ի դիտարկում ամսաթիվ _____			Ի դիտարկում ամսաթիվ _____			Ի դիտարկում Ամսաթիվ _____		
	ՑՈՒՑԻՉ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ
1	Հետազոտում և փորձարկում է խաղերը և նյութերը:									
2	Պարբերաբար խաղում է իրեն հետաքրքրող խաղերով:									
3	Հասակակցին առաջարկում է խաղալ իր հետ:									
4	Ընտրություն է կատարում առաջարկվող խաղերի, նյութերի միջև:									
5	Մոտենում է խաղացող երեխաների խմբին և մասնակցում խաղին:									
6	Խաղալիս կենտրոնացնում է ուշադրությունը:									
7	Ձգտում է ավարտին հասցնել սկսած առաջադրանքը/խաղը:									
8	Հետևում է 3 և ավելի քայլերից բաղկացած հրահանգներին:									

4-5 տարեկան երեխայի ստուգաթերթ
Երեխայի անունը և ազգանունը _____

	ԻՄԱՑԱԿԱՆ ՈԼՈՐՏ	Ի դիտարկում ամսաթիվ _____			II դիտարկում ամսաթիվ _____			III դիտարկում ամսաթիվ _____		
	ՑՈՒՑԻՉ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ
1	Համեմատում է առարկաները՝ օգտագործելով համեմատական աստիճանը. «ավելի մեծ է», «ավելի բարձր է», «ավելի հեռու է», «ավելի երկար է», «ավելի շատ է» բառակապակցությունները:									
2	Խաղի ժամանակ առաջարկում է պակասող իրը/առարկան փոխարինել այլ իրով/առարկայով:									
3	Կարողանում է բացատրել պարզ իրողությունների պատճառները:									
4	Անվանում է առարկաների խումբը մեկ ընդհանուր բառով:									
5	Տարբերակում/նկատում է կենդանիների,ույսերի նմանությունները և տարբերությունները:									
6	Անգիր հաշվում է մինչև 10-ը:									
7	Առարկաների խումբը բաժանում է երկու հավասար մասերի:									
8	Գիտի թիվ-քանակ հարաբերությունը:									
9	Կրկնօրինակում և շարունակում է պարզ օրինաչափությունները:									

10	Տարբերում է 3-4 երկրաչափական պատկերներ (եռանկյուն, շրջան, ուղղանկյուն, քառակուսի):									
11	Կատարում է մեծացնելու և փոքրացնելու գործողություններ:									
12	Տարբերում է «մոտ-հեռու», «առաջ-հետ», «վերև-ներքև» հասկացությունները:									
13	Վերարտադրում է փոքրիկ պատմվածքներ, հեքիաթներ:									
14	Պատրաստում է պարզ առարկաներ խմորից, պլաստիլինից, թղթից:									
15	Ուշադիր լսում է/դիտում է տիկնիկային ներկայացումներ, մանկական հաղորդումներ:									
16	Երաժշտություն լսելիս կատարում է շարժումներ և/կամ ձայնակցում հնչող մեղեդուն՝ ասելով, թե ով է երգում:									
17	Գիտի ծնողների անուն ազգանունը:									
18	Տարբերում է բնության երևույթները:									
19	Գիտի և անվանում է որոշ վայրի և ընտանի կենդանիներ:									
20	Կատարում է մանկական երգեր և պարեր:									
21	Արձագանքում է ծանոթ հեքիաթի կերպարները տեսնելիս:									
22	Խաղում է ազգային շարժուն խաղեր:									

4-5 տարեկան երեխայի ստուգաթերթ
Երեխայի անունը և ազգանունը _____

	ՀՈՒԶԱԿԱՆ, ԱՆՁՆԱՅԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ	I դիտարկում ամսաթիվ _____			II դիտարկում ամսաթիվ _____			III դիտարկում ամսաթիվ_____		
	ՑՈՒՑԻՉ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ
1	Մեծահասակի ուշադրությունը գրավում է համապատասխան գործողությունների կամ բառերի միջոցով:									
2	Առաջարկում է իր օգնությունը ուրիշ երեխայի (երեխաների):									
3	Ունի ընկերներ տարբեր շրջապատներում (մանկապարտեզում, բակում և այլն):									
4	Մասնակցում է մեծ և փոքր խմբերով կազմակերպված 20-25 րոպե տևողությամբ աշխատանքներին:									
5	Ենթարկվում է հաստատված կամ նախապես քննարկված կանոններին:									
6	Իր խաղալիքները և նյութերը տալիս է ուրիշներին:									
7	Կոնֆլիկտային իրավիճակին արձագանքում է խոսքի միջոցով:									
8	Կոնֆլիկտային իրավիճակում հաշվի է առնում ընկերոջ կարծիքը:									
9	Անցում է կատարում գործողության մի տեսակից մյուսին մեծահասակի հիշեցումով:									
10	Դրսևորում է բարեկիրթ վարքագիծ մեծահասակի հիշեցումով:									

11	Պատմում է իր մասին՝ նշելով մի քանի հիմնական առանձնահատկություններ. տարիքը, սեռը, հաճախում է, թե չի հաճախում մանկապարտեզ, ունի, թե չունի քույր/եղբայր:									
12	Ունի իր նախասիրությունները:									
13	Աշխատում է տարբեր նյութերով և խաղալիքներով:									
14	Արտահայտում է իր կարծիքը:									
15	Ներգրավվում է իր համար նոր գործողության մեջ:									
16	Շփվում է անծանոթ մարդկանց հետ:									
17	Գիտի, թե ինչպիսի իրավիճակներում են հիմնական հույզերը դրսևորվում:									
18	Ապրումակցում է ուրիշների հույզերին:									

4-5 տարեկան երեխայի ստուգաթերթ

Երեխայի անունը և ազգանունը _____

	ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ	I դիտարկում ամսաթիվ _____			II դիտարկում ամսաթիվ _____			III դիտարկում ամսաթիվ _____		
	ՑՈՒՑԻՉ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ
1	Հագնում և հանում է հագուստը:									
2	Օգտվում է սննդամթերքից, անհրաժեշտ առարկաներից, սպասքից, նյութերից:									
3	Բավարարում է իր կենսական առաջնային կարիքները:									
4	Մասնակցում է կրտսեր քրոջ կամ եղբոր խնամքին ուղղված աշխատանքներին:									
5	Գիտի, թե ինչպես օգտագործել սեփական հիգիենայի հետ կապված պարագաները և օգտագործում է դրանք (խոզանակը, մածուկը, բերանը ողողելու բաժակը, շամպունը, օճառը, սանրը և այլն):									
6	Կատարում է առողջության պահպանմանն ուղղված հիմնական գործողություններ (լվանում և չորացնում է ձեռքերը և երեսը, մաքրում է քիթը, հագալիս ձեռքով ծածկում է բերանը):									
7	Կիրառում է իր հետ քննարկված անվտանգության որոշ ընդհանուր կանոններ:									

ՀԱՎԵԼՎԱԾ #3

5-6 տարեկան երեխայի ստուգաթերթ

Երեխայի անունը և ազգանունը _____

	ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ՈԼՈՐՏ	I դիտարկում ամսաթիվ _____			II դիտարկում ամսաթիվ _____			III դիտարկում ամսաթիվ _____		
	ՑՈՒՑԻՉ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ
1	Քայլում է կից քայլերով՝ առաջ և հետ, փակ աչքերով:									
2	Սողում է առարկաների տակով:									
3	Ձույգ ոտքերով ցատկում է՝ հաղթահարելով 25-30 սմ բարձրության առարկաներ:									
4	Մագլցում է ուղղահայաց մարմնամարզական պատով, ճոպանով:									
5	Ձեռքով նետում է գնդակը, հետո՝ ոտքով հարվածում:									
6	Կառուցում կամ հավաքում է փողոց, կենդանաբանական այգի, կայարան ըստ օրինակի (նայելով նկարներին, լուսանկարներին):									
7	Ճիշտ դիրքով բռնում է գրիչը/մատիտը:									
8	Նկարում է մարդ՝ իր բոլոր դետալներով (գլուխ, աչքեր, քիթ, բերան, մարմին , վերջույթներ):									
9	Կտրատում է՝ ըստ ուրվագծի: Օրինակ, թղթի վրա ուրվագծված է շնիկ, կտրում է շնիկի պատկերը՝ ուրվագծով:									

5-6 տարեկան երեխայի ստուգաթերթ

Երեխայի անունը և ազգանունը _____

	ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ	I դիտարկում ամսաթիվ _____			II դիտարկում ամսաթիվ _____			III դիտարկում ամսաթիվ _____		
	ՑՈՒՑԻՉ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ
1	Լսում և մասնակցում է խոսակցություններին:									
2	Վերարտադրում է լսած պատմվածքը, հեքիաթը, նկարը, բանաստեղծությունը:									
3	Տեղեկություն ստանալու համար տալիս է ճիշտ, ինչպես, ինչու հարցերը և փորձում է գտնել պատասխանները:									
4	Մեկ նախադասության մեջ մեկտեղում է մի քանի միտք:									
5	Լսում է ընթերցվող տարբեր պատմություններ ու հեքիաթներ:									
6	Պատկերների օգնությամբ պատկերացում է կազմում, թե ինչի մասին է գիրքը:									
7	Հետևում է տպագիր խոսքին ձախից աջ, վերևից նեքև:									
8	Տպագիր տառերով փորձում է «գրել» իր անունը:									
9	Բառը բաժանում է վանկերի:									
10	Թվարկում է բառեր, որոնք սկսվում են միևնույն հնչյունով:									
11	Հասկանում է հականիշներ:									
12	Հասկանում է որոշ հոմանիշներ:									

5-6 տարեկան երեխայի ստուգաթերթ

Երեխայի անունը և ազգանունը _____

	ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ	I դիտարկում ամսաթիվ _____			II դիտարկում ամսաթիվ _____			III դիտարկում ամսաթիվ _____		
	ՑՈՒՑԻՉ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ
1	Հետաքրքրվում է նոր տեղեկություններով և պատրաստակամ է ձեռք բերելու նոր փորձառություն:									
2	Խաղերի/առաջադրանքների ժամանակ նոր մտքեր և տարբերակներ է առաջարկում:									
3	Ձգտում է ավարտին հասցնել սկսած առաջադրանքը: Գործում է ըստ իր սահմանած պլանի:									
4	Կարողանում է ուշադրությունը կենտրոնացած պահել որոշակի գործունեության ընթացքում (օրինակ՝ լսում է պատմվածքը և հետո հարցեր է տալիս):									
5	Հիշողությամբ նկարագրում կամ ներկայացնում է իրավիճակներ և գործողություններ:									
6	Առաջարկում է մեկ և ավելի տարբերակներ խնդրի/հարցի լուծման համար:									
7	Փորձելու և սխալվելու միջոցով լուծում է խնդիրը:									
8	Ընտրություն է կատարում խաղերի/առաջադրանքների միջև:									
9	Նկատում է շրջապատում տեղի ունեցող փոփոխությունները և դրանց պատճառահետևանքային կապերը, հաջորդականությունը:									
10	Օգտագործում է իր 5 զգայարանները և տարբեր գործիքներ՝ դիտարկելու, տեղեկություններ հավաքելու և կանխատեսումներ կատարելու նպատակով:									

5-6 տարեկան երեխայի ստուգաթերթ
Երեխայի անունը և ազգանունը _____

	ԻՄԱՑԱԿԱՆ ՈԼՈՐՏ	I դիտարկում ամսաթիվ _____			II դիտարկում ամսաթիվ _____			III դիտարկում ամսաթիվ _____		
	ՑՈՒՑԻՉ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ
1	Երեխան համեմատություններ է անում, գտնում է նմանություններն ու տարբերությունները, մասերի է բաժանում, խմբավորում է առարկաները ըստ հատկանիշի:									
2	Կատարում է քննադատական վերլուծություններ և եզրահանգումներ (օրինակ՝վերլուծում է հեքիաթի, պատմության կերպարների վարքը և առաջարկում է, թե ինքն ինչպես կվարվեր):									
3	Պատկերացում ունի երկրաչափական պատկերների մասին:									
4	Կարողանում է հաշվել 20-ի սահմաններում և թվերով գործողություններ կատարել:									
5	Թվարկում է իրենից ձախ կամ աջ, հեռու կամ մոտիկ, վերևում կամ ներքևում գտնվող առարկաները:									
6	Տարբերակում է անցյալում, նեկայում, ապագայում կատարվող գործողությունները:									
7	Հասկանում է երկար-կարճ-հավասար, հաստ-բարակ, բարձր-ցածր հասկացությունները:									
8	Կարողանում է հորինել կիսատ թողած պատմության շարունակությունը:									

9	Պատմությունները ներկայացնում է շարժումների, դերախաղի, կերպարվեստի, երաժշտության և այլ միջոցներով:									
10	Տեղեկացված է իր բնակավայրի մասին. գիտի տան հասցեն:									
11	Ունի որոշ գիտելիքներ շրջակա միջավայրի բույսերի և կենդանիների պաշտպանության և նրանց հետ վարվելու կանոնների մասին:									
12	Ունի որոշ գիտելիքներ Հայաստանի Հանրապետության, մայրաքաղաք Երևանի, օրհներգի, դրոշի, զինանշանի, տեսարժան վայրերի, հուշարձանների, ազգային ծեսերի ու տոների մասին:									

5-6 տարեկան երեխայի ստուգաթերթ

Երեխայի անունը և ազգանունը _____

	ՀՈՒԶԱԿԱՆ, ԱՆՁՆԱՅԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ	I դիտարկում ամսաթիվ _____			II դիտարկում ամսաթիվ _____			III դիտարկում ամսաթիվ _____		
	ՑՈՒՑԻՉ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ
1	Ծանոթներին հանդիպելիս առանց կաշկանդվելու բարևում է, հարցեր տալիս, զրուցում:									
2	Պատմում է առօրյայում կատարված իրադարձությունների և տպավորությունների մասին:									
3	Օգնություն է առաջարկում այն հասակակցին, որը կարիք ունի (օրինակ՝ չի կարողանում գտնել իր խաղալիքը, չի կարողանում կապել քուղերը և այլն):									
4	Խաղի մեջ փորձում է ընդգրկել բոլորին:									
5	Փոխանակում է խաղալիքները: Իր խաղալիքները որոշ ժամանակով տալիս է ընկերոջը:									
6	Մեծահասակի օգնությամբ գնում է փոխզիջման: (Օրինակ՝ համաձայնում է տալ խաղալիքը ընկերոջը, փոխարենը մեծահասակի կողմից ստանում է քաջալերանք՝ կամ ուրիշ խաղալիք):									
7	Հասկանում է ինչպիսի արձագանքի կարող է արժանանալ իր և ուրիշների վարքը:									
8	Հետևում է խմբային աշխատանքների պարզ կանոններին: Օրինակ՝ խաղալուց հետո բոլոր խաղալիքները պիտի հավաքենք, հետո գնանք զբոսայգի:									

9	Հարգանքով է վերաբերվում սեփական անձին (Ճանաչում և հպարտանում է սեփական ձեռքբերումներով):									
10	Գիտի իր անձին վերաբերող հիմնական տեղեկությունները:									
11	Գիտի իր հասցեն և հեռախոսահամարը:									

5-6 տարեկան երեխայի ստուգաթերթ

Երեխայի անունը և ազգանունը _____

	ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ	I դիտարկում ամսաթիվ _____			II դիտարկում ամսաթիվ _____			III դիտարկում ամսաթիվ _____		
	ՑՈՒՑԻՉ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ	Երբեք	Հաճախ	Միշտ
1	Հետևում է անձնական հիգիենայի կանոններին և պահպանում է դրանք:									
2	Ուտելիս ցուցաբերում է պատշաճ վարքագիծ (ծամելիս չի խոսում, օգտագործում է «բարի ախորժակ» և «շնորհակալություն» բառերը, ուտում է անաղմուկ և այլն):									
3	Ցուցաբերում է մանրէների տարածումը սահմանափակող վարք (հազալիս և փռշտալիս ձեռքով ծածկում է բերանը, լվանում է ձեռքերը, և այլն):									
4	Չի խաղում վտանգ ներկայացնող իրերի հետ:									
5	Գիտի երթևեկության կանոնները, զգուշացնող և արգելող նշանները:									

ՀԱՎԵԼՎԱԾ #4 Խմբի ամբողջական պատկեր

_____ խումբ Ուսուցիչ_____ Ամսաթիվ _____

Զարգացման ոլորտը _____

	Երեխայի անունը, ազգանունը	Ե	Հ	Մ	Ե	Հ	Մ	Ե	Հ	Մ	Ե	Հ	Մ	Ե	Հ	Մ	Ե	Հ	Մ	Ե	Հ	Մ	Ե	Հ	Մ	Ե	Հ	Մ	Ե	Հ	Մ
1																															
2																															
3																															
4																															
5																															
6																															
7																															
8																															
9																															
10																															
11																															
12																															

ՀԱՎԵԼՎԱԾ #5
Ինտեգրված թեմատիկ միավորի նմուշօրինակ

Թեմատիկ միավոր՝ «Ձմեռ»

Ենթաթեմա՝ «Ձմեռային հագուստ»

Առաջարկվող տեքստ՝ «Թաթմանը» (Ուկրաինական ժողովրդական հեքիաթ)

Ենթաթեմայի հիմնական նպատակները.

- Երեխաների մեջ կզարգանան շփման, հաղորդակցման հմտությունները:
- Երեխաները կծանոթանան տարբեր նախշերի հետ և կվերարտադրեն դրանք:
- Կզարգանան երեխաների մանր մկանները՝ կտրելու և զարդարելու միջոցով:
- Կզարգանան երեխաների խոշոր մկանները ակտիվ խաղի միջոցով:
- Երեխաները կսովորեն հետևել բանավոր ցուցումներին:
- Կզարգանա երեխաների բանավոր խոսքը բաց հարցերին պատասխանելու և հեքիաթը պատմելու միջոցով:
- Երեխաները կսովորեն բարեկիրթ և հարգալից ձևակերպել խնդրանքը, դիմումը:
- Կամրապնդվեն հետևյալ մաթեմատիկական հասկացությունները. համրանք, զույգ, կենտ, նման-տարբեր, մեծ-փոքր:
- Երեխաները կկարողանան նկարագրել առարկայի տարբեր հատկանիշները:
- Կզարգանա երեխաների երևակայությունը և ստեղծագործական մտածողությունը դերախաղի միջոցով:

ԹԱԹՄԱՆԸ

Փոքրիկ տղան դուրս էր եկել ձյունապատ անտառ իր տատիկի համար ցախ հավաքելու: Անտառով գնալիս նա կորցնում է թաթմանը: Դա մի գեղեցիկ դեղին բրդյա թաթման էր, որի եզրը մորթի էր և կարմիր բրդյա գծեր ուներ: Դաշտամուկը գալիս, մտնում է մեջը և ասում.

- Ի՞նչ տաքուկ է, էստեղ էլ կապրեմ:

Ցատկոտելով գալիս է գորտը:

- Ո՞վ է ապրում էս թաթմանի մեջ:

- Ես՝ Ճստճստան մկնիկը: Իսկ դու ո՞վ ես: - Ճստճստան մկնիկը, Կռկռան գորտը: Իսկ դու ո՞վ ես:

- Ես Արագավազ շլդիկն եմ: Ինձ էլ ներս չՁՔ թողնի:

- Դե լավ, արի:

Երկուսը երեք են դառնում: Մեկ էլ գալիս է աղվեսը և հարցնում.

- Ո՞վ է ապրում էս թաթմանի մեջ:

- Ճստճստան մկնիկը, Կռկռան գորտը, Արագավազ շլդիկը: Իսկ դու ո՞վ ես:

- Ես Աղվես քույրիկն եմ: Ի՞նչ կլինի, ինձ էլ ներս թողեք:

- Դե լավ, ներս արի:

Սկսում են արդեն չորսով ապրել: Մեկ էլ գայլն է գալիս, պտտվում է թաթմանի շուրջը և հարցնում.

- Ո՞վ է ապրում էս թաթմանի մեջ:

- Ճստճստան մկնիկը, Կռկռան գորտը, Արագավազ շլդիկը, Աղվես քույրիկը: Իսկ դու ո՞վ ես:

- Ես էլ Գորշ գայլն եմ: Ինձ էլ ներս թողեք:

- Դե լա՛վ, նեՐս արի:

Գայլն էլ է ներս մտնում, դառնում են հինգը: Մեկ էլ որտեղից որտեղ՝ վարազն է գալիս:

- Խռա՜, խռա՜, ո՞վ է ապրում էս ձեռնոցի մեջ:

- Ճստճստան մկնիկը, Կռկռան գորտը, Արագավազ շլդիկը, Աղվես քույրիկը, Գորշ գայլը: Իսկ դու ո՞վ ես:

- Խռա՜- խռա՜- խռա՜, ես էլ Ժանիք վարազն եմ: Ինձ էլ ներս թողեք:

- Այ քեզ փորձանք: Ով գալիս է՝ ինձ էլ ներս թողեք: Ախր տեղ չկա, ՈՒր մտնես:

- Խնդրում եմ, ներս թողեք:

- Դե լավ, մտիր, մեկ է՝ մտնելու ես:

Վարազն էլ է մտնում: Դառնում են արդեն վեցը, տեղերն այնքան է նեղանում, որ էլ ճար չի լինում: Մեկ էլ թփերը կոխոտելով, ճռթճռթացնելով, գալիս է արջը, թաթմանի շուրջը պտտվում ու թե.

- Ո՞վ է ապրում էս թաթմանի մեջ:

- Ճստճստան մկնիկը, Կռկռան գորտը, Արագավազ շլդիկը, Աղվես քույրիկը, Գորշ գայլը, Ժանիք վարազը: Իսկ դու ո՞վ ես:

- Օ-հո-հո՜, ինչ շատվոր եք: Ես Մրթմրթան արջն եմ: Ինձ էլ ներս թողեք:

- Ո՞նց թողնենք, առանց քեզ էլ տեղներս նեղ է:

- Դե լավ, մի բան արեք:

- Էհ, ինչ արած, մտիր մի կերպ:

Արջն էլ է մտնում, դառնում են յոթը: Թաթմանը արդեն ճղվելու վրա է:

Հանկարծ տղան նկատում է, որ թաթմանը կորցրել է: Հետ է դառնում, փնտրում է, փնտրում, շունն էլ առջևից է վազում: Վազում է, վազում, մեկ էլ տեսնում է՝ տղայի թաթմանը գալարվում է ինքն-իրեն: Ո՜նց է հաչում. «Հա՛ֆ-հա՛ֆ-հա՛ֆ», գազանները վախից դուրս են պրծնում թաթմանի միջից, ցրվում անտառով մեկ:

Տղան գալիս է, թաթմանը առնում ու գնում:

Աշխատանքների ընթացքը.

1) Մանկական թաթմանների մի զույգ դրեք ձեր գոգին: Խնդրեք մի երեխայի հագնել դրանք և նկարագրել, թե ինչ է զգում: Երեխաներին ուղղեք հետևյալ հարցերը.

Ինչպիսի՞ն են ձեր թաթմանները:

Եղե՞լ է, որ դրանք կորցնեք, արդյոք, պատժե՞լ են ձեզ:

Ի՞նչ եք կարծում, որտե՞ղ է հիմա ձեր կորցրած թաթմանը:

Եթե անտառում կորցրած լինեիք, ձեր կարծիքով, որևէ փոքր կենդանի կամ միջատ կմտներ՞ թաթմանի մեջ տաքանալու համար:

2) Արտահայտիչ կարդացեք հեքիաթը: Տվեք ամփոփիչ հարցեր.

Ձեր կարծիքով, թաթմանը ե՞րբ կպատռվի:

Ո՞րն է հեքիաթի ամենազարմանալի հատվածն, ըստ ձեզ:

3) Ցուցադրել թաթմաններ, և հնարավորություն տալ երեխաներին զննել դրանք: Առաջարկել երեխաներին ինքնուրույն պատրաստել թաթմաններ և ձեռնոցներ, ապա ձևավորել: Նրանք կարող են օգտվել ուսուցչի ցուցադրած նախշերի օրինակներից: Ժամանակ տրամադրեք, որպեսզի երեխաները կտրատեն և ցուցադրեն իրենց աշխատանքները: Ծնողներին հրավիրեք դասասենյակ, որտեղ երեխաները կցուցադրեն և կպատմեն իրենց կատարած աշխատանքների մասին:

4) Երեխաներին առաջարկեք դասարանից դուրս գալ: Ուսուցիչը առաջադրանք քարտերը և թաթմանը պահում է դասասենյակի տարբեր անկյուններում: Երեխաները մտնում են դասարան և միասին սկսում փնտրել թաթմանը: Ով գտնում է հուշող քարտը, պետք է տա ուսուցչին,

որպեսզի նա բարձրաձայն կարդա, որ մյուսները լսեն ու շարունակեն փնտրել թաթմանն ըստ հուշող առաջադրանքի: Ստորև ներկայացված են առաջադրանքների նմուշներ.

ա. Թաթմանը պահված է մեր դասասենյակում:

բ. Թաթմանը գտնվում է մեր հասակից բարձր տարածքում:

գ. Թաթմանը գտնվում է կանաչ գոտում:

դ. Թաթմանը ունի գեղեցիկ նախշեր:

5) Երբ երեխաները գտնում են թաթմանը, ուսուցիչը իր բառերով պատմում է հեքիաթը և հերթով կենդանիների նկարները փակցնում փոքր գրատախտակին ամրացված թաթմանի մեջ՝ հստակ շեշտադրելով կենդանիների խնդրանքը բարեկիրթ տոնով և հարգալից բառերով: Երեխաները կարող են օգնել ուսուցչին փակցնելու նկարները:

Այնուհետև երեխաներին հնարավորություն տվեք, նկարները փակցնելով, պատմել հեքիաթը՝ հարազատ մնալով բնագրին:

6) Երեխաների պատրաստած թաթմանները դրեք սեղանին: Դրանց մեջ կարող են լինել նաև առանց զույգի թաթմաններ: Երեխաները կփորձեն թաթմանների զույգեր կազմել: Առաջարկեք նրանց այդ ընթացքում պատմել, թե ինչ են փնտրում:

Երեխաները կփորձեն հաշվել՝ զույգերով, մեկական:

7) Խաղ՝ «Թաթմա՛ն, թաթմա՛ն, ո՞ւմ մոտ է թաթմանը»: Երեխաները շրջանաձև նստում են հատակին: Միասին վերհիշում են հեքիաթի կենդանիներին, յուրաքանչյուր երեխա մի կենդանու դեր է ստանում: Տղան երաժշտության տակ շրջում է շրջանով և թաթմանը գցում է: Երաժշտությունը դադարում է, և երեխան հարցնում է. «Թաթմա՛ն, թաթմա՛ն, ո՞ւմ մոտ է թաթմանը»: Գտնողը պետք է ասի. «Արագավազ շլդիկի մոտ է թաթմանը»: Նա էլ դառնում է հաջորդ գցողը:

8) Բեմադրել հեքիաթն այնպես, որ բոլորը մասնակցեն: Եթե երեխաները շատ են, ապա ավելացնել հերոսներին:

9) Տնային հանձնարարություն. պատրաստել հերոսին հատուկ թաթման և գլխարկ բեմականացման համար:

Աշխատանք՝ ըստ կենտրոնների

Արվեստի կենտրոն

Երեխաները թղթե ձեռնոցներ կպատրաստեն և կձևավորեն: Կսովորեն նախշերի օրինակներ:

Անհրաժեշտ նյութերը. գունավոր թղթեր, նշագրիչներ, մկրատ

Ի՞նչ պետք է անել.

1. Եթե հնարավոր է, ձեզ հետ բերեք դաջվածքներ ունեցող կամ գեղեցիկ ասեղնագործ ձեռնոցներ, բաճկոններ, կիսաշրջազգեստներ կամ վերնաշապիկներ, որպեսզի երեխաները զննեն և գնահատեն:

2. Ստվարաթղթից կտրատեք տարբեր չափերի թաթմաններ, որոնք երեխաները կօգտագործեն որպես նմուշներ իրենց թաթմանները կտրատելու համար:

3. Երեխաներին ցույց տվեք նախշերի տարբեր տեսակներ, բայց ասացե՛ք նրանց, որ իրենց գույնզգույն ձևավորումները կարող են տարբերվել դրանցից:

Մտածելու առիթ

Խնդրեք այն ծնողներին, ովքեր ազգագրական զգեստի կամ գեղեցիկ ասեղնագործ հագուստի նմուշներ ունեն, բերել դրանք և քննարկել դրանց մշակույթը երեխաների հետ: Ծնողներին խնդրեք բերել այնպիսի հագուստներ, որոնք երեխաները կարող են փորձել և որոնք շատ բարակ կամ նուրբ չեն:

Գրաճանաչության/Ընթերցանության կենտրոն

Դերաբաշխումով վերապատմել «Թաթմանը» հեքիաթը (կամ որոշակի հատվածները), ուշադրություն դարձնելով հատկապես այն հատվածներին, երբ ամեն մի նոր կենդանի աղերսում է մտնել թաթմանի մեջ տաքանալու համար:

Ֆիզկուլտուրա, խաղ

«Գտիր թաթմանը» և հուշող քարտեր

Մաթեմատիկայի և մանր խաղերի կենտրոն

Միմյանց համապատասխանող/ զույգ թաթմաններ:

Ի՞նչ կսովորեն երեխաները՝ զննել և գտնել թաթմանների նախշերի նմանությունները և տարբերությունները:

Անհրաժեշտ նյութերը. երեխաների իսկական թաթմաններ և ձեռնոցներ կամ թղթե ձեռնոցներ՝ նմանատիպ նախշերով:

Ի՞նչ է պետք անել.

1. Խառնել թաթմանների և ձեռնոցների խուրձը: Ցուցադրել դրանք սեղանի վրա: Սեղանի վրա դրե՛ք նաև այնպիսի թաթմաններ

և ձեռնոցներ, որոնք զույգ չունեն: Ավելի փոքր տարիքի նախադպրոցականների համար օգտագործեք թաթմանների ավելի քիչ զույգեր:

2. Հաշվե՛ք թաթմանները և ձեռնոցները մեկ առ մեկ, և ոչ թե զույգերով:
3. Թող երեխաները փորձեն թաթմանների զույգեր կազմել:
4. Իրենց աշխատանքի ընթացքում խնդրեք նրանց պատմել, թե ինչ են իրենք փնտրում: «Ես փնտրում եմ այն մեկը, որի բութ մատը կարմիր է»: «Ես փնտրում եմ այն մեկը, որը ներսից աստառապատ է»: «Ես փնտրում եմ վարդագույնը, որը ոլոր-մոլոր գծեր ունի»:
5. Երբ բոլոր զույգերը գտնվեն, հաշվե՛ք թաթմանների և ձեռնոցների զույգերի քանակը: Հաշվե՛ք այն ձեռնոցների քանակը, որոնք զույգ չունեն: Գուցե դրանց զույգերը կորել են անտառում, որպեսզի կենդանիները գտնեն դրանք:
6. Գտե՛ք, կա՞ն արդյոք բավարար քանակության թաթմանների և ձեռնոցների զույգեր դասարանի բոլոր երեխաների համար:

Մտածելու առիթ

Եթե դուք թղթից պատրաստեք թաթմաններ, երեխաները կարող են ձևավորել դրանք որպես արվեստի հանձնարարված առաջադրանքներ: Թող երեխաները միևնույն նախշը նկարեն ամեն թաթմանի վրա: Ավելի փոքր երեխաներին առաջարկեք գունավորել յուրաքանչյուր թաթմանը նույն գույնով:

Երաժշտության և շարժման համար

«Թաթման, թաթման, ու՞մ մոտ է թաթմանը» խաղը:

Ինչ կսովորեն երեխաները՝ մտապահել իրենց դերը՝ խաղը խաղալիս:

Անհրաժեշտ նյութերը՝ մեկ դեղին թաթման, աշխույժ երաժշտության ձայնագրություն, ձայնագրիչ, սահնակ կամ վագոն:

Ինչ է պետք անել.

1. Երեխաները շրջանաձև նստում են հատակին: Դրեք սահնակը կամ վագոնը շրջանի կենտրոնում:
2. Խնդրեք երեխաներին վերհիշել «Թաթմանը» հեքիաթի կենդանիներին:
3. Ամեն երեխայի տվեք հեքիաթից մի կենդանու դեր:

4. Առաջին անգամ դուք եղեք այն փոքրիկ տղան, որը կորցնում է թաթմանը: Միացրե՛ք երաժշտությունը և ձևացրե՛ք, թե ցախ եք հավաքում և դնում սահնակի վրա կամ վագոնի մեջ: Շարժվեք դեպի երեխաներից մեկը և իբր պատահաբար թաթմանը գցեք գետնին:
5. Անջատե՛ք երաժշտությունը և փնտրե՛ք ձեր թաթմանը վագոնի կամ սահնակի շուրջը, ապա հարցրեք «Թաթման, թաթման, ու՞մ մոտ է իմ թաթմանը»:
6. Երեխան «Ինձ մոտ է» ասելու փոխարեն պետք է պատասխանի՝ կենդանու անունը տալով. «Շլդիկի մոտ է թաթմանը»:
7. Երեխան, որի մոտ է թաթմանը, դառնում է թաթման «գցողը»:

Մտածելու առիթ

Որպեսզի այնպես չպատահի, որ որոշ երեխաներ չընտրվեն, շշնջացեք «գցողի» ականջին այն երեխայի անունը, որը դեռևս չի ստացել թաթմանը:

ՀԱՎԵԼՎԱԾ #6

Ինտեգրված պարապմունք

<u>Պարապմունքի թեման. «Բարեկիրթ խոսք»</u>

Տեսակը. խոսքի զարգացում և կառուցողական աշխատանք

Պարապմունքի նպատակները.

Երեխաները

1. կսովորեն խնդրանք ձևակերպել, բարեկիրթ բառեր և արտահայտություններ գործածել և բարեկիրթ վարքագիծ դրսևորել,
2. կսովորեն թղթի ծալումներով շնիկ պատրաստել,
3. հետևելով 3 և ավելի քայլերից բաղկացած հրահանգներին՝ կկատարեն տրված առաջադրանքը,
4. կաշխատեն՝ համագործակցելով, միմյանց աջակցելով և նոր մտքեր առաջարկելով:

Անհրաժեշտ նյութեր.

- A4 չափսի թղթեր երեխաների թվով,
- մեծ պաստառ՝ բլրի նկարով, որի հետևից ծուխ է դուրս գալիս, իսկ առջևի մասում՝ մեծ շան պատկեր (նկարված կամ ամրացված),
- կպչուն ժապավեն
- կառուցողական նյութեր (մեծ խաղադեկորներ, լեգոներ և այլն):

Պարապմունքի ընթացքը.

Երեխաները նստած են սեղանների շուրջ: Դաստիարակը նույնպես կարող է նստած լինել: Պաստառը փակցված է բոլոր երեխաների համար տեսանելի տեղում:

<u>Խթանման փուլ</u>

Դաստիարակը հարցնում է երեխաներին.

- Երեխանե՛ր, ովքե՞ր են տանը շնիկ պահում, կամ ի՞նչ հետաքրքիր պատմություններ եք լսել շնիկների մասին: Պատմեք ձեր կողքին նստած ընկերոջը:

Երեխաները պատմում են միմյանց իրենց պատմությունները: Աշխատանքի ընթացքում դաստիարակը մոտենում է զույգերին՝ փոքրերին աջակցելու և/կամ ընթացքին հետևելու համար: Այնուհետև 2 կամ 3

երեխայի խնդրում է ամբողջ խմբին պատմել իր ընկերոջ պատմածը: Փոքր տարիքի կամ դժվարացող երխաները կարող են պատմել իրենց պատմությունը: Աշխատանքի տևողությունը՝ 3-4 րոպե:

<u>Իմաստի ընկալման փուլ</u>

Դաստիարակ - Հիմա ես ձեզ կպատմեմ մի հեքիաթ շնիկի մասին:

Լինում է չի լինում մի շնիկ է լինում: Մի օր նա փախչում է տնից: Գնում-գնում, հասնում է մի բլրի, որի վրա բազմաթիվ գույնզգույն ծաղիկներ կան: Շնիկն ուզում է բարձրանալ բլրի վրա, բայց անընդհատ սահում և ընկնում է: Հանկարծ նա տեսնում է մի մեծ շուն:

Հեքիաթը պատմելու ընթացքում դաստիարակը թղթի ծալումներով պատրաստում է շնիկը: Աշխատանքը կատարվում է դանդաղ և այնպես, որ ընթացքը տեսանելի լինի երեխաներին:

Դաստիարակն իր պատրաստած շնիկն ամրացնում է մեծ շան կողքին և շարունակում է պատմել հեքիաթը:

Փոքրիկ շնիկը հարցնում է մեծ շանը.

- Ո՞ւր եք գնում:

Մեծ շունը պատասխանում է.

- Գնում եմ ճանապարհորդության:
- Որ խնդրեմ, ինձ էլ կտանե՞ք ձեզ հետ:
- Իհա՛րկե, այդքան բարեկիրթ շնիկին ինչպե՞ս կարող եմ ինձ հետ չտանել: Գնացի՛նք:
- Ի՜նչ լավ է. – ուրախությունից ցատկոտում է շնիկը:

Լիցքաթափող վարժություն. «Գնում ենք ճանապարհորդության»:

Խաղը վարում է դաստիարակը: Երեխաները կանգնում են շարքով, մեկը մյուսի հետևից: Խումբը «գնում է ճամփորդության»՝ ճանապարին հաղթահարելով տարբեր երևակայական արգելքներ՝ մեծ քար, առվակ, ջրափոս, հաստաբուն ծառ, խիտ թփուտներ և այլն: Արգելքների «հաղթահարումը» ցույց տալու համար դաստիարակն ու երեխաները տարբեր շարժումներ են կատարում. ցատկում են, քայլում են կռացած և այլն:

Խաղի ավարտից հետո երեխաները նորից նստում են սեղանների շուրջը: Դաստիարակը, մատնացույց անելով պաստառը, ասում է.

- Երեխաներ, ի՞նչ եք կարծում, ո՞ւր կգնան այս շները միասին:

Երեխաներից մի քանիսի պատասխանները լսելուց հետո դաստիարակն ասում է.

- Եկեք միասին շնիկներ պատրաստենք և թող մեր շնիկներն էլ նրանց հետ գնան ճանապարհորդության:

Երեխաները, հետևելով հրահանգներին, թղթի ծալումների հերթագայմամբ կատարում են աշխատանքը: Աշխատանքի ընթացքում դաստիարակն աջակցում է փոքր տարիքի կամ օգնության կարիք ունեցող երեխաներին:

Երբ բոլորն ավարտում են աշխատանքը, դաստիարակը հարցնում է.

- Երեխաներ, ինչ եք կարծում, ինչպես դիմենք նրանց, որ մեր շնիկներին էլ իրենց հետ տանեն:

Երեխաները հերթականությամբ մոտենում և խնդրանքով դիմում են պաստառի շներին, որպեսզի նրանք իրենց շնիկներին էլ տանեն ճամփորդության:

Այս փուլում դաստիարակին անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որպեսզի երեխաները կարողանան ձևակերպել խնդրանքը, գործածեն դիմելու բարեկիրթ ձևեր, օրինակ՝ այսպիսի տարբերակներ.

- *Խնդրու՛մ եմ, իմ շնիկին էլ ձեզ հետ տարեք:*
- *Եթե խնդրեմ, իմ շնիկին էլ կտանեք ձեզ հետ:*
- *Իմ շնիկն էլ է շատ ցանկանում ձեզ հետ գալ: Կարո՞ղ եք տանել:*
- *Ես ձեզ շատ եմ խնդրում, որ իմ շնիկն էլ ձեզ միանա:*

Երեխաներն իրենց շնիկներն ամրացնում են պաստառին:

<u>Կշռադատման փուլ</u>

Աշխատանք փոքր խմբերով. կառուցել կացարաններ շնիկների համար

Դաստիարակը բաժանում է երեխաներին 3-4 հոգանոց տարատարիք խմբերի, որպեսզի աշխատանքի ընթացքում մեծերը կարողանան օգնել փոքրերին:

Դաստիարակը պատմում է երեխաներին.

- Մեր շնիկները գնացել են ճանապարհորդության, բայց շուտով կվերադառնան, և մենք պետք է մտածենք, թե նրանք որտեղ են ապրելու: Որտե՞ղ են ապրում շները:

Երեխաների պատասխանները լսելուց հետո.

- Ինչպիսի՞ տնակներ կարող ենք կառուցել նրանց համար: Խնդրում եմ, նկարագրեք այդ տնակները:

Երեխաների պատասխանները լսելուց հետո աշխատանքը կատարելու համար կառուցողական նյութեր տրամադրել:

Երեխաներին կարելի է խնդրել, որպեսզի աշխատանքը սկսելուց առաջ խմբով քննարկեն և որոշեն, թե ինչպիսի շինություն են կառուցելու:

Քննարկման ընթացքում դաստիարակը աջակցելու նպատակով մոտենում է խմբերին: Պետք է հիշեցնել երեխաներին, որ նրանք կարող են հավելյալ նյութեր վերցնել շինարարության և դերային խաղերի կենտրոններից:

Աշխատանքն ավարտելուց հետո յուրաքանչյուր երեխա շնիկներից մեկին պաստառից տեղափոխում է կառույցի մեջ՝ շնիկի անունից որևէ ձևով երախտագիտություն հայտնելով:

Վերջում բոլոր խմբերը դիտում են մյուսների ստեղծած կառույցները:

Խորհուրդ դաստիարակին. Ուշադրություն դարձրեք կառուցողական աշխատանքի ժամանակ (շնիկ պատրաստելիս) դժվարացող երեխաներին և հաջորդ օրվա ընթացքում (օրինակ՝ առավոտյան ընդունելության ժամանակ կամ օրվա վերջում տուն գնալուց առաջ) նրանց հետ կրկնեք նույն առաջադրանքը որոշ օգնությամբ:

ՀԱՎԵԼՎԱԾ #7

Ինտեգրված պարապմունք

Պարապմունքի թեման. «Հույզեր և զգացմունքներ»

Տեսակը. պատմվածքի ունկնդրում և քննարկում, կառուցողական աշխատանք/նկարչություն, բեմականացում

Առաջարկվող տեքստը՝ *«Ձեկը զայրանում է», հեղինակ՝ Թեդի Սլեյթր*

Խորհուրդ դաստիարակին. *Պարապմունքին պատրաստվելիս անհրաժեշտ է ընթերցել «Ձեկը զայրանում է» պատմվածքից հետո ներկայացված «Խորհուրդ ծնողներին, դաստիարակներին և երեխայի հետ շփվող այլ մեծահասակներին» բաժինը, ինչպես նաև «Երբ ես զայրանում եմ» պատմվածքը: Այդ ամենը կօգնի դաստիարակին նպատակային քննարկումներ վարել երեխաների հետ, նրանց սովորեցնել կոնֆլիկտային իրավիճակներին խոսքի միջոցով արձագանքելու, իրենց զգացմունքներն ու հույզերը բառերով արտահայտելու տարբերակներ:*

Պարապմունքի նպատակները.

Երեխաները

1. կսովորեն կոնֆլիկտային իրավիճակին արձագանքել խոսքի միջոցով,
2. կսովորեն հարգանք ցուցաբերել ուրիշների հույզերի և զգացմունքների, ինչպես նաև կատարած աշխատանքների նկատմամբ,
3. կբեմականացնեն ընթերցված նյութը,
4. կսովորեն բառերով արտահայտել իրենց զգացմունքներն ու հույզերը
5. կսովորեն հույզերի և զգացմունքների հետ կապված մի շարք բառեր. «զայրանալ», «կատաղել», «զվարճանալ»,
6. կամրապնդեն մկրատը ճիշտ բռնելով ըստ ուրվագծի կտրատելու հմտությունները (5-6 տարեկան երեխաները):
7. կամրապնդեն պահանջվող մակերեսը հավասարաչափ ներկելու, երանգավորված գունային մակերես ստանալու հմտությունները (4-5 տարեկան երեխաները):

Անհրաժեշտ նյութեր.

- Զեկի, Սոֆիի և մայր արջի ուրվագծված, բայց չկտրած և չներկված նկարներ (5-6 տարեկան երեխաների թվով),
- Զեկի, Սոֆիի և մայր արջի ուրվագծով կտրած, բայց չներկված նկարներ (3-5 տարեկան երեխաների թվով),
- Փայտե ձողիկներ (երեխաների թվով),
- Գունավոր մատիտներ, սոսինձ, մկրատ՝ սեղանների մոտ աշխատանքը կազմակերպելու համար

Պարապմունքի ընթացքը

Երեխաներին նստեցնել շրջանաձև:

Խթանման փուլ

Դաստիարակը հարցնում է երեխաներին.

- Երեխաներ, ինչ եք զգում, երբ ձեր ընկերը կամ քույրը/եղբայրը ինչ-որ բան է անում, որը ձեզ դուր չի գալիս:

Դաստիարակը «Մտագրոհ» մեթոդով վեր է հանում երեխաների պատասխանները և դրանք գրի է առնում գրատախտակին:

Աշխատանքի տևողությունը՝ 3-4 րոպե:



Իմաստի ընկալման փուլ

Դաստիարակ - Հիմա ես ձեզ համար կընթերցեմ մի պատմություն Զեկ արջուկի մասին, որը զայրացել էր քրոջ վրա:

Ընթերցել «Զեկը զայրանում է» պատմվածքը «Դադարներով ընթերցանություն» մեթոդով (տես կից ներկայացվող տեքստը և ցուցումները):

Դադար 1-ին

Հարց – Ձեր կարծիքով ինչ էր զգում Ձեկը:

Երեխաներից մի քանիսի պատասխանները լսելուց հետո դաստիարակն ընթերցում է հաջորդ հատվածը և բացատրում է «զայրանալ» և «կատաղել» բառերի իմաստը, միասին գտնում են հոմանիշներ:

Դադար 2-րդ

Հարց – Ձեր կարծիքով ինչի՞ մասին էին զրուցում Ձեկն ու մայրիկը:

Երեխաներից մի քանիսի պատասխանները լսելուց հետո դաստիարակն ընթերցում է հաջորդ հատվածը և բացատրում է «զվարճանալ» բառի իմաստը, միասին գտնում են հոմանիշներ:

Դաստիարակի աշխատանքը դյուրին դարձնելու համար պատմվածքի տեքստում նույնպես ներառված են դադարների ժամանակ տրվող հարցերը:

Քննարկում

Դաստիարակը երեխաներին տալիս է հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս կվարվեիք Սոֆիի հետ, եթե Ձեկի փոխարեն դուք լինեիք:
- Ձեր կարծիքով, Ձեկն ինչպիսի՞ բարեկիրթ բառեր կարող էր օգտագործել ոտքերով դոփելու, գոռգոռալու կամ կռվելու փոխարեն:

Լսել երեխաների պատասխանները:

Աշխատանք փոքր խմբերով. պատրաստել տիկնիկներ դերային խաղի համար:

Քննարկման ավարտից հետո երեխաներին բաժանել 2 խմբի՝ առաջինում ընգրկելով 5-6 տարեկան երեխաներին, երկրորդում՝ մինչև 5 տարեկաններին:

Դաստիարակը և դաստիարակի օգնականը աջակցում են խմբերի աշխատանքներին:

Առաջին խմբի երեխաները դաստիարակի աջակցությամբ գունավոր մատիտներով գունազարդում են Ձեկի, Սոֆիի և մայր արջի նկարները, ուրվագծով կտրում են, որից հետո սոսնձում են փայտե ձողիկներին:

Երկրորդ խմբի երեխաները դստիարակի օգնականի աջակցությամբ գունավոր մատիտներով միայն գունազարդում են Ձեկի, Սոֆիի և մայր արջի ուրվագծով կտրած նկարները և սոսնձում են փայտե ձողիկներին:

Կշռադատման փուլ

Երբ բոլորն ավարտում են աշխատանքը, դաստիարակներից յուրաքանչյուրն իր խմբի երեխաներին հարցնում է.

- Այս պատմվածքի ո՞ր հատվածը ձեզ ամենաշատը դուր եկավ և ինչո՞ւ:

Պատասխանելուց հետո երեխաները և դաստիարակներն իրենց խմբերում բեմականացնում են որևէ հատված:

Դաստիարակը շարունակում է աշխատանքը ավագ խմբի հետ և երեխաների հետ քննարկում է հետևյալ հարցը.

- Ինպե՞ս պետք է վարվենք, երբ մեր ընկերներից որևէ մեկը մեզ տխրեցնում կամ զայրացնում է: Ի՞նչ բառերով կարող ենք նրան բացատրել մեր զգացմունքները:

Քննարկման արդյունքում երեխաները պետք է գան այն եզրակացության, որ զգացմունքները պետք է արտահայտել բառերով, այլ ոչ թե ագրեսիվ գործողություններով:

Այնուհետև դաստիարակը երեխաների հետ միասին ձեևակերպում է խմբասենյակի մի նոր կանոն և ավելացնում կանոնների պաստառին. «Զայրանալիս մեր զգացմունքներն արտահայտում ենք ոչ վիրավորական բառերով»:

Կրտսեր խումբն այդ ընթացքում կարող է շարունակել բեմականացումները կամ անցնել շինարարության կենտրոն՝ կառուցելու «Ձեկի քաղաքը»:

Թեդի Սլեյթր

ՉԵԿԸ ՉԱՅՐԱՆՈՒՄ Է

Չեկն ամբողջ օրն աշխատեց, որ կառուցի իր փոքրիկ քաղաքը:

Մեկ էլ հանկարծ՝ ԾԸՐԸՂԽԿ: Քույրը ոտքի հարվածով քանդեց շինությունը:

Դադար 1-ին

Հարց. –*Ձեր կարծիքով, ինչ էր զգում Չեկը:*

Չեկը *զայրացավ:*

Չեկն իրեն շատ վատ էր զգում:

Չեկն իսկապես շատ-շատ բարկացավ:

Նա ոտքերով ցաք ու ցրիվ արեց մնացած կառույցը, սկսեց ոտքերով դոփել ու գոռգոռալ:

Ահա, թե ինչպես է նա սովորաբար արտահայտում իր զայրույթը:

Չեկի աչքերը լցվում են արցունքով:

Նրա դեմքը կարմրում է:

Նա մահճակալի վրայից բարձը նետում է հատակին:

Նա շատ է ուզում հրել քրոջն ու կռվել նրա հետ:

Բայց մայրիկն ասում է, որ դա սխալ կլինի:

Նա, շոյելով Չեկին, առաջարկում է գնալ զբոսանելու:

Նրանք երկար զբոսնում են, ու Չեկն այդ ընթացքում խոսում ու պատմում է իր բարկության մասին:

Նա ասում է.

- Սոֆին ինձ ուղղակի կատաղեցնում է:

-Գիտեմ…,- մեղմորեն պատասխանում է մայրիկը:

…և երկար զրուցում են…

Դադար 2-րդ

Հարց. – *Ձեր կարծիքով, ինչի՞ մասին էին զրուցում Չեկն ու մայրիկը:*

- Սոֆին միշտ քանդում կամ փչացնում է իմ իրերը:
- Գիտեմ, փոքր քույրիկները երբեմն կարող են վնասարար բաներ անել:

…և երկար զրուցում են…

- Բայց երբեմն Սոֆին շատ բարի ու զվարճալի է լինում: Իզուր գոռացի նրա վրա:
- Միգուցե ասես նրան այդ մասին, երբ տուն գնանք:
- Այո, փոշմանեցի արածիս համար, երևի ներողություն խնդրեմ:
- Իմ խելացի ու բարի տղա:

Զեկն ու մայրիկը պաղպաղակի խանութում մի քիչ էլ զրուցեցին կատարվածի մասին:

Զեկն այլևս բարկացած չէր: Նա ծիծաղում և հաճույքով լպստում էր պաղպաղակը:

Երբ տուն վերադարձան, Սոֆին վազեց ու փարվեց Զեկին.

- Զեկ, ես քեզ կարոտել էի: Խնդրում եմ մի բարկացիր ինձ վրա: Ես քո տնակները նորից սարքել եմ, ապա նայիր:
- Զեկը նայեց Սոֆիի շինած տնակներին, ժպտաց և նրան մեկնելով ախորժելի պաղպաղակը՝ ասաց.
- Ներիր, որ գոռացի քեզ վրա: Արի՛ հաշտվենք:

Խորհուրդ ծնողներին, դաստիարակներին և երեխայի հետ շփվող այլ մեծահասակներին

Հաղորդակցությունը երեխաների հետ չափազանց կարևոր է:

Որպես երեխայի մտերիմ մեծահասակներ բոլորս էլ ուզում ենք մեր երեխաներին երջանիկ տեսնել և նրանց հեռու պահել դժվար ու ցավոտ իրավիճակներից ու բացասական հույզերից: Դժբախտաբար միշտ չէ, որ դա հնարավոր է անել: Նրանք ստիպված են շատ տարբեր հույզեր ու զգացմունքներ ապրել. ուրախություն և տխրություն, ոգևորություն և վախ, սեր և զայրույթ: Այդուհանդերձ, հնարավոր է օգնել մեր երեխաներին այնպես կառավարել իրենց բացասական հույզերը, որպեսզի կարողանան լիարժեք հաճույք ստանալ իրենց դրական հույզերից: Մենք հաճախ կարող ենք ինչ-որ գործնական խորհուրդ տալ կամ առաջարկություն անել կոնկրետ իրավիճակի համար, սակայն բացասական հույզերը հաղթահարելու նպատակով երեխային օգնելու ամենահաջող և գործուն տարբերակը բաց հաղորդակցությունն է, որի ժամանակ երեխան կարող է խոսել, արտահայտվել, պատմել իր հույզերի ու զգացմունքների մասին և քննարկել դրանք ծնողների հետ:

Իրենց հույզերի և զգացմունքների մասին հոգատար, ուշադիր և ապրումակցող ծնողների, դասիարակների և այլ մտերիմ մեծահասակների հետ խոսելը երեխաներին սովորեցնում է, որ շատ բնական է, երբ մարդը երբեմն զայրանում, տխրում կամ վախենում է: Դա շատ կարևոր է նաև այն առումով, որ երբ երեխան ձեզ հնարավորություն է տալիս մխիթարել ու հանգստացնել իրեն, սովորում է արտահայտել և ուսումնասիրել այդ զգացմունքները: Վստահելով, որ դուք կհասկանաք իրեն, երեխան սովորում է վստահել իր սեփական ուժերին և կարողություններին՝ իրեն անհանգստացնող զգացմունքներն ու հույզերը հաղթահարելու և կյանքում ապահով զգալու համար:

ՁԵԿԸ ՁԱՅՐԱՆՈՒՄ Է

Այս պատմվածքում եղբայրն անասելի բարկացած է փոքր քրոջ վրա: Դրա համար, իհարկե, պատճառ կա: Երեխաները հաճախ զայրանում են իրենց քույրերի ու եղբայրների, ընկերների և նույնիսկ ծնողների վրա: Շատ կարևոր է նրանց թույլ տալ հասկանալու, որ բոլոր մարդիկ էլ երբեմն կարող են զայրանալ: Հոգատար, կարեկից և չդատապարտող ծնողի, դաստիարակի կամ այլ մտերիմ մեծահասակի հետ մի քիչ կիսվելը, զգացմունքներն արտահայտելը կարող է օգնել երեխային լիցքաթափվել և ազատվել զայրույթի ու բարկության բացասական հույզերից: Անհրաժեշտ է երեխային թույլ տալ և օգնել այդ հույզերն արտահայտել բառերով: Այդ դեպքում կպակասի այն բանի հավանականությունը, որ երեխան իր բացասական հույզերն արտահայտելու համար կդիմի ֆիզիկական բռնության կամ այլ ագրեսիվ միջոցների:

Կորնելիա Մանդե

ԵՐԲ ԵՍ ԶԱՅՐԱՆՈՒՄ ԵՄ

Ես ուրախ բնավորություն ունեմ: Սիրում եմ խաղալ, շփվել մարդկանց հետ, բայց երբեմն ես զայրանում եմ, որից հետո վատ եմ զգում և տարբեր ելքեր եմ փնտրում:

Ես զայրանում եմ, երբ ինձ ծաղրում են:

Ես զայրանում եմ, երբ խաղի ամենակարևոր պահին ստիպված եմ դադար տալ և հավաքել սենյակս:

Ես շատ եմ զայրանում, երբ անձրև է գալիս հենց այն ժամանակ, երբ վերջապես կարող էի գնալ լճում լողալու:

Ես սարսափելի բարկանում եմ, երբ ամեն ջանք գործադրում եմ, բայց չեմ կարողանում իմ նկարած նկարն իմ ուզած տեսքին բերել: Այդ ժամանակ ես այն պարզապես ճմռթում եմ և նետում աղբարկղը:

Երբ ուսուցիչն ինձ դիտողություն է անում դասի ժամանակ խոսելու համար, իսկ ես բոլորովին չեմ խոսել, այլ ինչ-որ մեկն է ինձ բան ասել, ապա ես ուղղակի գազազում եմ: Չէ՞ որ դա արդարացի չէ՞:

Զայրույթը, բարկությունը ուժեղ և սուր զգացմունքներ են:

Երբ զայրանում եմ, ուզում եմ ինչ-որ վատ բան ասել, գոռալ կամ խփել:

Բայց նման ցանկություն ունենալը նույնը չէ, ինչ որ անելը:

Հույզերից ծնված ցանկությունը չի կարող որևէ մեկին հարվածել կամ ինձ անխորժ վիճակի մեջ դնել, բայց դրա հետևանքով գործողության դիմելը կարող է:

Երբ ուզում եմ ինչ-որ վատ բան ասել, գոռալ կամ խփել, կարելի է դրա փոխարեն այլ բան անել:

Նախ կարող եմ հեռանալ ինձ զայրացնող մարդուց: Հետո կարող եմ խորը շունչ քաշել և ուժեղ արտաշնչել՝ զայրույթը դուրս քշելով իմ ներսից:Ես կարող եմ զայրույթս մեղմել՝ վազելով, հեծանիվ քշելով կամ անելով մի բան, որն ինձ շատ դուր է գալիս, օրինակ՝ խաղալ իմ սիրած խաղալիքով:

Որոշ ժամանակ անց ես կրկին ինձ լավ եմ զգում և կարող եմ ուրախ լինել:

Ինձ զայրացնող որոշ բաներ փոխել չի լինի, ինչպես օրինակ, երբ մեր թիմը պարտվում է կամ իմ սիրած ինչ-որ բաներ փչանում են:

Սակայն, երբ ես երբեմն զայրանում եմ, ուրեմն պետք է ինչ-որ բան փոխվի: Հավանաբար դա ես պիտի լինեմ: Երևի ինձ պետք է հանգստանալ կամ լաց լինել: Հավանաբար լավ կլինի, եթե ես որոշ ժամանակ առանձնանամ ու մտածեմ, թե ինչն ինձ այդպես զայրացրեց:

Երևի ուրիշ մեկը պետք է փոխվի: Միգուցե այդ ուրիշ մեկը պետք է ավելի սիրալիր լինի իմ նկատմամբ, կամ դադարի անարդար լինել: Այդ դեպքում ես կարող եմ ինքս փոխվել և չանել այն, ինչ անում եմ:

Այդ ամենը հասկանալու համար ինձ օնություն է պետք: Ես կարող եմ նաև ինչ-որ մեկին պատմել իմ կարիքների մասին: Ես կարող եմ լսել դիմացինիս ասածները: Խոսելը և լսելը սովորսբսր օգնում են շատ բաներ շտկել:

ԵՍ ՈՐՈՇԵՑԻ

Երբ զայրանում եմ, պարտադիր չէ, որ երկար զայրացած մնամ:

Ես կարո՛ղ եմ մեղմել զայրույթս, որպեսզի ոչ ոքի չվնասեմ և ինքս էլ անախորժ վիճակի մեջ չընկնեմ:

Ես հիմա գիտեմ, թե ինչ կարող եմ անել, երբ զայրացած եմ:

ՀԱՎԵԼՎԱԾ # 8

Տեքստեր ընթերցանության և քննարկման համար

Դեյվիդ Փեյս

ԷԴՎԱՐԴԸ ԳՆՈՒՄ Է ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ

Էդվարդը շատ էր սիրում կենդանիներ և աշխարհում ամենից շատ ցանկանում էր, որ կարողանա առաջին անգամ ինքը որևէ կենդանի հայտնաբերի:

Մի օր Էդվարդը ճանապարհ ընկավ դեպի վայրի բնության գողտրիկ վայրերը, որպեսզի որևէ նոր բան հայտնաբերի:

Տանից դեռ շատ չհեռացած, նա մեծ կանաչ թփուտի միջից ինչ-որ ՃՍՏՃՍՏՈՑ և ԽՇԽՇՈՑ լսեց:

- Ըհը՛, -ասաց Էդվարդը:- Սա ի՞նչ է: Ես ինչ-որ Ճստլիկ կրծողներ հայնաբերեցի:

- Ճըստ-ճըստ, մենք ճստլիկ կրծողներ չենք: Մենք մկներ ենք, - ճստճստացին մկները:

Եվ Էդվարդը գրեց իր նոթատետրում. «Մկներ»:

Քիչ անց Էդվարդը ներքևի լճակից ԿՌԿՌՈՑ լսեց. «ԿԸ՛ՌՌ, ԿԸ՛ՌՌ»

- Ըհը՛, -ասաց Էդվարդը:- Սա ի՞նչ է: Ես ինչ-որ կռկռան ցատկորդներ հայնաբերեցի:

- Կը՛ռռռ, կը՛ռռ, մենք կռկռան ցատկորդներ չենք: Մենք գորտեր ենք,- կռկռացին գորտերը:

Եվ Էդվարդը գրեց իր նոթատետրում. «Գորտեր»:

Հետո Էդվարդը ծեր խնձորենու բարձր ճյուղերի միջից ՖՇՇՈՑ լսեց. «ՖԸ՛ՇՇՇ, ՖԸ՛ՇՇՇ»:

- Ըհը՛, -ասաց Էդվարդը:- Սա ի՞նչ է: Ես ինչ-որ սողացող պարան հայնաբերեցի:

- Ֆը՛շշշշշ, ես սողացող պարան չեմ: Ես օձ եմ, - ֆշշաց օձը:

Եվ Էդվարդը գրեց իր նոթատետրում. «Օձ»:

Հետո Էդվարդը ներքևում, եղեգների միջից ԿՌՆՉՈՑ լսեց. «ԿՌՈՒՈ՛Ւ, ԿՌՈՒՈ՛Ւ»:

- Ըհը՛, -ասաց Էդվարդը:- Սա ի՞նչ է: Ես ինչ-որ Ձրակռինչներ հայնաբերեցի:

- Կռուո՛ւ, կռուո՛ւ, մենք Ձրակռինչներ չենք: Մենք բադեր ենք, - կռնչացին բադերը:

Եվ Էդվարդը գրեց իր նոթատետրում. «Բադեր»:

Հետո Էդվարդը տերևների միջից շատ մեղմ ՉՓՉՓՈՑ լսեց. «ՉԸ՞Փ - ՉԸ՞Փ»:

- Ըհը՛, -ասաց Էդվարդը:- Սա ի՞նչ է: Ես Տերևաչփչփիկ հայնաբերեցի:

- Չը՛փ-չը՛փ, ես Տերևաչփչփիկ չեմ: Ես թրթուր եմ, - շատ ցածր ձայնով ասաց թրթուրը:

Եվ Էդվարդը գրեց իր նոթատետրում. «Թրթուր»:

Հանկարծ Էդվարդը լսեց ՃՍՏՃՍՏՈՑ, ԽՇԽՇՈՑ, ԿԸՌՌՌ-ԿԸ-ՌՌՌ-ԿՌԿՌՈՑ, ՖԸՇՇՇ-ՖԸ-ՇՇՇ-ՖՇՇՈՑ, ԿՌՈՒ-ԿՌՈՒ-ԿՌՆՉՈՑ, ՄՅԱՈՒ-ՄՅԱՈՒ-ՄԼԱՎՈՑ, ՀԱՖ-ՀԱՖ-ՀԱՉՈՑ և շատ, շատ, շատ մեղմ ՉԸՓ-ՉԸՓ-ՉՓՉՓՈՑ: Ու նաև ջրի նման կարկաչուն մի ձայն, որը կանչում էր.

-ԷԴ -ՎԱԱՄՐԴ, Է՞Դ - ՎԱԱՄՐԴ՚:

- Ըհը՛, -ասաց Էդվարդը:- Սա ի՞նչ է: Ես Ձրաշփիկ եմ հայնաբերել:

-Ես Ձրաշփիկ չեմ, ես Մայրիկ եմ,- ասաց Էդվարդի մայրիկը:- Եվ ես հայտնաբերել եմ մի Էդվարդ, որը լողանալու կարիք ունի:

Եվ Մայրիկը գրառեց Էդվարդի նոթատետրում. «ԼՈԳԱՆՔ»:

Տուն գնալիս Էդվարդը ողջ Ճանապարհին մայրիկին պատմում էր իր հայտնագործած կենդանիների և նրանց արձակած տարբեր ձայների մասին: Մայրիկը լսում էր հետքրքրությամբ և Էդվարդի հետ միասին փորձում էր կրկնօրինակել կենդանիների ձայները: Էդվարդը շատ գոհ էր իր ճամփորդությունից:

ԿՌԻՎՆ ՈՒ ՎԵՃԸ ՄԻՇՏ ԿՈՐՍՏԱԲԵՐ ԵՆ

(հնդկական հեքիաթ)

Մի շնագայլ, որը նոր էր ամուսնացել, ապրում էր գետի ափին: Մի օր շնագայլի կինը խնդրեց, որ ճաշին իր համար ձուկ բերի: Շնագայլը խոստացավ կատարել նրա խնդրանքը, թեև լողալ չգիտեր:

Նա անաղմուկ սողաց դեպի գետը և տեսավ, թե ինչպես երկու փոկ մի հսկայական ձուկ էին որսացել և, նրա հետ կռիվ տալով, փորձում էին ափ քարշ տալ: Ձկանը սատկեցնելուց հետո նրանք սկսեցին կռվել, թե ինչպես այն բաժանեն միմյանց միջև:

- Ես առաջինը տեսա, ուստի պետք է ամենամեծ բաժինն իմը լինի,- ասաց փոկերից մեկը:

- Բայց ես փրկեցի քեզ խեղդվելուց, երբ փորձում էիր ձկանը բռնել,- առարկեց մյուսը:

Նրանք շարունակեցին վիճել, մինչև որ շնագայլը մոտեցավ և առաջարկեց լուծել վեճը: Փոկերը համաձայնեցին: Շնագայլը ձուկը բաժանեց երեք մասի: Փոկերից մեկին նա տվեց գլուխը, իսկ մյուսին՝ պոչը:

- Մեջտեղի մասը,- ասաց նա,- հասնում է դատավորին:

Փոկերը վեցրին իրենց բաժինը և գլխահակ հեռացան:

Շնագայլն ուրախ-ուրախ գնաց՝ ասելով.

- Կռիվն ու վեճը միշտ կորուստ են բերում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մանկապարտեզի տնօրենի ուղեցույց, 1-ին պրակ, ՀՀ ԿԳՆ, ԿԱԻ, Երևան,2007թ.:
2. Մանկապարտեզի տնօրենի ուղեցույց, 2-րդ պրակ, ՀՀ ԿԳՆ,ԿԱԻ, Երևան, 2008թ.:
3. Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ, ԿԳՆ, ՅՈՒՆԻՍԵՖ (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ), Երևան, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ: Փրինթինֆո, 2011թ.:
4. Հ.Միտոյան, Լ.Սմբատյան, «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», Էդիթ պրինտ հրատարակչություն, 2010թ.:
5. Լ. Մանուկյան, Հ. Միտոյան և ուրիշներ, «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», Երևան, 2008թ.:
6. Ռ.Ծառուկյան, Հ.Միտոյան, Լ.Սմբատյան, Ն.Նիկողոսյան, «Այլընտրանքային մոդելներով 5-6 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության Կազմակերպումը», Երևան, Փրինթինֆո, 2011թ.:
7. Հ. Միտոյան և ուրիշներ, «Մանկապարտեզի միջին խմբի (4-5 տարեկանների) կրթական համալիր ծրագիր», ՀՀ ԿԳՆ, ԿԱԻ, Երևան, ԿԱԻ, 2011թ.:
8. Ա.Հովհաննիսյան և ուրիշներ, «Մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբի (3-4 տարեկանների) կրթական համալիր ծրագիր», ՀՀ ԿԳՆ, ԿԱԻ, Երևան, ԿԱԻ, 2011թ.:
9. Լ.Սարգսյան, «Խոսքի զարգացման պարապմունքները մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբում, Երևան, Զանգակ հրատարակչություն, 2015թ.:
10. Հ.Միտոյան, Լ.Սմբատյան, Լ.Սարգսյան, «Խոսքի զարգացման պարապմունքները մանկապարտեզի միջին խմբում», ԿԱԻ,Երևան, 2013թ.:
11. Ս.Չիբուխչյան, Լ.Սարգսյան, «Մայրենի լեզվի պարապմունքները մանկապարտեզի ավագ խմբում», Երևան, ԿԱԻ, 2011թ.:
12. Լ.Մանուկյան, Լ.Սարգսյան, Լ.Սմբատյան, «Վաղ գրաճանաչությունը մանկապարտեզի ավագ խմբում», «Աստղիկ գրատուն» հրատարակչություն, Երևան, 2007թ.:
13. Լ.Մանուկյան, Լ.Սմբատյան, Հ.Միտոյան, «Մայրենի լեզվի դիդակտիկ խաղերը մանկապարտեզի ավագ խմբում», Երևան, 2007թ.:
14. Լ.Սմբատյան, «Մայրենի լեզվի դիդակտիկ խաղերի կազմակերպումը մանկապարտեզում», Երևան, հեղինակային հրատարակություն 2014 թ.:
15. Լ.Սմբատյան, «Խաղերի և խաղ-զվարճալիքների կազմակերպումը մանկապարտեզում», Երևան, հեղինակային հրատարակություն 2014 թ.:
16. Հ.Հարությունյան, «Մաթեմատիկայի պարապմունքները մանկապարտեզում: Կրտսեր երկրորդ և միջին խմբեր», Երևան, Զանգակ հրատարակչություն, 2016թ.:
17. Ս.Չիբուխչյան, «Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման պարապմունքները մանկապարտեզի ավագ խմբում», Երևան, Էդիթ

Պրինտ հրատարակչություն, 2014թ.:
18. Հ.Հարությունյան, Ս.Չիբուխչյան «Մաթեմատիկայի իմ այբուբենը», I և II մաս, Երևան, ՎԱ-ՀԱ, 2008թ.:
19. Ռ.Առաքելյան, «Ֆիզկուլտուրայի պարապմունքները մանկապարտեզի ավագ խմբում», «Աստղիկ գրատուն» հրատարակչություն, Երևան, 2007թ.:
20. Ռ.Առաքելյան, «Շարժախաղեր 5-6 տարեկանների համար», Երևան, 2008թ.:
21. Գ. Մարտիրոսյան «Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում», «Աստղիկ գրատուն» հրատարակչություն, Երևան, 2007թ.:
22. Լ.Սմբատյան, Լ.Սարգսյան, «Կերպարվեստը մանկապարտեզի միջին խմբում», Երևան, ԿԱԻ, 2016թ.:
23. Լ.Սմբատյան և ուրիշներ, «Կերպարվեստի պարապմունքներ կրտսեր առաջին և կրտսեր երկրորդ խմբերի համար», Երևան, ԿԱԻ, 2015թ.:
24. Լ.Սմբատյան, «Ձախլիկների զարմանահրաշ աշխարհը», Էդիթ Պրինտ հրատարակչություն, 2009 թ.:
25. Պ.Քոֆլին, Ք.Ա.Հանսեն, Դ.Հելլեր, Ռ.Կ.Կաուֆման, Ջ.Ռոթշիլդ Սթոլբերգ, Ք.Բուրք Ուոլշ, «Երեխայակենտրոն դասարանների ստեղծումը (3-5 տարեկանների համար)», ՄՌՄԿ, Վաշինգտոն,1997թ.:
26. Ջ.Ռոթշիլդ Ստոլբերգ, Է.Դանիելս, «Երեխայակենտրոն նյութերի ստեղծումը մաթեմատիկայի և բնագիտության բնագավառում», Վաշինգտոն, ՄՌՄԿ, 1998թ.:
27. http://www.bbcactive.com/BBCActiveIdeasandResources
28. Vaness J. Levin, A FABULOUS FIRST YEAR AND BEYOND: A Practical Guide for Pre-K and Kindergarten Teachers, Teacherpreneur Books, 2011.
29. Vygotsky, L.S. MIND IN SOCIETY: THE DEVELOPMENT OF HIGHER PSYCHOLOGICAL PROCESSES. Edited by M. Cole, V. John-Steiner, S. Scribner, and E. Souberman. Cambridge, MA: Harvard University Press, 1978.
30. Evangelou, Demetra, ERIC Identifier: ED308990, 1989.
31. Բ.Շվարց, Ք.Ռուշ, «Ուսուցումը խաղի միջոցով»: Դասընթաց բուհերի վաղ մանկական տարիքի երեխաների կրթության մասնագետների համար, ՄՌՄԿ, Վաշինգտոն, 1997թ.:
32. Ժ.Ջոնս, Ս.Իգնելզի, «Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը»: Դասընթաց բուհերի վաղ մանկական տարիքի երեխաների կրթության մասնագետների համար, ՄՌՄԿ, Վաշինգտոն, 1997թ.:
33. Ս.Ջայֆեր, Մ.Բաուման, Ջ.Փ.Այսենբերգ, Մ. Ռենք Ջալոնգո, «Անհատականացված ուսուցումը վաղ մանկական տարիքի կրթական համակարգում»: Դասընթաց բուհերի վաղ մանկական տարիքի երեխաների կրթության մասնագետների համար, ՄՌՄԿ, Վաշինգտոն, 1997թ.:
34. Ս.Բրեդեկամպ, «Մինչև ութ տարեկան երեխաների զարգացմանը համապատասխանող գործելակերպի մշակումը վաղ մանկական ծրագրերի շրջանակներում», ՎՄԿԱԸ (NAEYC), Վաշինգտոն, 1993թ.:

Նշումների համար

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

unicef

յուրաքանչյուր երեխայի համար